INSTITUTE OF LANGUAGE AFTER H. ACHARYAN

ISSUES ON ARMENIAN LANGUAGE HISTORICAL RESEARCH

ИНСТИТУТ ЯЗЫКА ИМЕНИ Р. АЧАРЯНА

ВОПРОСЫ ИСТОРИЧЕСКОГО ИССЛЕДОВАНИЯ АРМЯНСКОГО ЯЗЫКА

Yerevan - 2023
Ереван – 2023

ՀՀ ԳԱԱ Հ. ԱՃԱՌՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԼԵԶՎԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅԵՐԵՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՊՐԱԿ Բ

ԵՐԵՎԱՆ
ԳԱԱ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2023

ՀՏԴ 81.19’0
ԳՄԴ 81.51դ
Հ 282
Հրապարակման է երաշխավորել ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհուրդը:

Պատասխանատու խմբագիր՝ բ. գ. դ. Վ. Լ. Կատվալյան

Հ 282 Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր (Լ. Հովհաննիսյան, Ն. Հովհաննիսյան, Գ. Մխիթարյան, Ս. Գրիգորյան, Հ. Թադևոսյան, Վ. Խաչատրյան, Օ. Խաչատրյան, Տ. Սիրունյան): Պրակ Բ. -Եր.: ՀՀ ԳԱԱ ԼԻ հրատ., 2023. - 173 էջ:

ՀՏԴ 81.19’0
ԳՄԴ 81.51դ

ISBN 978-9939-9277-9-4
© ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, 2023
© ՀՀ ԳԱԱ լեզվի ինստիտուտի հրատարակչություն, 2023

Գիրքը պարունակում է ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժնի աշխատակիցների հետազոտությունները, որոնք 2014 թ. հրապարակվել են տարբեր գիտական հանդեսներում և ժողովածուներում: Գիրքը ընդգրկում է լեզվի զարգացման տարբեր փուլերում հայերենի բառային կազմի և քերականական կառուցվածքի փոփոխություններին ու դրանց օրինաչափություններին, հայերենի և այլ լեզուների բառային աղերսներին, գրաբարի բառապաշարին, օտար և բնիկ բառերի հարաբերակցությանը, փոխառությունների գործառական առանձնահատկություններին նվիրված հետազոտություններ: Նախատեսվում է հայոց լեզվի պատմությամբ հետաքրքրվողների համար:

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը տասնամյակներ շարունակ անդրադարձել է լեզվի պատմության և համեմատական ուսումնասիրության տարբեր խնդիրների: Բուն ուշադրության առարկա են եղել ոչ միայն հայերենի նոր փաստերի վերհանումն ու նկարագրությունը, այլև լեզվի զարգացման ընթացքին բնորոշ փոխազդեցություններն ու առանձին փոփոխությունները: Աշխատակիցների գիտական հետաքրքրությունների շրջանակն առնչվել և առնչվում է լեզվի բառապաշարի հին շերտերի, հնչույթային և քերականական համակարգերի, զարգացման փուլերում երևան եկած գրական լեզուների և դրանց խոսակցական հիմքերի ու բարբառների փոխհարաբերությանը: Այդ ամենը ենթադրում է հայերենի ընդգրկուն և մանրամասն ուսումնասիրություն, ինչպես նաև հայոց լեզվի տարբեր շրջանների պատմությանը վերաբերող հետազոտությունների նորագույն տվյալների ներառում: Հետազոտությունների արդյունքները ներկայացվել են տասնյակ մենագրություններում, միջազգային գիտական ժողովածուներում, հարյուրավոր հոդվածներում ու զեկուցումներում: Նկատի ունենալով հայոց լեզվի պատմության ընձեռած հարուստ փաստական նյութի (հին, միջին և նոր հայերեն բազմաթիվ ու տարաբնույթ մատենագրական աղբյուրներ, անցյալի բառարանագրական հուշարձաններ, ձեռագրերի հիշատակարաններ և այլն) կարևոր նշանակությունը հայերենի ուսումնասիրության համար՝ ՀՀ ԳԱԱ Հ. Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի հայոց լեզվի պատմության բաժինը 2021թ. վերահրապարակել է «Հայոց լեզվի պատմության հարցեր» 6 ժողովածուն (IV պրակ). հայերենի պատմության մեջ դեռևս կան քիչ հետազոտված, կնճռոտ հարցեր, որոնք քննության կարիք ունեն: Գիտական արդյունքներն ամփոփելու, հանրությանը և հատկապես հայոց լեզվի պատմության հարցերով հետաքրքրվողներին ներկայացնելու նպատակով հայոց լեզվի

պատմության բաժինը սկսում է հրապարակել աշխատակիցների հոդվածներն ու զեկուցումներն ընդգրկող «Հայերենի պատմական ուսումնասիրության հարցեր» նոր ժողովածուն՝ ըստ տարիների: Նյութերը քաղվում են լույս տեսած հանդեսներից ու պարբերականներից՝ առանց հեղինակային կամ խմբագրական միջամտության:

Սույն պրակը ընդգրկում է բաժնի աշխատակիցներ Լ. Հովհաննիսյանի, Գ. Մխիթարյանի, Ն. Հովհաննիսյանի, Ս. Գրիգորյանի, Հ. Թաղևոսյանի, Վ. Խաչատրյանի, Տ. Սիրունյանի, Օ. Խաչատրյանի ուսումնասիրությունները, որոնք 2014 թ. հրապարակվել են տարբեր հանդեսներում, ժողովածուներում: Պրակում ընդգրկված նյութերը վերաբերում են հայերենի զարգացման փուլերի լեզվական իրադրության բնութագրումների, լեզվական որոշ փոփոխությունների բնույթն ու պատճառները բացահայտելուն, հայերենի քերականական կառուցվածքի, բառապաշարի պատմական զարգացման որոշակի առանձնահատկությունների պարզաբանմանը:

Գ. Մխիթարյան

ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ»-Ի ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐԻ ԲԱՌԱԿԱԶՄԱԿԱՆ ԿԱՂԱՊԱՐՆԵՐԸ*

Գրիգորյան Սուսաննա

Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը Սուրբ Գրքի ամենալիակատար գրված մեկնությունն է, և պատահական չէ, որ հատկապես այս գրքում հանդիպում ենք չորս հարյուրը գերազանցող նոր բառերի. դրանք երևան եկան հատկապես «Գիրք հարցմանց»-ի Համաբարբառն ավարտելուց հետո: Գրաբարյան բառագանձը ներառող հայտնի բոլոր բառարաններից այսքան բառերի դուրս մնալը բացատրվում է միայն մի հանգամանքով. բոլոր բառարանագիրները այս կամ այն կերպ հիմք են ընդունել Նոր հայկազեան բառարանը, իսկ Տաթևացու աշխատություններին մխիթարյան միաբանները չեն անդրադարձել ընդհանրապես:

Սուրբ Գրքի համակողմանի այն մեկնությունը, որ տվել է Գրիգոր Տաթևացին՝ մի կողմից ողջ վարդապետական նախորդ մեկնություններն էր ամփոփում, մյուս կողմից՝ բերում հեղինակի՝ բյուրեղացած, նոր երանգներով հարստացած խոսքը: Սա իր հերթին հայերենի խիստ ճկուն լեզվամտածողության դրսևորումների գունագեղ մի ներկապնակ է, որ «Գիրք հարցմանց»-ի խիստ արժեքավոր մեկնության չափազանց հետաքրքրական կողմերից մեկն է:

Նորակերտ բառերը հեղինակի համար դարձել են հնարավորության նոր միջոց՝ բացատրելու մեկնաբանվող նյութը. այսկերպ Տաթևացին՝ իբրև Սուրբ Գիրքը մեկնող աստվածաբան վարդապետ, շրջանառության մեջ է դրել, օրինակ, երկու տասնյակից ավելի ծիսակրոնական բառեր. *անմկրտեալ,*

---

* Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. Հայագիտությունը և արդի մարտահրավերները: Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 250-252: Տպագրվել է խմբագրական փոփոխություններով:

բազմաքրիստոս, ողջոյնառաք (իմա՝ աստված), *ողջոյնընկալ* (իմա՝ աստվածածին), *որթապաշտ, նախարարչութիւն, նախաճաշակումն.* օրհնության կարգի հետ կապված՝ մի ամբողջ բառախումբ. *գերեզմանօրհնէք, դեզօրհնէք, մայրօրհնէք, ջրօրհնէք, սերմնօրհնէք, քահանայօրհնէք* և այլն:

Նորակազմ բառերում կա մի խումբ, որի գործածությունը այսօր շատ սովորական է, ինչը վկայում է, որ Տաթևացին ոչ միայն հրաշալի տիրապետել է բառաստեղծման կաղապարներին, այլև հարազատ է մնացել լեզվամտածողությանը այնչափ, որ հետագա դարերում շատ նորակազմություններ մտել են բառապաշարի համագործածական բառերի շարքը, ինչպես օրինակ՝ *ամբողջութեամբ, անմորուք, անստոյգ, արհեստական, արհեստաւոր, բաժանորդ, բացարձակապես, բացորոշ, բռնամիտ, երկխօսութիւն, մշտապէս, մսակոյտ, հակասական, հասանելի, յիշատակութիւն, յաւիտենականութիւն, նախապատրաստութիւն, ներգոյական, նշանադրութիւն, ուղղաձև, պատահական, սևամորթ, սրտային, սրտոտ, վատահամբաւ, տեսակաւորել, փոշիանալ, փոքրիշատէ, փութանցիկ* և այլն:

Ապազային են նայել նաև Տաթևացու այն նորակազմությունները, որոնց մի մասը Հրաչյա Աճառյանի «Հայերեն արմատական բառարան»-ում հիշատակվում է որպես *նոր* բառ. դրանց մեջ են (առանց հեղինակային վկայության) *արհամարհելի, բաժանելի, խաչհամբոյր* բառերը, սակայն, դրանք Տաթևացին ոչ միայն օգտագործել է, այլև նույն բաղադրիչով նաև այլ բառեր կազմել, այսինքն նույն բաղադրիչով կազմել շարքեր, ինչը մեկ անգամ ևս վերահաստատում է դրանց այդ հեղինակին պատկանելու հանգամանքը. ասենք՝ *բաժանելի, բաժանիչ, բաժանորդ* (վերջինս ժամանակակից հայերենում դարձյալ համագործածական բառերի շարքում է). կամ՝ *բանականաբար, բանակրութիւն, բանաւորիլ. այլազիծ, այլակատար, այլամազ, այլայլոտ, այլավիճակ. արտագնացումն, արտագունել, արտածորումն, արտահոսումն արտայայտումն, արտաքարշել, արտաքսելի* և այլն:

Մեկ այլ հետաքրքիր փաստ. գրաբարի գործածական բառարմատները խիստ կենսունակ են նաև Տաթևացու նորակազմությունների պարագայում. օրինակ՝ «*բազմ*» բաղադրիչով գրաբարյան բառարանները ավելի քան երեք հարյուր բառ են վկայում. Տաթևացու նոր բառեր կազմելիս նույնպես հաճախ դիմել է *«բազմ»* բաղադրիչին և գրաբարյան բառերին ավելացրել *բազմաբաշխութիւն, բազմեղանակ, բազմակուլ, բազմամայր, բազմաքրիտոս* ձևերը: Նույնն է նաև հայերենի հաճախական *ան-* նախածանցի դեպքում. գրաբարյան իսկայական շարքին Տաթևացին ավելացնում է շուրջ երկու տասնյակ նորակազմություններ. *անաջատութիւն, անբախելի, անբովանդակապէս, աներչոտ, անթառամելի, անխելամուտ, անհատողութիւն, անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անուսում-նապէս, անպարագրելի, անստոյգ, անվարձատրելի* և այլն:

Նշենք նաև, որ մի շարք հեղինակներ, Հր. Աճառյանը, հետագայում՝ Ռ. Ղազարյանը, Լ. Հովհաննիսյանը, որոնք իրենց աշխատություններով համալրել են գրաբարյան բառարանները, բազմաթիվ անգամ հղում են Գրիգոր Տաթևացուն, ինչը դարձյալ հաստատում է այդ բառերի Տաթևացու հեղինակած լինելու փաստը: Օրինակ, Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր» աշխատության մեջ *ախթարմայ. անհատողութիւն, առնչական, բացբարձութիւն, կոպիտ, միջակօրէն, պատարագելի, փոխարկապէս* բառերի դեպքում հղվում է դարձյալ Գրիգոր Տաթևացուն (տարբեր աշխատությունների): «Միջին հայերենի բառարանի» դեպքում այդ հղումները ընդամենը 100 են, որից «Գիրք հարցմանց»-ին՝ 79-ը:

Նոր բառեր կազմելիս Տաթևացին դիմել է հայերենի ավանդական բառակազմական եղանակներին՝ *բառաբարդմանը և ածանցմանը*, որոնց մեջ հանդիպում ենք հնարավոր գրեթե բոլոր ենթակաղապարներին: Սակավաթիվ են նորակազմ բառերի մեջ փոխառությունները՝ գրեթե մեկ տասնյակ: Հազվադեպ ունենք նաև արմատական բառեր: Եվ միայն մի քանի նորակազմ բառ

հիշատակվում է ուրիշի ուղղակի խոսքում. *անփորձել, մաքրելիք, նախաճաշակումն*:

Շատ ավելի քիչ են բառակազմական առումով խնդրահարույց նորակազմությունները, որոնցից մեկին փորձենք անդրադառնալ:

Տաթևացին *շինականի երեխայի ծննդյան օրը* կոչում է *աղարուք* (Նա՛խ՝ որպէս հասարակ շինականք ի ծննդեան զաւակաց զմին օրն պատուեն աղարուք կոչելով: - 321): Այս բառի պարզայում մինչև բառակազմական վերլուծություն կատարելը պետք է պատասխանել, թե ինչ է այն նշանակել: Եթե հիմք ընդունենք ՆՀԲ-ի՝ *աղի(ք) - Որդի աղեաց. Սիրելի զաւակ.* բացատրութունը, ապա կարելի է մեկնել՝ *զավակ, երեխա*: Կա նաև մեկ այլ տարբերակ. «Հայերէն գաւառական բառարան»-ում *աղ* բառահոդվածի տակ Սեբաստիա, Պոլիս բարբառների համար բերվում է մարմնի այն մասի բացատրությունը, «որ կը շոշափէ ծննդական գործարանները» (Ղարաբաղի բարբառում՝ *աղ*ուէսինք, ըղվեսուք) նմանատիպ բացատրություն բերում է նաև Ստեփանոս Մալխասյանցը՝ «Հայերէն բացատրական բառարան»-ում, այսինքն այս կամ այն կերպ բառը եթե նշանակում է *ծնունդ, ժառանգ*, (այս դեպքում, ծագումնաբանորեն դրա հետ կարող ենք կապված տեսնել նաև *աղխ* բառը՝ «ցեղ, զարմ, ժողովուրդ» բացատրությամբ), ապա բառը կարելի է համարել *գոյական հիմքով կազմված ածանցավոր բառ* (-ուք վերջածանցի գոյականակերտ դրսևորումները ունենք *այրուք, ծեծկռտուք, սրտխառնուք* և այլ բառերում): Հօգուտ *ծնունդ, ժառանգ* բացատրության վկայում է նաև *աղուրի* (ըստ ՆՀԲ-ի՝ «ուղէշ, շառաւիղ», ըստ Աճառյանի՝ «որթի տաշտաթաղ անելու ճիւղը», ապա՝ «սերունդ, շառաւիղ») բառի գոյությունը հայերենում, սակայն այս դեպքում պետք է բացատրել *աղուրի - աղարուք* անցումը: Բառակազմական կաղապարը փոխվում է, եթե այն դիտարկենք կապված *աղալ* բառի հետ (*աղարուք*՝ այսինքն աղալու, ուտելու, ծամելու միջոցառում). այս դեպքում էլ կունենաք բայական հիմքով կազմված ածանցավոր բառ. ի դեպ, Տաթևացին

ունի նաև *աղորիք* նորակազմությունը, որ նշանակում է *աղացող, աղալու միջոցներ* («Իններորդ՝ աղալն յերկանս. յաղորիս հոգւոյ և մարմնոյ ծասկել»: - 339): Նշենք նաև, որ *աղուրի* բառը «Հայերեն արմատական բառարան»-ում չստուգաբանված բառերի շարքում է, որին հայագետը տալիս է «հազուագիւտ» պիտակը:

Այսպիսով, խնդիրը իմաստային դաշտում հարցեր է առաջացնում նաև բառակազմական կաղապարում, որտեղ առաջին հայացքից պարզ թվացող կառուցվածքում կարիք է առաջանում պատմական կամ տարժամանակյա վերլուծություն կատարել:

Այս առումով, Տաթևացին եզակի այն հեղինակներից է, որ կարողացել է բառակազմական կաղապարները շատ հաճախ օգտագործել ինքնատիպ, նորովի և ազատ: «Ենթակայության տակ գտնվող» իմաստով, օրինակ, Տաթևացին օգտագործում է *նենթակայոջ* բարդ բառը՝ածանց + ածանց + հոդակապ + հիմք + վերջավորություն կաղապարով («Այլ ի մարմինն նիւթօրէն և սկզբնաբար. իսկ ի հոգին տեսակաբար և իբր նենթակայոջ»: - 567.):

«Պարունակելի, բաղկացական, ենթակայության տակ, ենթակայության ներսում գտնվող» իմաստով այս բառը բերում է միայն Երեմիա Մեղրեցին *նենթակայում*՝ձևով և կասկած չկա, որ այստեղ գործ ունենք *«նի + ենթակայութիւն»* կառույցի հետ, այսինքն՝ ենթակայության տակ, ենթակայության մեջ, ենթակայության ներսում գտնվող, հատկապես, որ *ենթակայ* նշանակում է նաև՝ «տակը եղած». այլ հարց է, որ Երեմիա Մեղրեցին *նենթակայում* ձևը համարում է պարառական հոլովաձև՝ հաշվի չառնելով բերվող օրինակի ներգոյական հոլովաձևը *(«պարառական հովլով,* ենթակայ, բայց նշանակէ զպատահումն»[1], *ԵՄԲՀ,* էջ 237): Եզակի այս գործածությունը թույլ է տալիս եզրակացնելու, որ Տաթևացու օրերում դեռ շարունակել է կենսական մնալ «*նի*» հնագույն նախածանցը՝ ներս, տակ, ներսում նշանակությամբ:

---

[1]Գ. Տաթևացի,*Գիրք հարցմանց*, Կ.Պոլիս, 1729, էջ 567:

Կամ բոլորիս հայտնի *բուրվառ*՝ խնկաման, բառը Տաթևացին բերում է *բուրբառ* ձևով, որ ըստ մեզ ավելի նախնի և հին ձև է: Բարդ բառ, կազմված գոյական + բայ՝ հիմք կաղապարով: Բառարանները վկայում են *բուրուառ,* ապա երկրորդաբար՝ *բուրուվառ, բուրվառ* ձևերը: Կարծում ենք նախնական *բուրբառ* ձևից անցում է կատարվել *բուրուառ, ապա՝ բուրվառ* ձևին. առաջինի դեպքում ունենք *բուրմունքը բառնալ, բարձրացնել,* երկրորդի դեպքում՝ *բուրմունքը առնել*: Նախնական է *բուրբառ*-ը, որից և անցումը կատարվել է *բուրվառ* - ին՝ ժողովրդական ստուգաբանության սկզբունքով, եթե նկատի ունենանք, որ բուն նշանակությամբ բուրմունքը կարող է բարձրանալ, տարածվել, բայց ոչ վառվել («...և գո՛րծ է նոցա, հրամանաւ քահանային աւետարան կարդալ, քարոզել, և բառնալ քշոց և <u>բուրբառ</u>. և նստիլ ամենևին ո՛չ»: - 608.):

Ինչպես ասացինք, սակավաթիվ են նորակազմ բառերի մեջ փոխառությունները. *բուրզաթուր, եսթանանունդրի, կոնքիլոս, ջհուտ, ջուարի (ջորոջ), սիմքուֆտ, վաւռէք (վօռէաս վօռէսք), փօստազիս, քալասիկէ, քարթոշ, քուէանամ*: Բառակազմության եղանակի վերլուծության առումով հնարավոր է խոսել վերջին ձևի մասին, որ սոսկածանցավոր բայական ձև է՝ կազմված *քուէ*՝ «խորանարդ» արմատից, -ան միջածանցից և բայական «ամ» վերջավորությունից:

Բառակազմական առումով նորակազմությունների մեջ գերակշիռ մաս են կազմում ածանցավոր բառերը. *անմաշելի, անմեղր, անմկրտեալ, անմորուք, անուսումնապէս, անպարա-զրելի, անստոյգ, անվարձատրելի, անփոխանորդ, հալածու:*

Բարդ բառերի մեջ զգալի թիվ են կազմում մարդուն, նրա խառնվածքին վերաբերող բառերը. *աղուեսաբարոյ, անխելամուտ, բազմակուլ, արձակաքայլ, բարեսուն, բացունչն, բռնամիտ, զիճասէր, թիւրամիտ, թխակն* և այլն: Զգալի թիվ են կազմում նաև կրոնական և ծիսական ոլորտին վերաբերող նորակազմու-թյունները. *բազմաքրիստոս, ողջոյնընկալ, ողջոյնառաք, դեւակոչ,*

զերեզմանօրինէք, սերմնօրինէք, մայրօրինէք, տօնահմայք քահա-նայթաղէք, քահանայօրինէք:

Արմատական բառերից են՝ *դէշ, դօշ, զիժ, կոպիտ:*

Григорян Сусанна - Словообразовательные формы новых слов и "Книги вопросов" Григора Татеваци. - После издания словоуказателя "Книги вопросов" Григора Татеваци с уверенностью можно сказать, что словарный запас древнеармянского языка, грабара, пополнился 470-ью новыми словами. С точки зрения лексикографии интересен тот факт, что эти слова от "Ա" до "Կ" и от "Հ" до "Ֆ" по количеству почти равны. По значению они относятся к религиозным, научным, душевным и физическим качествам человека, а также другим сферам.

Словообразовательных форм, в основном – две. Это – суффиксация и усложнение слова. Крайне редки случаи, когда новые слова приводятся в прямой речи другого.

Susanna Grigoryan - Word-building patterns of new words of "The book of questions" of Grigor Tatevatsi. - After edition of the word-index "The book of questions" of Grigor Tatevatsi we may confidently say that the basic ancient armenian (grabar) stock of words supplements by 470 new words. From the point of view of lexicography it's interesting that these words from "Ա" to "Կ" and from "Հ" to "Ֆ" are almost equal.

By meaning they concern to religious, scientific, man's psychological and physical character and of other sphere. In the main there are two word-building patterns way - suffixation and word's compounding. In extremely rare cases new words are in direct speech of others.

ԾԻՍԱԿԱՐԳԱՅԻՆ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԳՐԻԳՈՐ ՏԱԹԵՎԱՑՈՒ «ԳԻՐՔ ՀԱՐՑՄԱՆՑ» - ՈՒՄ*

Գրիգորյան Սուսաննա

Ծիսակարգի ոլորտում հայոց եկեղեցին երկար դարերի ընթացքում դրսևորել է դրանք անփոփոխ պահելու հստակ սկզբունք, որից նահանջը պարունակել է դավաղրություն, ազգուրացություն, լատին կամ մեկ այլ եկեղեցու քաղաքականության հետևորդը դառնալու վտանգ: Հատկապես ծեսեր կատարելու խիստ կանոնական համակարգով է, որ հայոց եկեղեցին կարողացել է պահպանել իր ավանդապահ համբավը և ինքնուրույնությունը:

Աստվածաշնչի մեկնությունն սկսելով Հնգամատյանից՝ Գրիգոր Տաթևացին Սուրբ Գրքի մեկնությունն «Գիրք հարցմանց»-ում ավարտում է կտակարանյան վերջին գլխով՝ Հովհաննու հայտնությամբ՝այսպիսով իր հարցումների գրքում ընդգրկելով հին և նոր կտակարաններն ամբողջությամբ: Հարցադրումները կատարվում են արարչագործությունից սկսած մինչև մարդու ներաշխարհի քննություն, դավանաբանական վեճերից մինչև ճշմարտության վերհանման փիլիսոփայական վերլուծություններ, կենցաղից և ազգային սովորույթներից մինչև համամարդկային արժեքների դիտարկում:

Քննական մեկնության այս եղանակը, երբ հարցին հետևում են տասնյակ պատասխաններ և պարզաբանումներ, նյութը դարձնում է խիստ ընդգրկուն՝ հնարավորություն ընձեռելով նույնիսկ իմաստային դաշտերով քննելու այս կամ այն ոլորտը: Մասնավորապես, եկեղեցուն և հավատին վերաբերող հարցերը հաճախ քննվում են առանձին գլուխներով, այսպես ասած

* «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 213-220:

թեմատիկ դաշտերով, որտեղ և հանդիպում են բազմաքանակ ծիսական հասկացություններ:

Հայագիտության մեջ հայտնի է Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարան»-ը[1], որտեղ ըստ պատշաճի հավաքված և բացատրված են ծիսական, եկեղեցական, հոգևոր երաժշտության տերմինները: Հեղինակն աշխատության երրորդ մասում, կանխելով հնարավոր շահարկումները, նշել է, որ՝ «հանձն չենք առել կատարելու ոչ հնագիտական և ոչ էլ քննադատական աշխատություն, այլ լոկ առձեռն տեղեկություններ տալ և բավարարել բարեպաշտ ժողովրդին»[2]: Այնուամենայնիվ, «Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն»[3] աշխատության մեջ արդեն իսկ նշել ենք, որ «Գիրք հարցմանց»-ում կան հետաքրքիր տեղեկություններ այս կամ այն ծիսակարգի վերաբերյալ, որոնց անդրադարձ այս աշխատության մեջ չի եղել, չնայած հեղինակի մեկ-երկու դիտողությունից ակնհայտորեն երևում է, որ նշանավոր եկեղեցագետը և ազգագրագետը հրաշալի ծանոթ է եղել Տաթևացու գրական ժառանգությանը: Մինչդեռ ի դեմս Գրիգոր Տաթևացու, ունենք հայոց եկեղեցու հենասյուներից մեկին, որ ամենայն ջանք գործադրել է պահպանելու, ուսուցանելու, մեկնելու հայոց եկեղեցու առաքելադիր սկզբունքները, ուստի և ուսումնասիրողները Գրիգոր Տաթևացու գրական ժառանգությամբ առայսօր լուրջ համալրում են կատարում հայագիտության, աստվածաբանության, փիլիսոփայության և գիտական այլ ոլորտներում:

«Գիրք հարցմանց»-ում պատկառելի թիվ են կազմում նաև խնդրո առարկա ծիսակարգային հասկացությունները և դրանց մեկնությունները:

Ներկա ուսումնասիրությամբ փորձել ենք ներկայացնել «Գիրք հարցմանց»-ում տեղ գտած ծիսական, եկեղեցական

---

[1] Մ. Արք. Օրմանյան, *Ծիսական բառարան*, Ե., 1992:

[2] Նույնը, էջ 128:

[3] Ս. Գրիգորյան, *Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ի նորակազմ բառերի քննություն*, Ե., 2014:

հարցադրումները և հասկացությունները՝ հարկ եղած դեպքում անդրադառնալով Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարան» -ին:

Իմաստային դաշտերը քննելիս կարող ենք առանձնացնել բուն արարողակարգային կամ ծիսակարգին վերաբերող հասկացություններ և եկեղեցական տոներ, դրանք իրականացնող անձինք և առարկաներ, ժամակարգեր:

Այս բաժանումից զատ՝ կարելի է դրանք դիտարկել նաև երկու մեծ խմբերի հաշվառումով՝ հինկտակարանյան և նորկտակարանյան: Երկրորդ բաժանումը հետաքրքրական է այնքանով, որ հեղինակը չի խուսափել քննել նաև հեթանոսական և ազգային երևույթները, եկեղեցական տոների հիմքերը և վերաիմաստավորումները: Այս առումով, օրինակ կարող ենք բերել «Գիրք հարցմանց»-ի *«Վասն Տօնից Հարցումն»* վերնագրով 51-րդ Պրակը, որտեղ ծիսական հասկացությունները վերլուծվում են նորը հնի համադրությամբ՝ վերաիմաստավորումների պարզաբանումներով. երբեմն տրվում են պատմական բացատրություններ: Պրակում (անվանումը հեղինակինն է, որը գիրքը բաժանել է հատորների, գլուխների, պրակների) առկա են երկու տասնյակից ավելի ծիսական հասկացությունները, որոնց մի մասի բացատրությունը Մաղաքիա Օրմանյանի «Ծիսական բառարան»-ում բացակայում է: Այսպես, վերլուծելով հինկտա-կարանյան տոները, Տաթևացին առաջինը նշում է *Շաբաթը* (գլխատառով բերում ենք՝ տոնը ընդգծելու համար-Ս.Գ.): «Ծիսա-կան բառարան»-ում սրա բացատրությունն իբրև տոն չի բերվում, մինչդեռ այն հնում հրամայված տոների շարքում առաջինն էր, որը քրիստոնեությամբ վերաիմաստավորվեց Ս. Հարությունը խորհրդանշող *Նոր Կիրակիով,* ապա և՝ շաբաթվա բոլոր կիրակիներով: «Նոր բառգիրք հայկազեան լեզուի» (այսուհետ՝ «Հայկազյան բառարան») բառարանը այն հիշատակում է իբրև

«*տօն առ եբրայեցիս, իսկ յետ Քրիստոսի փոխեցաւ ի կիւրակէ օր յարութեան Տեառն»*[4]*:*

Հինկտակարանյան բաղարջակերքի, օրենքների տվչության, քավության և տաղավարահարաց տոների բացատրությունը Տաթևացին բերում է քրիստոնեությամբ վերաիմաստավորված տոների զուգահեռներով. «Նա՛խ՝ շաբաթն հանապազորդ. և ի նորս *կիրակին*: Երկրորդ՝ *բաղարջակերքն* ազատութեան. և ի նորս *զատիկ* մեր զենաւ քրիստոս: Երրորդ՝ *յիսներեկին տըւչութեան օրինացն.* որ է՛ *հոգւոյ գալուստն:* Չորրորդ՝ *քաւութեանն.* որ է *տօն խաչին:* Հինգերորդ՝ *տաղաւարահարքն.* որ է՛ *եկեղեցւոյ տօն.* վասն այն *զխաչին և զեկեղեցւոյն ի միասին տօնեմք:* Այլ և բոլոր ամենայն տօնք հնոյն՝ *ը* տօն էր. զոր այժմ մեք ունիմք փոխեալ ի նորս»[5]:

Փոքրիկ այս պարբերության մեջ մի կողմից ունենք *«բաղարջակերքի», «օրենքների տվչության», «քավության» և «տաղավարահարաց»* տոների, մյուս կողմից՝ *«նոր զատիկ», «հոգւոյ գալուստ», «խաչի տօն», «եկեղեցու տօն»* ծիսական հասկացությունները: Հաջորդ պարբերության մեջ նույն այս տոների բացատրության շրջանակներում ավելանում են *«պասքայ», «շաբաթապահք», «պենտակոստէ»* անվանումները. «Հինգերորդ՝ *պասքայն.* որ է՛ բաղարջակերք: Եւ ի մեզ տօն զատկին: Այլ *և շաբաթապահքն*: Վեցերորդ՝ *յիսներեակն*: Եւ ի մեզ հոգւոյն գալստեան ի *պենտակոստէն:* Եւ տես, զի սոքա երեքեան տօնքս, այսինքն ամսամուտն, և պասքայն, և յիսներեակն, հաւասար ունին զմատուցմունքն տօնից»[6]:

Հայոց և ընդհանրապես քրիստոնեական եկեղեցու տաղավար տոներից մեծագույնը Տիրոջ ծնունդն է, որի վերաբերյալ Տաթևացին բերում է ոչ միայն ամբողջական, այլև պատմական վերլուծություն. ինչո՞ւ հայոց եկեղեցին *Ծննդյան և*

---

[4] Հ. Աւետիքեան, Հ.Սիւրմէլեան, Հ.Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1836, հ.Ա, էջ 457:

[5] Գ. Տաթեւացի, Գիրք հարցմանց, Կ.Պոլիս, 1729, էջ 372:

[6] Նույն տեղում:

Հայտնության տոները նույն օրն է կատարում, ինչո՞ւ նախկինում բոլոր եկեղեցիները նույն կերպ են վարվել, ապա հարկադրաբար անցել այլ օրերի. «*Վասն է՞ր ազգս հայոց զտօն ծննդեանն քրիստոսի և մկրտութեան ի միում աւուր կատարեմք:* Պատասխանի: Յառաջագոյն ամենայն ազգք քրիստոնէից սկսեալ յառաքելոցն այսպէս տօնէին. ի վեցն յունվարի զծնունդն, և ի նմին աւուր զմկրտութիւնն ըստ աւետարանին վկայութեան: *Եւ որպէս կարգեաց տեառնեղբայրն Յակոբոս զընթերցուածն. և ի նմին աւուր զերկու տօնս*: Այլ և աստուածաբանն ի քրիստոս ծնեալ ճառին ասէ, այսօ՛ր աստուծոյ յայտնութեանս տօնէ: Եւ բարսեղ ի Քրիստոսի ծնունդն յիւրական ճառին ասէ, անուն դիցուք տօնիս *աստուածայայտնութիւն*: Եւ ա՛յն է յայտնութիւնն որ հայր վկայեաց ի վերայ ոդւոյն, և հոգին սուրբ աղաւնակերպ իջմամբ: Եւ յա՛յսմանէ յա՛յտ է, զի սուրբքն զծնունդն և զյայտնութիւնն ի միասին տօնէին. և *յետոյ բաժանեցին ոմանք վասն բեթլէհէմի և յորդանանու:* Քանզի ո՛չ կարէին ի միում աւուր յերկոսեան ուխտսն կատարել զտօնսն հեռի գոլով ի միմեանց. Երուսաղէմացիքն այսր աղագաւ փոխեցին. և փոքր փոքր աճմամբ ընկալան և ա՛յլ եկեղեցիք զնոյն: Իսկ հայաստանեայ քրիստոս որպէս ուսան ի սրբոյն գրիգորէ՝ անփոփոխ կացին ի նմին: Եւ այլք վասն արտեմոնի. զի նա՛ փոխեաց զծնունդն ի դեկտեմբերի *իե*: Եւ ասաց թէ առաքեալքն թաքուցին ՚ի մէնջ զծնունդ փրկչին: Եւ էր արտեմոնս այս զկնի առաքելոցն *րճ* ամաւ սուղ ինչ պակաս: Զոր այլք ասեն թէ յետ *լ* ամաց: Զի զսմանէ՛ ասեն ասէ աւետարանիչն յոհաննէս՝ (ի մէնջ ելին զի ո՛չ էին ի մէնջ.) և կարի յոյժ ստեն նոքա: Զոր ի ժողովն քաղկեդոնի հաստատեցին զսոյն տօն ի *իեն* դեկտեմբերի. պատճառելով թէ՝ ի *հռոմ դարձի արեգական տօն կատարէին*. և փոխեաց զայն պետրոս տօնել արեգականն արդարութեան: Եւ զինչ և իցէ պատճառաւ զկարգեալն առաքելոցն փոխեցին զծնունդն և զտեառնընդառաջին տօնն: Ա՛րդ՝ ցուցից տումարաւ զտօնս մեր և զնոցայն. զի տօնախմբութիւն նոցա այսպէս կատարի առ յայտնութիւնն: Առնեն ի սեպտեմբերի *իէ* զպապանձումն զաքարիայի. և ի նմին աւուր զյղութիւնն

եղիսաբեթի: Եւ անտի մինչ ի մարտի *իե*ն համարեն *գ* ամիս, և անդ ասեն զաւետիսն: Եւ ի մարտի *իե*էն մինչ ի դեկտեմբերի *իե*ն համարեն *թ* ամիս և *ե* օր, և ա՛նդ ասեն զծնունդն: Եւ ի փետրվարի երկուքն տեառնընդառաջ կատարեն: Այլ մեզ այսպէս իմանալի է. զի թշրինի մէկն նուիրեալ օր սուրբ տեառն կոչեցի ասացաւ. որ է՛ սեպտեմբերի *ժը*: Եւ թշրինի *ժ* միշտ առաջին օր քաւութեան. յորում մտանէր քահանայապետն ի սուրբն սրբոց: Ուստի եղն պապանձեալ զաքարիա ի նմին աւուր: Եւ լինի սեպտեմբերի *իէ,* և թշրինի *ժ:* Եւ թշրինի *ժե*՝ սկիզբն տօնի տաղաւարահարաց, որ է՛ հոկտեմբերի *բ.* և անտի մինչև ի *իբ*ն թշրինի՝ և ի հոկտեմբերի *թ* կատարումն տօնին: Եւ յղութիւնն եղիսաբեթի յաւուր շաբաթու ՚ի լուսանալ *ժ*երորդ ամսոյն որ է թշրինի *իգ*: Ա՛րդ՝ աստի մինչ ի նիսանի *ժէ,* և յապրիլի է՝ կատարի է ամիս. յորում առաքեցաւ զաբրիէլ առ կոյսն մարիամ յաւուր չորեքշաբաթու: Եւ անտի մինչև ի տբէթի *իա*՝ և յունվարի *գ*՝ կատարի *թ* ամիս և *ե* օր: Եւ աստ ծնեալ լինի բանն աստուած յաւուր ե շաբաթու: Որ կատարի տեառնընդառաջն փետրվարի ժդ: Ա՛րդ՝ կարգեցին բազմազան վկայութինս զոր հաստատապէս տօնեմք զծնունդն քրիստոսի ի վեցն յունվարի: Այսպէս և կիւրեղ եէմի՝ համախոհ նմին: Այսպէս ընկալեալ ՚ի նոցանէ և նիկիականն ժողովք՝ հաստատեցին առ մեզ: *Զոր ունի զայս աւանդ այժմ սուրբ և ուղիղ աւանդապահ եկեղեցիս հայաստանեայց ըստ վկայութեանս որ եղաւ:*»[7]:

Վերլուծությունից պարզ է դառնում, որ ծիսակարգն իր բացատրության մեջ ոչ միայն պատմական տարրեր է պարունակում, այլ եկեղեցու պարագայում՝ հաճախ նաև քաղաքական:

«Գիրք հարցմանց»-ում ըստ վերոբերյալ բաժանման առաջին խմբում (արարողակարգային կամ ծիսակարգին վերաբերող հասկացություններ և եկեղեցական տոներ) տեղ են գտել *«ազապս մատաղաց», «աղօթք», «բաղարջակերք», «եկեղեցւոյ տօն», «Կիրակի», «հոգւոյ զալուստ», «մկրտութիւն», «յիջաջեմ», «Նոր զատիկ», «ոզէհանգիստ», «պատարագ», «պասքայ», «պենտա-*

[7] Նույն տեղում, էջ 482-483:

կոստէ», «տաղաւարահարաց տօն», «տօն խաչի» հասկացու-թյունները:

Երկրորդ խմբում են (ծիսակարգ և եկեղեցական տոներ իրականացնող անձինք, առարկաներ) *«աթոռք», «աշտանակ», «ապարօշն», «առաքեալ», «արտաքին զաւիթն», «արտաքին սրահ», «բազպան», «բեմն», «գօտի», «եմիփորոն», «ժամատուն», «խաչխաչ», «խորան», «խոյակ», «խոյրն», «կամար», «կոնքեռն», «կուսանք», «հայրապետ», «ձգնաւոր», «ճրագ», «մարգարէ», «մարտիրոսք», «միթրն», «նափորտն», «նիգք», «պատկերք սրբոցն», «սագաշէն եկեղեցի», «սրբութիւն սրբոցն», «սարկաւագունք», «սպասաւորք», «սփռիչ», «սիւն», «վակաս», «վահան», «վարագոյր», «վարդապետք», «վարշամակն», «տէրութիւնք», «ուրար», «ուխտաւոր», «քահանայք», «քահանայապետք», «քերօբէք»* հասկացությունները:

Երրորդ խմբում են (ժամակարգերը, երգասացությունները, շարականները) *«առաւօտու երգն», «Խաչեցարին», «կարդաց-մունք», «մեսեդի», «մեսեդի ճաշոյն», «ներբողեանք», «Ողոգոմեան», «Ուղղիցին», «քարոզք»* հասկացությունները:

Բերենք այն հասկացությունների քննությունը, որոնք առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում:

Մկրտութիւն - Եկեղեցու կարևորագույն այս խորհրդի մասին հեղինակը խոսում է շատ հանգամանորեն. ինչու կինը չի կարող մկրտել, ինչու կրկնակի չեն կարող մկրտվել. քննարկում է անգամ մկրտության պահին հնչող նախադասությունը՝ նախապատ-վությունը տալով գրաբարյան «մկրտեմ» ձևին, իր օրերում տարածում ստացած միջինհայերենյան «կու մկրտեմ» ձևի փոխարեն, որովհետև նրա կարծիքով՝ «Այս անուն ծառայ աստուծոյ գնեալ արեամբն քրիստոսի. եկեալ կամաւ յերախա-յութենէ ի մկրտութիւն: Մկրտի այժմ ի ձեռս իմ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ջոր և ազգն Ֆռանկաց այլայլելով ասեն, ես *կու մկրտեմ* զքեզ յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ: Ջոր և ան-յարմար շարաբանութեամբ զկո՛ւն ցուցանեն մկրտել և ո՛չ զնուիրեալն: Եւ երկրորդ անպատշաճութիւն, զի յասելն թէ՝ ես *կու մկրտեմ.* երևի թէ նուիրեալն ո՛չ իւր կամաւն է եկեալ ՚ի

մկրտութիւն, այլ բռնութեամբ և ի հարկէ՛ կու մկրտեմ: Որ և ըստ այսմ կերպիս ո՛չ լինի տուեալ շնորհք հոգոյն ի մկրտողէն առ մկրտեալն. զի պարգևք հոգւոյն ո՛չ արհամարհողաց և չկամողացն լինի տուեալ. այլ հաւատով խնդրողացն. ըստ որում թէ (ամենայն որ խնդրէ առնու) և այլն: Ապա ուրեմն ո՛չ վայելէ ասել թէ ե՛ս կու մկրտեմ»[8]: Այսպիսով հեղինակը նկատել է երկու հանգամանք. «կու» մասնիկի արդեն իսկ հարկադրական բնույթ ձեռք բերելը, ապա նախադասության կառուցվածքի առումով «կու» -ն ուղիղ խնդիր դիտարկելը:

Մկրտության վերաբերյալ Տաթևացին տալիս է չափազանց հետաքրքիր մի մեկնություն ևս, որով հատկապես ընդգծում է ծիսակարգի կարևորագույն նշանակությունը քրիստոնյայի համար. մկրտությամբ մարդը դառնում է աստծո որդի և եղբայրը Քրիստոսի՝ գերազանցելով այլադավաններին և անգամ՝ հրեշտակներին. *«մկրտութեամբն* լինիմք որդիք աստուծոյ և եղբարք քրիստոսի. և գերազանցիմք *գ* ազգաց. այսինքն հաաարակ մարդկան, և իսրայէլացւոցն, և հրեշտակաց երկնից: ...Ա՛րդ՝ դաւանութեամբն գերազա՛նց եմք մարդկան հեթանոսաց. և մկրտութեամբն՝ հրէից. և ծննդեամբն ի հոգւոյն՝ հրեշտակաց. զի նոքա ո՛չ ունին ծնանիլ ՚ի հոգւոյն. և ո՛չ եղբայր լինի քրիստոսի: ...Նոյնպէս և ծնունդք սուրբ աւազանին որք են անդրանիկք և անդամք քրիստոսի եղեալք, ազահութեամբ և պոռնկութեամբ կորուսանեն զշնորհին երկնաւոր. և ո՛չ լան և ո՛չ զղջան որպէս եսաւ: Եւ թէ լան և զղջան բոլոր սրտիւ ի ձեռն ապաշխարութեան, գտանեն վերըստին զշնորհին անդրանկութեան, և հասանին թողութեան մեղաց[9]»:

Թլպատութիւն – Հինկտակարանյան այս ծիսակարգի մասին խոսելիս Տաթևացին հրաշալիորեն երևան է հանում մեկնողական եղանակով քրիստոնեության բուն էությունը բացատրելու հմտությունը. Հին օրենքի կարևորագույն ծիսակարգերից մեկը՝

[8] Նույն տեղում, էջ 588:

[9] Նույն տեղում, էջ 309:

թլփատությունը, որն ուղղակիորեն պարտադիր կատարման ծես էր, Քրիստոսի պարագայում բացատրության կարիք ուներ. *Անթերին ու Անսկիզբը, Աննյութը* կարիք չուներ ծիսակարգով մաքրվելու, այլ միայն դրանով մեկնելու խորհուրդը և ազատելու հին օրենքի ծառայությունից. «Քրիստոս վասն է՞ր թլփատեցաւ: Ա՛րդ՝ զհինն զամենայն կատարեաց և վճարեաց. և ապա՛ նորոյս սկիզբն էարկ մկրտութեան և շնորհաց: Զի իցէ ինքն սկիզբըն և կատարումն ո՛չ միայն ըստ աստուածութեանն, այլ և ըստ մարդկութեանն[10]»:

Պսակ – Ազգագրական տարրեր է պարունակում *Պսակի* ծեսի բացատրությունը «...պսակն է զուգաւորութիւն արուի և իգի. ունելով *անբաժանելի կենցաղավարութիւն*: Եւ այս աճման սկիզբն պսակն է. որ միանայ հարսն ընդ փեսային. և լինի ըստ *սահմանադրութեանն աստուծոյ* ծննդագործութիւն: ...Որով լինի պսակս այս *դաշն և կապ ի մէջ առն և կնոջն*. որով լինի անքակ միութիւն: ...Եւ գիտելի է, զի պսակն սկսանի ՚ի նշանադրութիւնն, հաստատի *հաւանութեամբ սրտիցն* յորժամ յայտնեն բանիւ. զի *երկուց կամաց հաւանումն* հաստատէ՛ զպսակն: Իսկ կատարի պսակն օրհնութեամբ քահանային. և մարմնական զուգաւորութեամբն: Իսկ թէ վասն է՞ր դնի նշան: Ասեմք թէ՝ որպէս ծառն որ նախ ծաղկի և ապա՛ պտղաբերի: Նոյնպէս և նշանն պսակին ծաղիկն է: Զի յայնմ հետէ հարսն փեսային լինի նշանեալ, և փեսայն հարսինն է՛ յատկացեալ: ...Նոյնպէս և նախ նշան դնի հարսին: Իսկ հաւանումն երկուց կամացն՝ հաստատութիւն է պսակին: *Զի բռնութեամբ և առանց հաւանելոյ միմեանց՝ այսինքն փեսային և հարսին՝ ո՛չ հաստատի պսակն*: ...Զայս ունի խորհուրդ, որ հարսն և փեսայն յառաջ քան զպսակն տեսանեն զմիմեանս. և հաւանին սրտիւք և կամօք և ապա՛ պսակին: Իսկ ի կատարումն պսակին՝ նախ է՛ օրհնութիւն քահանային, և ապա՛ մարմնական զուգաւորութիւն[11]»: Ինչպես տեսնում ենք, եկեղեցու կարևորագույն ծեսը Տաթևացու մեկնությամբ նախ՝

---

[10] Նույն տեղում, էջ 485:

[11] Նույն տեղում, էջ 609- 610:

- աստծո սահմանադիր կանոն է

- անբաժանելի կենցաղավարություն է

- համաձայնություն է տղամարդու և կնոջ միջև

- երկու սրտի հավանություն է

- երկու կողմի կամքի և համաձայնության դրսևորում, և որ ամենակարևորն է՝ բռնությամբ կամ առանց համաձայնության Վարդապետը բացառել է պսակադրությունը:

Զոհաբերություն – Ըստ Տաթևացու մինչքրիստոնեական զոհաբերությունները նախապատրաստել են պատարագի խորհուրդը: «Կրկին էր ողջակէզն. մին որ արտաքոյ այրէին: Եւ միւսն ի սեղանն ի հոտ անուշից: Նշանակէ՛ զպատարագիլն քրիստոսի ի սեղան խաչին ի հոտ անուշից հօր և հոգւոյն: Այլ և արտաքոյ քաղաքին ի կողմն հիւսիսոյ: Իսկ միւս խոյն կատարմանն, քահանայիցն կերակուր և նուէրքն մովսէսի: Ա՛յն է որ ի վերնատունն զմարմինն և զարիւնն իւր բաշխեաց յառաքեալսն: Դարձեալ՝ կրկին է ողջակէզն. մին վասն մեղաց որ է՛ կամաւոր. և միւսն յանցանաց որ է՛ ակամայն: Եւ մի է քաւութեան պատարագն քրիստոսի. մեղաւորին և յանցաւորին: Դարձեալ՝ կրկին ողջակէզն. մին վասն մեղաց. և միւսն վասն սրբութեան: Վասն մեղա՛ց է՝ որ խոստովանութեամբ արտաքոյ ելեալ ի մեղաց և ապաշխարութեամբ քաւեմք զմեզ ներքին խորհրդով և արտաքին գործով: Եւ ողջակէզ սրբութեան է՝ յետ ապաշխարութեան զբարիս գործել. և զբովանդակ զհոգի և զմարմին մեր նուիրել աստուծոյ: Եւ զմորթ մեղաց մերկացեալ ի մէնջ որ է՛ հաճոյ աստուծոյ ի հոտ անուշից[12]»:

Քրիստոսի զոհաբերությունից հետո ողջակեզը ամբողջությամբ ձեռք է բերել հոգևոր խորհուրդ և Պատարագը ամբողջությամբ փոխարինել է ողջակեզին. «Դարձեալ՝ կրկին ողջակէզն, մին այն է որ մատուցանեմք զպատարագն քրիստոսի մարմնոյ և

[12] Նույն տեղում, էջ 362:

[13] Նույն տեղում:

[14] Նույն տեղում, էջ 193:

արեան: Եւ միւսն, որ զմարմին մեր պատարագեմք միշտ. սիրտ սուրբ և հոգի խոնարհ ունելով[13]»:

Կիրակի – Քրիստոնեական եկեղեցու հրամայված տոներից մեկն էլ Կիրակին է: Իսկ ինչո՞ւ հատկապես Կիրակին կամ Միաշաբաթը: «Զի՞նչ է յատկութիւն միաշաբաթ աւուրն որ է կիրակէն: Պատասխանի: Նախ՝ զի սկիզբն և առաջին է ամենայն աւուրց. զի նա կրկնելով առնէ զայլ աւուրս որպէս ասացաւ: Երկրորդ՝ զի ի նմա եղեն երկինք և երկիր. հրեշտակք և լոյսն և ա՛յլ տարերք. որ են է գործք արարչութեան: Երրորդ՝ բազում աստուածախօսութիւնք ի նմա եղեն. յելանելն նոյի ի տապանէն. և առ աբրահամ. և առ մովսէս ի սինա լեառն. և տուչութիւն օրինացն ի կիրակէ եղև: Չորրորդ՝ պատուեցաւ յարութեամբն քրիստոսի. և իջմամբ հոգւոյն սրբոյ ի դասս առաքելոցն: Հինգերորդ՝ օ՛ր է հասարակ յարութեան մարդկան. և գալստեանն քրիստոսի. և հատուցման ըստ իւրաքանչիւր գործոց[14]»:

Ուխտաւոր – Այս բացատրության պարագայում էլ Տաթևացու մեկնությունը համատեղում է մարմնավորը և հոգևորը. «Ուխտաւոր է որ ապաշխարէ վասն մեղաց: Նախ գերծու զհերն. և զոր ուխտիւն աճէ՝ զայն ի սեղանն հանել ի կատարումն ուխտին: Եւ ա՛յս է գերծուլն, զառաջին գործեալ մեղքն սրբել խոստովանութեամբ. և զապաշխարութեան գործն մատուցանել աստուծոյ: Ի գինւոյ և ի ցքոյ պահել, զի մոռացկոտ և քնու և ծոյլ և ապուշ առնէ գինին: Եւ քացախ ո՛չ ուտել, զի ապականութիւն է: Եւ ո՛չ զկորիզն, զի ի բաց ընկենլի՛ է: Եւ ո՛չ զխաղող, զի զբօսա՛նք է: Եւ ո՛չ զչամիչն, զի արևակէ՛զ է և պակաս ի զօրութենէ: Եւ այսպիսիքս ամէն ո՛չ են յարմար ուխտականի: Եւ ի յանապատն միս ուտելոյ հրաման ո՛չ ունէին. որպէս և ո՛չ ի դրախտին: Ապա յա՛յտ է՝ զի որ ընդ ապաշխարութեամբ է և կրօնաւոր, ի գինւոյ ի մրգոյ և ի մսոյ պահեսցէ[15]»:

---

[15] Նույն տեղում, էջ 389:

Այսպիսով, անգամ խիստ սեղմ վերլուծությամբ ակնհայտ է, որ ծիսական համակարգում էլ համադրելով հին ու նորը՝ Տաթևացին կարողացել է ուրույն խոսք ասել:

Grigoryan Susanna - Fundamental Ritual Concepts in the "Book of Questions" of Grigor Tatevatsi. - The Armenian studies in theology, philosophy and other fields of science have considerably been enriched by the literary legacy of Grigor Tatevatsi. His "Book of Questions" also includes a great number of ritual concepts and their interpretations, which are not referred in Maghaqia Ormanyan's "Dictionary of Rituals" famous in theArmenian studies.

We have tried to fill in that gap with the help of this study.

Григорян Сусанна - Основные обрядовые понятия в "Книге вопросов" Григора Татеваци. - Исследования армянского богословия, философии и других областей науки в значительной мере обогатились творческим наследием Григора Татеваци. Его "Книга вопросов" содержит большое количество обрядовых понятий, а также их толкований, не упомянутых в "Словаре обрядов" знаменитого исследователя Магакии Орманяна.

При кратком анализе становится очевидным, что и в системе обрядов, сопоставляя старое с новым, Татеваци смог сказать свое слово.

ԱՇԽԱՐՀԱԲԱՐԻ ՀՈԼՈՎԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՈՒՇ ՄԻՋՆԱԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Թադևոսյան Հասմիկ

Միջնադարյան հայ բժշկարանները հսկայական նյութ են պարունակում հայոց լեզվի ինչպես բառապաշարի, այնպես էլ կրած քերականական փոփոխությունների ուսումնասիրության համար: Հատկապես զգալի անելիք կա միջին հայերենի երկրորդ շրջանի[1] բժշկարանների ուսումնասիրության առումով: Այս շրջանում են սռեղծվել Սեբաստիայի բժշկագիտական դպրոցի ներկայացուցիչներ Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարանները («Գիրք բժշկական արհեստի» «Գիրք բժշկութեան տումարի»), որոնք՝ իբրև միջինհայերեն աղբյուրներ, առանձին ուսումնասիրության նյութ չեն դարձել: Նկատենք սակայն, որ վերջիններիս քննությունը մեզ պատկերացում է տալիս ուշ միջնադարի (16-17-րդ դդ.) լեզվավիճակի մասին: Կարծում ենք, որ ուսումնասիրության կարիք ունեն նաև քերականական առանձնահատկությունները, մանավանդ, որ դրանց բացահայտման առումով զգալի տարբերություն է նկատվում միջին հայերենի առաջին և երկրորդ ենթաշրջանների միջև: Եթե առաջինում դեռևս գերիշխում են գրաբարյան, ապա երկրորդում արդեն որակ են կազմում աշխարհաբարյան ձևերը:

Սույն հոդվածում ներկայացվում են Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարանների հոլովական առանձնահատկությունները: Գրաբարի և միջին հայերենի հոլովական հատկանիշների հետ այստեղ հստակորեն ընդգծվում և ավելի հաճախ են

* Երիտասարդ լեզվաբանների հանրապետական IV գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 16-29:

[1] Առաջնորդվել ենք «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» գրքում կատարված շրջանաբաժանմամբ, տե՛ս նշված աշխ., հ. Ա, Ե.,1972, էջ 42-44:

կիրառվում նաև աշխարհաբարյան ձևերը: Դրանց համար կարելի է առանձնացնել արտաքին թեքման չորս հիմնական հոլովում՝ *ի, ու, ո, ան*: Աշխարհաբարի հոլովական առաջին դրսևորումը *ի արտաքին հոլովման* ընդհանրացումն է: Սահմանափակված չլինելով այս կամ այն խմբերով՝ *ի* հոլովումը իր սահմաններն ընդլայնել է ի հաշիվ նորակազմությունների, բազմաթիվ փոխառյալ բառերի, ինչպես նաև այլ հոլովումներից անցած բառերի: Այդ հանգամանքը նկատի առնելով առանձնացրել ենք բժշկարաններում գործածված *ի* հոլովման հետևյալ խմբերը.

ա) գրաբարից ավանդված *ի* հոլովման բառեր, ինչպես՝ *ազոխի*)[2], *բունի* [3], *երեսի* (ԲՍ 85, ԱՍ 125), *լօշտակի* (ԱՍ 230), *կարասի* (ԱՍ 198),

կաղամբի (ԲՍ 128), *վարդի* (ԲՍ 78, ԱՍ 176) և այլն:

բ) գրաբարում այլ հոլովումների (այդ թվում նաև *ի-ա* խառն) պատկանող բառեր, որոնք անցել են *ի*-ի, թեև շարունակում են զուգահեռաբար գործածվել նաև իրենց հին հոլովմամբ, ինչպես՝ *կաքվի* (ԲՍ 77), *ուլի* (*ու*), *դդմի* (ԲՍ 73, ԱՍ 175), *ծռի* (ԱՍ 175), *ցաւի* (ԱՍ 136) (*ո*), *ջերմի* (ԱՍ 88), *սերմի* (ԲՍ 105) (*ա* ներքին) և այլն: Յ. Կարստը, իր քերականության մեջ առնանձնացնելով *նախնական* և *երկրորդական* ի հոլովում, վերջիններս դնում է *երկրորդականի* մեջ[4]:

գ) Միջին հայերենում ի հայտ եկած նոր բառեր և նորակազմություններ. *անծխոտի* (ԱՍ 209), *ականջթուքի, անթտակի* (ԱՍ 95), *աչացաւի* (ԱՍ 170), *բորի* (ԲՍ 111, ԱՍ 148), *զառնալեզուի* (ԲՍ 82), *գոզի* (ԱՍ 138), *թնիցավի* (ՍՍ 198), *լապըստակի* (ԱՍ 123), *խէվի* (ԲՍ 65), *խռչակ* (ԲՍ 82), *կարճահարի*

---

[2] Բունիաթ Սեբաստացի, *Գիրք բժշկութեան տումարի*, Ե., 1987, էջ 71: Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում ԲՍ համառոտագրությամբ:

[3] Ասար Սեբաստացի, *Գիրք բժշկական արհեստի*, Ե., 1993, էջ 223: Այսուհետև օրինակների

էջերը կնշվեն փակագծերում ԱՍ համառոտագրությամբ:

[4] Յ. Կարստ, *Կիլիկյան հայերենի պատմական քերականություն,* Ե., 2002, էջ 145-146:

(ԱՍ 128), *կռնակի* (ԱՍ 166), *հակուրի* (ԱՍ 150), *ջղախոտի* (ԲՍ 90, ԱՍ 157*), քթեթի* (ԱՍ 135) և այլն

դ) Օտար լեզուներից (հիմնականում արաբերեն, պարսկերեն և թուրքերեն) փոխառված բառեր, ինչպես՝ *դամռնի* (ԱՍ 127), *ըռովանտի* (ԲՍ 116), *թաշանուճի* (ԲՍ 70), *լապլապուի* (ԱՍ 131), *խիարի* (ԱՍ 175), *խաշխաշի* (ԱՍ 139), *ղազանի* (ԱՍ 221), *մաճունի* (ԲՍ 89), *շարպաթի* (ԱՍ 219), *շարապի* (ԲՍ 89), *նասուրի* (ԱՍ 225), *նկրիսի* (ԱՍ 137), *սումախի* (ԲՍ 71), *ֆալճի* (ԲՍ 72), *քարօսի* (ԲՍ 72) և այլն:

Ու արտաքին հոլովումը, ի տարբերություն միջին հայերենի առաջին ենթաշրջանի (երբ այն բնորոշվում էր իբրև սահմանափակ), ուշ միջնադարում ընդլայնել է իր սահմանները: Բժշկարաններում *ու* հոլովմաբ կիրառված բառերը բաժանել ենք հետևյալ խմբերի.

ա) գրաբարում *ու* հոլովման պատկանող, կենդանու անուն նշանակող և այլ գոյականներ, ինչպես՝ *ագռաւու* (ԱՍ 207), *աղուեսու* (ԱՍ 134), *առաւաւտու* (ԲՍ 111), *առիւծու* (ԱՍ 168), *արջու* (ԲՍ 117), *բաթու* (ԲՍ 125), *կաքվու* (ԲՍ 125), *կովու* (ԲՍ 114), *կղբու*(ԱՍ 129), *ուլու* (ԲՍ 84), *ձագու* (ԱՍ 201), *ծակու* (ԱՍ 171), *ծովու* (ԱՍ 165), *ժամու* (ԲՍ 75), *հովու* (ԲՍ 116), *մահու* (ԱՍ 107), *ցաւու* (ԲՍ 87), *ցրտու* (ԱՍ 107), *քնու* (ԱՍ 103), *քամու* (ԲՍ 77), *օղու*(ԲՍ 84), *փորու* (ԲՍ 93) և այլն:

բ) գրաբարում *ո* հոլովման պատկանող զգալի թվով բառեր, այդ թվում և ի վերջնահանգով, որոնք անցել են *ու* հոլովման, (դրանց մի մասը շարունակում է զուգահեռաբար հոլովվել *ո*-ով)ինչպես՝ *բքու* (ԱՍ 107), *գլխու* (ԲՍ 83), *լուսու* (ԲՍ 74), *լեղու* (ԲՍ 99), *հաւու*(ԲՍ 91), *հոգու* (ԲՍ 74), *ուժու* (ԱՍ 98), *պորտու* (ԲՍ 79), *կիսու* (ԱՍ 121), *կովու* (ԲՍ 114), *հոտու* (ԱՍ 191), *մորթու* (ԱՍ 101), *ձիթենու* (ԱՍ 171), *թզենու* (ԱՍ 169), *տարու* (ԱՍ 100), *մատնու* (ԲՍ 69) (վերջին երեքը *ո-ա* խառն հոլովումից են անցած) և այլն

գ) անորոշ դերբայը ևս *ո*-ից անցել է *ու* հոլովման, թեև շարունակում է հոլովվել նաև *ո*-ով, ինչպես՝ *խնդալու* (ԲՍ 71),

գնալու (ԲՄ 74), *ափրելու* (ԱՄ 114) *, արեւելու* (ԲՄ 83)*, խմելու* (ԲՄ 71), *ժռելու* (ԲՄ 102), *հարբենալու* (ԲՄ 71), *ուտելու* (ԱՄ 98)և այլն:

դ) գրաբարում *ի*, և *ի-ա* խառն հոլովումների պատկանող բառեր, որոնք *ու* հոլովման են անցել, ինչպես՝ *ահու* (ԲՄ 71), *այծու* (ԱՄ 150), *դիհու* (ԲՄ 76), *գիշերու* (ԱՄ 153)*, որձու* (ԱՄ 100), *սագու* (ԲՄ 125), *պախրու* (ԲՄ 93), և այլն

ե) *ու* հոլովիչով են հոլովվել նաև միջին հայերենում ի հայտ եկած որոշ բառեր (հիմնականում բարբառային և փոխառյալ), ինչպես՝ *խիարու* (ԲՄ 75), *քուլու* (ԲՄ 96), *լապստակու* (ԲՄ 68): Սրանց շարքին պիտի դասել նաև *ի*-ով վերջացող գոյականները, ինչպես՝ *խաթմու* (ԲՄ 87), *կիպարու* (ԱՄ 165), *շամախու* (ԱՄ 171), *տամրակունու* (ԲՄ 112), *քասնու* (ԲՄ 97) և այլն:

Արտաքին թեքման ո հոլովումը սահմանափակել է իր կիրառության սահմանները և աչքի չի ընկնում գործածության հաճախականությամբ: Նկատենք, որ այս հոլովումը նոր բառերով չի համալրվել. *ո*-ով հոլովվել են հիմնականում գրաբարում *ո* հոլովման պատկանող բառերը, որոնք արդեն զուգահեռաբար գործածվում են նաև *ու* հոլովիչով: Դրանք են՝ ա) ի-ով վերջացող բառերը՝ *գարոյ* (ԱՄ 123), *գիհոյ* (ԱՄ 136), *գինոյ* (ԲՄ 63), *ոսկոյ* (ԱՄ 142), *լեղոյ* (ԱՄ 150), *տարոյ* (ԱՄ 178), *թեղոյ* (ԱՄ 211), *կաղնոյ* (ԱՄ 142), *քամոյ* (ԲՄ 84), *փոշոյ* (ԱՄ 169), բ) անորոշ դերբայը (*լինալոյ* (ԱՄ 102), *ուտելոյ* (ԱՄ 71), գ) գրաբարյան որոշ բառեր *անասնոյ* (ԱՄ 169), *աստուծոյ* (ԱՄ 110), *գլխոյ* (ԲՄ 63), *մարդոյ* (ԱՄ 113), *մարմնոյ* (ԱՄ 87), *պտղոյ* (ԱՄ 172), *ցրտոյ* (ԲՄ 79), *օդոյ* (ԱՄ 103), *քնոյ* (ԱՄ 68), *իշոյ* (ԱՄ 149), *պորտոյ* (ԱՄ 141), *փորոյ* (ԱՄ 109) և այլն:

Առանձին դեպքերում միայն նկատելի են այլ հոլովումների պատկանող բառերի հոլովում *ո* հոլովիչով, ինչպես՝ *ի* հոլովման շաղ բառը՝ *շաղոյ* (ԱՄ 170)), *ի-ա* խառն հոլովման *տեղ- ը* ՝*տեղոյ* (ԲՄ 75):

Արտաքին թեքման *ան հլովումը*, որ առաջ է եկել գրաբարի *ա* ներքին հոլովումից, կիրառվել է միայն *-ակ, -իկ, -ուկ* վերջնահանգով բառերի դեպքում, ինչպես՝ *աղջկան* (ԲՄ 78), *տղական*

(ԲՍ 104), *այրկան* (ԱՍ 102), *էրկան* (ԱՍ 99), *կնկան* (ԱՍ 99), *մարդկան* (ԱՍ 190):

Աշխարհաբարի *վան հոլովումը* կիրառվել է միայն *գիշեր* և *ցերեկ* գոյականների համար՝ *գիշերվան, ցերեկվան* (ԱՍ 104):

Ներքին թեքման հոլովումներից բժշկարաններում կենսունակ է միայն *ա* հոլովումը, որին, ինչպես և գրաբարում, ենթարկվում են *ա ներքին* հոլովման գոյականները, այն է՝ ա) ն-ով և նրան նախորդող բաղաձայնով վերջացող՝ *ամռան* (Աս 152), *եղան* (ԲՍ 69), *լեռան* (ԲՍ 107), *ծիծռան* (ԲՍ 77), *ձկան* (ԲՍ 127), *ճռան* (ԲՍ 106), *նռան* (ԱՍ 192), *շրթան* (ԱՍ 178), *ջերման* (ԲՍ 109), *սերման* (ԱՍ 131), *սիսռան* (ԲՍ 64), *սնկան* (ԱՍ 178), *փայծղան* (ԲՍ 98), *ըղնկան* (ԱՍ 102), *ծնկա*ն (ԱՍ 134), բ)-ութիւն, վերջածանցով և *-ուն, -իւն* վերջավորվող՝ *ալնորութեան* (ԱՍ 100), *արեան* (ԲՍ 68), *բնութեան* (ԲՍ 64), *գիջութեան* (ԱՍ 100), *հովութեան* (ԱՍ 107), *վատուժութեան* (ԱՍ 106), *քարշողութեան* (ԱՍ 101), գ) *-ումն* վերջավորվող գոյականներ՝ շարժման և այլն:

Ներքին թեքման մյուս հոլովումներն հազվադեպ են հանդիպում, ինչպես՝ *անձին* (ԱՍ 113), *գառին* (ի), *ոսկեր* (ե) (ԱՍ 122), *աղջկանմօր* (ո):

Նշված հոլովումներին պատկանող բառերը, ինչպես և բնորոշ է միջին հայերենին, զուգահեռաբար հոլովվում են նաև այլ հոլովիչով՝ առաջ բերելով քերականական զուգաձևություններ: Այդ փոխանցումները տեղի են ունենում հիմնականում *ի* ընդհանուր հոլովման և այլ հոլովումների միջև, ինչպես՝ *ատամի – ատաման* (ԱՍ 187), *ջերմին* (ԱԱ 96) - *ջերման* (ի/ան), *ուլի* (ԲՍ 77)- *ուլու* (ԲՍ 84), *կաքվի* (ԲՍ 77)- *կաքվու* (ԲՍ 125) (ի/ու), *ուժի* (ԱՍ 99) - *ուժոյ* (ԱՍ 166) - *ուժու (*ԲՍ 71), *ցաւի* (ԱՍ 135) - *ցաւոյ* (ԲՍ 67) - *ցաւու (ԲՍ 87), (ի/ո/ու), մյուս կողմից ո և ու հոլովումների միջև, ինչպես՝ աղաւնոյ (ԱՍ* 108) - *աղաւնու* (ԲՍ 125), *գլխոյ - գլխու* (ԲՍ 83), *իշոյ* (ԲՍ 88) - *իշու* (ԱՍ 149), *լեղոյ* (ԱՍ 150) - *լեղու* (ԲՍ 99), *մարդոյ* (ԱՍ 97) - *մարդու* (ԲՍ 117), *ցրտոյ* (ԲՍ

79) - *ցրտու* (ԲՍ 86), *պորտոյ* (ԱՍ 141)-*պորտու* (ԲՍ 79), *տարոյ* (ԱՍ 178)- *տարու* (ԱՍ 100), *օղոյ* (ԱՍ 103)-*օղու* (ԲՍ 84):

Հոլովական առանձնահատկությունների մասին անհնար է խոսել առանց անդրադառնալու հոգնակի թվի կազմությանը, մանավանդ որ բժշկարաններում աշխարհաբարյան դրսևորումներն ավելի զգալի են: Այստեղ ևս արտացոլում են գտել թվակազմության՝ միջին հայերենին բնորոշ անմիօրինակությունը, հոգնակերտների բազմազանությունը, սակայն միևնույն ժամանակ նկատելի է նաև հստակեցում. գոյականների մեծ մասը հոգնակին կազմում է չորս հիմնական ձևույթներով՝ *եր, նի, ներ, ք* , իսկ մյուսները (ունք, անք, ոնք, իք, տիք, վի վեր, վնի) ավելի քիչ են հանդիպում:

Գործածության հաճախականությամբ ամենից առաջ աչքի է ընկնում աշխարհաբարի *եր* հոգնակերտը, որով հոգնակի կազմությունները գերազանցում են գրաբարյան *ք*-ին: Արդեն նկատելի է, որ *ք* հոգնակերտը սահմանափակել է իր կիրառությունը, թեև չկա որևէ օրինաչափություն, թե որ բառերն են *ք* հոգնակերտ ստանում: Բացառություն են կազմում *ձայնավորով* (հիմնականում *ի*-ով) վերջավորվողները (*աղիք, գոլորշիք, սպեղանիք*), որոնք էլ մեծաթիվ չեն: Ք-ն հիմնականում կցվում է եզակի ուղղականին, ինչպես՝ *անդամք* (ՍԱ 103)*, գործք* (ԱՍ 224)*, զավակք* (ԱՍ 112), *իրք* (ԱՍ 87)*, կերակուրք* (ԲՍ 104)*, մժիղք* (ԱՍ 79)*, նմանք* (ԱՍ 87)*, շատք* (ԱՍ 129)*, սահմանք* (ԱՍ 113)*, վերջք* (ԲՍ 82)*, տերևք* (ԱՍ 115) և այլն: Միայն ներքին թեքման որոշ գոյականների դեպքում նկատելի է սեռական-տրականի հիմքից կազմություն, ինչպես՝ *աւուրք* (ԲՍ 119), *ոսկերք* (ԲՍ 85):

Տվյալ բժշկարաններում արդեն հստակեցում է նկատվում. *եր*-ը միավանկ բառերի հոգնակերտն է, ինչպես՝ *դարձեր* (ԱՍ 150), *խոցեր* (ԱՍ 91), *ծլեր* (ԱՍ 223), *կոպեր* (ԲՍ 87), *հապեր* (ԲՍ 82), *ձուեր* (ԱՍ 212), *դուրսեր* (ԱՍ 139), *ճանճեր* (ԱՍ 169), *մաղձեր* (ԱՍ 111), *շներ* (ԲՍ 82), *ջղեր* (ԲՍ 73, ԱՍ 93), *տակեր* (ԱՍ 140), *ցավեր* (ԱՍ 91) , *ցեղեր* (ԲՍ 63), *քնքեր* (ԱՍ 119)*, օրեր* (ԲՍ 83) և այլն: Բացառություն են կազմում միայն *ակռատկեր* (ԱՍ 122)*,*

բնութեներ (ԱՍ 100), *մեջտեղեր* (ԱԱ 98) գոյականները, որոնց երկուսի դեպքում էլ նկատելի է աշխարհաբարյան ևս մեկ սկզբունք՝ վերջին բաղադրիչի միավանկ գոյական լինելու հանգամանքը:

Հաճախակի է հանդիպում հոգնակերտը *նի* հոգնակերտը: Առաջ գալով գրաբարի *անի*-ից՝ *ա*-ի անկմամբ՝ *նի*-ն միջին հայերենում աչքի է ընկնում երկվանկ բառերի հոգնակին կազմելով, ինչպես՝ *աղունի* (ԲՍ 118)*, բանձարնի* (ԱՍ 84)*, բլիթնի* (ԱՍ 162)*, երեսնի* (ԲՍ 88)*, երակնի* (ԲՍ 69)*, ըղնգնի* (ԱՍ 233)*, թրիաքնի* (ԲՍ 118)*, կլօրնի* (ԱՍ 181)*, հաքիմնի* (ԱՍ 233)*, ճանփնի* (ԲՍ 67)*, մացառնի* (ԱՍ 231)*, նշաննի* (ԱՍ 115)*, շաղախնի* (ԲՍ 120)*, ոլոքնի* (ԲՍ 70)*, ուռեցնի* (ԱՍ 91)*, պատճառնի* (ԱՍ 88)*, տամարնի* (ԲՍ 108)*, փորոքնի* (ԱՍ 102)*, ֆիթիլնի* (ԱՍ 144) և այլն:

Աշխարհաբարյան *ներ* հոգնակերտը, որն իր կիրառության սահմանները ընդլայնում է միջին հայերենի երկրորդ շրջանում, ևս զգալի գործածություն ունի: Առաջ գալով *նի*-ի և *եր*-ի ձուլումից՝ *ներ* հոգնակերտը, ինչպես և բնորոշ է աշխարհաբարին, կազմում է բազմավանկ (2 և ավելի) բառերի հոգնակին, ինչպես՝ *ատամներ* (ԱՍ 213)*, բժիշկներ* (Աս 111)*, լեսքներ* (ԱՍ 130)*, կոճիճներ* (ԲՍ 122)*, կտրճներ* (ԱՍ 141)*, համալներ* (ԲՍ 107)*, մորհամներ* (ԱՍ 193)*, շարապներ* (ԱՍ 121)*, շարպաթներ* (ԲՍ 125)*, պալտրներ* (ԲՍ 107)*, տամարներ* (ԲՍ 77)*, տղայկներ* (ԱՍ 101)*, փէիկներ* (ԲՍ 107) և այլն:

Գործածությամբ հաճախականությամբ աչքի է ընկնում նաև *ունք* հոգնակերտը, ինչպես՝ *երիկամունք* (ԱՍ 151)*, թիկունք* (ԲՍ 102)*, խնունք* (ԱՍ 232)*, մատունք* (ԱՍ 155)*, մկունք* (ԲՍ 71)*, շարժմունք* (ԱՍ 88)*, որդունք* (ԱՍ 170)*, պռկունք* (ԱՍ 171)*, պատահմունք* (ԱՍ 87)*, ցաւունք* (ԱՍ 228) և այլն:

Մյուս հոգնակերտները ավելի քիչ են հանդիպում, յուրաքանչյուրով կազմվել է մեկ-երկու բառ. *ճիճւորիք* (ԱՍ 112)*,մարդիք* (ԱՍ 105)*,նմանիք* (ԱՍ 93)*, տեղիք* (ԱՍ 93)*, քաղցրիք* (ԱՍ 152) (*իք*), *դեղրանք* (ԲՍ 111) (*անք*), *այտոնք* (ԱՍ 108) (*ոնք*),

ծակտիք (ԱՍ 92) (*տիք*), *ոտնվեր* (ԱՍ 130) (*վեր*), *իրվնի* (ԱՍ 230) (*վնի*):

Միջին հայերենին և բարբառներին բնորոշ *վի* հոգնակերտը[5], որ հայտնի է որպես մարմնի զույգ անդամներ նշանակող, բժշկարաններում կիրառվել է չորս անգամ միայն. *աչվի* (ԲՍ 87), *երեսվի* (ԱՍ 101), *յոտվի* (ԲՍ 65), *իրվի* (ԱՍ 88) օրինակներով: Կարելի է ասել, որ *վի*-ն այստեղ կանոնական գործածություն չունի. մանավանդ եթե հաշվի առնենք այն հանգամանքը, որ տվյալ բառերը ավելի հաճախ մյուս հոգնակերտներով են հանդիպում, ինչպես՝ *աչք* (ԲՍ 76), *երեսնի* (ԲՍ 88), *իրք* (ԱՍ 87), *ոտք* (ԱՍ 99):

Ինչ վերաբերում է հոգնակերտների զուգաձևություններին, ապա պետք է նկատել, որ դրանք բժշկարաններում այնքան էլ աչքի չեն ընկնում: Հիմնականում հանդիպում են *նի / ներ* - *բժշկնի* (ԱՍ 109) – *բժիշկներ* (ԱՍ 111), *պալտրնի* (ԲՍ 103) - *պալտրներ* (ԲՍ 107), *շարապնի* (ԱՍ 139) - *շարապնի* (ԱՍ 121), ավելի սակավ՝ *ք / նի* - *նշանք* (ԱՍ 139) - *նշաննի* (ԱՍ 115), *ք/ եր / ունք – ցաւ* (ԱՍ 160)- *ցաւեր* (ԱՍ 91) - *ցաւունք* (ԱՍ 229), *եր / անք / ունք – դեղեր* (ԱՍ 87)-*դեղրանք* (ԲՍ111)- *դեղարունք* (ԱՍ 227):

Հոլովաձևերի կազմության հարցում, ինչպես գիտենք, միջին հայերենում արդեն նկատելի է ձևային ընդհանրացում, սեռական և տրական հոլովների նույնացում, պահպանվում են միայն գրաբարի *զ* և *ի* նախդիրները, առաջինը՝ որոշյալ հայցականի, իսկ երկրորդը՝ բացառականի համար: Ինչպես արդեն նշեցինք հոլովման տիպերին անդրադառնալիս, սեռական-տրական հոլովի հիմնական վերջավորությունը *ի*-ն է, ապա նաև *ու*-ն, *ո*-ն, *ան*-ը:

Այլ է պատկերը հոգնակի սեռականի դեպքում: 17-րդ դարի բժշկարաններում լիովին արտացոլվել են միջին հայերենի հոգնակի թվի սեռական-տրականի առանձնահատկությունները. այն է՝ նկատելի է հոլովաթվանիշ թեքույթների առատություն և

[5] *Վի* հոգնակերտի մասին տե՛ս Գ. Ջահուկյան, *Հին հայերենի հոլովման սիստեմը և նրա ծագումը,* Ե., 1959, էջ 140:

բազմազանություն: Կիրառվել են հոգնակի սեռականի երեք տեսակի թեքույթներ.

1. Գրաբարյան թեքույթներ (*աց, ոց, ուց*), որոնք համադրականորեն արտահայտում են թվի և հոլովի իմաստը: Նկատենք, որ բժշկարաններում ավելի շատ կիրառվել են հենց սրանք: Եթե եզակիում սեռականի հիմնական հոլովիչը *ի*-ն է, ապա հոգնակիում գոյականների զգալի մասը հոլովում է ***աց***-ով, ինչպես՝ *աչաց* (ԲՍ 76), *բժշկապետաց* (ԱՍ 129), *դիհաց* (ԱՍ 158), *երիկամաց* (ԱՍ 124), *խելաց* (ԲՍ 66), *հիւանդաց* (ԱՍ 180), *ձագաց* (ԱՍ 176), *մրգաց* (ԲՍ 73), *նստոտեղաց* (ԲՍ 122), *շնչահանաց* (ԱՍ 101), *պատճառաց* (ԱՍ 159), *ջաղջաց* (ԲՍ 81), *ռամկաց* (ԱՍ 189), *ստամոքաց* (ԱՍ 139), *տեղաց* (ԲՍ 68) և այլն: *Ոց* թեքույթով հոգնակի սեռական են կազմել հիմնականում *ո* հոլովման պատկանող գոյականները, որոնք այնքան էլ շատ չեն, ինչպես՝ *անդամոց* (ԱՍ 91), *գրոց* (ԱՍ 205), *զօղուածոց* (ԱՍ 98), *խառնվածոց* (ԲՍ 79), *կշռոց* (ԱՍ 221), *կերակրոց* (ԲՍ 84), *հելլենացւոց* (ԱՍ 113), *հաւատոց* (ԲՍ 76), *ջլոց* (ԱՍ 131), *ցաւոց* (ԱՍ 118) և այլն: *Ուց* թեքույթով արձանագրել ենք միայն *կովուց* (ԱՍ 137) ձևը, իսկ մյուս դեպքերում *ու* հոլովման գոյականները հոլովվել են միջին հայերենի նման, այսինքն՝ հոլովիչը ավելացել է աշխարհաբարյան *եր* հոգնակերտից հետո:

2. Միջին հայերենին բնորոշ երկբաղադրիչ թեքույթներ, որոնցից առաջինը արտահայտում է թվի, իսկ երկրորդը՝ հոլովի իմաստ: Այս դեպքում թեքույթները կազմվում են միջինհայերենյան հոգնակերտին ավելացնելով *ու* կամ *ոյ* հոլովիչը (եր+ոյ, եր+ու, նի+ ոյ, եր+ի): Ինչպես արդեն նշեցինք, *եր + ու* թեքույթով նախ և առաջ հոլովվել են *ու* հոլովման գոյականները, ինչպես՝ *դեղերու* (ԱՍ 130), *ծակերու* (ԱՍ 91), *ցաւերու* (ԱՍ 113): Մյուս դեպքերում որևէ օրինաչափություն չի գործում, մանավանդ որ միևնույն գոյականները զուգահեռաբար գործածվել են *երու* և *երոյ* թեքույթներով, ինչպես՝ *ազգերոյ* (ԱՍ 147), *դեղերոյ* (ԱՍ 113), *խոցերոյ* (ԱՍ 155), *պատերոյ* (ԱՍ 230), *ջղերու* (ԱՍ 140), *ջերմերու* (ԲՍ 78), *տակերու* (ԱՍ 151), *ցավերոյ* (ԲՍ 124) և այլն:

Բազմավանկ գոյականների դեպքում կիրառվել է *ներ+ու* թեքույթը, ինչպես՝ *կտրձներու* (ԱՍ 141), *մորհամներու* (ԱՍ 193), *պռկներու* (ԱՍ 72), *տղայկներու* (ԱՍ 101)*և* այլն: Հոգնակի սեռական-տրականի այս ձևերը, ինչպես գիտենք, բնորոշ են արևմտահայերենին, իսկ արևելահայերենին բնորոշ *եր+ի* ձևը բժշկարաններում ավելի սակավ է հանդիպում, ինչպես՝ *կայծերին* (ԱՍ 150), *ջղերի* (ԱՍ 230), *սամղերիս* (ԱՍ 224):

Այս խմբի թեքույթներից կիրառման հաճախականությամբ երկրորդ տեղում են *նի* հոգնակերտով և *ու* կամ *ոյ* հոլովիչով հոլովվող գոյականները, ինչպես՝ *երկնուն* (ԱՍ 99), *ելնղնոյ* (ԱՍ 213), *ծարուրնու* (ԱՍ 190), *պատճառնոյս* (ԱՍ 87), *քամստնոյ* (ԱՍ 154) և այլն:

3. Թեքույթներ, որոնք կազմվել են միջինհայերենյան հոգնակերտով և գրաբարյան հոլովիչով (եր+աց /ոց / ուց): Այս տեսակը սակավ է հանդիպում. ուշագրավ է, որ միևնույն *դեղ* գոյականը բժշկարաններում հոլովվել է հոգնակի սեռականի երեք ձևով՝ *դեղերաց* (ԱՍ 209), *դեղերանց* (ԱՍ 116), *դեղերուց* (ԱՍ 229):

Անդրադառնանք նաև գրաբարյան *եաց* թեքույթին, որով գրաբարում հոգնակի սեռական են կազմել խառն հոլովումների (*ի-ա, ո-ա*) գոյականները: *Իք* -ով վերջավորվող բառերի դեպքում բժշկարաններում երբեմն նկատելի է այդ ձևը, ինչպես՝ *բաղա-նեաց* (ԱՍ 231), *ընտանեաց* (ԱՍ 115), ըստ *կարեաց* (ԱՍ 201), *չարեաց* (ԱՍ 185): Ըստ Ց. Կարստի՝ այս գոյականները միօրինակացման օրենքի ճնշման տակ միացել են *ի* վերջավորությամբ բառերին՝ վերցնելով վերջիններիս հոգնակի սեռականի *եաց* ձևը, որն էլ դարձել է *եց* [6]: Նշված բժշկարաններում տվյալ բառերը հիմնականում հանդիպում են *եց հնչյունափոխված ձևով, ինչպես՝ աղեց, բաղնեց, կարեց, շլնեց:* Այդպիսով՝ կարելի է ասել, որ վերջիններիս համար *եց*-ը ամրագրվել է իբրև սեռականի և դրանից կազմվող բացառականի ցուցիչ:

---

[6] Տե՛ս Ց. Կարստ, նշվ. աշխ., էջ 206:

Ճիշտ է նկատվել նաև, որ *եց* թեքույթով ձևերը ավելի շատ հանդիպում են եզակիի իմաստով[7]: Պատճառն այն է, որ տվյալ բառերը՝ *բաղնիք, կարիք, շլնիք*, չարիք հիմնականում գրաբարի անեզականներն են, որոնք հոգնակիաձև են հոլովվում, բայց արտահայտում են եզակիի իմաստը. «Նշանն այն է, որ երեսն կարմիր լինի, *շլնեց* և բազկին երակն ի լի լինի» (ԲՍ 60): «...բ/2/ տամար կա, որ *ի շլնեցն* բ./2/ դիհեն երթա» (ԲՍ 106): «Եւ երբ *ի բաղնեցն* ելնէ, սակավ զինի խմէ» (ԱՍ 169): «Պատճառն այն է, որ տաքնա և քրտնի կամ ի *բաղնեցն ելնէ* և պաղ ջուր խմէ» (ԲՍ 85): «Յերբ պիտենայ տուր *ըստ կարեցն* հիվանդին և օգտէ» (ԱՍ 127): Թերևս բացառություն է կազմում *աղեց* ձևը, որ միանշանակորեն կիրառվում է հոգնակիի իմաստով. «Նշանն այն է, որ ի ներսէն *աղեց* սկրտուք գա» (ԲԱ 96): «...որ օգտէ տալախին ցավուն և *աղեց* զաներուն» (ԱՍ 172): «Եւ որ սունկ չունենայ և արիւն երթայ այնոր պատճառն *աղեցն* երկնին բացւելուն լինի» (ԲՍ 123):

Բացառական հոլովը, ինչպես միջին հայերենում, առհասարակ, աչքի է ընկնում հոլովակազմիչների առատությամբ, և հնարավոր չէ այս հոլովի կազմության հարցում գտնել որևէ օրինաչափություն, մանավանդ որ միևնույն բառը կարող է գործածվել մի քանի վերջավորություններով՝ ունենալով և՛ նախդրավոր և՛ աննախդիր ձևեր[8]:

Եզակի բացառականը հիմնականում կազմվում է *ի* նախդրով և *է* հոլովակազմիչով (*յարենէ* (ԲՍ 101), *ի դուրսէն* (ԱՍ 102), *ի լինտէն* (ԱՍ 179), *ի կերակրէն* (ԱՍ 115), *ի ներսէ* (ԲՍ 92), *ի շարժմանէն* (ԱՍ 88), *ի պաղէ* (ԲՍ 95), *ի սնկէն* (ԲՍ 124)), կամ միայն հոլովակազմիչով (*բլղամէ* (ԱՍ 228), *դախիրայէն* (ԲՍ 92), *զախմէն* (ԲՍ 110), *լուծմանէն* (ԱՍ 89), *կերակրէն* (ԲՍ 125), *կնկանէ* (ԱՍ 225), *հիմնէն* (ԱՍ 204), *ձկնէ* (ԱՍ 225), *սրութենէ* (ԲՍ 105), *ուռեցնէ* (ԲՍ 92), *փաղվնէ* (ԱՍ 154)): Բացի այս ընդհանրական ձևերից, բացառականը հանդես է գալիս նաև միայն *ի* նախդրով և

---

[7] Է. Մկրտչյան, *Աշխարհաբարի գրական տարրերը միջնադարի գրական հուշարձաններում*, Ե., 1980, էջ 123:
[8] Տե՛ս նույն տեղում, էջ 119-120:

սեռական-տրականի թեքույթներով՝ առանց հոլովակազմիչի, ինչպես՝ *ի զինոյ, ի մսոյ* (ԱՍ 115)*, ի ցրտոյ* (ՍՍ 140)*, ի գլխացավու* (ԲՍ 105)*, ի յուսկրացավու* (ԲՍ 60)*, ի բաղնեց* (ԱՍ 169)*, ի շլնեց* (ԱՍ 106): Առավել ուշագրավ են բացառականի՝ եզակի իմաստով աննախդիր կիրառությունները *աց, ից, ոց, ուց և եց* թեքույթների հետ: Այս դեպքում բացառականը ձևով նույնանում է սեռական-տրականին և միայն իմաստից է երևում հոլովական պատկանելությունը. ինչպես՝ Պատճառն *այնկից* լինի, որ … ի տղաբերքն ջուր շատ կու խմէ (ԲՍ 101): …և փորոքն անկանի, նա *անտից* ընծայի զաւակն (ԱՍ 103): Որ ի ջղերն ցաւ կենայ, եթէ ի ցրտոյ և եթէ *զարկուց* (ԱՍ 140):

Ըստ Ջահուկյանի՝ հոգնակի ձևերը որպես եզակի ըմբռնելու համար հիմք են ստեղծել գրաբարի անեզական բառերը, որոնց բացառականի *ից*-ը սկսել է ըմբռվել իբրև եզակի բացառականի վերջավորություն[9]: Այսպիսով՝ հենց այս շրջանում արդեն կարելի է փաստել աշխարհաբարի բացառականի *ից* հոլովակազմիչի առկայությունը:

Հոգնակի բացառականը իր կազմությամբ նմանվում է հոգնակի սեռական-տրականին. վերջինս կազմվում է հոգնակի սեռականի *աց, ից, ոց, ուց, նաև եց* թեքույթներով, իսկ հոլովակազմիչի դեր է կատարում *ի* նախդիրը, ինչպես՝ *ի ծնողաց* (ԱՍ 111)*, ի հիւանդաց* (ԱՍ 116)*, ի շնչահանաց* (ԱՍ 101)*, ի տեղացն* (ԱՍ 90)*, ի սալուց* (ԲՍ 100)*, ի դրուց* (ԱՍ 100)*, ի մաղձից* (ԱՍ 111)*, ի նեարդից* (ԱՍ 131)*, ի յոտիցն* (ԲՍ 106)*, յաղեց* (ԱՍ 126) և այլն: Առանձին դեպքերում նկատելի են նաև *կրկնակ հոլովման*[10] (կրկնակի բացառականով, այն է՝ սեռական-տրականի հոլովակազմիչ + է), կիրառություններ, ինչպես՝ *ի դրուցէ* (ԱՍ 136), *ի կրծոցէն* (ԱՍ 138), *ի տեղացէն* (ԱՍ 93), *ի տղակուցէ* (ԱՍ 122):

17-րդ դարի բժշկարանների քննությամբ հստակ կարող ենք ասել, որ գործիական հոլովի թեքույթներից (աւ, իւ, ով, ու ամբ,

---

[9] Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 135:

[10] Այս մասին ավելի մանրամասն տե՛ս Հ. Աճառյան, *Լիակատար քերականություն հայոց լեզվի*, հ. III, Ե., 1957, էջ 852-856:

երբ) տարբեր հոլովման պատկանող բառերի համար արդեն իբրև գործիականի հոլովակազմիչ ընդհանրացել է աշխարհաբարի *ով*-ը, ինչպես՝ *աղով* (ԲՍ 117)*, բամբկով* (ԱՍ 168)*, եղով* (ԲՍ 124)*, ըղնկով* (ԱՍ 194)*, թթվով* (ԲՍ 125)*, կամով* (ԲՍ 105)*, հուկնայով* (ԲՍ 100)*, ճերմկուցով* (ԲՍ 111)*, մշկով* (ԱՍ 221)*, շարապով* (ԲՍ 93)*, պարզուտով* (ԱՍ 136)*, սերմով* (ԱՍ 232)*, տարչինով* (ԲՍ 98) և այլն:

Ով-ի հաղթանակը (ընդգծումը մերն է) Աճառյանը բացատրում է նրանով, որ այն ամենից լավ է զուգորդվում *ւ*-ի հետ[11]: Գործիականի *ամբ* թեքույթն էլ ընդհանրացել է *-ութիւն* վերջավորությամբ *ա* ներքին հոլովման պատկանող բառերի համար (*անուշութեամբ, կուսութեամբ, շարժելութեամբ, ողոր-մութեամբ, օգնութեամբ*), որոնք աշխարհաբարում ևս *ամբ*-ով են թեքվում: Առանձին դեպքերում միայն կիրառվել են նաև *աւ* և *իվ* վերջավորություններով գրաբարյան հետևյալ ձևերը. *ղիւրաւ* (ԲՍ 89), ժամանակաւ (ԲՍ 123), կամաւ (ԱՍ 107), ձեռաւ (ԲՍ 100), ճաւաւ (ԲՍ 103), բանիւ (ԱՍ 116), մարդիւ (ԱՍ 88), պատճառիւ (ԱՍ 117), փորձիւ (ԲՍ 68), քացախիւ (ԱՍ 135):

Հոգնակի գործիականը հիմնականում գործածվել է *եր* և *նի* հոգնակերտներով ու *ով* հոլովակազմիչով (*դեղերով* (ԲՍ 90), *ձիթերով* (ԱՍ 211), *ճղերով* (ԱՍ 199), *տերևնով* (ԲՍ 118)), թեև կիրառվել են նաև *օք* վերջավորությամբ բառեր, ինչպես՝ *դիմօք* (ԱՍ 131)*, իրօք* (ԱՍ 115)*, կամօք* (ԲՍ 121)*, հնտանօք* (ԱՍ 211)*, ձեռօք* (ԱՍ 99)*, նշանօքն* (ԱՍ 120)*, ջանօք* (ԱՍ 117)*, չքօք* (ԱՍ 131)*, սօրօք* (ԱՍ 131):

Բժշկարաններում զգալի հետաքրքրություն են ներկա-յացնում ներգոյական հոլովի կիրառությունները: Ներգոյականի իմաստը հավասարապես արտահայտվում է ինչպես գրաբարաձև, ընդ որում *ի* նախդիրը և՛ եզակիի, և՛ հոգնակիի դեպքում դրվում է հայցականի հետ (ի բաղնիսն, ի դանոնն, ի բուշտն, ի սիրտն, ի յերիկամունքն), այնպես էլ աշխարհաբարին բնորոշ *ում* հոլովա-կազմիչով, ինչպես՝ *այամքումն* (ԱՍ 230), *զինումն* (ԱՍ 224),

[11] Հ. Աճառյան, *նշվ. աշխ.*, էջ 527:

մաղանումն (ԱՍ 189), *ոտքերումն, ջղերումն, միքումն* (ԱՍ 230), *փարտումն* (ԲՍ 108), *եղի միջում* (ԱՍ 216): Իբրև ներգոյականի իմաստ արտահայտելու միջոց՝ կիրառվել է նաև *մեջ* կապը սեռական հոլովի հետ (ի մէջն ծովու (ԱՍ 196), ի մէջ աղեցն (ԱՍ 98)): Տարածված է հատկապես դասական թվականների ներգոյականական կազմությունը *ում* վերջավորությամբ, ինչպես՝ *երկրորդումն* օրն (ԱՍ 116), *չորրորդումն* օրն (ԱՍ 217), *վեցերորդում* (ԱՍ 218): Այս կազմությամբ ներգոյականի ձևեր վկայվել են 12-13 դդ. հիշատակարաններում և վիմագիր արձանագրություններում[12]:

Այսպիսով՝ ուշ միջնադարի բժշկարաններում դրսևորվել են աշխարհաբարի հոլովման համակարգի գրեթե բոլոր առանձնահատկությունները, որն էլ փաստում է, որ դրանք արդեն սկսում են ընդհանրանալ և կայունանալ:

Тадевосян Асмик - Проявление особенностей склонении ашхарабара в лечебниках позднего средневековья. - В статье рассматриваются особенности склонения существительных лечебников (Асара Себастаци и Буниата Себастаци) позднего средневековья. Особое внимание уделяется формам, которые характерны для ашхарабара. Представляются особенности типов склонений, окончаний множественноего числа и падежных форм.

Tadevosyan Hasmik - Manifestation of Declension features in the Medical Books of the Late Middle Ages. - This article investigates the declension features of the late middle age’s medical books (Asar Sebastatsy and Buniat Sebastatsy). The special attention is paid to forms which are characteristic for ashkharabar. There are represented features drawing up of types of declension, plural endings and case forms.

---

[12] Է. Մկրտչյան, նշվ. աշխ., էջ 137:

ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅԻ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ XVII ԴԱՐԻ ԲԺՇԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Թադևոսյան Հասմիկ

Անկատար դերբայն իր կիրառություններով աչքի է ընկնում միջին հայերենի երկրորդ շրջանում (XV-XVII դդ)[1]: Սա միանգամայն տրամաբանական կարելի է համարել, եթե նկատի ունենանք, որ առաջին շրջանում միջին հայերենը մեզ է ներկայանում կիլիկյան գրական հայերենով, որի գլխավոր հատկանիշը, ինչպես գիտենք, *կու*-ով սահմանական ներկայի կազմությունն է, իսկ անկատար դերբայի մասին, բնականաբար, խոսք լինել չէր կարող: Միջին հայերենի առաջին փուլում մեր մատենագրության մեջ *ում*-ով անկատարի երկու նմուշ է վկայված: Առաջինը հանդիպում է XII դ. Մխիթար Հերացու աշխատության մեջ. «Ապա թէ հիւանդին թպտիրն *մաշում* լինի, կերակուր չոր չէ պատեհ»[2], իսկ երկրորդը՝ XIII դ.՝ Վարդան Արևելցու «Պատմութիւն տիեզերական» աշխատության մեջ. «..զինչ քրիստոնեայ կայ և արքայունք ընդ ծով և ընդ ցամաք՝ ամենու սիրտն հետ քեզ լաւ են, և քեզ աղոթք են առնում»[3]: Եթե հաշվի առնենք այն կարծիքը, որ վերոնշյալ *մաշում*-ը արաբերեն բառ է և նշանակում է «չարաբաստիկ»[4], ապա մեզ կմնա *ում*-ով անկատարի մեկ վկայություն միայն:

Այլ է պատկերը միջին հայերենի երկրորդ՝ Գ. Ջահուկյանի շրջանաբաժանմամբ աշխարհաբարացման ենթաշրջանում (XV-

---

* Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 30-36:

[1] Առաջնորդվել ենք *«Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության»* գրքում կատարված շրջանաբաժանմամբ, տե՛ս նշված աշխ., Ե., հ. Ա, 1972, էջ 42-44:

[2] Մ. Հերացի, *Ջերմանց մխիթարութիւն*, Վենետիկ, Սուրբ Ղազար, 1832, էջ 61:

[3] Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության,* էջ 304:

[4] Տե՛ս Ա. Մարգարյան, *Հայերենի հարադիր բայերը*, Ե., 1966, էջ 471:

XVI դդ.)[5], երբ Կիլիկիայի հայկական պետության անկումն իր հետ բերում է կիլիկյան հայերենի թուլացում, աշխուժանում են հայերենի բարբառներն ու ենթաբարբառները, և լեզվի անմիօրինակությունն էլ շատանում է ի հաշիվ բարբառայնությունների: Այս շրջանում անկատար ներկայի հիման վրա արդեն տարորոշվում են բարբառների *ում* և *կը* ճյուղերը:

Հայտնի փաստ է, որ անկատարի *-ում* վերջավորությունն իր ծագմամբ կապվում է ներգոյականի *ում* հոլովաձևի հետ: Հիմնվելով այն փաստի վրա, որ բոլոր *-ում* վերջավորություն ունեցող բարբառներն ունեն նաև *ում-* ով անկատար՝ Ա. Այտընյանի կողմից առաջ քաշված այս տեսակետն[6] անվերապահորեն ընդունում են բոլոր հայագետները[7]:

Անկատար դերբայի գործածությունը հաճախական է դառնում XVI-XVII դդ. սկսած: Այս շրջանում արդեն սովորական են դառնում անկատարով կազմված դիմավոր ձևերը[8]: Ուշագրավ է հատկապես այն, որ նշված ժամանակաձևերը իրենց արտացոլումն են գտել ոչ միայն տվյալ ժամանակաշրջանի առօրյա խոսքում և գեղարվեստական գրականության մեջ, այլև գիտական՝ տվյալ դեպքում՝ բժշկագիտական գրականության մեջ:

Հիշյալ ժամանակաշրջանում են (XVII դար) շարադրվել Սեբաստիայի բժշկագիտական դպրոցի ներկայացուցիչներ Ասար և Բունիաթ Սեբաստացիների բժշկարանները: Կիլիկիայի բժշկական դպրոցից հետո մեզանում ստեղծված բժշկագիտական ձեռքբերումները զարգացրին Ամասիայի և Սեբաստիայի դպրոցները: XV դ. վերելք ապրեց Ամասիայի դպրոցը՝ ի դեմս Ամիրդովլաթ Ամասիացու, իսկ XVI դ. վերջից առավել աչքի ընկավ Սեբաստիայի դպրոցը, որն իր վերելքին հասավ XVII դ.:

---

[5] Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը*, Ե., 1969, էջ 49:

[6] Տե՛ս Ա. Այտընեան, *Քննական քերականութիւն աշխարհաբար կամ արդի հայերէն լեզուի*, Ե., 1987, էջ 203:

[7] Տե՛ս *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության,* Ե., հ. Ա, 1972, էջ 366, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. II, 1975, էջ 87-90:

[8] Տե՛ս Ս. Ղազարյան, *Հայոց լեզվի համառոտ պատմություն*, Ե., 1981, էջ 265:

Այս բժշկագիտական դպրոցից հատկապես ուշադրության են արժանի Ասար Սեբաստացու «Գիրք բժշկական արհեստի» և Բունիաթ Սեբաստացու «Գիրք բժշկութեան տումարի» բժշկարանները, որոնց քննությունը մեզ պատկերացում է տալիս XVI-XVII լեզվական վիճակի մասին: Նշված բժշկարանները, ինչպես նկատում է Դ. Հովնանյանը, հարազատորեն պահպանել են *կու*-ով ներկան: Դեռ ավելին, Դ. Հովնանյանը Ասար Սեբաստացու բժշկարանը առանձնացնում է *կու* մասնիկի կիրառության տեսակետից[9]: Խոսելով Սեբաստացիների և նորագույն բժշկարանների լեզվի մասին՝ նա նկատում է, որ դրանք «շատ տեղ կը մօտենան արդի ռամկօրէնին՝ թէ ըստ նշանակութեան բառից եւ բացատրութեանց, եւ թէ ըստ դասաւորութեան մասանց նախադասութեան. այնչափ մինչեւ շատ անգամ ճշդիւ կը նոյնանան արեւմտեան (Կ. Պոլսոյ) բարբառոյն…»[10]:

Չնայած *կու*-ով ներկայի կիրառությանը՝ վերոհիշյալ բժշկարաններում առանձին դեպքերում նկատելի են նաև արևելյան բարբառներին բնորոշ

-*ում* և -*ման* վերջավորություններով անկատար ներկայի ձևեր: Միջին հայերենի վերջին շրջանի համար սա էլ, թերևս, կարելի է բնական դիտել: Ասար Սեբաստացու բժշկարանում ուշադրության է արժանի հատկապես անկատար դերբայով և *լինել* անկանոն բայի հարադրությամբ կազմված բաղադրյալ երկրորդական ժամանակի գործածությունը:

Ինչպես գիտենք, դերբայով և *լինել* բայի խոնարհված ձևերով կազմված բաղադրյալ երկրորդական ժամանակների կիրառությունը սովորական է եղել դեռևս գրաբարում: Բաղադրյալ ժամանակների կազմությանը սկսած գրաբարից մասնակցել են անցյալ (հետագայում՝ հարակատար, վաղակատար) և ապառնի դերբայները (տեսեալ եմ, էի, իցեմ, տեսանելոց եմ, էի, իցեմ): Արդի հայերենում անկատարի միայն -

---

[9] Տե՛ս Դ. Յովնանեան, *Հետազօտութիւնք նախնեաց ռամկօրէնի վրայ*, Մասն Ա, տետր Բ, Վիեննա, 1897, էջ 509:

[10] Տե՛ս նույն տեղում, էջ 510:

լիս վերջավորությամբ ձևն է մասնակցում երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը (ապրելիս է լինում, եղել): Սա, բնականաբար, իր հիմքն ունի «ս» ճյուղի բարբառներում, որտեղ ներկա և անցյալ անկատար ժամանակները կազմվում են *լիս* անկատարով (ուզելիս իմ, իս, ի): Ինչ վերաբերում է *-ում-* ով անկատարին, ապա պետք է ասել, որ այն թե՛ ժամանակակից հայերենում և թե՛ բարբառներում մասնակցում է միայն հիմնական բաղադրյալ ժամանակների կազմությանը (երկրորդական բաղադրյալ ժամանակների կազմությանը գրեթե չի մասնակցում): Առանձին բարբառային օրինակներ նկատելի են միայն Արարատյան և Թիֆլիսի բարբառներում, ավելի կոնկրետ՝ Խ. Աբովյանի («Հազար կպրե կարաս, հազար օձ, կարիճ՝ բերանները բաց, նրան *ըլեին սպասում,*որ քրքրեն, կուլ տան, մարսեն»: «Հեր, մեր, ազգական… իրան անունը տալիս ու սուք *ըլեին անում*»: ԽԱԲ., Iէջ 55), Գ. Սունդուկյանի («Թէ մութ գիշեր էլ է, հենց գիդենաս աստղիրը հիդդ մասլահաթ *ըլին անում*» ԳՍ, էջ 98, «Էն ուփրո լավ չի ըլի, վուր գեղնի տակն ըլիմ ու գերեզմանս վուտի տակը կոխչըտում ըլին»: էջ 135) ստեղծագործություններում[11]: Ա. Աբրահամյանի վկայմամբ դրանք հիմնականում հանդիպում են նախահեղափոխական շրջանի հայ գրողների երկերում. տվյալ դեպքում նա օրինակ է բերում Մուրացանից . «*Լողացնում է եղել*» (Մուր.,I, էջ 150): «*Աղոթում է եղել,* երբ կույր աչքերով *գտնվում է եղել* Սնանում» (ն.տ., էջ 151)[12]:

Անկատարի նման կիրառությունները աչքի են ընկել 18-19-րդ դդ, մինչդեռ Ասար Սեբաստացին գործունեություն է ծավալել 16-17րդ դդ., և նրա բժշկարանում[13] նմանակարգ տաս գործածություն ենք արձանագրել.

---

[11] Տե՛ս Ա. Աբրահամյան, *Հայերենի դերբայները և նրանց ձևաբանական նշանակությունը*, Ե., 1953, էջ 91-92:

[12] Տե՛ս նույն տեղում, էջ 92:

[13] Տե՛ս Ա. Սեբաստացի, *Գիրք բժշկական արհեստի*, Ե., 1993: Օրինակների էջերը նշվում են փակագծերում:

Գնալ բայով՝ «Աչացն, որ արտասուն *լինի գնում* խարեն՝ աչքն քաշեն, արտասուն կտրէ» (էջ 187): «Ինչ տեղէ, որ երակ լինի կտրիլ արիւն *լինի գնում* վեր էն ցանեն արիւնն կապէ» (էջ 188): «Թէ մարդոյ քէմէն արիւն *լինի գնում*, է(7) գարէ կշռանոք խմէ, շուտով ազատի Աստուծով» (էջ 189):

Ուտել բայով՝ «Թէ աթաշակի համար *լինի ուտում* թող կերակրին քիչ աղ ձգէ» (էջ 225): «Ի Ա (1) օր, որ *ուտում լինի*, աղ չուտէ» (էջ 226):

Տանել բայով՝ «Թէ շատ դուրս *լինի տանում*, որ նստոտեղն ցաւի, Ա (1) ձու դեղնուց խորովէ, մին փոքր նշի յուղ հետն խառնէ մլհամ դառնա» (216): «Որ օգտէ մարմնոյն թուլութեան և ուխտաւորութեան և մոռացկոտութեան և որ գիշերն մսրէ կամ ջրվէթ *լինի տանում*» (էջ 228):

Թափել բայով՝ «Թէ աչացն արտասուն *լինի թափում* աչքն քաշէ, արտասուն կտրէ» (էջ 188):

Ցաւալ բայով՝ «Թէ որ փիք ունենայ, որ փորն *ցաւում լինի* Դ (4) դրամ ֆլուս խիարշամպայ ձգէ…» (էջ 117):

Երևալ բայով՝ «Թէ նստոյտեղին մէջն *երևում լինի* կամ դուրս լինի եկել, առ քաֆուր դեյսուրին…» (էջ 216):

Վերոհիշյալ կիրառությունները կարող են վկայել, որ տվյալ ժամանակաշրջանում բարբառներն ավելի գործուն են եղել, *ում*-ով անկատարի բարբառային կիրառությունն էլ ևս մեկ ապացույց է անկատար դերբայի՝ ներգոյական հոլովից առաջացած լինելու մասին[14]:

Անկատարի իբրև առանձին դերբայի առանձնացումը հայ քերականագիտության մեջ կատարել է Մ. Աբեղյանը՝ փաստելով, որ վերջինս առանձին գործածություն չունի և եղած որոշ օրինակներն էլ՝ *գնում ժամանակ, գնում տեղ*, (փոխանակ գնալու) նա բարբառային է համարում[15]:

---

[14] Տե՛ս Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 92:

[15] Մ. Աբեղյան, *Հայոց լեզվի տեսություն*, Ե., 1965, էջ 313:

Ասար Սեբաստացու բժշկարանում մեկ անգամ հանդիպում է անկատար դերբայի անկախ կիրառություն. «Չուբ չինին, որ պահես, *ուտում ժամանակն* ձգես, ջրին մէջն եփես» (էջ 226):

Այստեղ ևս այս անկատար դերբայը ակնհայտորեն արտահայտում է «*ուտելու ժամանակ*» իմաստը:

Բժշկարաններում կիրառվել է նաև -*ում* -ին համարժեք -*ման* վերջավորությամբ անկատար դերբայը, որը բնորոշ է Նոր-Ջուղայի բարբառին, ընդ որում այս ձևը կիրառվել է *ում*-ին զուգահեռ (ում-ը ընդհանուր է եղել բացի միավանկներից բոլոր բայերի համար): Ջուղայի բարբառում -*ման* են ստանում միայն չեզոք, կրավորական և կրավորակերպ-չեզոք բայերը (վախման ամ, խազման ամ, հալման ամ), ներգործական բայերը -*ման* կարող են ստանալ միայն կրավորական իմաստ արտահայտելու դեպքում, իսկ եթե բայարմատում որևէ ածանց կա (վ, ն, ց) ներգործականը արտահայտվում է առանց ածանցի (թողնել-թողման), բայց կրավորականի դեպքում վերջինս մնում է[16]:

Հետագայում արդեն հենց Ջուղայի բարբառում *ում* ճյուղի բարբառների ազդեցությամբ տեղի է ունենում *ման*-ից *ում*- ի անցում, իսկ *ման*-ը պահպանվում է միայն միավանկ *գալ, տալ, լալ* բայերի համար[17]:

Անկատարի այս *ման*-ը դարձյալ կապվում է ներգոյական հոլովի հետ. տվյալ դեպքում *ման*-ը *ումն* վերջավորությամբ բայանուն- գոյականի ներգոյականն է (շարժումն – շարժման – ի շարժման եմ)[18]: Իբրև *ում*-ով վերջավորվող գոյականի թեքված ձև մեր մատենագրության մեջ *ման*-ի կիրառություններ բազմիցս կարելի է գտնել թե՛ գրաբարի և թե՛ ետգրաբարյան շրջաններում: Նմուշները հայտնի են դեռևս 7-րդ դարից՝ Հովհան Մամիկոնյանի, Ա. Շիրակացու աշխատություններում[19]: Միջին հայերենի երկ-

---

16 Հ. Աճառյան, *Քննութիւն Նոր-Ջուղայի բարբառի*, Ե. (ապակետիպ), 1940, էջ 250-253:

17 Նույն տեղում, էջ 255:

18 Նույն տեղում, էջ 256:

19 Տե՛ս Ա. Աբրահամյան, *նշվ. աշխ.*, էջ 102:

րորդ շրջանում արդեն քիչ-քիչ նկատելի է *ի* նախդրի անկում, ներգոյականի իմաստի մթագնում և գոյականից ժամանակային անցում բայի: Օրինակ՝ Ամիրդովլաթ Ամասիացու «Օգուտ բժշկութեան» աշխատության մեջ զուգահեռաբար կիրառվել են և՛ նախդրավոր, և՛ աննախդիր ձևեր. *ի շարժման կայ* (էջ 50), *ի լարման լինայ* (122), *կանգնման լինայ, գնացման ջրերն* (էջ 273)[20]:

Բունիաթ Սեբաստացու բժշկարանում[21] հանդիպող երկու օրինակներում էլ ներգոյականի իմաստը գիտակցվում է, մանավանդ որ կա ի նախդրի առկայությունը. «Նշանն, որ ի սավտայէ լինի այն է, որ…քուն չի լինայ, շատ զրուցել չուզի, երակն *ի լարման լինի»* (էջ 162): «Նշանն, որ ի յարենէ լինի այն է, որ յորժամ ձայն տաս ծիծաղի և երեսն կարմիր լինի և երակն *ի կանկման լինի»* (էջ 66):

Պատկերը փոքր-ինչ այլ է Ասար Սեբաստացու բժշկարանում, որտեղ -*ման* -ով անկատարի հինգ օրինակներից միայն մեկում է ներգոյականի իմաստը փոքր-ինչ զգալի. «Թէ մարդ հանապազ անպատճառ *ի ծիծաղման լինի*, վրան հայելով ծիծաղն դադարեցնէ» (էջ 185):

Մյուս դեպքերում -*ման*-ով անկատարը արդեն կիրառվել է իբրև ժամանակակազմիչ դերբայ, ի դեպ հանդես է գալիս նաև *լինել* բայի հարադրությամբ՝ իբրև երկրորդական բաղադրյալ ժամանակ: Բերենք օրինակները. «Թե կնոջ մեջքն կապվել լինի *չընի տեսման* մի քանի օր յիրիկունն Բ (2) դրամ այս մաջունես հապ շինէ կուլ տայ, մեջքն բացվի» (էջ 223): «Եթէ Ա(1) կամ Բ (2) օրէն կե հետ բլղամ կամ արիւն *լինի գոլման,* առ Ե(5) դրամ դուրսի քաֆուր ծեծէ» (էջ 220): «Թէ կերած կերակուրն դաբզ լինի արարել, դուրս *չլինի տանում*, մինակ բլղամ *լինի գոլման*, առ դդման խատիճ Ը (8) դրամ»(էջ 218):

---

[20] Ամիրդովլաթ Ամասիացի, *Օգուտ բժշկութեան* , Ե., 1940: Օրինակների էջերը նշվում են փակագծերում:

[21] Տե՛ս Բ. Սեբաստացի, *Գիրք բժշկութեան տումարի*, Ե., 1987: Օրինակների էջերը նշվում են փակագծերում:

Ասար Սեբաստացու բժշկարանում մեկ անգամ միայն *-ման-*ով անկատարը հանդես է գալիս անկախ ածականական դերբայի (ոչ ժամանակակաղմիչ) կիրառությամբ. «Եթէ *ցավման աչքն* քաշեն կամ խարեն, աչաց դեղերի մեջ խառնեն, խիստ օգտէ աչաց մթըննալուն և հաւկուրութիւնն տանի» (էջ 188): Այստեղ արդեն *ցաւման-ը* «ցավող» իմաստն ունի:

Այսպիսով՝ XVII դ. բժշկարաններում ուշադրության են արժանի անկատար դերբայի բարբառային կիրառությունները, որոնց քննությունը կարող է օգտակար լինել միջին հայերենի ու բարբառների ուսումնասիրության համար:

Тадевосян Асмик - Диалектные применения несовершенного причастия в лечебниках 17-ого века. - В статье рассматриваются диалектные формы настоящего времени, которые употреблялись в лечебниках Асара Себастаци и Буниата Себастаци (17-ый век). Причастия с окончаниями *-ում и -ման* характерны для восточных диалектов. В лечебнике Асара Себастаци особенно примечательно употребление несовершенного причастия *-ում* в составе второстепенного составного времени с нерегулярным глаголом *լինել (быть)*. В обеих лечебниках параллельно с *-ում*-ом применялось несовершенное причастие с окончанием *-ման*, которое характерно для джугайского диалекта. Это причастие тоже в основном применялось вместе с глаголом *լինել*, составляя второстепенное составное время.

Tadevosyan Hasmik - Dialectal Usage of Imperfect Participle in the Medical Books of the 17-th Century. - This article touches upon dialectal present tense's forms, which were used in the medical books of Asar Sebastatsy and Buniat Sebastatsy (17-th century). Participle with endings *-ում* and *–ման* are characteristic for East dialects. Use of imperfect participle with ending *-ում* is especially remarkable in Asar Sebastatsy's medical book. It is used with irregular verb *լինել* (to be) as a part of secondary composite tense. Imperfect participle with the ending -

ման is used in parallel together with -*ում* in both medical books. This participle, which is typical for the Dzhuga dialect, is also generally applied with the verb *լինել*, making secondary composite tense.

ՆՈՐԱՀԱՅՏ ԲԱՌԵՐ 13-ՐԴ ԴԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Խաչատրյան Վալենտին

13-րդ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզվական հարցերով ժամանակին զբաղվել է Լ. Հովսեփյանը՝ իր ուսումնասիրության մեջ ներառելով միմիայն ձևաբանական, հատկապես հոգնակիակազմության, հոլովման և խոնարհման համակարգերի որոշ իրողություններ[1]: Ուստի սույն աշխատանքը տվյալ դարաշրջանի հիշատակարանների[2] բառապաշարի ուսումնասիրության առաջին փորձն է:

Նախ և առաջ փորձել ենք պարզել, թե 13-րդ դարի հիշատակարանների բառապաշարը որքանով է արտացոլվել Նոր հայկազյան բառարանում[3], որը բառեր է պարունակում մինչ բառարանի ստեղծումը ավանդված տարբեր գրական աղբյուրներից, այդ թվում՝ ձեռագրերի հիշատակարաններից: Սակայն, ինչպես սույն ուսումնասիրությամբ պարզվեց, 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում գործածված շուրջ 600 բառ և բառատարբերակ ամենատարբեր պատճառներով չեն վկայվել ՆՀԲ-ում: Նշվածներից տասնյակ օրինակներ արձանագրված են 5000 բառերով համալրված Առձեռն բառարանում[4], սակայն, վերջինիս բնույթով պայմանավորված, աղբյուրները նըշված չեն:

* «Զահուկյանական ընթերցումներ», միջազգային գիտժողովի զեկուցումներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 69-76:

[1] Լ. Հովսեփյան, *ԺԳ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարանների լեզուն*, Ե., 1997:

[2] *Հայերեն ձեռագրերի հիշատակարաններ* (ԺԳ դար), կազմ. Ա. Մաթևոսյան, Ե., 1984:

[3] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, հh. 1-2, 1836-1837:

[4] Գ. Ճէլալեան, *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի* (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865:

[5] Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան* (այսուհետև՝ ԳԲ), Ե., 2000:

Քիչ թվով օրինակներ առկա են Ռ. Ղազարյանի «Գրաբարի բառարան»-ում[5] ՝ նույնպես առանց բնագրային օրինակների, և Հ. Աճառյանի «Հայերէն արմատական բառարան»-ում[6]՝ կա՛մ աղբյուրի նշումով, կա՛մ առանց դրա: ՆՀԲ-ում չվկայվածներից զգալի թվով բառեր արձանագրված են Ս. Մալխասյանցի «Հայերէն բացատրական բառարան»-ում[7], որում նույնպես բնագրային օրինակներ չկան, ապա և Միջին հայերենի բառարանում[8], որն ընդգրկում է միջինհայերենյան շրջանի գրականությամբ ավանդված բառեր, այդպիսով և՝ 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում վկայվածներ, և մի շարք օրինակներ առկա են Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան» -ում[9]:

13-րդ դարի հիշատակարաններում գործածված շատ բառեր բնագրային օրինակներով բառարաններում հետագա շրջանի գործերից են վկայված, կամ էլ, ինչպես և վերը նշեցինք, արձանագրված են այնպիսի բառարաններում, որոնցում աղբյուրները բացակայում են: Սակայն մեր նպատակն է սույն հոդվածի սահմաններում ներկայացնել միայն այն բառերն ու բառատարբերակները, որոնք հիշատակված տպագիր բառարաններից և ոչ մեկում տեղ չեն գտել: Այսպիսով, վերոհիշյալ բոլոր բառարաններում չեն վկայվել 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում կիրառված շուրջ *400 բառեր ու բառատարբերակներ*: Նշվածներից որոշ օրինակներ հիշատակարաններում նույնիսկ լայն գործածությամբ են: Շատ բառեր, անշուշտ, կազմվել են հիշատակագրողների կողմից՝ պայմանավորված

---

[6] Հ.Աճառեան, *Հայերէն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), Ե., հհ. 1-4, 1971-1979:

[7] Ս.Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), Ե., հհ. 1-4, 1944-1945:

[8] Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), Ե., 2009:

[9] Լ.Հովհաննիսյան, *Գրաբարի բառարան. Նոր հայկազյան բառարանում չվկայված բառեր* (այսուհետև՝ ՀԳԲ), Ե., 2010:

հիշատակարանների բովանդակային կողմերով: Իզուր չէ, որ 13-րդ դարի հիշատակարաններում առկա մի շարք բառերի միակ վկայությունները բառարաններում այլ դարերի հիշատակարաններից են: Այսպես. Լ. Հովհաննիսյանը ՆՀԲ-ում չվկայված բառերի վերը հիշված բառարանը կազմելիս թեև 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարանները չի օգտագործել, սակայն բառաշարքում տեղ են գտել դրանցում առկա բառեր, որոնց հիմնական մասը հաջորդ դարերի հիշատակարաններից է քաղված: Այդպիսիք են՝ *բարիարմատ* (ԺԵ, Բ, 129) (494), *առաքելազումար* (ԺԵ, Գ, 53) (852), *սրտաջան* (ԺԴ, 398) (13), *արդիւնաբան* (ԺԴ, 419) (848), *մակհորջորջեալ* (ԺԴ, 6) (823) և այլն: Նույնը մի շարք դեպքերում հաստատվում է նաև ՄՀԲ-ի վկայություններով: Պետք է հավելել նաև, որ Ա. Մարգարյանի «Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV- XVդդ. հիշատակարաններում» հոդվածի[10] բառացանկում կան տասնյակից ավելի օրինակներ[11], որոնք գործածվել են նաև 13-րդ դարի հիշատակարաններում:

Ստորև բերվում են այն բոլոր բառերը, որոնք վերը նշված բառարաններից և ոչ մեկում չեն ամրագրվել:

Հիշատակարանների մեծ մասն սկսվում է հիշատակագրողների կողմից Աստծու և աստվածայինի փառաբանությամբ, որը, անկասկած, նոր բառեր կերտելու հիմք է հանդիսացել: Աստծու, Աստվածաշնչի, աստվածային լույսի և իմաստնության փառաբանությանը, աստվածային ծագմանը և շնորհներին վերաբերող բառերը հիշատակարաններում ամենաստվար շերտն են կազմում: Այդպիսի օրինակները հիմնականում վկայված են Ավետարանի, ապա նաև վերջինիս մեկնությունների կամ առհասարակ հոգևոր գործերի հիշատակարաններում, որոնցում գրիչները բազում զունազեղ որոշիչներով են արտահայտել իրենց վերաբերմունքը: Վերը հիշատակված բառարաններում չեն վկայվել հետևյալ բառերը.

[10] Ա. Մարգարյան, *Նորահայտ բառեր հայերեն ձեռագրերի XIV- XVդդ. հիշատակարաններում.* - *Պատմաբանասիրական հանդես*, 1-2, 1993, էջ 35-42:

[11] Այդ բառերով համալրված է ՀԳԲ-ն:

«Յանկ ելեալ աւարտեցան … *զարունազեղ*, …. *յաւետալոյս*,… Աւետարանս» (772)[12], «Փառք փառաւորեալ,… *համակերտող*, … և *բիւրաճաճանչ* լուսոյ Սուրբ Երրորդութեանն» (863), «յորժամ վայելէք ի քաղցրաճաշակ, … *աստուածառոյզ* վտակաց աստուածային աւետարանական բանիցս» (396), (538) // «*աստուածոռոզ* վտակաց… աւետարանական բանիցս»[13] (852), «*տեառնատուր* մանուկս իմ Աթաբակ» (311), «*լուսայարմար* հաւաքումն սուրբ Աւետարանիս» (381), «*լիալապտեր* ջահիցդ շի-ջեալ հողս և ունայնս Բարսեղ» (649), «*երկնամուտ* նորատուր մանկունս Նորոյ Սիովնի» (499), «*երկնահլու*, … բանիցս ի փոքու մատենիս եղե ջանացող գծել մեղապարտ գրիչս Թեոփիլէ սուտանուն կրօնաւոր» (941), «Գրեցաւ սուրբ տառս նորակերտ տաճարին, որ յանուն *աստուածասուրբ* Հոգոյն կանգնեցաւ ի գաւղն Տիրոջ» (591), «*աղտափարատ* լուսովս հըրճըւեալ» (640), «Ախտահալած և *կուրաբաց* և յարուցիչ գոլ մեռելոց» (653), «*Վերնահանդէս* լոյսն իմաստութեան *առատակազմն* յաւրինէ ի լուսաւորեալս *պէսպէսորակս*» (604), «… որ է *համակայլոյս* եւ ծաղիկ լուսերանգ, *բազմախարի* և յարափթիթ, ծառ անծայրանալի…» (ըստ ՀԱԲ-ի՝ *խարի* «մի տեսակ բոյս է, որի արմատից պատրաստում են կարմիր սնգոյր. հաւաժիպակ» - ՀԱԲ, հ.2, էջ 344-345, սակայն տրված օրինակում *խայրի* (պտուղ) բառի՝ միջին հայերենին հատուկ *այ>ա* հնչյունափոխությամբ առաջացած տարբերակն է) (733) և այլն:

Աստուած և *տէր*, *խօս*/ք/ և *բան* բաղադրիչները բառերում համարժեք գործածություն ունեն: Հաճախակի գործածված *աստուածախօս* բառի փոխարեն (հատկապես *աստուածախօս տառ*, *աստուածախօս Աւետարան* կապակցություններում) հիշատակարաններից մեկում առկա է *տեառնաբան* բառը. «Եւ

---

[12] Այսուհետև օրինակների էջերը կնշվեն փակագծերում:

[13] Ըստ ՆՀԲ-ի՝ «*առոյզ* (որ գրի և *առոզ*, *առուզ*). իբր առոգեալ, ոռոգեալ, առաճեալ կամ ուռճացեալ՝ որպէս զբոյսս» (ՆՀԲ, հ. 1, էջ 333) և «*ոռոզ*. առոյզ, ուռճացեալ, ոռոգմամբ զուարճացեալ, ծաղկեալ» (ՆՀԲ, հ. 2, էջ 517), ՀԱԲ-ը *առոյզ* գլխաբառի տակ նշում է. «Գրուած է նաև *առոզ, ոռոզ* և *առուզ*» (ՀԱԲ, հ. 1, էջ 268):

արդ, շնորհիւն Աստուծոյ սկսաւ և ողորմութեամբ նորին կատարեցաւ… տիեզերախաւս վարդապետութիւնս *տեառնա-բանին* Աստուծոյ» (654), նույնքան հաճախ հանդիպող *աստուածա-պատում* բառի փոխարեն՝ *տիրապատում.* «…կատարեցի *զաս-տուածամաղթան* եւ *տիրապատում* տառս մարգարէից եւ զ*քրիստոսայայտ* տնաւրէնութեան բացայայտութիւն, … որ է… *չքնաղատիպ* մարգարիտ» (572):

Գրիչները ոչ միայն Աստծուն են դիմում ձեռագիրն ընդօրինակելու գործում իրենց զորավիգ լինելու, զանազան մեղքերից ազատելու և այլ խնդրանքներով, այլ երբեմն ապավինում են նաև Աստծու ծառաներին՝ սուրբ մարդկանց՝ վերջիններից նույնպես զորակցություն հայցելով կամ դիմելով Աստծու առաջ բարեխոս լինելու խնդրանքով: Հետևաբար նույնա-բնույթ որոշիչներով են բնութագրվում նաև վերջիններս. «բարեխաւս ունելով … եւ *լուսահռչակն* զՅոհան…, զի և սոքա յետ Աստուծոյ երկրորդաբար յոյս են մեզ ե բարեխաւսք մեզ…» (752), «*սրբազարդ*ից արանց առաջնորդի» (43):

Հաճախ բազմազան որոշիչներով բնութագրվում և մեծարվում են այն հոգևոր և աշխարհիկ գործիչները, որոնք որոշակի ներդրում են ունեցել տվյալ ձեռագիրն ընդօրինակելու գործում կամ որևէ առնչություն են ունեցել տվյալ ձեռագրին: Շատ դեպքերում գրիչները ավանդ են հղում ընթերցողներին՝ իրենց աղոթքներում հիշելու տվյալ մարդկանց.« զմեծ հայր *բարեզարդահոյս* Կեռանի յիշեցէք յաղաւթս» (418), «Շնորհիւն Աստուծոյ աւարտազծեցաւ … Մաթեոսեան Աւետարանս, … հրամանաւ բարիարմատ և *քաղցրամիտ* պատրոնին» (494), «տեսանելով զորդիս որդոց աստուածասէր և *քաղցրաշառավեղին* իւրո պատրոն Վաղտանգին, ի փառս Քրիստոսի Աստուծոյ՝ աւրհնելոյ յաւիտեանս» (494), «ստացա զգծուածք Լուծմանցս…, զոր թելադրութեամբ *տրամիմաստ* վարդապետին մերո Դաւթա արարեալ է» (406), «կատարեցաւ տառ մատենիս ի սուրբ եւ ի հռչակաւոր վանքս Գետկա, ընդ հովանեաւ Սուրբ Աստուա-ծածնիս, …, այլ եւ առ ոտս սուրբ եւ *վսեմապայծառ* վարդապետիս

Յովասաբիս»[14] (436), «*փառազըւարճ* քահանայք,… Գրիգորն և Առաքեալն» (368), «*յոքնալոյս* վարդապետի ասացեալ Սկեւռացոյ» (549), «զ*արիերջանիկ* վարդապետն… զԳրիգորիս՝ զստացաւղ սուրբ մատենիս…» (781), «յիշել *յարժանախումբ* ձեր սուրբ հանդէսս զպատրոն Խայտերն՝ զստացաւղ սորա» (121), «ընդ որս եւ դուք ցաւակից գոլով, *սրբերամ* դասք, յաղաւթս յիշատակել զստընդեայս զայն» (418) և այլն:

Հաճախ հիշատակվում են այն սրբավայրերը, որտեղ ընդօրինակվել են ձեռագրերը: Այսպիսով վանքերն ու եկեղեցիները նույնպես բնութագրվում են վերամբարձ որոշիչներով. «և կանգնեաց *զքանչաարժան* եկեղեցին ի մայրաքաղաքին Մամուեսաիա…» (որտեղ և հետագայում գրչա-գրել է Վասիլը) (788), «ստացան զսա զանձ հոգևոր …յիշատակ հոգոյ, և վայելք մարմնոյ, ի պէտս *մաքրաբնակ* անապատին և ցանկալի մենանոց//ին» (678):

Ինչպես և նկատվում է, Աստծու, աստվածայինի, սրբացված անձանց, հոգևոր գործիչների, ձեռագրի ստեղծմանը նպաստած մարդկանց և գրչության օջախներ հանդիսացող սրբավայրերի մասին խոսելիս գրիչները, ի հայտ բերելով բառակերտման լայն հնարավորություններ, դրվատանքի ու փառաբանության ամենա-տարբեր բառային միջոցների են գրական վկայագիր հաղորդել: Հակառակ այդ ամենի՝ իրենց վերագրել են բացասական հատկա-նիշներ. նրանց մշտապես հետապնդել է մեղսունակության գիտակցումը՝ մեծ մասամբ պայմանավորված գրչագրական թերացումներով: Վերջինս էլ հիմք է հանդիսացել ինքնա-մեղադրանքի և ինքնանսեմացման իմաստավորմամբ բառերի ստեղծման համար: Այսպիսով գրիչները փորձել են արժանանալ

[14] Ըստ տվյալ հիշատակարանի՝ Վարդապետ Յովասաբը աղոթքներով է օգնել Մխիթար Գոշին. «Արդ, ես յոքնամեղս Մխիթար, առ ոտն սորա կալով եւ յաղաւթս սորայ ապաւինեալ եւ յԱստուած, մոռացում արարի ամենայն մարմնականիս եւս առաւել տկարութեան մարմնոյ, առ յոյժ փափաքումն աստուածային մատենիս, եւ յոյժ նեղութեամբ եւ տառապանաւք գծագրեցի իմով ձեռամբ ի վաելլումն անձին իմոյ եւ յիշատակ հոգոյս» (436):

Աստծու ողորմությանը և թողությանը: Այսպես. «զի յոյժ փափագմամբ գրեցի ինչ-ինչ *մեղսակարկամ* ձեռամբ իմով» (643), «ձեռամբ *յոգնապարտ* քանքարո և փանաքի գրչի Գրիգոր քահանայի» (639), «Քրիստոս որդի Աստուծոյ, ընկալ զքո սուրբ զԱւետարանս ի *սնապարտէս* Սահակայ իբրեւ զխէրեւէշն այրոյն եւ ողորմեա ինձ» (70), «յոյժ *խաւարաժառանգ* և պարապնդեալս մեղօք Ներսէս անպիտան գրիչ և սուտանուն քահանայ … » (167), «այլ և կամօք իմովք սպանի զնայ և *չարագէշ* լեզըւաւս խոցոտեցի զեղբայրն» (370), «Արդ, ես … *փցնամիտ* աշակերտս սորին Գէորգեայ, անարժան քահանայ, *պիտակագործ* անուանեալ Երեմիայ յորջորջեալ» (751), «Բայց զի յարայտեսութիւն *մեղաստար* սեւակիս… շահընկալ զիս ցուցանէ» (ՀԱԲ՝ *ստար* «գործող, գործաւոր, մշակ», 437), «հասանել ի գիծս վերջին *փցնածին* կածնաւ, նմա զոհութիւն յամենայնի իմովս ձայնիւ» (ՄՀԲ՝ *կածին* «գրիչ, ձեռագիր ընդօրինակող») (715):

Առանձին խումբ են կազմում այն բառերը, որոնք վերաբերում են գրին ու գրչությանը: Այդպիսի բառերի գործածությունը հիշատակարաններում, անշուշտ, անխուսափելի է: Դրանք արտահայտում են գրչագրական աշխատանքները, գրի տարբեր դրսևորումները, թերակատար կամ լիակատար լինելը և այլն: Կարելի է ենթադրել, որ շատերը կազմվել են հենց տվյալ պահին՝ հիշատակարան գրելիս: Իզուր չէ, որ այդպիսի բառերի մեծ մասը բառարաններում միմիայն տարբեր դարերի հիշատակարանների նշումով են: Մեծ թիվ են կազմում հատկապես *գիր* և *գիծ* բաղադրիչներով կազմությունները, որոնցում նշվածները համարժեք գործածություն ունեն: Այսպես. «ԶՄարգիս գրիչս յիշեայ ի Տէր Յիսուս, ո՛վ *խազագիծք*, և Քրիստոս զձեզ յիշէ…» (615), «Շնորհիւն Աստուծոյ *աւարտագծեցաւ* եղեմաբուխ… աղբիւրս Մաթեոսեան Աւետարանս» (494), «աշխատեալ *ծրպըտեցի* զգիրս զայս…» (ՄՀԲ՝ *ծրել* «գրել, ընդօրինակել» ԺԴ, 22, որից և՝ բազմապատկ.՝ *ծրպտել*) (370), «ի Գրիգորէ Նիւսեա *արտաշարեալ*» (605), « զ*սակաւագիր* յիշատակարանս գրեցի» (815), «… Յ*առատագիրն* տացի շնոր-

հաց» (406), «*վերագծող* այսմ տարիս» (824), «…յոյժ տագնապէ զմեզ, վասն որոյ առաւել *ցնցըղտեցի*…» (*ցնցուղ* բառից՝ կապված թանաքն օգտագործելու ձևի հետ) (868), «Որք հանդիպիք *տխմարատանց* գրոյս…» (729), «*Փցկութեան* գրիս մի մեղադրէք» (834), խոշոր *ձաքռտանք* (ՄՀԲ՝ *ձաքռտել* «գրելիս ձեռքը դողալ, ծուռումուռ գրել, խզբզել») (868) և այլն:

Գիր և *գիծ* վերջնաբաղադրիչները բառերում ունեն և՛ գոյականի, և՛ բայարմատի արժեք: ՀԳԲ-ի՝ այլ դարերի հիշատակարաններից բերված *փցնագիր* և *խոշորագիծ* բառերում գոյականական իմաստով են, մինչդեռ 13-րդ դարի հիշատակարաններում առկա են նաև բայական իմաստով օրինակներ, ասել է թե՝ գործ ունենք լիովին տարբեր բառերի հետ: Հմմտ. «Լցաք զտենչումն մեր, թէև *փցնագիր* էր գիրս» (ՀԳԲ՝ *փցնագիր* «անպիտան, պակասաւոր գիր», Հիշատ., ԺԴ, 413) - «Եւ ես *փցնագիրս* Հանիսուկ, … գործ ի ձեռն առեալ գրեցի զսա» (421), «Աստանաւր հանկ ելեալ կատարեցաւ *խոշորագիծ* գիրս» (ՀԳԲ՝ ԺԵ, Բ, 13) - «Եւ գրեցաւ սա ձեռամբ Կարապետի մեղապարտի եւ *խոշորագիծ* գրչի» (60), «ԶԿարապետ աստուածահաճոյ քահանայ յիշեսջիք ի Քրիստոս, և զտառապեալ *խոշորագիծս* Բասիլ» (103):

Որոշ բառեր վերաբերում են ձեռագիրը ձեռք բերելու, ուղղելու և առհասարակ ձեռագրաստեղծման և պահպանման դժվարություններին. «յոյժ բաղձանաւք եւ *յոգնաշատ* մեծաւ աշխատութեամբ ստացայ զսա ի լուսաւորութիւն…» (814), «յոյժ քրտնաջան եւ *մեծախոնջ* տաժանմամբ ուղղեցի ըստ կարի տաժանմամբ…», «Ուղղողիս *մեծախոնջ* տաժանմամբ եւ ստացող հողոյս Յոհաննէս եպիսկոպոս…» (641), «բազում աշխատութեամբ եւ *յոգնատարժան* երկաւք…եւոու գրել զսուրբ Աւետարանս…» (13):

Հիշատակագիրները հաճախ նկարագրում են իրենց ապրած ծանր ժամանակները՝ գործածելով բնորոշ բառեր. «մեծահաւատ լեալ իբրեւ զԱբրահամ յայսմ *խռովայեղ* ժամանակի՝ ետ գրել զսա յուրախութիւն սրտի իւրո», «Գրեալ եղեւ ի դառն և ի *խուճապուտ* և ի կականման ժամանակի…» (234), «Յայսմ *ամպրոպամած* և ի *վրդովուտ* ժամանակի ... » (40):

Բառարաններում չարձանագրված բառերը, ինչպես և նկատելի է, հիմնականում կազմված են բառաբարդմամբ: Վերը բերված այդպիսի օրինակներին պետք է ավելացնել նաև հետևյալները. *մատնատատան* մաղթանք (773), *արքունապատիւ* զահոյք (678), իբրև զամպ *կարկտածին* (702), *թիւնաձիզ* լինիմ (թոյն//թիւն բառից) (նույնում կա նաև *քարաձիզ*, 738), *հեշտակարծ* ախտ (751), *յաւետայեղձ* բաղձանք (756), երկիր *բուսաբողբոջ* (797), *արքայամուտ* դուռն (797), արբուցանել զչորեսին *անկինա-տիեզերս* (815), *երջանկաջոկ* մանկունք (837), *տի/եզե/րաբողբոջ* հովիտ (861), հոգոց *աստուածատենչ*աց (875), հեշտասէր եւ *խակամետ*ք մեղս (ՆՀԲ՝ *խակ*՝ նաև՝ «անմարդի, անընդել, դժնեայ») (875), բարձրագույնս և *խառնարգահոյս* (812), անմարմին և *տարրամած* եղութիւնք (625), *մեղսաբարձ* գառն (594), *մշտասէրտ* զաւրութիւն (406), բուռն հարեալ զ*մշտնջենաժառանգ*ն (614), *աւետարանազլուխ* Սրբոյն Ղուկասու (ավետարանի հատված) (673), *հաւատահաստատ* (105), *մտայօղ* իմացումն (259), *շնորհաշարժ* ալիք (271), *յոլովանաւթ*ս ոսկւոյ և արծաթոյ (285), տէր *հաշտակամ* (286), *մարմնաղէտ* արեան մերձաւորաց (ՆՀԲ՝ *աղէտ* «զորով, գութ, սրտցաւութիւն», 313), *դժընդակաթոյն*ն սողնոց (351), յ*եռանդնահոս* փափագմանէ (499), միաշունչք և *եզախորհուրդ*ք (եզ «մի», 667), *աւետանամակ* արձանագրութիւն (849), զ*տաւնահաւաք* տառից (849), *միասարազ* շարայարել (ՆՀԲ՝ *սարաս* «տարազ, կերպ, ձև», 338), ճահողասաց *պիտառաբան* (338), *հանրալոյս* կտակ (29), սաղրանք *ստորայսուղ*ին (437), *խստաջան* առաքինութիւն (336), «զոր կամեցայ յաւրինել ի *սպիտակահովիտ* հիւթիս՝ սեաւաթիւր թեւով» (ՆՀԲ-ում *հովիտ* բացատրված է նաև՝ «նմանութեամբ՝ զոգ կամ ծոց և ընդունարան», 837), «վասն այսր հարկի՝ եւ զ*խառնախորան*ս ամսոցդ առընթեր» (867), «*երկայնահաս*, լայնատարած բազկաւք» (43), «Նախ վասն ծննդեան Տեառն և մկրտութեանն, և սուրբ պատարագին, և *խաչեցար*ին, և զելի և մատաղի»(63), «*զորովաղատ* պատժել զստա-ցող սորա, և զ*համաչահոս* յաղաւթս ձեր մասնաւորել» (ամենայն հավանականությամբ՝ *համաչափահոս*, 515), «*նորայթարգման*

զաւակ ի Սիոն…» (627), «Սրատեսիցդ և *կորովաբացդ* զաչացս կոյրքս ոգւով Բարսեղ և Ստեփանոս» (650) և այլն:

Հիշատակագիրները հմտորեն են օգտվել նաև հայերենի ածանցումից և տարբեր ածանցների միջոցով ևս կազմել բազմաթիվ նոր բառեր: Բառարաններում չեն ամրագրվել բառածանցմամբ կազմված տասնյակ օրինակներ, ինչպիսիք են՝ <u>նախածանցավոր բառեր</u>՝ *համաղէպ* (629), *մակաքարոզ* (338), *մականորոգ* (515), *գերահոս* (529), *տարատրոհ* (499) և այլն, <u>վերջածանցավոր բառեր</u>՝ *հանդիսարկու* (604), *տաղտապումն* (ՆՀԲ՝ *տաղտապեմ* «տաղտկութիւն և տառապանս տալով՝ նեղել, հարստահարել») (639), *թագազնեայ* (511), *տարաբերուն* (97), *գետնաշխատութիւն* (729), *աշխատողիկ* (808), *իմաստանոց* (706), բանքս *կրկնորդ* (778), *յոքնահամեան* սեղան (846), *աշխար-հափրկաւղ* մարդեղութիւն (849), *քըղմնելի* ամաւթ (313) և այլն, <u>համածանցավոր բառեր</u>՝ *համազնեայ* (417), *հոմազնեա* (281), *մակաքայլող* (689), *անհեղգալի* (777) և այլն, <u>բայակազմություն</u>՝ *ընդգրաւել* (676), *մաքրազատել* (104), *յարգունել* (ՆՀԲ՝ *յարգուն* «ունակ յարգի և արժէից, յարգաւոր», 343), «*դիմընդդիմեցին* և հաստատեցին ձեռնգրերովն» (327), «ի սպառուած գրոյս յորժամ *բոլորաջահիք*՝ աւգտութեամբ իրենիազն իմաստէս՝ և դուք ի համայնն ընկալջիք ի բառացի Տեառնէն» (605), «*ջոկաղասիլ* ընդ աջմէ փեսային» (741):

Նշված բառարաններում չեն վկայվել նաև 13-րդ դարի հիշա-տակարաններում գործածված բազում բառատարբերակներ, որոնք բնութագրվում են թե՛ հնչյունական և թե՛ բառակազմական տարբերությամբ՝ հիմնականում ներկայացնելով բառապաշարի գրական և խոսակցական-բարբառային կամ գրաբարյան և միջինհայերենյան շերտերը: Այսպես.

1) հնչյունափոխված և անհնչյունափոխ հիմքերով տարբերակներ. ա) բառակազմության ժամանակ հիմքի *ի* վերջնահնչյունի ուղղակի պահպանմամբ, *ա* հոդակապից առաջ պահպանմամբ և *ե* /է/ միաձույլ հոդով տարբերակներ՝ *բարիվայելուչ* (604), *բարիայբեր* (675), *հոգիանորոգ* (208, 520), *հո-*

զիանուազ (377), *հոգիալից* (418), *հոգիածաւալ* (756), *հո-զիազումար* (756), *հոգէտաւիղ* (ՆՀԲ, ԱԲ՝ *հոգիատաւիղ* «Հոգւոյն սրբոյ քնար եղած») (43) և այլն,բ) շեշտափոխությամբ հնչյունափոխված և մյուս կողմից անհնչյունափոխ հիմքերով տարբերակներ՝ *աստուծատուր* (621), *եղբարորդի* (ԱԲ՝ *եղբայրորդի*) (361), *ուշմութիւն* (667), *քուրադուստր* (ՀԲԲ՝ *քոյրադուստր*) (108), *գոյներանկ* (875), *հանգոյնատիպ* (762), *սեւաթիւր* (ՆՀԲ՝ *սեւաթոյր*) (837) և այլն.

2) *լ* և *ղ* լծորդ բաղաձայններից որևէ մեկով տարբերակներ՝ *արփիանշոյղ* (349), *մառախղապատ* (178), *լամպարափայլ* (837).

3) հոդակապով և անհոդակապ տարբերակներ՝ *զիշերհաւ* (ՆՀԲ, ԱԲ՝ *զիշերահաւ* «տե՛ս *չիղջ*, որն է՝ չղջիկ» (164), *բազմհաւաք* (355), *քաջհմուտ* (837), *վերնկառոյց* (604), *ձեռնահաս* (370), *վերալուծութիւն* (626), *սակաւզիծ* (ԱԲ՝ *սակաւազիծ* «սակավ գրված») (793) և այլն.

4) ուղղականի կամ սեռականի հիմքերով տարբերակներ՝ *արիւնառու* (ՆՀԲ՝ *արեանառու* «առօղ զմասն նոյն արեան») (556), *զարունազեղ* (ՆՀԲ՝ *զարնանազեղ*) (772), *տեառնաբան* (ՀԲԲ՝ *տիրաբան*) (654).

5) բայահիմքի տարբերությամբ տարբերակներ՝ *շատիմայ* (ՆՀԲ՝ *շատիմաց*) (648), *այցառնութիւն* (ԱԲ՝ այցարարութիւն) (536), (571) և այլն:

Կան հնչյունական զանազան այլ տարբերակներ ևս, որոնց չենք անդրադառնում, մանավանդ որ շատերը կարող են գրիչների չիմացության, հետագա աղավաղումների, աղճատումների և վրիպակների հետևանք լինել:

Պետք է նկատել, որ մի շարք բաղադրյալ բառեր իրենց կազմությամբ աղերսակցվում են բառարանագրված այլ բառերի՝ ներկայանալով կա՛մ իբրև սկզբնահիմքեր դրանց համար, կա՛մ էլ՝ իբրև նրանցից կազմված ձևեր: Այսպես. *տարատրոհ* (ՆՀԲ՝ տարատրոհեմ) (499) *մեծաշահավաճառ* արուեստ (ՆՀԲ՝ մեծաշահ, ՀԱԲ՝ շահավաճառ) (797), *աստուածահոսակ* (ՆՀԲ՝ աստուա-ծահոս) (835) և այլն:

Համապատասխան բառարաններում տեղ չգտած բազում բառեր, հարազատ լինելով ժամանակակից հայերենին կամ վկայված լինելով աշխարհաբարյան երկերում, արձանագրվել են արդի հայերենի բառարաններում[15]՝ *բարձրաբլուր* (557), *հոգեկից* (92), *շնորհառատ* (626), *խաւարափարատ* (713), *անդընդանման* (827), *դժուարընթեռնելի* (304), *ալեկոծուն* (684), *կորո-վաքանութիւն* (684), *տղամանուկ* (817), *յորդահեղ* (182) և այլն:

Անշուշտ, վերհանված և քննության առնված բառապաշարը կարող է իր որոշակի նպաստը բերել պատմական բառագիտությանը և հայ բառարանագրությանը:

Khachatryan Valentin - New Words in the Armenian Colophons of the 13th Century. -In this article we have discussed the words and word combinations of the Armenian Colophons of the 13th century which haven't ever been recorded in any well known dictionary. They are about 400 in number, and only the most important part of them has been introduced. The rest of them are mainly phonetic variants mentioned in the dictionary. The discussed word stock, of course, can contribute to historical lexicology and Armenian lexicography.

Хачатрян Валентин - Новые слова в записях рукописей 13-ого века. - В статье рассмотрены слова и словоформы, упомянутые в записях армянских рукописей 13-ого века, которые не были зафиксированы ни в одном из соответствующих известных словарей. Их количество достигает около 400, из которых представлена только важнейшая часть. Остальные – это главным образом фонетические варианты слов, приведенных в словарях. Выявленная и исследованная лексика, безусловно, может внести свой вклад в историческую лексикологию и лексикографию.

[15] Նկատի ունենք հետևյալ բառարանները. Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, Ե., 1976: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*, հհ. 1-4, Ե., 1969 - 1980:

12-ՐԴ ԴԱՐԻ ՁԵՌԱԳՐԵՐԻ ՀԻՇԱՏԱԿԱՐԱՆՆԵՐԻ ԲԱՌԱՊԱՇԱՐԸ*

Խաչատրյան Վալենտին

Քննվել են 12-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում տեղ գտած և ընդհանուր օրինաչափությունից հնչյունական ու բառակազմական առումներով շեղվող, հայտնի բառարաններում չարձանագրված, հիշատակարաններում հաճախակի գործածությամբ, որոշակի դեր ու նշանակություն ունեցող բառերն ու փոխառությունները:

Առանցքային բառեր. ձեռագիր, հիշատակարան, բառապաշար, բարբառային իրողություն, փոխառություն:

Ներածություն: Սույն ուսումնասիրությունը հայերեն ձեռագրերի՝ 5-11-րդ դարերի հիշատակարաններում կիրառված բառապաշարի շուրջ «Երիտասարդ լեզվաբանների հանրապետական III գիտաժողովի զեկուցումներ»-ում տպված հոդվածի տրամաբանական շարունակությունն է [1]: Եթե նախորդ աշխատանքի նյութը պատկանում է հայերենի գրավոր զարգացման հին շրջանին, ապա սույն հոդվածում ներկայացվում է միջինհայերենյան շրջանի սկզբի՝ 12-րդ դարի հիշատակարանների բառապաշարը: Այսպիսով, Ա. Մաթևոսյանի ջանքերով մեկ գրքում զետեղված 5-12-րդ դարերի ձեռագրերի հիշատակարանների [2] բառանյութին անդրադարձ է կատարվել ըստ հայերենի գրավոր զարգացման փուլերի, մանավանդ որ միջինհայերենյան փոփոխություններն արտացոլված են նաև բառապաշարում:

12-րդ դարի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը: Հիշատակագրության ավանդույթով պայմանավորված՝ տարբեր դարերում գրիչները հիշատակարաններ են գրել գրաբար, սակայն տեղ-տեղ գրական վկայագիր են հաղորդել բարբառային և, միջինհայերենյան շրջանում գրելով, նաև միջին հայերենին բնորոշ

*«Լրաբեր», գիտական հոդվածների ժողովածու, մաս III, Ճարտարագետ, Ե., 2014, էջ 803-809:

իրողությունների:

Նկատելի է, որ միջինհայերենյան իրողությունների հիմքում ընկած տարրերը դեռևս որոշ արտացոլում են գտել անմիջականորեն նախորդ դարերի ձեռագրերի հիշատակարաններում [1]: Ինչպես 5-11-րդ դարերի, նույնպես և 12-րդ դարի ձեռագրերի հիշատակարանները գրված են հին հայերեն, նրանցում ընդհանուր գծերով պահպանված են գրաբարյան օրինաչափությունները, սակայն կամա թե ակամա ի հայտ են գալիս բարբառային-խոսակցական, մասամբ նաև միջինհայերենյան իրողություններ:

Գրավոր տարբեր աղբյուրների բառապաշարն ուսումնասիրելիս, բնականաբար, ուսումնասիրողի տեսադաշտում են հատկապես անսովոր բառերն ու բառատարբերակները, բառարաններում տեղ չգտած միավորները, փոխառությունները, լայնորեն գործածված, հատուկ դեր ու նշանակություն ունեցող բառերը և այլն: Ահավասիկ, ուսումնասիրությունը այդ ուղղություններով էլ կատարվել է:

Նշյալ դարաշրջանի հիշատակարանները հիմնականում ձեռագիր ստացողների, ընդօրինակողների, նորոգողների և առհասարակ տվյալ ձեռագրին որևէ առնչություն ունեցող մարդկանց կողմից ձեռագրերի լուսանցքներում և տարբեր ազատ հատվածներում թողնված հուշեր ու հիշողություններ են, իսկ մասամբ՝ ինքնագիր հեղինակների կամ թարգմանիչների հիշատակագրություններ տվյալ երկի գրության կամ թարգմանության դրդապատճառների և ամենատարբեր հանգամանքների վերաբերյալ:

Այն սակավ դեպքերում, երբ հայտնի է գրիչի կամ հեղինակի բնօրրանը, երբեմն՝ գրչության վայրը, թե՛ հնչյունական, թե՛ բառակազմական և թե՛ մեկ այլ տեսանկյունից բարբառային դիտվող կամ անսովոր միավորների կողքին նշում ենք այն, քանի որ կարող են հետաքրքրություն առաջացնել բարբառագետների շրջանում: Այդպիսի օրինակներ են՝ *որիշ որիշ* «ուրիշ ուրիշ, զատ զատ». *որիշ* գլխաբառի մոտ Նոր հայկազյան բառարանում (այսուհետ՝ ՆՀԲ) [3] նշված է *ռմկ. ուրիշ*, այսինքն՝ ռամկորեն, որև՝ բարբառային. «Մեք զընթերցուածքն առատապէս *որիշ որիշ* եդաք ըստ ամսոյն…»

(140), *ճենճեր*՝ ըստ ՆՀԲ-ի՝ «արմատն կայ ի *ոմկ*. ճենճ. իբր փրփուր մոյ եփելոյ, և աղտ իւղային», այն է՝ «ճարպաւոր գոլորշի իբր ծուխ ի վեր դիզացեալ ի մոյ եփելոյ՝ սաստիկ բուրմամբ. ծուխ և հոտ զոհի» (146), *կակղել* «փափկացնել». «զխստութիւնն *կակղելով* ատամամբքն» (169) ևն:

Հետևյալ օրինակներում առկա է երկբարբառների՝ միջին հայերենին բնորոշ պարզեցում՝ *եա>ե* ՝ «ի *դղեկ* քաղաքէ Բրջնոյ» (վայր՝ Բրջնի, 244), «և *կենքն* և մահն լինի ի մէնջ» (330), «…և Քրիստոս զձեզ յիշէ յիւր *հանդերձել* դատաստանին» (141), «…որք բարի և քաղցր խաւսաւք ազնական *լել* են մեզ» (վայր՝ Մաշկնոր վանք, 267), «Յիշեսջիք զԹոմաս *միակեցն* և Աստուած զձեզ յիշէ» (267), «զվարդապետ սորա զՍտեփաննոս *միակեցն*» (313), «*զննջեցել* և զկենդանի ազգս մեր յիշէ Քրիստոս Աստուած» (269), *այ>ա*՝ «զեղբարս իմ, զկրաւնաւոր *եղբարն* իմ զՅովսէփ, և զյառաջ վախճանեալ *եղբարն* իմ զԿոզմա» (վայր՝Խարդբերդ, 181) ևն:

Անհոդակապ բառերը նույնպես ժողովրդախոսակցական կնիք ունեն: Ահա մի քանի օրինակ՝ *նախհոգութիւն*. ՆՀԲ-ում առկա է միայն հոդակապավոր տարբերակը՝ «նախախնամութիւն. գործելն գիտութեամբ» մեկնությունով, իսկ ԳԲ-ում [4]՝ «նախապէս հոգալը՝ հոգ տանելը» բացատրությամբ (վայր՝ Կամրջաձոր, 174), *խրատտու* (վայր՝ Կարինի Խաչկա վանք, 238), *երկայնմտութիւն* (վայր՝ Եղեսէա, 200), *աստուածպետական* (145), *աստուածպաշտութիւն* (վայր՝ Միջնաղբիւր ուխտ, 194), *աւտարսիրութիւն* (վայր՝ Կեչառուս, 246), *մայրքաղաք* (160), *իւրքանչիւր* (վայր՝ Սկեռայ, 258). վերջին երկու բառերը ՆՀԲ-ում, ԱԲ-ում [5] և ԳԲ-ում միմիայն հոդակապավոր տարբերակներով են առկա: Սրանցում նկատվում են միջինհայերենյան փոփոխություն-ների միտումները:

Որոշ բաղադրություններ ուղղակի ժողովրդական կազմու-թյան կնիք ունեն, ինչպես՝ *անունակիր* (146), *քոյրորդի* (վայր՝Մաշկնոր վանք, 267). մեծ թիվ են կազմում *հոգի* բառով բաղադրված բարդությունները, որոնց մի մասում բառավերջյան *ի*-ի և *ա* հոդակապի՝ օրինաչափությանը համապատասխան ձուլում

տեղի չի ունեցել՝ *հոգիակորով* «հոգեպես կորովի» (147), *հոգիագումար* «հոգւով սրբով գումարեալ, հոգեպէս հաւաքեալ» (212) ևն:

Ինչպես և ուսումնասիրությունն է ցույց տալիս, ՆՀԲ-ն կազմողները բառեր են վկայել նաև հիշատակարաններից, սակայն զգալի թվով օրինակներ չեն արձանագրվել նրանում, ապա նաև՝ ԱԲ-ում: Կա՛մ տվյալ հիշատակարաններն ընդգրկող ձեռագրերը բառարանագիրների ձեռքում ուղղակի չեն եղել, կա՛մ էլ նյութի մեծ ծավալի հետևանքով բազում այլ բառերի հետ դուրս են մնացել բառարանից: Օրինակ՝ *հրահանգայիղձ* (149) բառը ՆՀԲ-ի բառացանկում տրված չէ, սակայն *կրթավարժ* (149) գլխաբառի տակ վկայված նախադասության մեջ է *հրահանգաիղձ* ընթերցմամբ. Միջին հայերենի բառարանում (այսուհետ՝ ՄՀԲ) [6] այն կա առանձին գլխաբառով՝ դարձյալ Գ. Յովսեփեանի «Յիշատակարանք ձեռագրաց»-ից վկայված, այսինքն՝ խոսքը հենց վերը էջանշված վկայության մասին է: Հարկ է հիշել, որ ՄՀԲ-ն պարունակում է միմիայն միջինհայերենյան շրջանի գրականությամբ ավանդված, այդ թվում և՝ 12-րդ դարի հիշատակարաններում ամրագրված բառեր:

Հիշատակարաններում կիրառված, բայց և ՆՀԲ-ում տեղ չգտած որոշ բառեր հետագայում նկատվել և արձանագրվել են ԱԲ-ի՝ Գրիգոր Ճելալյանի կողմից շուրջ 5000 բառերի համալրումով վերահրատարակության մեջ, առանձին դեպքերում՝ ԳԲ-ում, մասամբ նաև՝ ՀԱԲ-ում [7] և ՄՀԲ-ում: Այդպիսիք են՝ *գերածանաւթ* «շատ ճանչցուած» (145), *արտահեղուլ* «դուրս վազցընել» (237), *փողագոչ* - ԱԲ՝ «փողի ձայնով», ԳԲ՝ «իբրև փողը հնչեցնող» (147), *բարձրաքարոզ* «բարձր ձայնով քարոզող» (152),*խօսակարգութիւն* «խօսակցութիւն» (187), *ճոխազն* «մեծ՝ հարուստ» (152), *գերահրաշափառունակութիւն* (147), *քաջաջան* (212) ևն:

Գրաբարյան վերոհիշյալ հայտնի երեք բառարաններից և ոչ մեկում տեղ չգտած զգալի թվով բառեր արձանագրվել են Լ. Հովհաննիսյանի «Գրաբարի բառարան»-ում, որը պարունակում է միմիայն ՆՀԲ-ում չվկայված բառեր [8]: Այդպիսիք են՝ *սուղա-*

մասնեա «սուղ, քիչ»․ «Ով ամենիմաստ և բազմերգելի, չնչին և*սուղամասնեա* առասութեանցս…» (251). ՀԱԲ-ում *սուղ* գլխաբառի տակ տրված է *սուղմասնեայ* անհոդակապ տարբերակը, որի կողքին փակագծերում գրված է «նորագիտ բառ» - Պտրգ. 248, *սուղամասնեայ*ք տնումենք ՀԲԲ-ում [9]՝ «քիչ մասերից կամ համառոտ մասերից բաղկացած», *առաքելազումար* «առաքյալներից կազմված, հավաքված» (142). ՆՀԲ-ում արձանագրված են նշվածի հետևյալ նույնարմատ հոմանիշները՝ *առաքելախումբ*, *առաքելազունդ*, *ծաղկազումար* (167), *յոգնատոչոր* (142),*հոգիաբողբոջ* (203), *վայրենաբոյս* (167, առկա է նաև ԱՀԲԲ-ում [10]), *բիւրաբանութիւն* (203), *յարապայծառ* (203):

Ինչպես և առանձին օրինակների մոտ նշվում է, գրաբարի բառարաններում չներառված, բայց և հիշատակարաններում առկա սակավաթիվ բառեր, գործածված լինելով աշխարհաբարյան շրջանում, զետեղվել են արդի հայերենի բացատրական բառարաններում:

Հիշատակարանների բառապաշարը բառարաններում ստուգվել է բոլոր հնարավոր տարբերակներով՝ թե՛ հնչյունական և թե՛ բառակազմական՝ նկատի առնվելով նաև այն, որ չեն բացառվում միևնույն վկայության տարընթերցումները: Ստորև բերվող բառերը վերոնշված գրաբարյան և ոչ մի բառարանում չեն ընդգրկվել:

Այսպես՝ածանցավորբառեր՝ *ստորագծութիւն* (222), *շարագծութիւն* (223), *ներսափակեալ* (223),*անճառաւոր* (140), բարդ բառեր ՝ *հրեշտակակոխ*. «Գրեցաւ սուրբ Աւետարանս ի *հրեշտակակոխ* մենաստանիս Դրազարկիս առաջի Սուրբ Աստուածածնիս» (142). ՀԱԲ-ի *հրեշտակ* բառահոդվածում որպես նորակազմ բառեր տրված են՝ *հրեշտակակոխ*, *հրեշտակամորթ*, *հրեշտակամակարդ*: ՀԲԲ-ում նույնպես կա նշված բառը, սակայն «հոգէառ հրեշտակի կոխած, հոգէառ հրեշտակի կամ գրօղի զարզանդից մեռած» բացատրությամբ: Վերջինում բնագրային վկայություն չկա, իսկ հիշատակարաններում հաճախակի հանդիպող *աստուածակոխ*, *հրեշտակակոխ* բառերը որոշիչ են վայր

նշանակող գոյականների և համապատասխանաբար նշանակում են «աստծու կամ հրեշտակի կոխած, ոտք դրած». Ահա թե ինչպես է բացատրվածաստուածակոխ բառը ՆՀԲ-ում՝ «կոխեալ յաստուծոյ. ուր աստուծոյ կացեալ իցէ, կամ շրջեալ մարմնով». *կենդանետղ*. «տարան *կենդանետղ* գտեալ լիապատար հոգւով»(146). ՀԱԲ-ում*տեղ* գլխաբառի տակ տրված է նաև հին *ետղ* տարբերակը, և տարբեր գործերից վկայված են դրանով կազմված հետևյալ բառերը՝ *բանակետղ*, *ժողովետղ*, *գործետղ*. *մանրորոն* «մանրախնդիր». «Քանզի շնորհեալ շահատակումն ի խոյզս *մանրորոն*…» (147). *խնդրել* գրաբարում նշանակել է նաև «որոնել, փնտրել», ուստի նույն իմաստն ունեն *մանրորոն* և*մանրախնդիր* բառերը. *ովաշարժ*. «Զայսոսիկ գերազանց լրութիւն լնուս յայնցանէ յանտեսութենէ *ովաշարժ* հայր մեր և ուսուցիչ հանուրցս Յովհան» (147). *հոգեշար*. «միշտ զուարթ պարունակ *հոգեշար*» (203), *փառազուարճ* (147), *դրամագին* «դրամագլուխ» (285), *յոքնայանց* «հոգնամեղ, բազմամեղ». «Զշարագծող սուրբ Աւետարանիս զ*յոքնայանց* պարտաւորս Աւետիս,…» (219). *յոգնախորտիկ* (181). գրաբարյան բառարաններում տրված է *բազմախորտիկ* հոմանիշը «ուր գտանիցին բազում խորտիկք, մեծահաց», *յոքնախոնջ*. «*յոքնախոնջ* ջանիւ ի յոլովից քննեալ իմաստնոյ զգիրսս զայսոսիկ…» (222). վերջինս, գործածվելով արդի հայերենում, ամփոփվել է ԱՀԲԲ-ում և ԺՀԲԲ-ում [11]. *քայլայեղ* «քայլափոխ». «…և ի հովիտս դաշտացն *քայլայեղ* արագութեամբն ժամանեալ…» 152). *հաշտակամ*. «Ցիս հայեաց Տէր հաշտակամ» (192), *մեծամրոց* (196). *սքողաշուք* . «բազմապայծառ սքողաշուք երկնաւորին հարսին եկեղեցո» (203), *հանուրասփիռ* «*հանուրասփիռ*, տիեզերագոչ, ոլորտածաւալ ազդարակ անմահազործ» (203). *յարմարահայց*. «յիշեսջիք ի սուրբ և *յարմարահայց* մաղթանս ձեր զգրող սորին զՅոհաննէս և զհայր իմ զՄանուկ քահանայ» (200). *սրբաբէր*. «յիշեսջիք ի Տէր զգրող սորա և զստացող, և զԽաչատուր *սրբաբէր* քահանայ նկարիչ ծաղկանց» (231):

Հիշատակագրության դարավոր ավանդույթով և նյութի բովանդակային կողմերով պայմանավորված՝ որոշ բառեր

հաճախակի գործածություն են ստացել: Հիշատակարաններում գրիչները սովորաբար օրհնանքի և մեծարանքի խոսքեր են ուղղել ձեռագիր ստացողներին, ընդօրինակողներին և առհասարակ նրանց, ովքեր որևէ դեր են ունեցել այն փրկելու, պահպանելու, գրչագրելու և փոխանցելու գործում՝ այդ ամենը համարելով մեծագույն ծառայություն հայրենիքին, ժողովրդին և հավատին: Հետևաբար այդ առումով որոշ բառեր կիրառվել են մեծ հաճախականությամբ, ինչպիսիք են՝ *պատուական*, *սուրբ*, *սրբասնեալ*. «…ողորմեա ստացողի սորա քրիստոսազարդ և *պատուական* քահանայիցս…» (220), «Տէր Աստուած ողորմեա ստացողի սորա *պատուական* քահանայի Ներսէսի և ծնողաց իւրոց» (321), «Յիշեցէք ի Քրիստոս *սրբասնեալ* քահանայ անուն կոչեցեալ Մատթէոս…» (314) ևն:

Մյուս կողմից էլ իրենց անձի մասին խոսել են պարսավանքի, մեղադրանքի արտահայտություններով՝ մեծ մասամբ ելնելով ընդօրինակված ձեռագրում թույլ տրված վրիպումներից, գրի խոշորության և զանազան այլ հանգամանքներից՝ հայցելով Աստծու ողորմությունն ու օրհնությունը, ինչպես. «Զպատուական եղբարն մեր Թաւմա, որ զաւրինակս ետ և զ*մեղապարտ* գծողս և զծնողսն մեր, յիշեսջիք ի Քրիստոս…» (286): Վերջինիս պետք է ավելացնել նաև ստորև ընդգծված օրինակները, որոնք մեծ հաճախականությամբ են գործածված հիշատակարաններում. «Ես Կիւրակոս *տրուպ* գիտնական և *անարժան* ծառայ Աստուծոյ…» (139), «յիշեցէք ի Քրիստոս զհայրն իմ զՍարգիս… և *տրուպ* զԱստուածատուրս» (164), «Տէր ողորմեա՛ և աւգնեա՛ յամենայնի, նաև գծողի *բազմամեղի* և յոյժ *անպիտանի*» (319), «…յաղաւթս յիշեսջիք, և զ*բազմամեղ* գծողս զՄխիթար» (284), «Զ*բազմամեղ* անձն իմ Հայրապետիս և զեղբարց իմոց Կարապետին և զԽաչատրին յիշեայ…» (323), «յիշեցէք ի Քրիստոս զ*ամենամեղ* աշխատողս…» (308), «զ*ամենամեղս* զԿիւրակոս յիշել ի Քրիստոս աղաւթիւք» (175), «Զ*ամենամեղ* և զ*յետինս* ի քահանայս… զԿիրակոս յիշել աղաչեմ յաստուածահաճոյ աղաւթս ձեր» (175), «Կիւրակոս *անարժան* և *յոքնամեղ* քո ծառայ…» (176), «Եւ

կատարեցաւ ձեռամբ իմով տառապեալ և *յոգնամեղ* և *ախմար* գրչի Ստեփանոսի» (278), «ընդ նմին և *յոքնամեղ* գրչի Յոհանիսի» (328), «*Զանպիտան* կազմիչ գրոցս զՅովհան յաղաւթս յիշեսջիք» (180), «…և զծնողս նոցա յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նմին զ*անպիտան* զծողս զՄխիթար» (284), «…և զ*մեղապարտ* գրիչս Խաչատուր, և զծնաւղսն մեր յիշեսջիք աղաւթիւք, աղաչեմ» (232), «Զստացող գրոցս զԳրիգորէս վարդապետ յիշեսջիք ի Քրիստոս, ընդ նմին և զ*մեղապարտ* գրողս. եԱստուած զձեզ յիշեսցէ» (232) ևն:

Հիշատակարանները սովորաբար ավարտվում են հետազայում տվյալ ձեռագիրն ստացողին կամ ընթերցողին ուղղված խնդրանքով, որ աղոթքներում հիշեն իրենց՝ ձեռագրին որևէ առնչություն ունեցող մարդկանց, հաճախ նաև՝ իրենց հարազատներին: Այսպիսով՝ *աղաւթք* բառը սովորաբար ստացել է հետևյալ որոշիչները՝ կազմված*սուրբ* և*մաքուր* հոմանիշներից յուրաքանչյուրով և*մատուցանել* բայի անցյալկատարյալիհիմքով. «յիշեսջիք ի *սրբամատոյց* յաղաւթ ձեր» (138), «զգրողս յիշման առնէք ի *սրբամատոյց* և յաղթական յաղաւթս ձեր» (248), «…յիշէսճիք զմեզ ի Տէր *մաքրամատոյց* յաղաւթս ձեր…» (141) ևն: Ի տարբերություն նախորդ շրջանի հիշատակարանների [1]՝ այստեղ վերջիններիս շարքում գործածվել է նաև*մաքրափայլ* որոշիչը, որը հետագա դարերի հիշատակարաններում ավելի հաճախադեպ է հանդիպում. «յորժամ ընթեռնուք զՏաւնականս, ի *մաքրափայլ* յաղաւթս ձեր յիշեցէք զտէր Աստուածատուրս» (316), «յիշեցէք ի սուրբ և ի *մաքրափայլ* յաղաւթս ձեր զիս» (336):

12-րդ դարի հիշատակարաններում գործածված փոխառությունները հիմնականում այնպիսիք են, որոնք ընդհանուր են հայերենի զարգացման բոլոր փուլերի համար: Բացառություն են կազմում քիչ թվով փոխառություններ, որոնք հիմնականում պաշտոն, որևէ կոչում նշանակող բառեր են, այսպես՝ հունարեն՝ *կուրապաղատ* «հազարապետ, բդեշխ, բեկ» (183), *սևաստաւս* // *սևաստաս* // *սևաստիաւս* // *սեւաստաւս* // *սեբաստաւս* «պաշտելի, պատկառելի. մակդիր սեպհականեալ ինքնակալի» (216 ևն), *պուէտիկոս* «բանաստեղծ, քերթող» (170), արևելյանլ

եզուներից՝ *սպասալար* «սաղար սպայից, զորագլուխ» (207), *ամիր սպասալար* «մեծ սպարապետ» (207) են:

Եզրակացություն: Ձեռագրերի հիշատակարանները տրամադրում են անսպառ ու բազմազան բառանյութ: Վերհանված և քննված բառապաշարը կարող է իր նպաստը բերել հայերենի պատմական բառագիտությանը: Հայտնի գրաբարյան բառարաններում չամրագրված բառերը կարող են ընդգրկվել ապագայում կազմվելիք բառարաններում:

Хачатрян Валентин - Лексика колофонов рукописей XII века. - Обсуждаются слова, используемые в колофонах рукописей XII века. Эти слова, отклоняющиеся от общей закономерности в фонетическом и словообразовательном планах, не зафиксированы в известных словарях, часто используются в колофонах, выполняют определенную роль и имеют определенное значение. Также упоминались заимствованные слова.

Ключевые слова: рукопись, колофон, лексика, диалектное реальностью, заимствование.

Valentin Khachatryan - The Word-stock of the Colophons of The XII Century Manuscripts. - Words used in manuscript colophons of the XII century are discussed. These words have deviations from the general laws in phonetic and word-building aspects, aren't included in well-known dictionaries. They are often used in colophons and have a definite role and a definite meaning. Borrowings were also mentioned.

Keywords: manuscript, colophon, word-stock, dialectal reality, borrowing.

ՎԱՐԴԱՆ ՊԱՏՄԻՉԻ ԱՆՁԻ ԵՎ ՆՐԱ «ՊԱՏՄՈՒԹԻՒՆ ԹԱԹԱՐԱՑ»-Ի ՄԱՍԻՆ*

Խաչատրյան Օֆելյա

Վարդան պատմիչի՝ 1870թ. Երուսաղեմում լույս տեսած «Պատմութիւն թաթարաց» աշխատության և հեղինակի ով լինելու մասին կան տարակարծություններ: Ոմանք գտնում են, որ Վարդան պատմիչը Վարդան Արևելցին է, և սույն աշխատությունը պատկանում է վերջինիս գրչին, ոմանք էլ կարծում են, որ այդ երկը և Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց»-ը նույնն են, այսինքն՝ կասկածում են, որ Վարդան պատմիչ անունով անձնավորություն գոյություն է ունեցել:

Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի տիտղոսաթերթի վրա գրված է. «Նշխարք հայ մատենագրութեան, Պատմութիւն թաթարաց, յԵրուսաղէմ ի տպարանի սրբոց Յակով--բեանց» 1870[1]: Հաջորդ էջում[2]՝ «Պատմութիւն թաթա-րաց *Վարդանայ պատմչի* հանեալ ի ձեռագիր օրինակաց թանգարանի սրբոց Յակովբեանց»: Նույն գրքի առաջաբանում կարդում ենք. «Առաջին հատոր նշխարացս հայ մատենագրութեան փութամք ի լոյս ընծայել, որ պատմէ *զծագմանէն և զբարոյից և զպատերազմաց Թաթարաց*: Եւ գրեալ է Վարդանայ պատմչի յաշակերտացն Վանականայ Վարդապետի ի ժգ դարու. ի 1247 և ընդօրինակեալ է 1272. և օրինակն զոր ունիմք ի ձեռս, ձեռագիր է նորին *Գրիգորի երիցու Ականց անապատի ի Կիլիկիա:* Օրինակս չունի առանձին յիշատակարան զգրողէն. սակայն ի լուսանցս օրինակին ուրեք ուրեք տեսանի գրեալ նովին ձեռագրով «Ողորմեա° տէր, Վարդանայ ծառայի քո»: Նա եւս կից է օրինակս

*«Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 228-233:

[1] *Նշխարք հայ մատենագրության, Պատմութիւն թաթարաց,* յԵրուսաղէմ ի տպարան սրբոց Յակոբվեանց, 1870:

[2] Նշվ. աշխ., էջ 2:

Միխայելի Ասորւոյ կաթողիկոսի *Ժամանակագրութեանն,* որ յայտնի թարգմանութիւն է *նորին Վարդանայ* ի յիշատակարանին ծանուցեալ: *Ե՛ւ լեզու, և՛ ընթացք պատմութեանն իսկ վկայեն զսա նորին լինել հեղինակութիւն*: Յորում ի պատմութեանս Թաթարաց պատմի և զՀայոց թագաւորութենէ, որով և մասն համարի պատմութեան Հայոց: Զոր ի գլուխս գլուխս բաժանեալ ըստ զանազանութեան պարագայիցն ի սմա պատմելոց, տամք ի տպագրութիւն»[3]: Մինչդեռ Փայլակ Անթապյանի՝ Վարդան Արևելցուն նվիրված երկհատոր մենագրության մեջ ասվում է, որ Վարդան Արևելցին 1248թ. *Ասորի Իշխող քահանայապետի աշխատակցությամբ է* թարգմանել Միխայել Ասորու «Ժամանա-կագրութիւնը|: Նկատելի է խառնաշփոթ: Վարդան Պատմիչի մա-սին ուրիշ որևէ տեղեկություն չկա, իսկ Վարդան Արևելցու մասին մեծարանքի խոսքեր են գրել իր ժամանակակիցները՝ Կիրակոս Գանձակեցին, Գրիգոր Ակնեցին և այլք[4]:

18-րդ դարի 70-ական թթ. Վ. Արևելցու վերաբերյալ քննական-վերլուծական առաջին խոսքը Մ. Չամչյանինն է, որը, սակայն, սխալմամբ նրա ծննդավայրը համարում է Կիլիկիայի Բարձրբերդը և Վ. Արևելցուն շփոթում Վ. Բարձրբերդցու հետ, նաև նրան վերագրում Վ.Այգեկցու առակները, իսկ *Դիմանջին հեղինակ է ճանաչում այլ ումն Վարդանի, Վահրամի կամ Վարխանի*[5]:

Մեր կարծիքով անհիմն չեն այդ կասկածները: Մ. Չամչյանին են հետևել Մաղաքա Թեոփիլյանցը, Քերովբե Պատկանյանը, Գրիգոր Զարբհանալյանը, Է. Դյուլորիեն, Ժան Սեն Մարտենը և ուրիշներ: Վարդան Բարձրաբերդցու անունով էլ լույս են տեսել Վարդան Արևելցու «Մեկնութիւն սաղմոսաց» և «Հաւաքումն պատմութեան» *երկերը* (վերջինը տպագրված *«Պատմութիւն տիեզերական»* վերնագրով: Հետագա հետազոտողների՝ Ղ. Ալիշանի, Ն. Մառի, Ս. Ամատունու, Ն. Ակինյանի, Հ. Ոսկյանի, Գ.

---

[3] Նշվ. աշխ.,էջ 3:

[4] Փ.Փ. Անթապյան, *Վարդան Արևելցի,կյանքն ու գործունեությունը*, գիրք Ա, Ե., 1987, էջ 5:

[5] Նշվ. աշխ.,էջ 11:

Հովսեփյանի, Հ. Անասյանի ջանքերով ստեղծվում է որոշ հստակություն, սակայն դեռ պարզաբանելու խնդիրներ կան:

Պատմագիր-աշխարհագրագետ Վարդան Արևելցին իր *«Հավաքումն պատմության»* նյութերը քաղել է հատկապես 13-րդ դարի կեսերի ձեռագիր ընդօրինակողներից...որոնց քաղագրություն լինելը բացահայտ է[6]: Քանի որ երկու Վարդաններն էլ նույն դարաշրջանի հեղինակներ են, ուստի՝

1. Երկուսի նյութն էլ վերաբերում է մոնղոլ-թաթարների պատմությանը:

2. Ապրել են նույն ժամանակաշրջանում:

3. Երկուսի գործածած հատուկ անուններում էլ կան նույն կամ հնչյունական որոշ տարբերություններով բառեր, սակայն կան և զգալի քանակով անձնանուններ ու տեղանուններ, և դրանցից ոչ մեկը չի կրկնվում մյուսի երկում:

4. Վարդան Պատմիչի երկը կազմված է տիտղոսաթերթերից, առաջաբանից և 17 գլուխներից՝ համապատասխան վերնագրերով, իսկ Արևելցունը՝ 89 անվերնագիր գլուխներից:

5. Վ. Արևելցու «Հաւաքումն պատմութեան» երկն սկսվում է *Բաբելոնյան աշտարկաշինությունից, Հայկի ու Բելի կռվից և հասնում մինչև հայոց կաթողիկոս Ա. Բարձրբերդցու մահը (1267թ.),* իսկ Վարդան Պատմիչի «Պատմութիւն թաթարաց»-ը՝ *թաթարների ծագման, բարոյականության և պատերազմների մասին է,* գրի է առնվել 1247թ.:

6. Ինչպես վերևում նշված է, 1248թ. Միխայել Ասորու «Ժամանակագրութիւնը» Ասորի Իշխող քահանայապետի աշխատակցությամբ թարգմանել է Վ. Արևելցին, մինչդեռ «Պատմութիւն թաթարաց»-ում ասվում է, որ 1247թ. վանական վարդապետի աշակերտներից *Վարդան պատմիչի* ձեռքով գրված «Պատմութիւն թաթարաց»-ին կից է Միխայել Ասորի կաթողիկոսի *Ժամանակագրությունը*, որի հիշատակարանում արձանագրված նույն Վարդանի հայտնի թարգմանությունն է[7]: Այստեղ կա և՛

---

[6] Նշվ. աշխ., էջ 39:

[7] *Պատմութիւն թաթարաց,* Երուսաղէմ, 1870, էջ 8

տարեթվերի, և՛ հեղինակակցությամբ կամ առանձին թարգմանելու տարբերություն:

7. Փ. Անթապյանի՝ Վ. Արևելցուն նվիրված երկհատոր մենագրության մեջ արձանագրված բազմաբնույթ ու բազմապիսի վերնագրերի կողքին չի հանդիպում «Պատմություն թաթարաց» խորագրով աշխատանք:

8. Համեմատելով նրանց հատուկ անունների ցանկերը՝ պարզվում է, որ 54 անձնանուն և 31 տեղանուն Վ. Արևելցու ցանկում չկան: Անձնանուններն են՝ Աղամ, Ամիր Քուրդ, Աթաբակ, Այթանա, Այլթանա խաթուն և այլն: Տեղանունները՝ Աբլաստ (ի մէջ Աբլստին), Աթլ(գետ), Ալտաղ, Ախշարք, Աղի ծով, Անուանք, Արեւելք, Բենալ և այլն: Ընդհանրություններն են՝ Նետողաց ազգ, Յեսաւ, Յիսուս Քրիստոս, Հագար, Կենդուրա, Իմրան, Եղոմայեցիք, Տաթար, Գովզ և այլն[8]:

9. Վարդան Պատմիչից և Վարդան Արևելցուց որոշակի հատվածներ ենք ընտրել ու համադրել՝ ճշտելու համար շարադրանքի նմանությունն ու տարբերությունը: Առանձնացրել ենք նույն ժամանակահատվածի և պատմական անձանց պատմությունները և պարզել, որ հանդիպել են միանգամայն այլ անձանց այլ գործեր: Օրինակ՝ *Փնտուխտար* անձնանվան դիմաց Վ. Արևելցու երկում կարդում ենք նրա չարագործությունների[9], իսկ «Պատմութիւն թաթարաց»- ում նրա բարության մասին[10]: *Սմբատ սպարապետի*՝ Վարդան Արևելցու և Վարդան պատմիչի 663թ. պատմական դեպքերը նույնպես, և այսպես շարունակ համադրելով երկուսի շարադրանքները՝ համոզվում ենք, որ նրանք տարբեր անձինք են:

Այժմ Հեթում պատմիչի մասին. «1294-1305թթ. եղել է հայոց սպարապետ, վարել մի շարք հաղթական ճակատամարտեր հարևան մահմեդական իշխանությունների դեմ (հատկապես եգիպտական իշխանության, 1305-ին մեկնել է Կիպրոս, ընդունել

---

[8] Վարդան պատմիչ, *Համաբարբառ,* Ե., 1979, էջ 553-579

[9] Վ. Արևելցի, նշվ. աշխ., գլուխ 99, էջ 162:

[10] Վարդան պատմիչ, նշվ. աշխ., էջ 62: Վ. Արևելցի, նշվ. աշխ., էջ 162:

լատինադավանություն: 1307-ին Կղեմոս 5-րդ պապի հանձնարարությամբ գրել է թաթար-մոնղոլների պատմությունը: 1842թ. վարդապետ Հ. Մկրտիչ Ավգերյանը Հեթում պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկը լատիներենից թարգմանել է գրաբար՝ նրան կցելով նաև Հեթումի անունով հայտնի ժամանակագրությունը, որն ընդգրկում է արժեքավոր տեղեկություններ Հայաստանի և ասիական ու եվրոպական մի շարք պետությունների 1096-1307թթ. պատմությունից»[11]: Թեև նրա երկը նույն խորագիրն ունի, բայց գրել է բոլորովին այլ հազամանքներում:

Այժմ Վարդան Արևելցու և Վարդան Պատմիչի գործերում նկատվող քերականական երևույթների մասին.

1. Երկու գործերում էլ հոգնակի թվի ք հոլովակազմիչով ձևերը շատ են (*այք, եայք, իք, ինք, ոյք, ունք*¤, բայց *ան, անի, եան, եար, եր, իկ, ական, նեար, որայ, որեայ, տի, ուտի, ուի, արան* հավաքական հոգնակերտներով օրինակներ գրեթե չկան, իսկ կրկնակի *որեայ + ք, եան + ք* հոգնակերտով մեկ-երկու օրինակ հանդիպում է երկուսի երկերում էլ: Վարդան պատմիչը գործածել է հետգրաբարյան շրջանին բնորոշ *-եր* հոգնակերտով ձևեր, իսկ Վարդան Արևելցին՝ ոչ, օրինակ՝ Իսկ եթէ զի՞նչ նմանութիւն ունէր առաջին Տաթարն, ասասցուք և զայն ևս: Զի ոչ էին իբրև զմարդ առաջինքն, որ եկին ի վերին երկիրն. այլ էին ահազինք տեսողաց և անպատմելիք. զի զլուխն մեծ էր իբրև զգոմիշու, *աչքերն* նեղ՝ *իբրեւ* զձագու. քիթն կարճ՝ *իբրեւ* զկատուի. դունչն՝ մռունջ *իբրեւ* զշան, մէջքն՝ բարակ *զինչ* մրջման. *ոտներն*՝ կարճ *զերթ* խոզի. մորուս բնաւ իսկ չունէին. տաւլաթ ունէին զառիւծու. ձայնն ճչող *զերդ* արծուի. ուր չպատմէր, անդ գտանէր[12]: Բերված հատվածը հետաքրքրական է նաև նրանով, որ բացի *-եր* հոգնակերտ մասնիկից՝ հեղինակը գործածել է *իբրեւ* նախադրությանը զուգահեռ և դրան համարժեք *զերդ, զերթ և զինչ* նախադրությունները, ի դեպ *զինչ*-ը գալիս է միջին հայերենից:

---

[11] Հայկական սովետական հանրագիտարան, հ.6, Ե., էջ 1980:

[12] Վարդան պատմիչ, *Պատմութիւն թաթարաց,* էջ 15, 16:

Պետք է ասել՝ վերը բերված օրինակում նույն բառում առկա են հետգրաբարյան շրջանին բնորոշ հոգնակերտ *եր* մասնիկը և գրաբարյան *աց* հոլովակազմիչը[13], ինչպես՝ և եղեալ ի վերայ *բերդերացն* հիսար (պաշարող) անհամար հեծելովք. և առին զառաջինն զՇամքաւր հուպ առ Գանձակ. որ յառաջ առեալ էին[14]: Իսկ *Ղան* հատուկ անվան *եր*-ով կիրառությանը զուգահեռ առկա է *աց*-ով տարբերակը, օրինակ՝ «..մինչ զի վասն կարի քաջութեանն *Ղաներն* ոսկի սիւն անուանեցին զնա յետ բազում յաղթութեանց և պատերազմացն»[15]: իսկ մի այլ տեղում՝ նույն բառի *աց*-ով տարբերակը՝ «Եւթն որդիք եւթն *Ղանաց*».[16]:

Թեև նշված հեղինակները հանդես են եկել 13-րդ դարում, բայց վերոբերյալ օրինակներից երևում է, որ Վարդան պատմիչի գործում դրսևորվում են նախորդ երկու ենթաշրջանների համեմատ թվի քերականական կարգի բացահայտ տարբերություններ, սակայն նույն երևույթը չի նկատվում Վարդան Արևելցու գործում: Բերված հատվածում նկատելի է նաև ոճական կիրառության դրսևորում (պեսպիսություն. *իբրև, զինչ, զերդ, զերթ* բառերն ունեն և° ձևաբանական, և° իմաստային միևնույն արժեքը:

2. «...և տեղի բանակին այլ ոչինչ գտին. բայց միայն *զվրաննին* բազում ռոճկօք լցեալ»: Այս նախադասության նշված գոյականը գրաբարի համեմատությամբ տարբեր է, ունի միջինհայերենյան բարբառային կիրառություն[17]:

3. *Դղեակ* գոյականը միևնույն տեքստում նույն հոլովով գործածվում է և' *դղեակ*, և' *դղեկ*[18] ձևով, այսինքն՝ տեղի է ունենում *եա* երկբարբառի հընչյունափոխություն, օրինակ՝ «...առին զՍազամ, զՔարիերձ, զՏերեւեն. զմեծ *դղեկն* թագաւորանիստ... Առին և գործով զամուր *դղեակն* զՏաւուշ,

---

[13] Նշվ. աշխ., էջ 16:

[14] ՆՀԲ-ում այս բառը չկա, բայց կա *հիսարել*՝ «որ և խսարել. Բառ ռմկ. որպէս Պաշարել պատնշաւ: Ոսկիփոր, հ. 2, էջ 100»:

[15] Նշվ. աշխ.,էջ 31, 34:

[16] Նշվ. աշխ. գլուխ Ժ.,էջ 34:

[17] Նշվ. աշխ., գլուխ Ձ., էջ25:

[18] *Վարդան պատմիչ*, նշվ. աշխ., էջ16:

որ էր աթոռ Սուլտանի»[19] :

4. Վարդան պատմիչի երկում հանդիպում է *բանիազնաց* բայաձևը, որ ՆՀԲ-ում չկա, բայց կա *բանազնաց լինել*[20]. «Եւ ապա ելեալ Չաւրմանն վկայի ւ *բանիազնաց* առ մեծ գլխաւորն իւրեանց Չանկըզ Ղանն. և պատմեաց զամենայն խորհեալսն զիւրն և զերկուց գլխաւորացն... »:[21] Այդպիսի բառերի մի մեծ խումբ (մոտ 100 բառ), որ ՆՀԲ-ում վկայված չէ, հավանաբար հեղինակի անհատական բառակերտումներից է, արձանագրված է «Պատմութիւն թաթարաց» երկում[22]: Այստեղ նկատելի են հնչյունական մի շարք փոփոխություններ, որոնք, ըստ երևույթին, բարբառային-խոսակցական ծագում ունեն, օրինակ՝ ձայնեղների խլացում. *բախտաւոր –պաւխտախաւոր* (28), Բաղդադ-*Պաղտատ* (39) , Սմբատ- *Սմպատ* (27), Մահմեդ-*Մահմետ* (40), շնչեղ խուլերի խլացում. Թաթար-*Տաթար* (26), Սուլթան-*Սուլտան* (25), խուլերի ձայնեղացում՝ խորամանկ- *խորամանգ* (26), երկբարբառի պարզեցում՝ աներկիւղաբար-*աներկեղաբար* (21), *դղեակ-դղեկ* (16), վերջինը բարբառային կիրառություն է[23], *ի>ե* փոփոխություն՝ պիղծ- *պեղծ*: Նշյալ աշխատության մեջ *վ* հնչյունը արտահայտված է *ու*, *ւ*, *վ* գրանշաններով՝ *պատուական – պատւական* (22), *թուով- թւով* (38), մի այլ օրինակում *ու* երկբարբառի հնչյունափոխություն չի կատարվել՝ օրինակ՝ *Հեթմաւ-Հեթումաւ* (31), իսկ մի այլում *ի* ձայնավորը ոչ թե հնչյունափոխվել, այլ սղվել է, ինչպես *Աստրւոց* բայց *Աստրոց* (44): *Կոստանդին* հատուկ անվան դիմաց հանդիպում ենք *ա-ը* ձայնավորների փոխարկ-

---

[19] Տե՛ս ՆՀԲ՝ «Բանազնաց լինել. Պատգամաւորօք, կամ միջնորդօք խօսել». ՆՀԲ, հ. 1, էջ 433:

[20] Վարդան պատմիչ, նշվ. աշխ.,էջ19:

[21] Նշվ. աշխ., էջ 19:

[22] Տե՛ս Ա. Մուրադյան, Օ. Խաչատրյան, Վարդան պատմիչի «Պատմութիւն թաթարաց» երկի նորաբանությունները, *Միջազգային գիտաժողով՝ նվիրված ՀՀ ԳԱԱ 70- ամյակին*, Ե., 2014: Տպագրության ընթացքի մեջ է:

[23] Տե՛ս ՆՀԲ՝ «Դղեակ, դեկի, կաց, գ., ... գրի և իբր ռմկ. Դղեկ. բերդ. ամրոց, ամուր…». ՆՀԲ, հ.1, էջ 636:

ման, օրինակ՝ Կոստանդին - *Կոստընդին* (31) և *ու-ա փոխարկման՝ Հուլաւու Ղան - Հալաւու Ղան* (18) *անվան դիմաց:*

5. Հեղինակը բերում է մի հատված, որում ներկայացնում է Վրաստանի թագավորի որդուն՝ Դավթին: Ոճական առումով այն ունի գեղարվեստական արժեք. «Եւ էր Դաւիթ որդի թագաւորին Վրաց երկայն հասակաւ և կորովի, գեղեցիկ պատկերաւ և թուխ մօրուօք. լցեալ ամենայն իմաստութեամբ և շնորհօքն Աստուծոյ: Եւ ապա հանեալ ի բանտէն, ագուցին նմա հանդերձս պատուականս... և առին հրաման ի մեծ Ղանէն, բերին նստուցին զԴաւիթ յաթոռ հօրն իւրոյ ի Տփխիս: Եւ իշխանքն Վրաց յոյժ ուրախացեալ անուանեցին զնա *Վարհամուլ* թագաւոր. այսինքն *Վարհամէղիր* թագաւոր»: Ինչպես երևում է բնագրից, հեղինակը տալիս է նաև բառիմաստի բացատրություն (նշված անունները Վարդան Արևելցու հատուկ անունների ցանկում չկան): «Եւ երթեալ ըստ յաջողելոյն Աստուծոյն ետես զՍային Ղանն այն յոյժ քրիստոնէասէր և բարեսէր: Վասն այնորիկ ազն իւրեանց անուանեցին զնա Սային Ղան. որ է ըստ լեզուին իւրեանց աղէկ և լաւ Ղան»: Նմանատիպ շարադրանք է հայ ժողովրդի ողբերգական վիճակը արտահայտող մի հատված ևս. «Եւ արդ՝ զո՞ր աղէտ և զպատահումն ժամանակիս գրեցից. զբաժանու՞մն հարց և մարց ի յորդւոցն, թէ զսիրելեաց և զմերձաւոր ընտանեաց զխափանումն սիրոյն. զիւրեանց սեպհական ընչիցն առնու՞մն, թէ զգեղեցիկ ապարանացն ի հրոյ ծախումն. զմանկտւոյն ի գիրկս մարցն զենու՞մն, թէ զգեղեցիկ և զփափկասնունդ երիտասարդաց և զկուսից բոկ և մերկ գերումն»: Այստեղ առկա է ճարտասանական հարց:

6.Վարդան Արևելցու երկում հաճախ են հանդիպում անցյալ դերբայի կողքին սեռականով ենթակայի դեպքեր, որ հատուկ է գրաբարին, իսկ Վարդան պատմիչի երկում՝ ոչ: Օրինակ՝ «Յորում աւուրս *նշկահեալ* (մերժել, անարգել, արհամարհել *Արշակայ* զՎաղենտիանոս կայսր, և *նորա բարկացեալ* սպան զՏրդատ զեղբայր Արշակայ, որ կայր ի պատանդի: Եւ *զնաց-*

եալ մեծին Ներսիսի, պատուի ի կայսերէ»[24]: «Իսկ *Արշակայ սպանեալ* զԳնէլ եղբորորդի իւր, վասն Փառանձեմայ կնոջ նորա ի քոււթենէ Տիրիթայ, նզովէ զնա սուրբն Ներսէս, և ինքն գնայ ի Յոյնս»[25]:

Այսպիսով, կարծում ենք՝ Վարդան Պատմիչն ու Վարդան Արևելցին տարբեր անձինք են և ունեն միանգամայն տարբեր գործեր՝ պայմանավորված հրատարակման տարեթվերի, երկերի բովանդակության, նրանցում կիրառված նորակազմությունների, անձնանունների ու տեղանունների, ձևաբանական, շարահյուսական և ոճական կիրառությունների անհամատեղելիությամբ:

Khachatryan Ofelya - About Vardan Patmich's Personality and His "Patmutyun Tatarats" work. - In the sphere of science are circulating two different mutually exclusive opinions:

1. Vardan Patmich is the same Vardan Areveltsi.
2. The "Patmutyun Tatarats" of Vardan Patmich and the "Havaqumn Patmutyan" of Vardan Areveltsi is the same work.

The comparative study clarifies that it is wrong to identify Vardan Areveltsi and Vardan Patmich or the "Patmutyun Tatarats" of Hetum Patmich with Vardan's same work.

Хачатрян Офелия - О личности Вардана-патмича и его «Патмутюн татарац». - Сравнительное исследование выявляет, что «Патмутюн татарац» написал Вардан-патмич. Вардан-патмич и Вардан Аревелци - разные авторы с различными языковыми особенностями. «Патмутюн татарац» Гетума-патмича и «Патмутюн татарац» Вардана- патмича однозначно написаны в различных обстоятельствах, и отождествление как авторов, так и их произведений, ошибочно.

---

[24] Վարդան Արևելցի, *Հաւաքումն պատմութեան,* Վենետիկ, 1862, էջ 47:

[25] Նշվ. աշխ. էջ 48:

ԳՐԱԲԱՐԻ «ԽԱՂՈՂ» ԵՎ «ԳԻՆԻ» ԲԱՌԵՐԻ ՇՈՒՐՋ*

Հովհաննիսյան Լավրենտի

Հնագիտական տվյալները հաստատում են, որ Հայաստանը եղել է ինչպես վայրի խաղողի, այնպես էլ խաղողի ընտանեցման հիմնական տարածք:

Վերջերս «Արենի–1» քարայրում հայտնաբերված նյութերը հաստատում են, որ ոչ միայն խաղողի մշակությունը, այլև գինեգործությունը զարգացման բարձր մակարդակ է ունեցել արդեն Ք. ծ. ա. Ե. հազարամյակի վերջերից:

Խաղողի, խաղողագործական մշակույթի վաղնջական ակունքներ ունենալը տրամաբանորեն ենթադրում է այդ հասկացությունների հետ կապված հնագույն անվանումների գոյություն, որը և հաստատվում է մատենագրական տվյալներով, այդ անվանումների ստուգաբանություններով:

Այդ իմաստային դաշտի հիմնաբառերն են *խաղող*–ը և *գինի*–ն: Գրաբար մատենագրության ընձեռած տվյալներով փորձենք ցույց տալ այս երկու բառերի իմաստային, գործառական յուրահատկությունները:

Խաղող բառի ծագումը պարզ չէ: «Արմատական բառարանում» այն ստուգաբանված չէ[1]: Գ. Ջահուկյանը հավանական է համարում խուռ. haluli «մի պտուղ» զուգահեռը:[2]

Մեր դիտարկումները թույլ են տալիս եզրակացնելու, որ վաղնջական ժամանակներում գործառել են *խաղող*–ի անվանման հ.–ե. ծագում ունեցող բառեր: Նախքան դրանց անդրադառնալը նկատենք մի իրողություն ևս: Ինչքան էլ զարմանալի է, գրաբարում խաղող բառը հաճախական չէր, թեև առաջին վկայությունները Ե դարից են: Բառը չեն գործածել Կորյունը, Եզնիկը, Բուզանդը, Եղիշեն, Խորենացին: Ագաթանգեղոսը և

---

* *Լեզու և լեզվաբանություն*, 1-2 (12), Ե., ՀՀ ԳԱԱ հրատ., 2014, էջ 4-9:

1 Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Բ, Ե., 1973, էջ 321–322:

2 Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 313:

Փարպեցին վկայել են մեկական օրինակ: Հինգերորդ դարից հետո հայտնի հեղինակներից *խաղող* բառը չունեն Սեբեոսը, Ղևոնդը, Դրասխանակերտցին, Ասողիկը:

Աստվածաշնչում խաղող–ը վկայված է 25 անգամ: Ձեռքի տակ չունենալով Ս. Գրքի հունարեն համաբարբառը՝ *խաղող* բառի գործածությունները համեմատել ենք Աստվածաշնչի ռուսերեն համաբարբառի հետ: Վերջինում արձանագրված է 42 կիրառություն[3]:

Բերենք երկու օրինակ, որոնցում հայերեն բնագրում *խաղող* բառը չկա: «Կթեցին զայգիս իւրեանց» (Դատ., Թ. 27), ռուս. «собирали виноград»: «Կթեցէ՛ք, կթեցէ՛ք, ճռաքաղ արարէ՛ք զմնացորդսդ Իսրայելի» (Երեմիա, Զ. 9), ռուս. «до конца доберут остаток Израиля, как виноград, работай рукою твоею, как собиратель винограда»: Այս կարգի օրինակների «անհամա-պատասխանությունը» բացատրելի է. հայերենում «խաղող» իմաստը «թաքնված է» այգի, ճռաքաղ և նման այլ բառերում, որոնք զուտ «խաղողային» հասկացություններ են: Ուշադրություն դարձնենք մի փաստի ևս: Հայերենում պտղատու (մրգատու) ծառանունները կազմվում են *–ի* կամ *–ենի* ածանցներով (*արմաւենի, թզենի, նշենի* և այլն): Գրաբարում *խաղողենի* վկայված չէ: ՆՀԲ–ն բերում է մեկ վկայություն միջինհայերենյան շրջանից. «Տայ *զհովութիւն* քափուրի, որ ի հնդիկս ի մէջ խաղողենւոյ հանեն»:

Խաղողենի, խաղողի չկա նաև բարբառներում (համենայն դեպս արձանագրված չէ «Հայոց լեզվի բարբառային բառարան» –ում): Կարելի է հավաստել, որ նախագրաբարյան շրջանում (մթագնված ձևով նաև գրաբարում) խաղող հասկացու-թյունն են արտահայտել հետևյալ բառերը.

Գինի. նախ նշենք, որ հ. –ե. և ոչ–հնդեվրոպական մի շարք լեզուներում գինի և խաղող հասկացությունները նույն արմատով կազմություններ են. հմմտ. ֆրանս. vin «գինի», vinée 1. «խաղողի

[3] Տե՛ս *"Симфония к синодальному изданию Библии"*, Стокгольм, 1995:

բերք», 2. «պտղատու ճյուղ», հին սլավ. вино «գինի», և «խաղողի որթ», ռուս. вино «գինի», виноград «խաղող» և այլն:

Գրաբարի բառարանները *գինի* «խաղող» կամ «խաղողենի» իմաստը չեն արձանագրում: Այս իմաստները հաստատող մատենագրական անհերքելի տվյալներ նույնպես չկան. բնականաբար պետք է հենվենք երկրորդական թվացող փաստերի վրա:

ա) *Գինի* բառը ՆՀԲ–ն մեկնում է «Բեր որթոյ կամ այգւոյ, արիւն խաղողոյ, քաղցու կամ խազմուզ ինքնին եռացեալ...»: Ուշադրության արժանի է «Բեր որթոյ կամ այգւոյ» բացատրությունը, որից տրամաբանորեն ենթադրելի է՝ այգու կամ վազի բերքը գինին չէ, այլ խաղողը:

բ) Ե. դ. մատենագրությունից քաղված հետևյալ օրինակներում գինին դարձյալ վերաբերում է խաղող հասկացությանը. «Եւ զամենայն արեւելեան եւ զհիւսիսային եւ զհարաւային կողմանս քաղաքին զարդարէ դաստակերտօք, եւ սաղարթիւք ծառոց վարսաւորաց, զանազանեալք ի պտուղս եւ ի տերեւս եւ բազում բազմաբերս եւ գինեբերս ի նմա տնկեաց ովիտ» (Խոր., I, ԺԶ. 53)[4]:

Գինեբեր բառը վստահորեն կարելի է փոխարինել «խաղողաբեր»–ով. այդ է հուշում նաև զանազանեալ ի պտուղս կապակցությունը: Նմանաբնույթ օրինակ ունի Եղիշեն. «Չորացան ազազեցան բուրաստանք, ծաղկոցաց նոցա, եւ տաշտախիլ եղեն որթք գինեբեր այգեաց նոցա» (Եղիշէ, 201)[5]: Մեկ օրինակ էլ բերենք Աստվածաշնչից. «Եւ զամենայն պտուղ իւղոյ եւ զամենայն պտուղ գինւոյ եւ ցորենոյ, զոր տացեն Տեառն զպտուղ իւրեանց, քեզ ետու զայն» (Թիւք ԺԸ. 12), ռուս. «Все лучшее из елея и все лучшее из

---

[4] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց*, քննական բնագիրը եւ ներածութիւնը՝ Մ. Աբեղեանի եւ Ս. Յարութիւնեանի (նմանահանութիւն, լրացումները՝ Ա. Սարգսեանի), Ե., 1991:

[5] *Եղիշէի Վասն Վարդանայ եւ Հայոց պատերազմին*, ի լոյս ածեալ բաղդատութեամբ ձեռագրաց, աշխատութեամբ՝ Ե. Տէր–Մինասեան, Ե., 1957:

винограда и хлеба, начатки их, которые они дают Господу, я отдал тебе»:

Չանդրադառնալով *գինի* բառի ստուգաբանությանը (բնիկ հայերեն, հ. – ե. ծագման փաստը անառարկելի պետք է համարել)՝ ենթադրություններ կան նախնական *գին* արմատի գոյության մասին, գրաբարյան որոշ կազմություններ, եթե դրանք ձեռագրական աղավաղումներ չեն, այդ են հաստատում, *գինոտ* «գինու հոտ ունեցող», *գինութիւն* «գինարբություն», *գինարբու, գինաւէտ* (կա և գինեւէտ):

Գինի բառի մեջ *–ի* ածանցի գոյությունը ընդունում է և Գ. Ջահուկյանը. «Վաղնջահայերենում այն եղել է դեռևս գործուն և արդյունավետ ածանց, հին հայերենում դադարել է արդյունավետ լինելուց, թեև պահպանվել են ածանցելի և ածանցյալ հիմքերի հակադրություններ. ա) գոյականներ՝ *ալի–ք, աղաւնի, աղ–ատ–իք, այգի, անդի... գինի*»[6]:

2. Որթ «խաղողի տունկ». բնիկ հայկական բառ է, ինչ վերաբերում է բառիմաստին, ապա ՆՀԲ–ն և «Առձեռն բառարանը» «խաղող» իմաստը չեն նշում, իսկ «Արմատական բառարանը» Գ. Մագիստրոսից քաղված «ճաշէին յորթ, ի հաց եւ ի կոգի» նախադասության մեջ իրավացիորեն արձանագրում է որթ «խաղող» իմաստը: «Ստուգաբանական բառարանում» այդ իմաստը նշում է և Գ. Ջահուկյանը (էջ 607):

Ս. Գրքից քաղված հետևյալ օրինակում որթ–ը դարձյալ «խաղող» իմաստով է գործածված. «Եւ եղիցին ստինք քո իբրեւ ողկոյզս որթոյ» (Երգ., Է. 8), ռուս. «И груди твои были бы вместо кистей винограда»:

3. *Այգի*–ն նախապես ունեցել է միայն «խաղողի այգի» իմաստը: «Արմատականում» *այգի*–ն դիտվում է որպես «խաղողային» հասկացություն՝ 1.«խաղողի այգի», 2. «խաղողի որթ»:

[6] Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան,* Ե., 1987, էջ 231: 7

«Արդի հայերէնի մէջ, – գրում է Հ. Աճառյանը, – արեւմտեան գրականում այգի պահել է իր բուն նշանակութիւնը, իսկ արեւելեան գրականում նշանակում է ընդհանրապէս «պարտէզ»»[7]:

Այգի բառի նախնական իմաստն ակնառու է դառնում հատկապես Ս. Գրքի հայերեն և այլ լեզուների որոշ հատվածների համեմատությունից, հմմտ. «Եւ զանդս ձեր եւ զայգիս ձեր եւ զձիթենիս ձեր զազնիւս՝ առցէ» (Ա. Թագ., Ը. 14), ռուս. «И поля ваши и виноградные и масличные сады ваши лучшие возьмет»: «Երկիր... այգեաց հացի, երկիր ձիթենեաց իւղոյ եւ մեղու» (Դ. Թագ., ԺԸ. 32): «Եհար կարկտիւ զայգիս նոցա եւ զթզենիս նոցա 6 8 եղեմամբ» (Սաղմ. ՀԷ. (ՀԸ.), 47), ռուս.՝ «Виноград их побил градом и сикоморы их – льдом»:

Ուշադրության արժանի է մի հանգամանք ևս. այլ տեսակի այգիները (ոչ խաղողի) գրաբարում արտահայտվում են *բուրաստան, դրախտ, պարտէզ*... բառերով. «Եւ եհան արձակեաց զնա... ի դրախտէ անտի» (Ծննդ., Դ. 23):

ԺԴ դ. վկայված հիշյալ օրինակում այգին հաստատապես «խաղող» իմաստն ունի. «Ի միում տեղոջէ ջամբէ բնութիւնն այգոյ քաղցրութիւն եւ լուծութիւն»[8], բնագրի ռուսերեն թարգմանությունը. «Природа из общего источника дает винограду сладость»[9]:

Ստ. Մալխասյանցի բառարանում վկայված այգեռուպ «խաղողի հյութից պատրաստված դոշաբ, ռուպ» բառի *այգ(ի)* բաղադրիչը «խաղող» իմաստն ունի: Այգի բառով գրաբարում առկա են տասնյակ կազմություններ, որոնք վերաբերում են «խաղող» հասկացությանը. *այգաւէտ, այգեգործ, այգեգործութիւն, այգեթաղ, այգեկիթ(ք), այգեկութ(ք), այգեստան, այգեւէտ* և այլն: *Այգի* բառի հ.–ե. ծագումը վիճարկելի չէ: Հ. Աճառյանը այգի բառի

---

[7] Տե՛ս Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. Ա, Ե., 1971, էջ 166:

[8] Տե՛ս Իշօխ, *Գիրք ի վերայ բնութեան*, աշխատասիրութեամբ՝ Ս. Վարդանեանի, Ե., 1979, էջ 89:

[9] Նույն տեղում:

արմատը համարում է *այգ–ը «խաղող», իսկ *–ի*–ն՝ ծառանունների բնորոշ մասնիկ: Այս ենթադրությունները հաստատվում են վերը բերված և նման օրինակներով: Կարելի է ենթադրել, որ վաղնջահայերենում *այգ(ի), որթ, գին(ի)* բառերն ունեցել են և «խաղող» իմաստը:

Հ.–ե. ծագումով այդ բառերի «խաղողային» բնույթը կողմնակիորեն կարող է հաստատել Հայաստանի տարածքում խաղողագործության և գինեգործության զարգացման հազարամյա ակունքների հավաստիությունը:

Կարելի է ենթադրել նաև, որ «խաղող» իմաստով գործածված *այգ(ի), որթ, գին(ի)* բառերը վաղնջահայերենում եղել են հայերենի տարածքային տարբերակներ կամ գործառել են ժամանակագրական տարբեր կտրվածքներում:

Խաղող բառը, ըստ երևույթին, հայերենում գործառել է ավելի ուշ՝ աստիճանաբար դառնալով համապատասխան հասկացության հիմնական արտահայտիչը գրաբարում և հայերենի հետագա բոլոր լեզվավիճակներում:

Оганесян Лаврентий - О древнеармянских словах խաղ ո ղ (xałoł) «виноград» и գ ի ն ի (gini) «вино». - В статье рассматриваются семантические и функциональные особенности армянских слов խաղ ո ղ xałoł “виноград” и գ ի ն ի gini "вино”. В древнеармянском языке смысл слова " խաղ ո ղ xałoł “виноград” выражался некоторыми словами и.–е. происхождения, в том числе словом գ ի ն ի gini "вино”.

Hovhannisyan Lavrenti - On the Old Armenian Words խաղ ո ղ (xałoł) «Grape» and գ ի ն ի (gini) «Wine». - In this article the semantic and functional features of words «խաղ ո ղ »(grape) and «գ ի ն ի » (wine) are investigated. In Old Armenian a number of words of IE origin for the sense *խաղ ո ղ* xalol “grape” were used, uncluding the IE word *գ ի ն ի* gini “wine”.

ՃԵՆԱՑ ԱՇԽԱՐՀԻ ԵՎ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՏՈՀՄԻ ԾԱԳՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋ*

Հովհաննիսյան Լավրենտի

Տարբեր դարերի հայ պատմագրության մեջ հիշատակություններ կան ճենաց աշխարհի մասին: Տարաբնույթ տեղեկատվությունների առումով, ինչպես եւ սպասելի է, առանձնանում է Մովսես Խորենացին: Հետագա շարադրանքում կրկնություններից խուսափելու համար նպատակահարմար ենք գտնում Խորենացու՝ մեզ հետաքրքրող հատվածը ներկայացնել ամբողջական տեսքով:

«Վախճանեալ Արտաշրի որդւոյ Սասանայ' թոռու զթագաւորութիւնն Պարսից որդւոյ իւրում Շապհոյ: Ի սորա աւուրս ասեն եկեալ ի Հայս նախնի ազգին Մամիկոնէից յարեւելից հիւսիսականէն, ի քաջատոհմիկ եւ ի գլխաւոր աշխարհէ եւ ամենայն հիւսիսականաց ազգաց առաջին ասեմ իսկ զՃենացն, որ ունին զրոյցս այսպիսիս: Յամս կատարման կենացն Արտաշրի, Արբոկ ումն Ճեն-բակուր, որպէս ասի ի նոցա լեզուն պատիւ թագաւորութեան, սորա երկու դայեկորդիք, Բղդոխ եւ Մամգոն անուն կոչեցեալ, մեծ նախարարք: Եւ չարախօսեալ Բղդոխայն զՄամգոնայն՝ հրամայեաց թագաւորն Ճենաց Արբոկ սպանանել զՄամգոնն: Զոր իմացեալ Մամգոնայն' ոչ գայ ի կոչն արքայի, այլ փախուցեալ աղխիւ իւրով անկանի առ Արտաշիր թագաւորն Պարսից…

Արդ թէպէտ եւ ոչ տայ Շապուհ զՄամգոնն ի ձեռս տեառն իւրոյ, այլ եւ ոչ յԱրեաց երկրին թողու, բայց ամենայն աղխիւն իրով առաքէ զնա իբրեւ զվտարանդի առ գործակալս իւր որ ի Հայս»:

Մեջբերվող հատվածի շարունակության մեջ Խորենացին նկարագրում է ճենաց աշխարհի որոշ մանրամասներ, «Աքանչելի է աշխարհին առատութեամբ ամենայն պտղոց, եւ զեղեցիկ բուսովք զարդարեալ, քրքմաւէտ եւ սիրամարգաշատ եւ

---

* Էջմիածին, 2014, Է, էջ 100-105:

բազմամետաքս, անբաւութիւն յամուրաց եւ հրեշից, եւ որ էշայծեմունսդ անուանեն, ուր հասարակաց կերակուր ասեն զառ մեզ պատուական եւ սակաւուց ճաշակելիս՝ գփասեան եւ զպոր, եւ այլք այսպիսիք, իսկ պատուականքս առ մեզ զգեստուց եւ սակաւուց ազանելիք՝ հասարակաց նոցա է զգեստ: Եւ այս յաղագս աշխարհին ճենաց»[1]:

Ճենաց աշխարհի մասին հիշատակություն կա եւ Խորենացու «Աշխարհացոյց»-ում: «Եւ է ճենաստան ընդարձակ դաշտս բնակեալ ազգս քանեւինն, յորոց մին մարդակերք, առ Անծանաւթ երկրաւ... ունի լերինս վեց. եւ լինի անդ դարիճենիկ եւ կասիմոն... եւ ունի հրէշ եւ մուշկ եւ սիրամարգ շատ, եւ այլ հաւս պիտանիս եւ քրքումս անբաւս..., լինի ապրիշում շատ: ...Յորոց արքայն ճենբակուր նստի ի քաղաքին Սիւռա' որ է ի հարաւային արեւելեայ ծայրի աշխարհին» (2160-2161)[2]:

Ուսումնասիրողները համակարծիք չեն ճենաստանի տեղադրման, բնականաբար եւ բնակիչների էթնիկական պատկանելության հարցում: Գերիշխող կարելի է համարել Ճենաց աշխարհը՝ Չինաստանը, ճեներն էլ չինացիներ լինելու վարկածը: Հարցի ճշգրտումը կարեւորվում է հատկապես Մամիկոնյան նախարարական տոհմի չինական ծագման համատեքստում, որը փորձում են հիմնավորել նաեւ Խորենացու վկայած հատուկ անունների միջոցով:

Մանրամասն քննելով հայկական աղբյուրների վկայությունները՝ պատմաբան Հ. Սվազյանը իրավացիորեն եզրակացնում է. «Հայկական աղբյուրների ճեները, ոչ մի դեպքում

---

[1] Մովսէս Խորենացի, *Պատմութիւն Հայոց,* քննական բնագիրը եւ ներածութիւնը Մ, Աբեղեանի եւ Ս, Յարութիւնեանի, նմանահանութիւն, լրացումները Ա, Բ, Սարգսեանի, Երեւան, 1991, էջ 221-223:

[2] Աշխարհացոյցի» հեղինակի հարցում տարակարծություններ կան: Ոմանք այդ գործի հեղինակ են համարում Շիրակացուն, սակայն զանազան կարգի փաստերը հաստատում են, որ հեղինակը Խորենացին է, թեեւ կան հետագա' ուշ շրջանից հավելումներ: *«Աշխարհացոյց»*-ի երեք հրատարակությունները զետեղված են *«Մատենագիրք Հայոց»* Բ. հատորում, Անթիլիաս-Լիբանան, 2003: Այդ հրատարակությունների մեզ հետաքրքրող հատվածում էական տարբերություններ չկան:

չեն կարող լինել ո՛չ ճաները, եւ, առավել եւս, ո՛չ չինացիները: Այդպիսի նույնացումը անվանումների սոսկ արտաքին նմանության հետեւանք է»[3]: Հեղինակի կարծիքով «Ճենաց երկիրը պետք է տարածված լիներ Պարսկաստանի արեւելյան սահման-ներից ոչ շատ հեռու հոսող Ամու-Դարյա գետի ափերին»[4]: Այդ տարածքում չինական բնակչություն չկար, այնտեղ ապրում էին իրանական ցեղեր:

Ճենքը Չինաստանն են համարում եւ Խորենացու պատմության թարգմանիչները՝ Մ. Էմինը ծանոթագրում է тченк, ճենք, китайцы, китай[5], Խ. Ստեփանեն թարգմանում է *Ճենաստան*, ճեների ազգ՝ ծանոթագրելով, որ «թէ' ճենք անունը, եւ թէ երկրի նկարագրութիւնը ցոյց են տալիս, որ այժմեան չինացիներն եւ Չինաստանն է նշանակում»[6], Գ. Սարգսյանը նույնպես այդ կարծիքին է՝ գրելով страна ченов - Китай, чены-китайцы[7].

Այս վարկածը մերժելի պետք է համարել: Փորձենք հիմնավորել տրամաբանական, պատմական, ապա եւ, հատկապես, լեզվաբանական նոր փաստարկներով:

Չինաստանի հետ Առաջավոր Ասիայի եւ ապա Եւրոպայի կապը սկզբնավորվել է, այսպես կոչված «մետաքսի ճանապարհի» շնորհիվ, որը գործում էր մ.թ.ա. Բ. դ, մինչեւ մ.թ. Է. դ: Ե.- Է. դդ. «մետաքսի ճանապարհի զգալի մասը, պարսկական-սողդիական վաճառականների ձեռքում էր»[8]: Կարելի է ենթադրել, որ դրանից

---

3 Հ. Սվազյան, *Ճեները եւ «Ճենաց աշխարհը» ըստ հայկական աղբյուրների.* «Պատմաբանասիրական հանդես», 1976, թ. 4, էջ 207:

4 Անդ, էջ 208:

5 “*И стория Армении М оисея Х оренского*”, новый перевод Н. О. Эмина, М осква, 1893, ծան. 315:

6 «*Մովսէս Խորենացու Հայկական պատմութիւն*». աշխարհաբար թարգմանեց եւ լուսաբանեց Խորէն ծայրագոյն վարդապետ Ստեփանէ, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 212-213, ծան. 479:

7 Տե՛ս Мовсес Хоренаци, *История Армении, перевод с древнеармянского языка,* введении и примечания Гагика Саркисяна, Е., 1990, էջ 252, ծան. 527:

8 «Հայկական սովետական հանրագիտարան», հ, 7, Երեւան, 1981, էջ 485:

առաջ էլ չինական տարրի առկայություն չնչին էր (կամ գուցե չկար), որովհետեւ չինարենը Առաջավոր Ասիայի (եւ Եւրոպայի) հետ առեւտրական հարաբերություններում լուրջ դժվարություններ կստեղծեր: Հայ մատենագիրները չեն հիշատակում նաեւ չինացիների ինքնանվանումը՝ хань[9]: Սա էլ Չինաստանին ծանոթ չլինելու փաստ է: «Աշխարհացոյց»-ում տարբեր երկրների նկարագրության ժամանակ շեշտվում են բնակիչների կամ բնակչության որեւէ խմբի արտառոց վարք ու բարքը, սովորությունները:

Ճեները չինացիներ լինելու դեպքում սպասելի է, որ կխոսվեր նրանց արտաքին տեսքի, դիմագծերի, յուրահատկությունների մասին:

Խոսք չկա նաեւ չինացիների արտառոց ուտելիքների մասին: Նրանք, ինչպես ասում են, ուտում են այն ամենը ինչ կա երկնքում, երկրի վրա եւ գետնի տակ, այդ թվում՝ ճանճեր, միջատներ, որդեր…: Ոչ միայն չի նշվում այդ երեւույթը, այլեւ «Պատմության» մեջ Խորենացին, ընդհակառակը, նրանց կերակուրները համարում է «պատուական եւ սակաւուց ճաշակելիս»:

Խոսք չկա նաեւ չինարենի մասին, որն իր բառակազմական եւ լեզվաքերականական դրսեւորումներով էապես տարբերվում է Առաջավոր Ասիայի նաեւ հայերի ու եւրոպացիների լեզուներից[10]:

«Աշխարհացոյց»-ի մեջ ճենաց երկրի բուսական եւ կենդանական աշխարհին վերաբերող թվարկումների շարքում ոչ մի չինարեն բառ չկա, գերիշխող են իրանական լեզուների բառերը՝ *դարիճենիկ, հոշիբուակ, բուճենիկ, հրէշ, սուշկ, սիրա՛մարգ քրքում...* (էջ 175). մյուս հրատարակություններում չնչին

---

[9] Ինքնանվանման մասին տես *"Большая Советская Энциклопедия"*, 1973, հ. 23, էջ 422:

[10] Հին չինարենի վանկը, հետեւաբար եւ արտասանությունը զգալիորեն տարբերվում էր հնդեւրոպական լեզուների բառակազմական եւ հնչական իրողություններից, վանկի կազմում, որոշ բաղաձայններ թերեւս կատարում էին նախածանցի կամ վերջածանցի դեր, իսկ յուրաքանչյուր վանկ կարող էր ունենալ 2-4 իմաստազատիչ դեր: Այս եւ այլ հատկանիշներ, որոնք նաեւ հաղորդակցման դժվարություններ են ստեղծում, մեր պատմագրության մեջ չեն նշվում:

տարբերություններ կան: Հ. Աճառյանի կարծիքով *սիրամարգ* բառը ծագել է *սինամա րգ* ձեւից եւ փոխառյալ է իրանական լեզուներից (տե՛ս Արմ. *Սիրամարգ* բառահոդվածը): *Մարգ* բաղադրիչը ակնհայտորեն իրանական է, իսկ *սին*-ը հավանորեն Չին(ական) բառն է: Այս փաստն էլ իր հերթին վկայում է, որ միջին իրանական լեզուներում (նաեւ ավելի վաղ) Չինաստանի անվանումը *ճեն* արմատով չէր: *Սին* արմատը պահպանվել է նաեւ հայկական ժողովրդական հեքիաթներում՝ Սինամ թագավորի եւ Սինամ հավքի սյուժեներում, որոնցում Չինաստանը ներկայանում է որպես կախարդական աշխարհի խորհրդանիշ[11]:

«Պատմության» մեջ եզակի վկայությամբ հանդիպող էշայծեամն էլ իրան. xarbuz-ի պատճենումն է. xar «էշ», buz «այծ»[12]:

Մեզ հետաքրքրող հատվածներում որոշ անձնանունների չինական ծագում վերագրելը նույնպես մերժելի է:

Գ. Սարգսյանը նկատում է, որ «Մամիկոնեան» տոհմանվան ստուգաբանությունը եռաստիճան է. «Մամիկոնեանը ստուգաբանվում է «մամգոնեանով», սա էլ՝ «մամգոնով»: Անանունի տարբերակով այն ստուգաբանված է զույգ Մամիկ եւ Կոնակ անուններով: Մամիկ անունը, եթե հետեւենք Մարքվարտին, հիշատակում է *դեռեւս Տիգրան Մեծի կապակցությամբ* Ապպիանոսը»[13]:

Մամգոն անունը հիշատակվում է նաեւ Խորենացու Պատմության երկրորդ գրքի ՁԴ. գլխում. «Գնաց Մամգոն ամենայն աղխիւն իւրով զկողմամբք Տարօնոյ... եւ կարգէ (Տրդատ) զնա նախարար ... անուանելով անուն իւր Մամգոնեան» (228-229):

---

[11] Տե՛ս Ն. Վարդանյան, *Չինաստանը կախարդական աշխարհի խորհրդանիշ*. «Ոսկե դիվան» հեքիաթագիտական հանդես, պրակ 3, 2011, էջ 89:

[12] Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան*, հ. II, Երեւան, 1973 (այսուհետեւ' Արմ.), *խարբուզ բառահոդվածը*: Խարբուզի թերեւս միակ վկայությունը Ս. Գրքում է. «Ձեղջերու եւ զայծեամն եւ զգոմէշ եւ զխարբուզ եւ զայծքաղ» (Օր., ԺԴ., 5):

[13] Գ. Սարգսյան, *Հատուկ անունների ստուգաբանությունը Մովսես Խորենացու պատմության մեջ* («Պատմագիտական հետազոտություններ», Երեւան, 2006., էջ 102): Ընդգծ. Լ. Հ.

Բակուր անձնանվան «չինա-թյուրքական» ծագման փաստարկները նույնպես համոզիչ չեն: Ոմանք բառը բացատրում են «որպես թյուրքական fagtur, չինարեն Tsen-tze «արեգակի որդի» բառի թարգմանության հայացված ձեւ»[14]:

Ավելի հավանական է բառի իրանական ծագումը bāg «աստված» եւ puhr>puh «որդի»: Ստ. Մալխասյանը, ընդունելով վերոհիշյալ ստուգաբանությունը նշում է. «Ճեն-Բակուր նշանակում է ճենաց (Չինաց) Բակուր[15]» (անշուշտ, ավելորդ է փակագծերում առկա *չինաց* լրացուցիչ մեկնությունը):

Այնքան էլ տրամաբանական չէ, որ Չինաստանից եկած մեկի անունը այդքան շուտ եւ շատ տարածվեր Հայաստանում, նաեւ հայերի միջոցով՝ Վրաստանում: Անձնանունների բառարանում նշվում են մի շարք Բակուրներ: Այդ անունը գործածված է եղել մ.թ.ա Ա. դարից:

Գ. Աբգարյանը, անդրադառնալով ճենաց դեսպանի հետ ունեցած զրույցի վկայությանը, նկատում է, որ «Ճենացիները (եթե դրանք իրոք չինացիներ են), դեսպանի Հայաստան եկած ժամանակներում, չէին կարող իրենց լեզվով, այսինքն' միջին չինարենով ճշգրիտ արտասանել ո՛չ Արտավան, ո՛չ Խոսրով, եւ ոչ էլ զրույցում հանդիպող մյուս այն անունները, որոնց կազմում *ր* հնչյուն կա»[16]

Հ. Աճառյանը *Կոնակ* անձնանվան ծագումը համարում է անհայտ, նշելով, որ նա չինացի նախարար էր, «որդի Կառնամի, իր Մամիկոն եղբոր հետ փախավ Հայաստան Մեծն Խոսրովի

---

[14] Տե՛ս Հ. Սվազյան, նշվ. աշխ., էջ 209:

[15] Մովսես Խորենացի, *Հայոց պատմություն.* աշխարհաբար թարգմ. եւ մեկնաբանությունները Ստ. Մալխասյանի, Երեւան, 1951, էջ 504, ծան. 222: Հ. Աճառյանը նույնպես ընդունում է *Բակուր* բառի իրանական ծագումը' դարձյալ հավելելով' «այս անունն էին կրում Չինաց թագավորները հնում» (Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան,* հ. Ա., Երեւան, 1942, էջ 368):

[16]Գ. Աբգարյան, *Մամիկոնյանների զրույցի հնագույն աղբյուրը հայ մատենագրության մեջ* («Բանբեր Մատենադարանի», թ. 7, 1964, էջ 247): Ըստ Գ. Աբգարյանի՝ *ճենաց դեսպանի հետ զրուցողը եւ Մամիկոնյանների զրույցը* գրանցողը եղել է Ագաթանգեղոսը (ն.տ., էջ 246):

ժամանակ», սրանցից սկսվեց Մամիկոնյան տոհմր[17]:

Այստեղ դարձյալ շեշտվում է չինական ծագումը, բայց կարեւոր տեղեկություն է նրանց՝ Հայաստան գալու ժամանակաշրջանի վերաբերյալ:

Կոռնակ անձնանունր Խորենացին հիշատակում է I գրքի ԻԲ. եւ II գրքի ՀԹ. գլուխներում: Հ, Աճառյանի կարծիքով' «Խորենացու հիշատակությունից պարզ չէ, թե ով է» (ն, տ,, էջ 647): Մ, Աբեղյանը Կոռնակներից մեկին համարում է Հայոց թագավոր, մյուսին՝ Պարսից զորավար[18]:

Ակնհայտ է, որ նշված անձնավորություններր չինացիներ չեն, բնականաբար անուններն էլ չինարեն չեն: Դառնանք Բ դդոխ ն անձանվանր: Ստ, Մալխասյանր բառր առնչում է մոնղոլերեն Բողդիխան-ի հետ, որր չինական թագավորներին տրվող տիտղոս է[19]: Հ. Աճառյանի կարծիքով «Անհանարին է Ե. դարում ապրող Խորենացու մեջ գտնել դ=γ: Նա կարդացվում է միայն Բըլդոխ»[20]:

Մեկ դիտարկում եւս, բազմաթիվ լեզուներում Չինաստան բառի արմատի ձայնավորր ի է, հմմտ, անգլ, china, գերմ, china, իտալ, cina, պրս, չինի (չինական), ռուս, китай, ույղուրերն kyta», հին թյուրք, Qytan...: (Քիթաններր տունգուսամանջուրական ցեղախմբեր էին, որոնք Ժ. Դ. նվաճեցին Չինաստանր)[21]:

Չին(աստանր) եթե լիներ Ե. դ. հայերենում վկայված *Ճենքը, Ճենաց աշխարհը,* ապա վերջիններր պիտի ունենային *ճինք կամ *Ճէնք, *Ճէնաց գրությունր, քանի որ գործում է *է*-ի հնչյունափոխությունր եւ ոչ թե՝ *ե*-ի (հմմտ, վէմ-վիմի, տէր-տիրոջ, սէր-սիրոյ… եւ այլն):

Վերոհիշյալ եւ այլ ուսումնասիրողների կողմից բերված փաստարկներր թույլ են տալիս եզրակացնելու, որ Ե. դ, վկայված

---

[17] Հ. Աճառյան, *Հայոց անձնանունների բառարան,* հ, I, 1944, էջ 646:

[18] Տե՛ս «Պատմութիւն Հայոց»-ում բերված անձնանունների ցանկր, էջ 380:

[19] Տե՛ս Մովսես Խորենացի, *Հայոց Պատմություն,* աշխարհաբար թարգմ, եւ մեկնաբանություններր Ստ, Մալխասյանի, Երեւան, 1981, էջ 504, ծան, 222:

[20] Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան,* հ, IV, Ե□, 1979, էջ 653:

[21] Китай բառի մասին տե՛ս M. Фасмер, *Этимологический словарь русского языка*, հ. 2, M., 1986, էջ 240 241:

Ճենք-ը Չինաստան չէ, եւ բնականաբար Մամիկոնյան նշանավոր տոհմին չինական ծագում վերագրելը մերժելի է:

Ճեները, ամենայն հավանականությամբ պարթեւներին ցեղակից ժողովուրդներ էին, հայերի հետ հեռավոր ծագումնաբանական կապով եւ, որ պակաս կարեւոր չէ, լեզվական, հատկապես, բառապաշարային շատ ընդհանրություններով:

Հայերենում *չին* անվանումը վկայված է ուշ շրջանից՝ ԺԳ. դարից: Հիշյալ բառարանի վաստակաշատ հեղինակները նույնպես *Ճենք*-ը Չինաստանը չեն համարում: Բառարանը Խորենացու վկայած Ճենազգեայ, Ճենազն մեկնում է «Որ է յազգէ Ճենաց», իսկ Վարդան պատմիչի՝ «Ստարադէմ եւ այլալեզու շարժել ի չին եւ ի ՛մաչին աշխարհէ» օրինակի *Չին* Ճշգրտորեն մեկնում՝ «Աշխարհ եւ ազգ քինաց կամ սինէացւոց»[22]:

Оганесян Лаврентий - В “Истории Армении” Мовсеса Хоренаци происхождение княжеского рода Мамиконянов связывается с именем некоего Мамгуна, прибывшего в Армению из “страны Ченов” . В “Географии” того же автора описываются некоторые ее особенности. По мнению большинства исследователей, “страна Ченов” - Китай, а сами “чены” - китайцы. Эта гипотеза опровергается в статье в результате анализа ряда фактов, среди которых можно выделить следующие: -Среди названий растений и животных “страны Ченов” нет ни одного китайского слова. Личные имена “Мамгун” и “Бакур”, приводимые автором, также не являются китайскими по происхождению. -Автор подробно описывает географическое положение, быт, обычаи знакомых ему стран. В описании “страны Ченов”, как и в остальных, нет ни одного факта, характерного для Китая и китайцев. -Если “ճ ե ն ք ”, как ошибочно считается, это “Китай”, то мы должны были бы иметь словоформу “ճ է ե ք ”:

Hovhannisyan Lavrenti - In Movses Khorenatsi’s “Armeninan history” the origin o f Mamikonyan’s princely House is connected with the name o f Mamgun, who had come to Armenia from the ճ ե ե աց (C’enac’)

[22] Տե՛ս ՆՀԲ, Ճենազգեայ, Ճենազն, չին բառահոդվածներ, հ. II, էջ 179, 576:

country. In the „Geography„ o f the same author are described some specifities o f the country. By the opinion o f the most researchers the country o f the Ճ ե ե աց is China and ճ ե Ն ք are cheenes. In the article basing on different facts and arguments this hypothesis is denied. -There is no chinese word in the line o f plant names and animal names. The names “Mamgun” and “Bakur” are not Chinese too. -The geographical location, the lifestyle o f people and extraordinary traditions are described very well in the part about other countries which are familiar to author. There is no fact which is typical to China in the description of Ճ ե ե աց world. -If «Ճ ե ե աս տաե » would the same “China” it had to be written «Ճ Է ե ք ».

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ ԱՍՏՎԱԾԱՇՆՉԻ ՈՐՈՇ ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Հովհաննիսյան Լավրենտի

Աստվածաշնչի բառապաշարը, թարգմանության հետ կապված առանձնահատկությունները ըստ ամենայնի քննվել են հայ և օտար ուսումնասիրողների կողմից, իսկ Գրքի բառապաշարը, կարելի է ասել, ամբողջապես արտացոլված է Նոր հայկազյան բառարանում (այսուհետև՝ ՆՀԲ):

Աստվածաշունչը, բացի իր հիմնական գործառությունից, կարևորվում է նաև որպես հայ գրական (գրավոր) լեզվի կազմավորման և զարգացման հետագա ընթացքը ուղղորդելու տեսանկյունից: «Աստվածաշունչը հրեական ու հունական բնագրերից վերածվեց հայկական բնագրի, որ զարմացրեց աշխարհահռչակ աստվածաշնչագետներին իր թարգմանական արվեստով ու ինքնուրույնությամբ և կոչվեց Դշխոյ համօրէն թարգմանութեանց Սուրբ գրոց»[1]:

Սույն հոդվածում որոշ դիտարկումներով կանդրադառնանք Ս.Գրքի գրաբար և աշխարհաբար մի քանի հատվածների՝ համեմատելով այլ լեզուներով կատարված թարգմանությունների հետ*:

---

* «Զահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 84-89:

1 Վ. Առաքելյան, *Հինգերորդ դարի հայ թարգմանական գրականության լեզուն և ոճը,* Ե., 1984, էջ 13-14:

*Օգտվել ենք հետևյալ հրատարակություններից. ա) *Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց, ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց. համեմատութեամբ եբրայական եւ յունական բնագրաց,* Վիեննա, 1929 թ., բ) *Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանների. արեւելահայերէն նոր թարգմանութիւն. վերահրատարակութիւն,* Էջմիածին, 1999 թ., գ) *Աստուածաշունչ գիրք Հին և Նոր կտակարաններու, եբրայական եւ յունական բնագիրներէն թարգմանուած,* Moscow, 1994, դ) Библия: книги священного писания Ветхого и Нового Завета, М., 1994, ե) La Bible Ancien et Nouveau Testament, 1991, զ)

Հին կտակարանից. *Տիզօք աչաց խաղաց ի վերայ իմ* (Յոբ., ԺԶ, 10): Արևելահայերեն թարգմանված է. «աչքերի տէգով շարժուել [են] ինձ վրա», արևմտահայերեն՝ «սուր աչքերով ինձի նայեցաւ»: Վերջինս համեմատաբար ճիշտ թարգմանություն է. հմմտ. հուն. §κῖσιν οφθαλμων (հուն. ακῖσ «սուր ծայր, ծայր, նետ»)[2], ռուս. «острит на меня глаза свои»: Գրաբար թարգմանության մեջ նկատի է առնվել *տէգ*-ի սուր ծայր ունենալը:

Հ. Աճառյանը *տէգ աչաց*-ը թարգմանում է «չար նայվածք»[3]: Վերոբերյալ հատվածը կարելի է թարգմանել «սուր հայացք նետեց ինձ վրա»:

Թիւրեալն՝ ոչ կարասցէ զարդարել, եւ պակասեալն՝ ոչ կարասցէ ի թիւ անկանել (Ժող., Ա, 15): *Զարդարել*-ը արևելահայերեն թարգմանված է «ուղղել», արևմտահայերեն՝ «շտկուիլ»:

ՆՀԲ-ն *զարդարել* «ուղղել» իմաստը չի նշում: Գրաբար Աստվածաշնչում ծանոթագրվում է, որ *զարդարել*-ի համապատասխանակը եբրայերենում *ուղղել* է: Այլ լեզուներով թարգմանություններում նույնպես այդպես է. ռուս. «Кривое не может сделаться прямым», ֆր. «ce qui est tordu ne peut pas se redresser»:

Թեև ՆՀԲ չունի *զարդարել* «ուղղել» բառը, սակայն, *արդ* (հ.-ե. art հմմտ. հուն. §ρtoσ «կարգավորություն, §ρtî-πουσ «ոտքերը ուղիղ») արմատով հայերեն բազմաթիվ և բազմիմաստ բառերի առկայությունը հուշում է, որ այն ունեցել է և «ուղիղ» իմաստը: ՆՀԲ-ն ունի *արդակել* «ուղղել» բառը՝ վկայված V դարից: Այդ իմաստն առկա է *արդար* հիմքով մի շարք կազմություններում՝ *արդարախօս, արդարազնաց, արդարակ* «ուղիղ», *արդարամիտ:*

Septuaginta id est Vetus Testamentum graece iuxta LXX interpretes edidi Alfred Rahlfs, է) The Creek New testament. fourth Revised edition, ը) Biblia Sacra Vulgata, Stuttgart, 1994:

[2] Տե՛ս *Древнегреческо-русский словарь.* Составил И.Х.Дворецкий, т. II, М., 1958, стр. 1635:

[3] Տե՛ս Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ Արմ.), հ. 4, Ե., 1979:

Որդի մարդոյ, զոր ինչ գտանես ի դմա՝ կեր. կեր մանր զմատեանդ զայդ (Եզեկ., Գ. 1): Այս նախադասությունը նախորդում է «Տեսի, եւ ահա ձեռն ձգեալ առ իս, և ի նմա մատեան մի գրոյ» (Բ. 9):

Ի՞նչ է նշանակում *մատեան գրոյ*-ն: Արևելահայերեն թարգմանված է «մագաղաթ»: «Մարդո՛ւ որդի, ինչ որ դրա մեջ գտնես՝ կեր. մանր-մանր կեր այդ մագաղաթը...», արևմտահայերեն՝ «Որդի մարդոյ, այդ տոմսը կե՛ր…» ՆՀԲ *Մատեան* բառահոդվածում վերոհիշյալ *մատեան գրոյ*-ն թարգմանում է «Գըլուխ գործոց»՝ նկատի առնելով հունարեն բնագրի κεφαλîσ βîβλιου համապատասխանակը: Հունարենում և գրաբարում *գլուխ* բառը բազմիմաստ է՝ ունենալով նաև «գլխավորը, էականը» իմաստը, ըստ ՆՀԲ-ի՝ «գլխակարգութիւն գրոց, ճառ, հատուած...)»:

Ուրեմն՝ ՆՀԲ-ի «գլուխ գործոց»-ը արդի հայերենի «լավագույն գործ, երկ» իմաստը չունի:

Ուշադրություն դարձնենք *մագաղաթ* բառի ՆՀԲ-ի մեկնությանը՝ «նուրբ մաշկ մորթոյ զառանց և ուլից. յղկեալ ի պէտս գրութեան որպէս թուղթ տնական. *որ է դիրաւ գալարելի*» (ընդգծումը մերն է՝ Լ. Հ.): Այս բացատրությունը հաշվի առնելով՝ Եզեկիելի վերոհիշյալ հատվածի գրաբար *մատեան,* արևելահայերեն *մագաղաթ* պետք է հասկանալ «թղթի, մագաղաթի վրա գրվածք, որը գլանաձև փաթաթված էր, թղթափաթեթ»: Այդ նրբիմաստը ավելի ցայտուն արտահայտված է օտար լեզուներով թարգմանության մեջ. Հմմտ. ռուս. «съешь этот свиток», ֆր. Mange ce rouleau (Գ. 1), «... que tenait un livre, en forme de ruleau» (Բ, 9):

Ինչ վերաբերում է արևմտահայերեն թարգմանության *տոմս* բառին, այն հուն. τομÅσ-ն է «պատառիկ, ձեռագրի մաս» (փաթեթի ձևով):

Տեսէք ինձ այր մի որ բարւոք երգիցէ եւ ածէք զնա առ իս (Ա թագ., ԺԶ, 17): Ուշադրության արժանի է *տեսէք* և *երգիցէ* բառերի թարգմանությունը: Արևելահայերեն՝ «Գտէ՛ք մի մարդ, որ լաւ է նուագում», արևմտահայերեն՝ «Հիմա ինծի աղէկ քնարահար մը գտէք»: Գրաբարի բառարանները *տեսանել*-ի «գտնել» իմաստը չեն

նշում: Հուն. εὲδω-ն բազմիմաստ է, և «տեսնել, նայել»-ից զատ ունի նաև «որոնել, գտնել» իմաստը[4]:

Երգել-ը գրաբարում բազմիմաստ է. ըստ ՆՀԲ-ի՝ «նուագել զերգս, եղանակել, յօրինել և ասել զերաժշտական բանս, սաղմոսել, երգել քնարաւ...»: Այս բազմիմաստությունը երբեմն *երգել*-ի ճիշտ թարգմանության հարցում, որոշակի դժվարություններ է ստեղծում. հիշենք Խորենացու «Երգէր ձեռամբք»-ը, որը տարբեր մեկնություններ ունի: Վերոհիշյալ օրինակում *երգել*-ի հուն. համապատասխանակը ψαλλω-ն է», որի բուն իմաստն է «ձգել, քաշել», ըստ այդմ էլ գործածվում է *լարային գործիքներ նվագելու դեպքում*[5]*:*

Շարժելով շարժեսցի երկիր… Իբրեւ զարբեալն եւ զխալակ, զլորեսցի եւ և մի՛ կարասցէ կանգնել (Եսայ., ԻԴ, 20): Արմատական բառարանում *սխալ* և *սխալակ*-ը առանձին գլխաբառեր են: Վերջինիս համար նշվում է «հարբած» իմաստը՝ վկայակոչելով Ս.Գրքի վերոգրյալ հատվածը: Գ. Ջահուկյանի բառարանում *սխալ* «սխալ, պակաս» բառահոդվածում *սխալ* արմատով բաղադրությունների շարքում առկա է և *սխալակ*-ը[6]:

Արբեալ-ը և *սխալակ*-ը հոմանիշներ չեն: *Սխալակ* նշանակում է «հարբածությունից երերող, օրորվող»: Այդպես էլ թարգմանված աշխարհաբար. «Հարբածի ու երերուողի պէս պիտի գլորուի եւ պիտի չկարողանայ կանգնել»:

Եթե Արմ-ի մատնանշած մի քանի այլ օրինակների դեպքում *սխալակ*-ը կարող է ունենալ «հարբած» իմաստը, ապա մեզ հետաքրքրող վկայության մեջ այդպես չէ:

Ի դեպ, ՆՀԲ-ն իրավացիորեն նշում է «զայթոտ որպէս զարբեալ»: Գրաբարի և հունարենի նշված հատվածները համեմատելով՝ Ա. Մեյեն նկատել է շարադասական մի առանձնահատկություն, որով հիմնավորվում է *սխալակ*-ի նրբիմաստը:

---

[4] Տե՛ս Дворецкий, նշվ. բառարանը, հ. I, էջ 460: Արդի հայերենում էլ *տեսնել* ունի նաև «գըտնել» իմաստը (Տե՛ս Է.Աղայան, Արդի հայերենի բացատրական բառարան, Ե., 1976, էջ 1436):

[5] Տե՛ս Дворецкий, նշվ. բառարանը, հ. II, էջ 1794-1795:

[6] Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան,* Ե., 2010, էջ 682:

«Եսայի մարգարեի այս հատվածում Յոթանասնիցը և հայերեն թարգմանությունը, թեև վերջինս կախում ունի առաջինից, տողերի հերթականության և այս հատվածն արտահայտելու ձևի մեջ ներկայացնում են բավականին մեծ տարբերություններ… սակայն արժե նկատել, որ հայերեն բնագրի ձեռագրային համեմատությունը լավ է բացահայտում *սխալակ* բառի իմաստը… երկիրը ինչպես հարբած մարդ, դողում է, երերում, տատանվում և փուլ գալիս»[7]:

Սխալակ-ը պահել է հ. -ե. համապատասխան արմատի (ըստ Արմ-ի sqhal, ըստ Մեյեի և Ջահուկյանի *skhal- *skhel-) «սայթաքել, երերալ, տատանվել», նախնական իմաստը:

Իբրեւ դարձաւ նա ի պարսից եւ ի պարթեւաց (Ա Մկբ., Զ. 56): *Պարթևք*-ը որպես տեղանուն կրկնված է նույն գրքի մեկ այլ հատվածում. «Եւ զթագաւորսն, որ ըստ նմանէ էին, տալ պատանդս եւ զրաւականս եւ զաշխարհն Հնդկաց և Պարթեւաց» (Ը, 8):

«Գիրք Մակաբայեցւոց»-ի քննական բնագրի կազմող Հ. Ամալյանը գրում է. «Մակաբայեցվոց գրքերի հայերեն թարգմանության համար հունարեն Յոթանասնից բնագրից բացի այլ բնօրինակ ենթադրելու հիմք չկա: Այդ բնօրինակից է թարգմանված ամբողջ Աստվածաշունչը… եթե մի շարք այլ գրքերում հանդիպում են ինչ-որ ավելի հին բնօրինակներ ակնարկող լեզվական փաստեր, գլխավորապես ասորերենի հետքեր, ապա Մակաբայեցվոց գրքերն ազատ են նման իրակություններից և ամբողջությամբ թարգմանված են հունարենից»[8]:

Հայ թարգմանիչը «շեղվել է» բնագրից: Հունարենում Պարթեւք տեղանվան համապատասխանակը Միդիա է: «Περσιδοσ καί Μηδιασ»: Լատիներեն, ֆրանսերեն Աստվածաշնչում նս այդպես է «Perside et Media», «… de Perse et de Médie…»:

---

[7] Ա. Մեյե, *Հայագիտական ուսումնասիրություններ,* Ե., 1978, էջ 64-65:

[8] *Գիրք Մակաբայեցւոց. Քննական բնագիր.* աշխատ.՝ Հ.Մ.Ամալյանի, Ե., 1996, էջ 6:

Մեդիան սովորաբար հայ թարգմանիչները թարգմանում են *Մարք, Մարաստան,* Մակաբայեցվոց գրքում՝ *Պարթևք:* Եթե հունարեն բնագրի հետ անհամապատասխանությունը երկրի անվան հարցն է, ապա բովանդակային առումով հայերեն թարգմանությունը շեղում չպետք է համարել, որովհետև Մակաբայեցվոց գրքի նշված գլուխներում կատարվող իրադարձությունների ժամանակ Մարաստանը (Մեդիան) արդեն գոյություն չուներ, բացի դրանից, ինչպես նկատում է Խորենացին. «Աստուածային գիրն զամենայն Արեաց աշխարհն Պարթեւք կոչէն վասն թագաւորութեան ի նոցանէ լինելոյ»[9]:

Ս. Գրքի մեկ այլ գրքում նույնպես հանդիպում ենք *Պարթևք* բառին, որը թերևս միայն հայերեն Աստվածաշնչում է. «... ածել յորդւոց գերութեանն Իսրայելի և ի զաւակէ թագաւորութեանն եւ ի Պարթեւաց Մանկունս անարատս» (Դան. Ա. 3): Ծանոթագրվում է, որ եբրայական բնագրում չկա «գերութեանն», իսկ *պարթևաց*-ի փոխարեն *իշխանաց* է: Այդպես է ռուսերենում. «...чтобы он из сынов Израилевых, из рода царского и княжеского, привел»: *Պարթևաց*-ը չկա և հունարեն բնագրում, որից օգտվել են հայ թարգմանիչները: Նշված անհամապատասխանությունը թերևս թարգմանիչների սուբյեկտիվ վերաբերմունքի արտահայտություն կարելի է համարել, յուրօրինակ հարգանք պարթևների նկատմամբ՝ կապված հայ իրականության մեջ նրանց ունեցած դերի հետ:

Մի՛ պատժէք եւ ոչ պատժիցիք, արձակեցէք և արձակիցիք (Ղուկ. Զ. 37): *Արձակել* նշանակում է «ներել». Հմմտ. «ներեցեք, եւ ներում պիտի գտնէք Աստծուց», ռուս. «прощайте, и прощены будете», ֆր. «pardonnez aux autres et Dieu vous pardonnera»: Հուն. §πο-λÏω-ն բազմիմաստ է և ունի «ներել» իմաստը[10]:

Հայր մեր որ յերկինս, սուրբ եղիցի անուն քո (Մտթ. Զ, 10): Հունարեն բնագրի π§τερ ¸μÛν Â «ν τοïσ οÉρανοισ հատվածը

---

[9] *Աշխարհացոյց Մովսեսի Խորենացւոյ յաւելուածովք նախնեաց* (Մատենագիրք Հայոց, հ. Բ, Ե դար, Անթիլիաս-Լիբանան, 2003, էջ 2158):

[10] Տե՛ս Дворецкий, նշվ. բառարանը, հ. I, էջ 208:

աշխարհաբար թարգմանված է տարբեր ձևով. «Հայր մեր որ երկնքում ես», «Հայր մեր երկնաւոր» (Անթիլիաս, 1993, Երևան, 2001):

Թարգմանական այս նրբությունները նկատելի են նաև այլ լեզուներով հրատարակված Աստվածաշնչում. Հմմտ. ռուս. «Отче наш, сущий на небесах», «Отец наш небесный»:

Իհարկե, *երկնավոր* ածականի կամ *երկնքում* գոյականի կիրառությունը ըստ էության չի փոխում նախադասության իմաստը: Մեր նկատառումը վերաբերում է *երկինք* գոյականի եզակի՞, թե՞ հոգնակի թվով թարգմանելուն:

Նշենք, որ գրաբարում թեև հաճախական է *երկինք*-ի հոգնակի ձևը, բայց այն անեզական չէ: Գործածվում է և *երկին*-ը: Այդպես է հենց Ս. Գրքի առաջին նախադասությունը. «Ի սկզբանէ արար Աստուած զերկին եւ զերկիր» (Ծննդ., Ա., 1): Նկատել ենք, որ միայն պարսկերեն թարգմանության մեջ է *հայր մեր, որ յերկինս* հատվածի *երկին* բառը դրված եզակի թվով. «Փեդար ի մա, քե դ°ր ասմանի»:

Յերկինս գրաբարի *երկին* բառի հոգնակի ներգոյականի ձևն է, և կարելի է թարգմանել «երկինքներում»: Մեր այս դիտարկում-առաջարկը հիմնավորվում է օտար լեզուներով կատարված թարգմանությունների համեմատությամբ: Ստորև բերվող բոլոր օրինակներում *յերկինս* դրված է հոգնակի թվով. հմմտ. լատ. «Pater noster, qui es in caelis», ֆր. «Notre Père qui es dans les cieux», ռուս. «на небесах», թուրք. «Göklerde olan Babamis»...:

Հավելենք, որ աստվածաբանական գրականության մեջ չի մերժվում երկինքների գոյությունը: Քննադատելով Մարկիոնի ուսմունքը՝ ըստ որի կա երեք երկինք, Եզնիկ Կողբացին գրում է. «Որտեղի՞ց է նա երրորդ երկինք ասում... հերձվածողները մոլորվեցին, որովհետև որը տաս երկինք է ասում, որը՝ յոթ, իսկ Մարկիոնը՝ երեք»: Ուշագրավ է Եզնիկի հետևյալ եզրահանգումը.

«Եւ ի Գրոց սրբոց կամին հաստատել զմոլորութիւնն իւրեանց՝ թէ երկինս և երկնից երկինս բազմաբար ասէն Գիրք»[11]:

Ըստ էության՝ Եզնիկը մերժում է մի քանի երկինքների գոյությունը և *երկինքներ* թարգմանելը համարում սխալ: Սխալի պատճառը, ըստ Եզնիկի, ասորերենի և եբրայերենի հոգնակիի կազմության առանձնահատկությունն է: «Ասորի լեզու չմարթի երկին ասել»: Եզնիկը հուշում է, որ ասորերենում և եբրայերենում *երկինքը* անեզական է: Մարկիոնի ուսմունքի քննադատը գրում է (բերում ենք աշխարհաբար թարգմանությունը) «Երբ հարցումներով ոչ ոքի կողմից չեն սանձահարվում, Սուրբ Գրքից դուրս են զրաբանում, իսկ հենց որ նեղն են ընկնում, Գրքին են ապավինում: Բայց «երկինք» և «երկնից երկինք» Ս. Գրքում գտնում ենք այն պատճառով, որ եբրայեցիների լեզվով չի կարելի ասել «երկին», ինչպես որ ասորերեն լեզվով էլ չի կարելի ասել «ջուր» կամ «երկին, այլ եզակին հոգնակի ձևով է ասվում» (էջ 213):

Երրորդ *երկնքի* գոյությունը վկայում է և Պողոս առաքյալը. «Յափշտակեալ զայնպիսին մինչեւ յերրորդ երկնից» (Բ. Կորնթ., ԺԲ, 2): Ուշադրության արժանի է այդ հարցում Եզնիկի մի այլ լեզվաբանական դիտարկում: Խուսափելով Պողոս առաքյալի վկայության անվերապահ քննադատությունից՝ Եզնիկը գրում է. «Չն եւս յայտ է՝ թէ մինչև ցերրորդ երկինս ասիցէ, կամ թէ մինչև ցերրորդ ինչ մասն ի բազում մասանց միոյ երկնից ասիցէ» (212): Այսինքն՝ *յերրորդ երկնից*-ը պետք է հասկանալ «մեկ երկնքի բազմաթիվ մասերից ինչ-որ երրորդ մասը, որովհետև հունարեն լեզվով այս խոսքը երկուսին էլ կարող է վերաբերել» (213): Մեզ հայտնի հունարենի բառարանում *երկինք* բառի «երկնքի մաս» իմաստը արձանագրված չէ:

Նշենք *երկինք* բառի մի նրբիմաստ ևս. «Ապաշխարեցէք, զի մերձեալ է արքայութիւն երկնից» (Մտթ. Գ, 2): Հունարենում նույնպես *երկինք* բառն է: Նոր կտակարանի աշխարհաբար թարգմանության մեջ ծանոթագրվում է. «Երկինք բառը երբեմն կը

---

[11] *Եզնիկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց.* թարգմանությունը և ծանոթագրությունները՝ Ա.Ա.Աբրահամյանի, Ե., 1994, էջ 212-213:

գործածուի նոյնինքն Աստուած ըսելու տեղ, Աստուծոյ անունը բերան առնելէ խուսափելու համար, ինչպէս կ՝ընէին հրեաներ» (Անթիլիաս, 1996, էջ 864): ՆՀԲ-ն *երկիւր* «աստված» բառիմաստը չի նշում, թեև բառահոդվածում *արքայութիւն երկնից* օրինակը կա:

Ամփոփենք: Բնավ հակված չենք վիճարկելու «երկնքում ես, թե՞ «երկինքներում ես» թարգմանության աստվածաբանական հարցը. ուղղակի համեմատել ենք տարբեր լեզուներով կատարված թարգմանությունները:

Հարցի շոշափումը ավելի շատ միտված է հայ նշանավոր մատենագիրներից մեկի՝ Եզնիկ Կողբացու բանավիճային արվեստի, լեզվաբանական հարցերի իմացության իրազեկմանը:

Աստվածաշնչին վերաբերող դիտարկումներն էլ համարենք ոչ թե քննադատական, այլ՝ քննական:

Hovhannisyan Lavrenti - Remarks on Several Fragments of the Bible. - The paper examines several fragments of the Armenian version of the Bible. When comparing these fragments with the translations of the Bible in other languages, some peculiarities were found.

Ованнисян Лаврентий – Замечание относительно некоторых фрагментов Библии. – В статье исследуется несколько фрагментов армянской версии Библии. При сравнении эти фрагменты с переводами Библии на других языках были найдены некоторые особенности.

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ ՄԻՋԻՆ ԻՐԱՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԻՑ ԿԱՏԱՐՎԱԾ ՄԻ ՔԱՆԻ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ*

Հովհաննիսյան Լավրենտի

Պատմական հանգամանքների բերումով հայերենի բարբառները զգալի ազդեցություն են կրել հարևան լեզուներից, այդ թվում՝ պարսկերենից: Վերջինից կրած ազդեցությունը ակնառու է հատկապես արևելյան խմբակցության բարբառներում:

Ղարաբաղի բարբառի իրանական փոխառությունները հիմնականում պարսկերենից են: Սակայն գործառում են մի շարք բառեր, որոնք ամենայն հավանականությամբ միջին իրանական լեզուներից կատարված փոխառություններ են՝ փաստեր բարբառի և իրանական լեզուների ավելի վաղ առնչությունների, նաև իրանական լեզուների բառապաշարի քննության առումով, քանի որ այդ լեզուների բառապաշարի շատ միավորներ գրավոր ավանդված չեն[1]:

Միջին իրանական լեզուներից կատարված փոխառությունները տարբերակելիս առաջնորդվել ենք հետևյալ սկզբունքներով.

1. Հաշվի ենք առել միջին իրանական լեզուների և պարսկերենի հնչյունական-հնչյունափոխական առանձնահատկությունները. օրինակ՝ միջ. իր. ak- վերջավորությունը նոր պարսկերենում e-ի փոխվելը (երբեմն արտասանվում է նաև a), պարզ խուլ բաղաձայնների շնչեղ խուլերի վերածվելը և այլն:

2. Հաշվի ենք առել նաև Ղարաբաղի բարբառի որոշ հնչյունական առանձնահատկություններ, հատկապես այն, որ Ղարաբաղի բարբառում *բ, գ, դ, ձ, ջ* բաղաձայնները վերածվում են

---

* Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 62-67:

[1] Ըստ իրանական լեզուների շրջանաբաժանման՝ միջին իրանական լեզուների գործառության ժամանակաշրջանը մ.թ.ա. IV-III – մ.թ. VIII-IX դարերն են: Իրանական լեզուների շրջանաբաժանման հիմքում ընկած են ավելի շատ պատմամշակութային, քան լեզվական իրողություններ:

պ, կ, տ, ճ խուլերի: «Այս օրենքին ենթարկվում են միայն հայերեն բառերը, նրանց մեջ առնելով նաև ասորերենից, հունարենից և պարսկերենից առնված փոխառությունները (հին փոխառություններ), հմմտ. *ջուխտ>ճօխտ, բրինձ>պրինձ* ...., իսկ թուրքերենից փոխառյալ բառերը մնում են անփոփոխ, ինչպես *բäզ* «իշխան», *բօլ* «բավական»….: Ձայնափոխության այս զանազանությունը ցույց է տալիս, «որ օրենքը գործել է թուրքերենի Հայաստան գալուց առաջ և հետևաբար Ղարաբաղի բարբառի ծագումը ընկնում է նույնպես ԺԲ դարում»[2]:

Այս սկզբունքները հիմք ընդունելով՝ հին փոխառություններ կարելի է համարել ներքոհիշյալ բառերը.

Լօլակ – «օրորոցի մեջ դրվող հատուկ ձևով խողովակ…»:

Պարսկերեն lūla «խողովակ» բառի առկայությանը ենթադրել է տալիս միջին իրան. lūlak | lolak ձևը, որը, սակայն, վկայված չէ: Բարբառում *լո̈լա*-ն բազմիմաստ է՝ թերևս հարևան այլ լեզվի ազդեցությամբ:

Թալակ – «թակարդ», որոշ խոսվածքներում՝ թäլäկ: Պարսկերեն թäլä-ի դիմաց բարբառային ձևը հուշում է, որ այն կարող է լինել ավելի վաղ շրջանում կատարված փոխառություն: *Թալակ*-ի հին փոխառություն լինելու կողմնակի փաստարկ կարելի է համարել և այն, որ բառը հանդես է գալիս մի շարք կայուն կապակցություններում՝ փոխաբերական իմաստներով.

– *Թալակ ըղնէլ* – 1. Հանցագործության մեջ բռնվել: 2. Փորձանքի մեջ ընկնել:

– Թալակ ընգած աղվէս – Խեղճացած՝ անելանելի վիճակի մեջ ընկած խորամանկ մարդ:

– Թալակ սարել – Դավ նյութել:

– Թալակ քըցիլ – 1. Հանցագործության մեջ բռնել: 2. Փորձանքի մեջ գցել:

– Օխտը թըլ°կա պըրծած – Խորամանկ, ճարպիկ[3]:

---

[2] Հ.Աճառյան, *Հայոց լեզվի պատմություն*, մաս 2, Ե., 1951, էջ 380:

[3] Օրինակները տե՛ս Ա.Սարգսյան, *Ղարաբաղի բարբառի բառարան* (այսուհետև՝ ՂԲԲ), Ե., 2013, էջ 184:

Կըռօճ, գրաբարում գոիճ, պրս. girõÍ «1. շաքարի, քարի, աղի ամբողջական կտոր, 2. հողակոշտ, գունդ, 2. փխբ.՝ ամրակազմ» (ՂԲԲ, 365): Բարբառային բառերի *կ*-ն և *ճ*-ն հուշում են, որ փոխառությունը նոր պարսկերենից չէ: Արմատական բառարանը (այսուհետև՝ Արմ.) և Նոր Հայկազեան բառարանը (այսուհետև՝ ՆՀԲ) նշում են միայն մեկ օրինակ՝ վկայված XII դարից: *Գոիճ*-ը Արմ-ը մեկնում է «մեծ կտոր աղ՝ որ դեռ լեսուած չէ»:

Բառավերջի պ-ի (նոր պարսկերենում՝d) պատճառով հին փոխառություն պետք է համարել ասպ(ը)՝ «1. ջուլհակի հաստոցի շարժուն շրջանակը՝ սանրաձև թելերով, որոնց արանքով անցնում են հենքի թելերը, 2. կտավի գլխի հենքի թելերը» (ՂԲԲ, 69): Ջուլհակագործական տերմին է և ասպազան-ը[4]:

Քանի որ խոսք եղավ ջուլհակագործությանը վերաբերող բառերի մասին, նշենք, որ բառարաններում *ջուլհակ*-ի եզակի վկայությունը միջինհայերենյան շրջանից է: ՆՀԲ-ն բառը համարում է «ռամկական», Հ.Աճառյանը՝ փոխառություն նոր պարսկերեն julahāk «ոստայնակ» ձևից և չի ընդունում բառի հին փոխառություն լինելու Հյուբշմանի կարծիքը՝ գրելով՝ «խաբուելով հայերէն *-ակ* վերջաւորութիւնից դնում է (Հյուբշմանը – Լ.Հ) հին իրանական փոխառութեանց մէջ…անշուշտ ենթադրելով պհլ. Íōlahāk ձևը (տե՛ս ՀԱԲ, Ջուլհակ բառահոդվածը):

Ընդունելի ենք համարում Հյուբշմանի կարծիքը, որովհետև եթե բառը լիներ նոր փոխառություն, ապա բարբառում կունենար *ջո̈ւլհակ* ձևը, և ոչ թե *ճո̈ւլհակ*:

Ղարաբաղի բարբառում այժմ այդ բառն այնքան էլ գործածական չէ: Այն որոշ գյուղերում նաև տոհմանուն է (հիմքում ընկած է այդ արհեստով զբաղվելու հանգամանքը):

Ի դեպ, տոհմանուններում ավելի լավ են պահպանվել բարբառային հին ձևերը: Ասում են՝ *Դավիթ*, բայց *Տիվիթանց* (տօնը, թաղը), *Գաբրիելյան*, բայց *Կյափունց*, *Գրիգորյան, Գրիքոր*, բայց՝ *Կյուքունց* և այլն:

---

[4] *Ասպազան* բառը վկայված է Տիրայր Տեր-Հովհաննիսյանի անտիպ բառարանում:

Հըրիշտրա̈կ – բառարանում նշված է երկու իմաստ. «1. գերբնական արարած՝ Աստծու պատգամաբերը, հոգեառ հրեշտակ: 2. փխբ. շատ տգեղ՝ այլանդակ անձ» (ՂԲԲ, էջ 434): Ավելի հաճախական է վերջինը:

Բառահոդվածի ծագումնաբանական նշումների մասում բառը կապվում է գրաբարյան *հրեշտակ*-ի հետ:

Արդի հայերենում *հրեշտակ*-ը, ի տարբերություն բարբառի, միայն դրական հատկանիշ է արտահայտում. ըստ Է. Աղայանի բառարանի՝ «դրական հատկությունների՝ բարեմասնությունների մարմնավորումը շատ գեղեցիկ, չքնաղ էակ (սովորաբար կանաց և երեխաների մասին): Մաքրության՝ անմեղության՝ անարատության մարմնացում»[5]:

Արմատական բառարանում նույնպես բառի որևէ բացասական հատկանիշ չի նշվում: Բառարանային այս համեմատությունները որոշակի հիմք են տալիս կասկածելու բրբ. *հըրիշտրակ*-ի ծագումնաբանական կապը գրբ. *հրեշտակ*-ի հետ: Թեև տարբեր լեզուներում առկա են իմաստային բևեռացումներ, հմմտ. հուն. τερασ «հրաշալի նշան» նաև՝ «ճիվաղ, հրեշ», ռուս. ангел-ը (аггел ձևով)՝ ունի նաև «չար ոգի»[6] իմաստը:

Գրաբարից ավանդված հրեշտակ-ը իրանական փոխառություն է՝ պահելով միջին իրանական ձևը (նկատի ունենք ակ վերջավորությունը՝ ի տարբերություն նոր պարսկերենի *ֆերեշթե* կամ *ֆերեշթա* ձևի): Բարբառային *հըրիշտրակ*-ը պետք է համարել միջին իրանական լեզուներից կատարված փոխառություն: Ղարաբաղի բարբառում *հըրիշտրակ*-ի բացասական երանգով գործածությունը հիմք է տալիս կարծելու, որ այն *հրէշ*-ի բաղարկությամբ կազմված ձև է, մանավանդ որ առկա է *է*-ի հնչյունափոխությունը:

Գ. Ջահուկյանը *հրէշ*-ը համարում է իրանական փոխառության *հրաշ*- արմատից[7]:

---

[5] Է. Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, h. 1, Ե., 1976, էջ 907:
[6] Տե՛ս В.И.Даль, *Толковый словарь живого великорусского языка,* М., 2008, էջ 4, 16:
[7] Տե՛ս Գ.Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան*, Ե., 2010, էջ 471:

Հրաշք-ը հետհինգերորդդարյան վկայություններում ունի նաև «հրեշ, այլանդակ բան, դիվական արվեստ» իմաստները, այնպես, ինչպես վերը նշված հունարեն բառը: Ինչ վերաբերում է *հըրիշտրüկ*-ի երկրորդ բաղադրիչի՝ տրակ-ի ր-ի առկայությունը, ապա այդ երևույթը բնորոշ է ժողովրդախոսակցական լեզվին, բարբառներին, հմմտ. *նապաստակ*-ի նաև՝ *լաբըստրագ, լափըստրակ, ըլբաստրակ* ձևերը:

Տըրիճակ – «Իրար կպած երկու տների միջնապատի վրա բացված փոքրիկ պատուհան»: (Հիրըվանէրը տըրիճակավը ոïրոïր տէն ին տամ) (ԴԲԲ, 733): Պրս. *դüրիչէ* «դռնակ, օդանցք» բառը հաստատում է բարբառային բառի իրանական ծագումը (բառի արմատն է dar «դուռ»), իսկ բարբառային ձևի հնչյունակազմն էլ անվերապահորեն հաստատում է վաղ շրջանից փոխառյալ լինելը՝ (*դ*-ի փոխարեն *տ*, *չ*-ի փոխարեն *ճ* և *ակ* վերջավորությունը):

Դարիճակ ձևի գրավոր վկայությունը միջինհայերենյան շրջանից է, որն իր նախնական իմաստը չունի և նշանակում է «ձուլելու կաղապար»:

Տէնգ՛ – «բրինձ մաքրելու գործիք» (Արմ.): Բարբառային այլ ձևեր են՝ *դüնգ, դինգ, տինգ՛* (ԴԲԲ, 116): Աճառյանը համարում է իրանական փոխառության՝ նշելով պրս. dink զուգահեռը՝ հավելելով, որ «բարբառային *տ* նախաձևով և ոչ *դ*, ինչպես նաև բառի ընդարձակ տարածությունը, ցույց են տալիս, որ փոխառությունը կարծուածից աւելի հին է» (տե՛ս Արմ, Դինգ բառահոդվածը): Ըստ Աճառյանի՝ բառը գործածական է Զեյթունի, Համշենի, Տիգրանակերտի, Մշո բարբառներում:

Söշ – «Մարդու և կենդանիների մարմնի առջևի պարանոցից ցած ընկած մասը՝ կուրծք, լանջ» (ԴԲԲ, 744): Բառահոդվածում նշված են նաև այլ իմաստներ, որպես ծագումնաբանական զուգահեռ է դիտվում պրս. duš թրք. döš:

Բառի իրանական ծագումը կասկած չի հարուցում. հմմտ. Միջին պարսկերեն dōš, պրս. duš «ուս», քրդերեն doš «կուրծք» (իր. *dauš «ուս, ձեռքի վերին մաս», որը ծագում է հ.-ե. *dous «ձեռք, դաստակ»-ից:

Իրան. d-ի դիմաց բարբառում *տ*-ն վկայում է, որ բառը փոխառվել է վաղ շրջանում: Բարբառում գործածական *դուշմնն*-ը նույնպես իրանական փոխառություն է. միջ. պրս. dušnam, պրս. dušman, որը սակայն չենք կարող միջին իրանական փոխառություն համարել:

Նշանց տալ «ցույց տալ» (իըղէն նըհաշ տօ, թող ք յինա): Տարբերակներն են *նըհաշ, նըհանչ, նըշանս* (տալ): Նախնական ձևը պետք է համարել *նշանս տալ*-ը: Թեև ՆՀԲ-ում այն արձանագրված չէ, բայց այդ բայական հարադրությունը վկայված է V դ. գրաբարում՝ Եզնիկ Կողբացու նշանավոր գրքում. «Եւ զաճելն և նուազել լուսնի՝ իբրև ընդ պատենիւք իմն մտանել և ելանել ասեն իմաստունք: Եւ նշանս անտի տան, զի է երբէք՝ յորժամ յաճմունսն իցէ և լնոյն, շուրջ զանօթովն ծանրանայ…» (Եզն., 176) (ընդգծումն մերն է – Լ.Հ.): Ընդգծված հատվածի աշխարհաբար թարգմանությունն է. «Եւ (իբրև) փաստարկ մատնացույց են անում այն…»[8]:

Նշան բառը իրանական փոխառություն է: Պարսկերենում նույնպես գործածական է այդ հարադրությունը nišan dādan «ցույց տալ»: Հավանաբար միջին իրանական լեզուներում էլ այն գործածական է եղել: Ուրեմն՝ հայերենում և պարսկերենում նույնաձև և նույնիմաստ բառակապակցությունը կարելի է համարել կամ որպես լեզվամտածողական ընդհանրություն, կամ էլ, նկատի առնելով *նշան*-ի իրանական ծագումը, *նշանս տալ*-ը դիտել որպես պատճենում:

Ամփոփենք: Հայ բարբառների մանրազնին քննությամբ կարելի է բացահայտել հին փոխառությունների մի զգալի շերտ, որը կարևորվում է հայոց լեզվի պատմության, պատմական բարբառագիտության որոշ հարցերի լուսաբանման առումով: Իրանական շերտի բացահայտումը, անշուշտ, կնպաստի նաև միջին իրանական լեզուներում գրավոր չավանդված բառերի կամ բառիմաստների վերականգնմանը:

---

[8] *Եզընկայ վարդապետի Կողբացւոյ Եղծ աղանդոց*. թարգմանությունը և ծանոթագրությունները Ա.Ա.Աբրահամյանի, Ե., 1994, էջ 176, 177:

Ованнисян Лаврентий – О нескольких словах в карабахском диалекте, заимствованных из среднеиранских языков. – В статье рассматривается ряд слов карабахского диалекта, которые заимствованы из среднеиранских языков. Дифференциация новых и старых заимствований основана на фонетических особенностях иранских языков, древнеармянского языка и карабахского диалекта.

Hovhannisyan Lavrenti – On a Few Borrowings from Middle Iranian Languages in Dialect of Kharabakh. – Several words are being examined in the article which the dialect of Kharabakh has borrowed from Middle Iranian languages. The differentiation of new and old borrowings is based on the one hand on the Middle Iranian languages and New Persian, and from the other hand on the Old Armenian (Grabar) and features of phonetic changes of the dialect of Kharabakh.

ԲԱՌԱՅԻՆ ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ*
(ձեռագիր բառարանների նյութի հիման վրա)

Նազիկ Հովհաննիսյան

Հ. Աճառյանի առանձնացրած մի քանի «նոր բառեր» հոմանիշների՝ XVIIIդ. ավանդված ձեռագիր բառարաններում[1] հանդիպում են նոր բառիմաստներով կամ իմաստային երանգներով:

Բառիմաստային փոփոխություններ զանազանելու խնդիրը հոմանիշների ձեռագիր բառարաններում բավական բարդ է. դժվար է վստահաբար պնդել, որ բառը այլ իմաստ կամ իմաստային երանգ է ձեռք բերել, քանի որ բառարանները չունեն բնագրային օրինակներ: Բառիմաստի փոփոխությունը կամ իմաստային այլ երանգը հաստատվում է հետագայում (XVIIIդ. հետո) լույս տեսած բառարանների տվյալներով: Բառարանային պրպտումները հնարավորություն են ընձեռել առանձնացնելու նաև այդ բառերի՝ ժամանակակից հայոց լեզվում ձեռք բերած իմաստը:

Բառերից առաջինը *դերասան*-ն է՝ վկայված *ծաղրաբան. ծաղրածու. հացկատակ. կատակերգու. կատակախօս. կատակաբան* հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 566, 250ա. 3110, 93ա. 775, 63ա. 873, 199ա. 6762, 111բ)[2]:

---

* «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու: Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 90-97:

[1]Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIIIդ. ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են հոմանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետևյալ խորագրերով՝ «Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառից» (Ձեռ. 566, 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթէոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (Ձեռ. 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթէոսի գերերջանիկ վարդապետէ» (Ձեռ. 873, 185ա -220բ և Ձեռ. 775, 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաև Ձեռ. 6762-ում զետեղված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվում է, որ վերջինս և Ձեռ. 566-ինը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են: Հոդվածում պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

Հ. Աճառյանը բառը ներկայացնում է «փոխանակ, տեղը. 2. սուտ, ներհակ, հակառակ» նշանակությամբ *Դեր* նախամասնիկի բառահոդվածում՝ նըշելով՝ «....նոր լեզուի մէջ՝ *դեր* «մէկի արած կամ անելիք բանը» (rôle), որից դերասան (արդէն գիտէ Վարդան Յունանեան, Ձեռբածութիւն, 1671, էջ 304)....»[3]: Հ. Աճառյանի «արդէն գիտէ....» դիտարկումից հետո, հաշվի առնելով նաև բառարանային տվյալները, փաստորեն կարելի է արձանագրել, որ հայ իրականության մեջ *դերասան* բառը երկրորդ անգամ հանդիպում է XVIIIդ. ավանդված ձեռագիր բառարաններում:

Յ.Պոնայի «Ձեռբածութիւն յերկինս» գրքի թարգմանիչ Վ. Հունանյանը «բառարան գրքիս» հատվածում *դերասան*-ը բացատրում է՝«....իրակօղ առասպելի, և ծիծաղունեաց իրաց. որ անձնայլակեցեալ, վիպէ զա՞ռս օտարաց, ընտեսարանում, կամ ի քաղաքայնում հրապարակի: Դերասան կոչի ևս, ամենայն կատակառու, և խաղարկու»՝նշելով նաև՝ բառը լատիներեն հնչում է «hիստրիո»[4]:

Այսինքն՝ ըստ Յ. Պոնայի *դերասան*-ը «կատակ, ծաղր անող»-ն է, ասել է՝ կատակերգական դերեր կատարողը, կատակերգություն խաղացողը: Հարկ է հիշեցնել, որ գրաբարում *խաղ*-ը և *կատակ*-ը նշանակել են «ծաղր. կատակ. այպն», իսկ *կատակ*-ը՝ նաև «կատակերգակ. ծաղրածու. հացկատակ»[5]:

Թատերագետ Վ.Թերզիբաշյանի հավաստմամբ՝«Մինչև 18-րդ դ. վերջը և նույնիսկ 19-րդ դ. սկիզբը դրամատիկ արվեստը հայ

---

[2] Հռոմանիշային շարքերը ներկայացվում են նշված բոլոր ձեռագրերի բառերի համատեղմամբ: Փակագծերում նշվում են ձեռագրի համարը և էջը:

[3] Հ. Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), h. 1, Ե., 1971, էջ 655: Բառը *ան-* նախածանցով բաղադրված բառերի շարքում «լատինաբան հայերենում պայմանականորեն նորակազմություն» է համարում Վ. Համբարձումյանը. տե՛ս Վ. Համբարձումյան, *Լատինաբան հայերենի պատմություն (14-18-րդ դդ.)*, Ե., 2010, էջ 236:

[4] Յ.Պօնա, *Ձեռբածութիւն յերկինս*, Հռոմ, 1671, էջ 23: Լատիներեն *histrio*՝ «актёр». տե՛ս А. Малинин, *Латинско-русский словарь*, М., 1961, ст. 301:

[5] *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ՆՀԲ), h. 1, Վենետիկ, 1836, էջ 913 և էջ 1060: Ս. Մալխասյանցը *խաղարկու*-ն «hզվդ.» նշումով բացատրում է որպես «խաղացող, ներկայացում տուող». Ս.Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), h. 2, 1945, Ե., էջ 233:

իրականության մեջ դեռևս խստորեն դիֆերենցիացիայի և բյուրեղացման չեն ենթարկված, և թատրոնը դեռևս հանդիսանում էր արվեստի մի բնագավառ, ուր երգը, պարը նույնիսկ կրկեսային արվեստը (լարախաղացությունը, ակրոբատիկան, ատլետիկան) միախառնվում էին»[6], և ուրեմն ընդունելի կարելի է համարել *դերասան* բառի առկայությունը նշված հոմանիշային շարքում: Մանավանդ եթե նկատի առնվի նաև Վ.Թերզիբաշյանի հիշատակած մեկ այլ փաստ, ըստ որի՝ թեև «Հայ դպրոցական թատրոնի պատմության մեջ» «կոմեդիայի տարրերը» առկա են «դեռևս 17-րդ դարում….», այդուհանդերձ «….կոմեդիան (…. որում հանդես են գալիս «անարի ծույլերը և ընչասերները», որոնք ենթարկվում են ծաղրի ու արհամարհանքի….») որպես ժանր երևան է գալիս 18-րդ դ. վերջերին»[7]:

Դերասան բառն արձանագրել են Մ. Քաջունին[8], Ոսկեան Կոմիտասը[9], Ս.Մալխասյանցը «արտիստ» (ՄՀԲԲ, հ.1, 1944, էջ 507), Ա. Խուդաբաշյանցը նաև "комедіантъ"[10] (այսինքն՝ կատակերգակ՝ Ն.Հ.) բացատրություններով:

Ուստի և ելնելով վերը նշվածից՝ կարելի է, թերևս, ենթադրել, որ հայերենում նախապես *դերասան* է անվանվել կատակերգուն, կատակերգակը:

Լեզվաբանները բառին չեն անդրադարձել: Այն պարզապես ընկալվում է որպես «դեր ասող», թեև Լ.Հախվերդյանը գտնում է, որ «Իմաստաբանական առումով դերասան (դեր ասող) բառը ճիշտ չի բնորոշում մասնագիտության էությունը, քանի որ դեր

---

[6] Վ.Թերզիբաշյան, *Հայ դրամատուրգիայի պատմություն*, Ե., 1959, էջ 24:

[7] Վ.Թերզիբաշյան, նշվ. աշխ., էջ 13, 172:

[8] Մանուէլ Քաջունի, *Բառգիրք արուեստից եւ գիտութեանց եւ գեղեցիկ դպրութեանց* (այսուհետև՝ ՔՄ), հ. III (Համառօտ հայերէնէ գաղղիերէն), Վենետիկ, 1893, էջ 55:

[9] Ոսկեան Կոմիտաս, *Առձեռն բառագիրք հայերէն - գաղղիերէն* (այսուհետև՝ ԱԲՀԳ), Կ. Պոլիս, 1893, էջ 181:

[10] Ա.Խուդաբաշեանց, *Բառարան ի հայկական լեզուի ի ռուսաց բարբառ* (այսուհետև՝ ԽԲՀՌ), հ. 1, Մոսկուա, 1838, էջ 314-315:

անձնավորողը ոչ թե դեր է ասում, այլ գործում է, ըստ որում, դերի տեքստն ասելը ևս մտնում է այդ իրողության մեջ»[11]:

Արդի հայերենի բացատրական բառարաններում տրվում է *դերասանի*՝ «Թատերական ներկայացումներում գործող անձանց դերերի մասնագետ կատարող, պրոֆեսիոնալ դերակատար» բացատրությունը[12]՝ Է.Աղայանի կազմած բառարանում հետևյալ հավելումով՝ «Արվեստի ստեղծագործությունները հրապարակավ կատարող մարդ, արտիստ»:

Ուրեմն կարելի է արձանագրել *դերասան*-ի բառիմաստի ընդլայնում:

Նշված հոմանիշային շարքից ՀԱԲ-ում «նոր բառեր» են դիտվում նաև *կատակաբան*-ը, *կատակերգու*-ն, *կատակախօս*-ը (ՀԱԲ, հ.2, էջ 536): *Ծաղրաբան*-ը նույնպես վկայված չէ գրաբարի տպագիր բառարաններում. Հ. Աճառյանը իբրև «նոր բառ» է նշում միայն *ծաղրաբանութիւն*-ը (ՀԱԲ, հ. 2, էջ 439):

Ժամանակակից հայերենում Ս. Գալստյանն առանձնացնում է *-բան* ածանցով երկու կառույց՝ գոյականից և այլ խոսքի մասերի արմատներից կազմված. առաջինը՝ «նախատիպի ցույց տված առարկայի ուսումնասիրությամբ զբաղվող գիտության ճյուղի մասնագետ» բառակազմական նշանակությամբ (*արվեստաբան, ախտաբան, երկրաբան, լեզվաբան* և այլն): Նրա հավաստմամբ մյուս տիպի բաղադրություններում *-բան* արմատի բառային նշանակությունը (որպես բաղադրության երկրորդ եզր գործածվելիս) «մթագնվում է», և դրանք ընկալվում են որպես ածանցավոր կազմություններ: Սակայն չի նըշվում, թե *-բան* բաղադրիչն այս կազմություններում ինչ բառակազմական նշա նակություն ունի, բայց և *լսաբան*-ը բացատրվում է «ձայնագետ», *կոնծաբան*-ը՝ «հարբեցող, հարբեցողության մասնագետ» [13]:

---

[11] Լ. Հախվերդյան, *Թատերագիտական բառարան*, Ե., 1986, էջ 44:

[12] Է.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 291: *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1976, էջ 499:

[13] Տե՛ս Ն. Հովհաննիսյան, *Գրաբարի տպագիր բառարաններում չվկայված բառեր.-Պատմաբանասիրական հանդես*, 2, 2012, էջ 172:

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանների՝ *կատակաբան* բառում (այլև *դատարկաբան, զավեշտաբան, զվարճաբան* և այլն) - *բան* բաղադրիչի բառակազմական նշանակությունն է «խոսող» (թեև *կատակ*-ը գոյական է)՝ «կատակներ անող, կատակել սիրող (անձ), զվարճաբան, զուարճախոս» (ԱՀԲԲ, էջ 699. ԺՀԼԲԲ, h. 3, էջ 65): Նույն բացատրությունն ունի նաև *ծաղրաբան*-ը (ԱՀԲԲ, էջ 629), որը հղվում է *ծաղրածու*-ին. վերջինս երրորդ-չորրորդ նշանակություններով, «թատր., հնց.» նշումներով մեկնաբանվում է իբրև «3. Հտպիտախաղերի հերոս-կատակերգակը: 4. Շրջիկ ժողովրդական կատակաբան» (ԱՀԲԲ, էջ 630), «5. Հին կատակերգությունների՝ շրջիկ ներկայացումների մեջ ծիծաղաշարժ անձ» (ԺՀԼԲԲ, h. 2, էջ 630):

Հարկ է ներկայացնել նաև XVIIIդ. հետո լույս տեսած բառարանների տվյալները՝ ճշտելու նշված բառերի բառիմաստային զարգացումները: Այսպես՝ Ա. Խուդաբաշյանցը *ծաղրաբան*-ը բացատրում է իբրև "шутникъ", *կատակերգու*-ն հղելով *կատակերգակ*-ին՝ արձանագրում նաև "комедіантъ" նշանակությունը (ԽԲՀՌ, h. 1, էջ 535, 567): Մ. Մալխասյանցը *ծաղրաբան*-ը հղում է *զուարճաբան-զուարճախօս*-ին՝ որպես «զուարճալի կերպով խօսող, խօսքերով ծիծաղ շարժող, կատակախօս, հանաքչի» (ՄՀԲԲ, h.2, էջ 32, 324), իսկ *կատակաբան*-ը, *կատակախօս*-ը և *կատակերգու*-ն՝ բացատրում համապատասխանաբար՝ «կատակներով խօսող, կատակներ անող, զուարճախօս, հանաքչի» և «դերասան, որ կատակերգական դեր է կատարում» (ՄՀԲԲ, h.2, էջ 397):

«Միջին հայերենի բառարան»-ում *կատակերգու*-ն «կատակախոս, ծաղրածու»-ն է[14], արդի հայերենի բացատրական բառարաններում *կատակերգու*-ի երկրորդ իմաստն է «Կատակերգական դերեր կատարող դերասան» (ԱՀԲԲ, ն.տ. ԺՀԼԲԲ, h. 3, էջ 66):

Արդի հայերենում, ըստ բառարանների տվյալների, վերոհիշյալ բառերի ունեցած իմաստներին զուգորդվել են նորերը,

[14] Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), h.1, Ե., 1987, էջ 386:

այսինքն՝ պահպանելով հինը դրանք ձեռք են բերել նոր իմաստներ [15]։

Հաջորդը *եփարան* բառն է՝ վկայված *տան մասունք*՝ ....*խահանոց*[16] *կամ խոհակերանոց*....հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 6762, 126բ. 566, 273բ. 775, 76բ. 873, 216ա. 3110-ում չկա)։ Պարզորոշ է, որ ձեռագիր բառարաններում վկայված *եփարան*-ը հենց *խոհանոց*-ն է։

Հ. Աճառյանը *եփարան*-ը համարում է նոր բառ՝ «ստամոքս» նշանակությամբ՝ դարձյալ քաղված 17-րդ դ. հրատարակված Յ. Պոնայի «Ձեռբածութիւն յերկինս» գրքից (ՀԱԲ, հ. 2, էջ 72)[17]։ Բառը՝

-*արան* ածանցով, լատինաբան հայերենի նորակազմություն-ների շարքում արձանագրում է նաև Վ. Համբարձումյանը[18]։ XVIIIդ. հետո լույս տեսած բառարաններից միայն ՄՀԲԲ-ն է «հզվդ.» նշումով տալիս Հ.Աճառյանի առանձնացրած «ստամոքս» նշանակությունը՝ նաև բացատրելով «որտեղ կերակուրը եփվում է» (ՄՀԲԲ, հ. 1, էջ 605)։

Քննվող ձեռագիր բառարաններից բացի բառի գոյությունը՝ «եփելու տեղ. օճախ» իմաստով[19], հավաստում է նաև Մխիթար Աբբան՝ ասես նախապատրաստելով «եփելու տեղ. օճախ» → «խո-

---

[15] Է. Աղայան*, Ընդհանուր և հայկական բառագիտություն*, Ե., 1984, էջ 101-102։

[16] *Խոհ* բառահոդվածում Հ. Աճառյանը փաստում է՝ «Բառս ունի նաև հետևեալ ձևերը. խոխ .... խահ .... խախ «կերակուր».... =Իրանեան *xwarh- ձևից. այս բառը հյ. տուել է *խարհ և *խորհ, որոնց միջից ր ձայնը ընկնելով՝ խահ և խոհ....»։ ՀԱԲ, հ. 2, 1973, էջ 387-388։ Լ. Հովհաննիսյանի հավաստմամբ *խոհարար- խահարար* «....բառերը իրանական փոխառություններ են։ Հնչյունափոխությունը հայերենում չի կատարվել, ամենայն հավանականությամբ այդ բառաձևերը հայերենին են անցել իրանական տարբեր սկզբնաղբյուրներից»։ Լ. Հովհաննիսյան, Բառային տարբերակներ Vդարի գրաբարում. *Հայոց լեզվի պատմության հարցեր*, պրակ 3, Ե., 1991, էջ 9-10։

[17] *Եփարան*-ը իբրև «նոր բառ» հիշատակում է նաև Գ. Ջահուկյանը. Գ. Ջահուկյան, *Հայերեն ստուգաբանական բառարան,* Ե., 2010, էջ 230։

[18] Վ. Համբարձումյան, *Լատինաբան հայերենի պատմություն.... ,* էջ 225։

[19] Մխ. Աբբա, *Բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ԲՀԼ), հ. 3, Վենետիկ, 1769, էջ 123։

հանոց» իմաստային անցում-զարգացում Ըստ բառարանների՝ *եփարան* -ը արդի հայերենում չի գործածվում:

Թարմ բառով է սկսում *փափուկ. կակուղ. խոնաւ. զողտր. զուարթ. նոր* (Ձեռ. Ձեռ. 6762, 108ա. 566, 245ա. 775, 60ա. 873, 194ա. 3110, 88ա) հոմանիշային շարքը:

Ինչպես հավաստում է Ն. Բյուզանդացին, «Թարմ յիշի ի Նոր Հայկազեան. ի բառ Թաժայ եւ դնի լծորդ ընդ ջերմն»[20]: Իրապես ՆՀԲ-ն փաստում է՝ «*ԹԱԺԱՅ*, կամ *ԹԱԺԱՀ*, կամ *ԴԱԺԱՅ* ….Բառ ռմկ. *թազա, թազէ*. այսինքն Նոր, ո՛չ հնացեալ. (զոր այլք Թարմ կոչեցին, լծ. ընդ ջերմն. յն. թէրմօս)» (ՆՀԲ, հ. 1, էջ 791):

ՀԱԲ-ն արձանագրում է *թարմ*-ը իբրև միջինհայերենյան բառ՝ «թաժա, թազէ, նոր» նշանակություններով՝ նշելով՝ «յիշում են միայն Մխիթար Աբբան և Ջախջախյանը» (ՀԱԲ, հ. 2, էջ 161)[21]: Հ.Աճառյանը *թարմ*-ը համարում է բնիկ հայերեն բառ՝ համեմատելով նաև «պրս. تر tar «թաց, թարմ», …. յն. τέρην «քընքուշ, մատղաշ, փափուկ», սաբին. tereno «կակուղ»» և մի քանի այլ տարբերակ (ՀԱԲ, ն.տ.):

Մ. Ջախջախյանը բառը բացատրում է՝ «դալար, մատաղ, փափուկ»[22]:

ՄՀԲԲ-ն և արդի հայերենի բացատրական բառարաններն առանձնացնում են *թարմ*-ի մի քանի նշանակություն, այդ թվում՝ «առողջ, կայտառ, աշխույժը վրան, չյոգնած», որ առկա են նաև արևմտահայերենում[23] (ՄՀԲԲ, հ. 2, էջ 87. տե՛ս ԱՀԲԲ, էջ 423. ԺՀԼԲԲ, հ. 2, էջ 154): ՄՀԲ-ն վկայում է ՆՀԲ-ի առանձնացրած տարբերակները՝ իբրև «թարմ, նոր» (ՄՀԲ, հ.1, էջ 243):

Թեև վերոնշյալ բառարաններում արձանագրված «առողջ, կայտառ, աշխույժը վրան, չյոգնած» նշանակությունները հուշում են

---

[20] Նորայր Բիւզանդացի, *Բառագիրք ստորին հայերէնէ ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց* (այսուհետև՝ ՆԲԲ), Ժնեւ, 2000, էջ 222:

[21] *Թարմ*-ի մասին տե՛ս նաև Ա.Մուրվալյան, *Հայոց լեզվի բառային կազմը*, Ե., 1955, էջ 135:

[22] Մ. Ջախջախեան, *Բառգիրք ի բարբառ հայ և իտալական* (այսուհետև՝ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 563:

[23] Յ. Գայայեան, *Բառարան- գանձարան հայերէն լեզուի*, Գահիրէ, 1938, էջ 145:

«թարմ լինել»-ը, այդուհանդերձ ձեռագիր բառարաններում առկա *զուարթ*-ը իբրև «թարմ» արձանագրում են միայն արդի հայերենի բացատրական բառարանները (ԺՀԼԲԲ, հ.2, էջ 51-52. ԱՀԲԲ, էջ 380):

Ասել է՝ արդի հայերենում, ըստ բառարանների տվյալների, կիրառվում է XVIIIդ. ավանդված ձեռագիր բառարաններում «թարմ» նշանակությամբ վըկայված *զուարթ*-ը:

Հոշել բառն առկա է *կոչել. ձայնել, կարդալ. հրավիրել. ասել. (եթէ անուն տալ) անուանել. յորջորջել* հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ.6762, 113ա. 566, 253բ. 775, 64բ. 873, 200բ. 3110, 95ա):

Հ. Աճառյանը *հոշել*-ը չի առանձնացնում որպես «նոր բառ» (բառը վկայված չէ գրաբարի տպագիր բառարաններում)[24], «առանձին անգործածական» *հոշ* արմատի համար բացի Անհաղթի, Թրակացու, Ստ.Սյունեցու քերականություններում հանդիպող *հոշական* «կոչական» բառի մի քանի գործածությունից նա նշում է միայն՝ «….*հոշել* «կոչել» Բառ. երեմ. էջ 185, որից նաև ՓԲ» (ՀԱԲ, հ. 3, 1977, էջ 114):

Այնպես որ ինչպես *եփարան* բառի, այնպես էլ *հոշել*-ի դեպքում կարելի է արձանագրել, որ XVIIIդ. ձեռագիր բառարաններից բացի բառի գոյությունը հավաստում են բառարանները[25]:

Ըստ արդի հայերենի բացատրական բառարանների՝ *հոշել*-ը «կոչել» նշանակությամբ արդի հայերենում չի գործածվում:

Իմաստուն. գիտուն. գերիմաստ. րաբունի. վարդապետ. իմաստասէր. բանասէր. բանիբուն. գրոց աշակերտ. կամ հմուտ գրոց. հանճարեղ. ուշիմ. մըտացի. կորովամիտ[26]*. կորովաբան. մ-*

---

[24] Խոսքը վերաբերում է հետևյալ բառարաններին՝ ՆՀԲ. *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի* (այսուհետև՝ ԱԲ), Վենետիկ, 1865. ԲՀԼ. Ն. Բիւզանդացի, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի,* հհ. 1-5, Ժնև, 1990. Ռ. Ղազարեան, *Գրաբարի բառարան* (այսուհետև՝ԳԲ), հհ. 1-2, Ե., 2000. Ռ. Ղազարեան, *Գրաբարի հոմանիշների բառարան* (այսուհետև՝ԳՀԲ), Ե., 2006:

[25] Ե. Մեղրեցի, *Բառգիրք հայոց* (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջ 189: Գ. Փեշտըմալճեան, *Բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ՓԲ), հ. 2, Կ. Պոլիս, 1846, էջ 107:

[26] Ձեռ. Ձեռ. 6762, 566-ում առկա է *կորամիտ* տարբերակը:

տավարժ. նրբամիտ. (տե՛ս զիմուտն) ներհուն. բանախօս[27] (Ձեռ. Ձեռ. 6762, 109ա. 566, 247ա. 775, 60բ. 873, 195բ. 3110, 95ա)[28] հոմանիշային շարքում առանձնանում է *նրբամիտ* բառը:

Հ. Աճառյանը *նուրբ* արմատով բաղադրված բառերի շարքում այն համարում է «նոր բառ» (ՀԱԲ, հ.3, էջ 473): *Նրբամիտ*-ը «սրամիտ, ուշիմամիտ» նշանակություններով առկա է ՋԲ-ում և ՓԲ-ում (ՋԲ, էջ 1090. ՓԲ, էջ 430): ՄՀԲԲ-ն առանձնացնում է «նուրբ մտածող, նուրբ խելքի տէր, մանր դիտող, խորաթափանց» իմաստները (ՄՀԲԲ, հ. 3, էջ 488): Նույնն են արձանագրում արդի հայերենի բացատրական բառարանները՝ հավելելով «նրբանկատ, փափկանկատ»-ը (ԱՀԲԲ, էջ 1089. ԺՀԼԲԲ, հ.3, էջ 52), իսկ ՀԼՀԲ-ն հոմանիշների շարքում արձանագրում է նաև *քաջիմաց, խորիմաստ, խորամիտ* բառերը (էջ 495):

Ձեռագիր բառարանների հոմանիշային շարքը, այլև ՀԼԲԲ-ն և արդի հայերենի բացատրական բառարանները հուշում են *նրբամիտ*-ի «իմաստուն» նըշանակությունը:

Նուրբ արմատով բաղադրված բառերից «իմաստուն» նշանակությունն ունի նաև Գր. Տաթևացու «Գիրք հարցմանց»-ում առկա *նրբահայեաց*-ը՝ «.... այնպէս բթամիտն ոչ իմանայ, զոր իմանայ *նրբահայեացն* և ուսեալն յաստուծոյ....»[29]:

Միայն Ձեռ. 566 (247ա)-ում՝ *խայտառակել*[30]*. առակել. ծանակել. նշաւակել. ծաղր առնել. խաղ առնել. ամօթել*[31] հոմանիշային շարքում է առկա *տընազել*-ը[32]. այն Հ. Աճառյանը համարում է «նոր բառ»՝ «արաբ. طنز tanz «ծաղր, կատակ»» -ից (ՀԱԲ, հ.4, էջ 415):

Ն.Բյուզանդացին *Տնազեմ*-ը հղում է *Թլահեմ*-ին. վերջինս ըստ բառարանագրի հանդիպում է Թրակացու քերականության մեջ «արհամարհող, այպանող, թլահող, անգոսնող» փա-

---

[27] Ձեռ. 3110-ում առկա է *բնախօս* տարբերակը:

[28] Ձեռ. 3110-ում *նրբամիտ* բառը չկա:

[29] *Գր. Տաթևացի «Գիրք հարցմանց»/համաբարբառ*, կազմ.՝ Ս. Գրիգորյան, Գիրք Գ, Ե., 2012, էջ 1028:

[30] Ձեռ. 6762-ում առկա է *խայտարակել* տարբերակը:

[31] Առկա է միայն Ձեռ. 6762-ում:

[32] Ձեռ. 6762-ում՝ *տնազ ունել*:

դանունների շարքում (ՆԲԲ, էջ 713, 230): «Գւռ. բառ կամ նշ.» նշումով *տնազել*-ն արձանագրում է ՄՀԲԲ-ն՝ բացատրելով «տնազն անել, ծաղրել, բամբասել, պախարակել» (ՄՀԲԲ, հ.4, էջ 424): ՄՀԲ-ն առաղրում է «կատակել, այպանել» իմաստները (ՄՀԲ, հ.2, էջ 393), արդի հայերենի բացատրական բառարաններն արդեն այլ իմաստ են արձանագրում՝ «մեկի տնազն անել»՝ ԺՀԼԲԲ-ում «ծաղրել»-ի հավելումով (ԱՀԲԲ, էջ 1449. ԺՀԼԲԲ, հ.4, էջ 513):

Ինչ վերաբերում է *տնազել*-ի՝ ձեռագիր բառարաններում վկայված «խայտառակել» իմաստին, ապա Միխիթար Աբբան *տնազ*-ը, *տնազ ընել*-ը հղում է *խախք*-ին և *ծաղր ընել*-ին (ԲԼՀ, էջ 636): *Խախք*-ը նույն *խայտառակ*-ն է (հմմտ. *խաղք անել* «անպատվել, ծանակել, այպանել, խայտառակել»)[33], որը Հ. Աճառյանի հավաստումով հանդիպում է Երևանի, Նոր Բայազետի, Պոլսի, Վանի («գւռ. խաղք (Ակն, Ասլ., Պլ. խախզ» «խայտառակ») բարբառներում (ՀԱԲ, հ.2, էջ 320)[34]: Ըստ ՀԼԲԲ-ի *տնազել*-ը կիրառվում է Խարբերդի, *դնազիլ*-ը՝ Սվեդիայի բարբառում՝ և դարձյալ միայն «տնազ անել, ծաղրել» բացատրությամբ (ՀԼԲԲ, հ.Ձ, էջ 205)[35]:

ՀԼՀԲ-ն *տնազել*-ը հղում է *ծաղրել*-ին՝ հոմանիշային շարքում նշելով *խայտառակել, ծաղրուծանակել, ծաղրուծանակի ենթարկել* բայերը (ՀԼՀԲ, էջ 628, 283):

Ձեռագիր բառարաններում *տնազել*-ի «խայտառակել» իմաստը հաստատվում է նաև *ամօթել* բայի առկայությամբ. ՄՀԲ-ն այն արձանագրում է իբրև «անպատվել, վիրավորել, խայտառակել» (ՄՀԲ, հ.1, էջ 41)՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարանի՝ 16-րդ դ. արձանագրություններից քաղված միակ օրինակով: Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ բառն այդ նշանակությամբ տվյալ ժամանակաշրջանում գործածվել է լեզվում, սակայն հետագայում իմաստը չի պահպանվել:

---

[33] *Հայոց լեզվի բարբառային բառարան*, Ե., հ. Բ, 2002, էջ 274:

[34] Տե՛ս նաև *Հ. Աճառեան*, *Հայերէն գաւառական բառարան*, Թիֆլիս, 1913, էջ 449:

[35] Հ.Աճառեանը Սվեդիայի բարբառում նշում է *տնազել*-ը՝ «այպանել, ծաղրել, բամբասել» նշանակությամբ. տե՛ս նույն տեղում:

Այսպիսով, Հ. Աճառյանի առանձնացրած «նոր բառերը» հոմանիշների ձեռագիր բառարաններում ունեն նոր իմաստներ և բառիմաստային նրբերանգներ:

Hovhannisyan Nazik- Lexical Observations (on the material of manuscript dictionaries). - Some "new words", discussed by H.Acharyan, in the XVIII century manuscript dictionaries of synonyms are fixed by new lexical meanings and nuances.

The words դ ե ր աս ան (artist), ե փար ան (kitchen), թ ար մ (vivacious), հ ո շ ե լ (to name, to call), ն ր բ ամ ի տ (wise, sage) տն ազ ե լ (to dishonour) are considered.

Оганесян Назик - Лексические наблюдения (на материале рукописных словарей синонимов XVIII века).- Некоторые "новые слова", рассмотренные Р. Ачаряном, в рукописных словарях синонимов XVIII века, зафиксированы новыми значениями и нюансами значений слов.

Рассмотрены слова դ ե ր աս ան (артист), ե փար ան (кухня), թ ար մ (новый, живой, оживлённый), հ ո շ ե լ (называть; давать имя), ն ր բ ամ ի տ (мудрый), տն ազ ե լ (оскорблять, унижать).

ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ՝ XVIII ԴԱՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Նազիկ Հովհաննիսյան

Հայկական վերածնության ժամանակաշրջանում, ինչպես վկայում են ուսումնասիրությունները, Հայաստանյայց դպրոցներից շատերը, վայելելով արքունիքի և եպիսկոպոսական աթոռների հովանավորությունը, աջակցություն և օժանդակություն ստանալով նաև քաղաքային ու գյուղական համայնքներից, հետագայում դառնում են ուսումնագիտական կենտրոններ: Սրանց մեծ մասը, ըստ հետազոտողների հիմնվելով IX-XI դդ., առավել բուռն գործունեություն է ծավալում XII-XIV դդ.: Ուսումնագիտական այս կենտրոններում ուսուցչապետած Հովհ. Իմաստասերի, Գր. Մագիստրոսի, Հովհ. Երզնկացու, Վ. Արևելցու, Մխ. Գոշի, Ես. Նչեցու, Գր. Տաթևացու, Վ. Այգեկցու և այլոց գործունեությունը, սերտորեն առնչվելով դպրոցի խնդիրներին, հետապնդել է ուսուցողական, գործնական նպատակ. գրվել, կազմվել են այբբենարաններ, զրուցարաններ, դասագրքեր, հեղինակվել քերականական, ուղղագրական աշխատություններ[1]: Վերջիններիս կարիքը զգացվում էր՝ ելնելով «….հենց ձեռագրերը ճիշտ վերարտադրելու, ձեռագրերի ուղղագրությունը կայունացնելու և տեսականորեն հիմնավորելու պահանջներից»[2]:

Կրթօջախներից շատերը եղել են գրչության արվեստի կենտրոններ, որոնցում նաև լայնորեն ընդօրինակվել են բազմաթիվ

---

* Հայագիտական միջազգային երկրորդ համաժողով. Հայագիտությունը և արդի մարտահրավերները: Զեկուցումների ժողովածու, Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014, էջ 283-286: Տպագրվել է խմբագրական փոփոխություններով:

[1] Գ. Ջահուկյան, *Քերականական և ուղղագրական աշխատությունները հին և միջնադարյան Հայաստանում (V-XV դդ.)*, Երևան, ԵՊՀ հրատ., 1954, էջք 205-221, 243-259, 259-280, 282-291, 292-298: Հեղինակը նկատել է, որ XII-XIII դարերում հայ քերականությունն «…. իր լեզվով դառնում է ավելի ժողովրդական ու հասկանալի». նույն տեղում, էջ 225:

[2] Նույն տեղում:

ձեռագրեր: Այս կենտրոններում է զարգացել ազգային ու թարգմանական գրականությունը, ուսուցանվել են լեզուներ (հունարեն, ասորերեն, պահլավերեն, պարսկերեն, լատիներեն)[3], իբրև դասընթացներ դասավանդվել են պատմագրություն, ճարտասանություն, աստվածաբանություն, քերականություն, տոմարագիտություն, աստղաբաշխություն, իմաստաբանություն, բնագիտություն, երաժըշտություն, այլ առարկաներ[4]:

Միջնադարում մտավոր ընդհանուր զարգացման հիմք ու նախապայման է եղել քերականությունը, որը դիտվել է «ամենայն իմաստասիրության դուռն ու բանալին»[5]: Եվ որքանով հաճախ տրամաբանությունը բնորոշվում է որպես մտածողության քերականություն, ուսումնական ծրագրերում առավել ուշադրություն է հատկացվել ճարտասանությանն ու տրամաբանությանը, ասել է՝ մտածել սովորելուն, խոսքը կառուցելուն, տրամաբանորեն ընդհանրացնելուն, մտահանգումներին, փաստարկներն ապացուցելուն (կամ հերքելուն), դատողությունը, միտքն ունկնդրին հասցնելուն և համոզելուն:

Դասավանդվող առարկաների բազմազանությունը, հատկապես լեզուների ուսուցումը, զարգացող գիտություններին վերաբե րող աշխատությունները թելադրել են նորանոր ձեռնարկների, զրուցարանների, բառարանների անհրաժեշտություն[6]:

«Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները» երկհատոր աշխատության էջերում Հ.Ամալյանը հավաստում է, որ այդ շրջանում գրված, թարգմանված ամենատարբեր գիտությունների վերաբերող աշխատություններում, այլնայլ

---

[3] Ա. Մովսիսյան, *Ուրվագծեր հայ դպրոցի և մանկավարժության պատմության*, Երևան, Հայպետուսմանկհրատ, 1958, էջք 342, 383:

[4] Դասավանդվող առարկաների մասին մանրամասն տե՛ս Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 381-397:

[5] Լ. Խաչերյան, *Գլաձորի համալսարանը հայ մանկավարժական մտքի զարգացման մեջ (XIII-XIV դդ.)*, Երևան, «Լույս» հրատ., 1973, էջ 111:

[6] Հ. Ամալյան, *Միջնադարյան Հայաստանի բառարանագրական հուշարձանները (V-XVդդ.)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 1966, էջ 42-43:

ստեղծագործություններում հանդիպող անհասկանալի բառերի մեկնություններն ու բացատրությունները սկզբնապես կցվել են բնագրերին: Հետագայում ստեղծվել են բացատրական, ուղղագրական, թարգմանական, մասնագիտական բառարաններ, որոնք, սակայն, ինչպես վկայում է հեղինակը, լինելով փոքրածավալ, չեն արտացոլել լեզվի բառային ողջ կազմը: Այդուհանդերձ, դրանք անչափ կարևոր են եղել գիտությանը ծառայելու, ուսումնական գործին նպաստելու առումներով[7]:

Հընթացս, այլև հեռագայում բառարանները ընդօրինակվել են՝ ըստ ընդօրինակողի՝ լեզվին տիրապետելու մակարդակի: Եվ թեև «....մի չգրված օրենք է եղել նախատիպ ձեռագրին հարազատ մնալը»[8], բայց և չի կարելի բացառել ընդօրինակողի ապրած միջավայրի լեզվի ազդեցությունը, որքանով Գ. Միքայելյանի հավաստումով Հայաստանի տարբեր վայրերից XI դ. և հետագա գաղթերի ժամանակ ձեռագրեր են տարվել Կիլիկիա՝ ընդօրինակելու-վերակազմելու, և այնուհետև հետ բերվել[9], իսկ Ա.Մովսիսյանն էլ գրտնում է, որ ձեռագրեր են ընդօրինակվել նաև թելադրելով[10]: Նշվածից թերևս կարելի է եզրակացնել, որ ձեռագրերում հավանական են ուսուցողական նպատակներով մեջբերվող և հավելվող նկարագրական կամ բացատրական բառակապակցություններն ու արտահայտությունները, հղումներն ու ծանոթագրությունները, մանրամասնող բացատրությունները: Եվ եթե XII-XVII դդ. վկայված ձեռագիր բառարաններում, ըստ դիտարկումների, դրանք սահմանափակվում են մի քանի օրինակով[11], ապա XVIII դ. վկայվածներում[12] զգալի քանակ են կազմում:

---

7 Հ. Ամալյան, նշվ աշխ., էջ 22-23, 42-43, 47:

8 Լ. Հովհաննիսյան, *Բառային տարբերակներ V դարի գրաբարում. «Հայոց լեզվի պատմության հարցեր»*, պրակ 3, Երևան, ՀԳԱ հրատ., 1991, էջ 8-9:

9 Г. Микаелян, *История Киликийского армянского государства*, Е., иьд. АН Арм. ССР, 1952, с, 286.

10 Ա. Մովսիսյան, նշվ. աշխ., էջ 402:

11 «Ամբողջական բառակապակցության միջոցով, նկարագրական եղանակով» արտահայտությունների մասին նշում է Հ. Ամալյանը՝ դրանք պայմանավորելով

Հոմանիշային շարքերում որոշակիորեն առանձնանում են բայական հարադրությունները, բացատրական երանգով բառակապակցություն-արտահայտությունները:

Վերջինները մեծ մասամբ տրվում են հոմանիշային շարքի վերջում՝ ասես ամփոփելով կամ եզրափակելով այն, ինչպես Ձեռ. 6762-ից քաղված հետևյալ շարքերում՝ *Աղքատ.... մերկ յամենէ կամ թափուր յամենէ* (101բ)[13]. *Ամաչել... ամօթ երեսաց նոցա ծածկեաց զնոսա* (101բ). *Առաւօտ...ի ծագիլ արեւոյն. ընդ լուսանալ առաւօտուն* (102ա). *Արգելուլ... ո՛չ թոյլ տալ* (102բ). *Զգենուլ ... արկանել զիւրն հանդերձ* (107ա). *Թագուցանել... ո՛չ բացայայտել* (108ա). *Լռել... ո՛չ բանալ զբերան իւր* (110ա). *Ծերունի ... լցեալ հասակաւ. անցեալ զաւուրբ. հնացեալ ժամանակաւ. մերձեցեալ ի գերեզմանն* (111ա). *Կերակրել ...տալ նմա ուտել* (112բ). *Հարուստ ... առատացեալ ընչիւք. Մայել ... է՛ ձայն կատուոյ* (117ա). *Մերկացուցանել... հանել ի նմանէ զհանդերձն* (117ա). *Յագել... ուտել մինչև ցայգ... եթէ առաւել իցէ. խմռղել զորովայնն. կշտապինդ վայելել* (118ա). *Սերմանել... արկանել զսերմանիս յերկիր* (124ա). *Վաճառել....ի յառ և ի տուրս պարապիլ* (125բ). *Վիրաւորել... հարկանել սրով կամ նետիւ* (125բ). *Վրիպել... ո՛չ հաջողիլ... կամ զարտուղին երթալ* (126ա). *Տքնիլ... արթուն կալ. ո՛չ ննջիլ* (128ա). *Փարիլ... անկանիլ*

«բառարանի իսկական գործնական բնույթով», տե՛ս Հ. Ամալյան, նշվ. աշխ., 129-130:

[12] Ըստ Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրացուցակների՝ XVIII դարից ավանդված մի շարք ձեռագրերում ամփոփված են հոմանիշների առավել ամբողջական բառարանները՝ հետևյալ խորագրերով են՝«Նշանաքումն նոյնանշան բառից ըստ դասաւորութեանց մերոց տառից» (Ձեռ. 566, 234բ-279ա), «Հաւաքումն բառից որք նշանակութեամբ նոյն կամ մերձաւորք են. Մատթէոսի վ. Բառգիրք հոմանիշ բառից» (Ձեռ. 3110, 75ա-112ա), «Բառք նոյնանշանք՝ ժողովեալք ըստ այբուբենից, ի մխիթարեան Մատթէոսի գերերջանիկ վարդապետէ» (Ձեռ. 873 և 775, համապատասխանաբար՝ 185ա-220բ և 53ա-80ա): Նշվածներին հարկ է հավելել նաև Ձեռ. 6762-ումամփոփված անխորագիր բառարանը (101ա-130բ), քանի որ ձեռագրերի համեմատությունից պարզվեց, որ վերջինս և Ձեռ. 566-ը որոշ տարբերություններով հանդերձ նույնն են: Պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

[13] Փակագծերում նշվում է ձեռագրի էջը:

պարանոցաւ (128բ). *Քաղել… ամանել յաման… ժողովել ի շտեմարան կամ լնուլ ի հնձան և կամ ի գոգ իւր* (129ա). *Քաղցեալ…ոչ կերեալ ինչ* (129ա). *Քերթել… հանել զմորթն* (129բ). *Քննել… ի քնութիւն մտանել* (129բ-130ա) և այլն:

Հարադրավոր բայերի մեծ մասը կազմվում է *առնել, լինել առնուլ, ածել, արկանել, տալ* բայերով:

Կազմությունների համադրություն - համեմատությամբ պարզվում է, որ դրանք մեծ մասամբ գործածվել են գրաբարում, վկայված են գրաբար մատենագրության մեջ՝ մասնավորապես Աստվածաշնչում. ինչպես՝ *տապաստ արկանել* (*Կոտորել*. Ձեռ. 6762, 113ա)[14], *երկայնամիտ լինել* (*Համբերել*. Ձեռ. 566, 255ա), *ծայրաքաղ առնել* (*Կրճատել*. Ձեռ. 6762, 113ա. 566, 254ա), *ճառ արկանել* (*Պատմել*. Ձեռ. 6762, 122բ. 566, 267բ), *սպաս կալ* (*Սպասաւորել*. Ձեռ. 6762, 127բ), *ձեռն ի գործի արկանել* (*Սկսանել*. Ձեռ. 566, 271ա), *խրախոյս բառնալ* (*Քաջալերել*. Ձեռ. 6762, 129բ. 566, 277բ), *ափ ի բերան լինել* (*Լռել*. Ձեռ. 6762, 110ա. 566, 248բ) և այլն:

Առանձնացված բոլոր կազմությունները բնագրային օրինակներով որպես դարձվածային միավորներ արձանագրված են Ռ. Ղազարյանի «Գրաբարի դարձվածաբանական բառարանում»[15] (համապատասխանաբար՝ *երկայնամիտ լինել, ծայրաքաղ առնել,ի սպասու կալ, ձեռն ի գործի արկանել ափիբերան առնել* տարբերակներով):

Ըստ բառարանային տվյալների՝ Խորենացու, Եղիշեի, Բուզանդի, Փարպեցու, Կողբացու, Ագաթանգեղոսի երկերում են վըկայված հետևյալ կազմությունները՝ *բնաջինջ առնել* (*Աւերել*. Ձեռ. 6762, 103ա. 566, 238ա), *ի հիացման լինել* (*Զարմանալ*. Ձեռ. 6762, 106բ. 566, 243ա), *խնդրել կամ առնուլ զվրեժ լինել* (*Պատժել*. Ձեռ. 6762, 122ա. 566, 267բ), *հեղուլ զարտոսր* (*Լալ*. Ձեռ. 6762, 109բ. 566, 247բ), *զիշխանութիւն վարել* (*Տիրել*. Ձեռ. 6762, 127բ. 566, 274բ),

---

[14] Փակագծերում տրվում են հոմանիշային շարքի հենաբառը, ձեռագրի համարը և էջը:

[15] Ռ. Ղազարեան, *Գրաբարի դարձուածաբանական բառարան* (այսուհետև՝ ԳԴԲ), Երևան, ԵՊՀ հրատ., 2012:

պաշտօն տանիլ (*Սպասաւորել.* Ձեռ. 6762, 124բ. 566, 270բ), *ազատ կացուցանել, ի ձեռաց կորզել* (*Ազատել.* Ձեռ. 6762, 101ա. 566, 234բ), *զգենուլ զամօթ* (*Ամաչել.* Ձեռ. 6762, 103բ. 566, 235բ)[16], *զուժական հասանել* (*Գուժել.* Ձեռ. 6762, 105ա. 566, 241ա), *ուրաստ լիել* (*Ուրանալ.* Ձեռ. 6762, 120բ. 566, 265ա) և այլն:

ԳԴԲ-ում արձանագրված են ՝ *բնաջինջ առնել* (*Աւերել), խընդրել կամ առնուլ զվրեժ լինել* (*Պատժել), ուրաստ լինել* (*Ուրանալ)*[17]*:*

Որոշ հոմանիշային շարքերում էլ հենաբառին հաջորդում են մանրամասնող երանգով կառույցներ. ինչպես՝ *Ամբաստանել ՝ հակառակ նմա վկայել* (ՄՄՁ 6762, 101բ. 566, 235բ. ՆՀԲ-ն հղում է յուն.՝ հակառակ վկայեն[18]). *Բորբոքիլ ՝ բոցոյն բարձրանալն. բոցոյն ծառանալն* (Ձեռ. 6762, 104ա. 556, 239ա).*Լռել ՝ ի փոշի դարձուցանել* (Ձեռ. 6762, 109բ. 556, 248ա). *Լռել ՝ ո՛չ տալ զպատասխանի. ո՛չ բանալ զբերան իւր* (Ձեռ. 6762, 110ա. 566, 248բ). *Ծամել ՝ մանրել ատամամբ. ծմլել լեզուաւ* (Ձեռ. 6762, 111բ. 556, 250բ). *Կցել ՝ միաւորել ընդ նմա* (Ձեռ. 6762, 113բ. 556, 254ա). *Հնազանդել ՝ ենթարկել զինքն հրամանաց* (Ձեռ. 6762, 115ա. 556, 256բ). *Ճշմարտել ՝ բառնալ զերկբայութիւն* (Ձեռ. 6762, 116բ. 556, 259ա). *Մերկանալ ՝ ի բաց հանել զհանդերձն. հոլանի լինիլ* (Ձեռ. 6762, 117ա. 556, 260ա). *Միաբանիլ ՝ մտերիմ լինիլ նմա* (Ձեռ. 6762, 117բ. 556, 260բ). *Յուսահատել ՝ անյոյս լինել, հատել յոյս նորա* (Ձեռ. 6762, 118բ. 556, 262ա). *Նեղել ՝ վիշտ հասուցանել* (Ձեռ. 6762, 119ա. 556, 262բ). *Վիճել ՝ բանակռիւ լինել* (Ձեռ. 6762, 126ա. 556, 272բ). *Քակել ՝ հարթայատակ կամ հիմնայատակ առնել* (Ձեռ. 6762, 129ա. 556, 277ա) և այլն:

Կան տպագիր բառարաններում չարձանագրված կազմություններ. *անձնացոյց լինել* (*Հպարտանալ.* Ձեռ. 6762, 115ա. 556, 256բ), *անպատկառ լինել (Յանդգնել.* Ձեռ. 6762, 118ա. 556, 261ա),

---

[16] *Զգենուլ զամօթ*-ը «նմանութեամբ ասուի» հղումով է առանձնացնում ՆՀԲ-ն. *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ ՆՀԲ), Վենետիկ, 1836, հտ. Ա, էջ 727 :

[17]Տե՛ս ԳԴԲ, էջ 55, 260. *ուրաստ լինել*-ը ԳԴԲ-ում վկայված է *յուրաստ լինել* տարբերակով. ԳԴԲ, էջ 217:

[18] ՆՀԲ, հտ. Ա, էջ 53:

հետազօտ լինել (Քննել. Ձեռ. 6762, 129բ. 556, 278ա*), հլու լինիլ* (*Հնազանդել.* Ձեռ. 6762, 115ա. 556, 252բ), *նշաւակ առնել* (*Կատակել.* Ձեռ. 6762, 112բ. 556, 272բ), *զամայութիւն խնդրել* (*Մեկուսանալ.* Ձեռ. 6762, 117բ. 556, 260բ), *ողջակէզ առնել* (*Մատուցել.* Ձեռ. 6762, 117ա. 556, 259բ):

Թերևս կարելի է անդրադառնալ *Լռել* և *Պապանձել* հոմանիշային շարքերում (Ձեռ. 6762, 110ա, 122ա. 556, 248բ, 266բ) արձանագրված *լեզուն ի քիմսն կցել* արտահայտությանը: Թեև ՆՀԲ-ում՝ *Կցել* և *Քիմք* բառահոդվածներում, վկայված են *Լեզու իմ ի քիմս իմ կցեցաւ, Լեզուք նոցա ի քիմս իւրեանց կցեցան, Կցեցան լեզուք դիեցիկ մանկանց ի քիմս իւրեանց ի ծարաւս իւրեանց* բնագրային օրինակները, բայց և գրաբարի բառարանները չեն արձանագրում նշված արտահայտությունը՝ «լռել, պապանձվել» նշանակությամբ[19]: Ստ. Մալխասյանցի բառարանը նույնպես չի հիշատակում այն[20]: Իսկ ահա «Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան»-ը փաստում է՝ «Լեզուն կոկորդին կպչել, - Նույնն է՝ Լեզուն կապ ընկնել կամ կապվել», վերջինս էլ բացատրում՝ «.... պապանձվել (վախից, հուզմունքից)»[21]: Ուրեմն և կարելի՞ է ենթադրել, որ *լեզուն ի քիմսն կցել* արտահայտությունը դարձվածային արժեք է ձեռք բերել XVIII դ.:

Առկա են տպագիր բառարաններում վկայված կազմություններ նմանությամբ բաղադրվածներ, այսպես՝ *մեկնել յամբոխէ* (*Մեկուսանալ.* Ձեռ. 6762, 117բ. 556, 260բ). գրաբարում հանդիպող *մեկնել յաշխարհէ* (Մեռնել, վախճանվել)[22] նմանությամբ.

զպէտս հոգւոյն վճարել (*Մեռանել.* Ձեռ. 6762, 117բ. 556, 260ա).

---

[19] Տե՛ս ՆՀԲ, հտ. Ա, էջ 1139. հտ. Բ, էջ 1006:

[20] Հմմտ. Ստ. Մալխասեանց, *Հայերէն բացատրական բառարան* (այսուհետև՝ ՀԲԲ), Երևան, Հայպետհրատ, հտ. 2, 1944, էջ 190-191:

[21] Ա. Սուքիասյան, Ս. Գալստյան, *Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան* (այսուհետև՝ ՀԼԴԲ), Երևան, ԵՀ հրատ., 1975, էջ 267:

[22] Տե՛ս ԳԴԲ, էջ 196:

Ստ. Մալխասյանցը «հին բառ կամ նշանակութիւն» հղումով արձանագրում է *զպէտս հոգւոյն հատուցանել* (Հոգին ավանդել, մեռնել)[23].

խօսել ի սիրտ նորա (*Մխիթարել.* Ձեռ. 6762, 117բ. 556, 260բ). գրաբարում գործածվող *խօսել ի սրտի* (Մտածել, խորհել)[24] նմանությամբ.

յերկուս ծուենս բաժանել (*Պատառել.* Ձեռ. 6762, 122բ. 556, 267բ). Ղ. Փարպեցու «Բաժանեալ աշխարհս Հայոց՝ պատառեցաւ յերկուս ծուէնս» արտահայտության նմանությամբ[25].

պնդել զպսակ և *թագիւ պճնել* (*Պսակել.* Ձեռ. 6762, 123ա. 556, 268բ). ըստ ՆՀԲ-ի՝ *պսակեալ թագիւն* և *թագով պսակեալ* կառույցները վկայված են X-XI դդ.[26]: ՀԼԴԲ-ում նույն նշանակությամբ հանդիպում է *պսակ կապել*-ը[27]:

Վերը նշվածներից հարկ է առանձնացնել ձեռագիր բառարաններում՝ *Թագչիլ, Գերծել* և *Յագել* հենաբառերով հոմանիշային շարքերում (Ձեռ. 6762, 104բ, 108ա, 118ա. 556, 240ա, 245բ), հանդիպող համապատասխանաբար *թագթագուր շրջել, փոքրել զհերս* և *կշտապինդ վայելել*[28] կազմությունները, որոնք առկա են ՆՀԲ-ում՝ *թագթագուր, փոքրել, կշտապինդ* բառահոդվածների բոլոր բնագրային օրինակներում. ինչպես՝ *Պանդուխտք եղիցին, և թաքթաքուրք շրջեսցին, Հանին զնա ի բանտէ անտի, և փոքրեցին զհերս նորա, Կշտապինդ վայելեցեք ի զալստենէ փառաց դորա*[29]:

---

[23] ՀԲԲ, հտ. 4, 1945, էջ 97:
[24] Տե՛ս ԳԴԲ, էջ 154:
[25] Հմմտ. *Ղազարայ Փարպեցւոյ Պատմութիւն Հայոց*, Հայկական համաբարբառ, հ. 2, Ե., 1978, էջ 182:
[26] ՆՀԲ, հտ. Ա, էջ 788:
[27] ՀԼԴԲ, էջ 503:
[28] Ձեռ. 556-ում առկա է *կշտապինդ լինել* տարբերակը (261ա):
[29] Տե՛ս ՆՀԲ, հտ. Ա, էջ 803, 1108. հտ. Բ, էջ 961:

Կարելի է թերևս ենթադրել, որ գրիչները (կազմող կամ ընդօրինակող), քաջածանոթ պատմիչների երկերին, ուսուցողական նպատակներով հավելել կամ ներառել են նման կառույցները:

Nazik Hovhannisyan -Analitic Constructions In The XVIII C. Manuscript Dictionaries Of Sinonyms.- In the XVIII century manuscript dictionaries of sinonyms analitic constructions occupied a considerable place. In the synonymic rows phrase verbs, word combinations with explanatory nuances are differentiate. Those in majority of cases converge at the end of synonymic row, as if to generalize and conclude it. Most of compound verbs are formed by verbs *առնել, լինել առնուլ, ածել, արկանել, տալ*. These constructions by the lexical data are found in the works of Xorenatsi, Yeghishe, Buzand, Parpetsi.

There are also analitic constructions unattested in the dictionaries.

ՆԵՂ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ԲԱՌԵՐ ԵՎ ԲԱՌԻՄԱՍՏՆԵՐ ՀՈՄԱՆԻՇՆԵՐԻ՝ XVIII ԴԱՐԻ ՁԵՌԱԳԻՐ ԲԱՌԱՐԱՆՆԵՐՈՒՄ*

Նազիկ Հովհաննիսյան

Հայերենի բարբառների բառապաշարային տարբերությունները ունեն դրսևորման երկու արտահայտություն՝ բառային (տվյալ հասկացությունը տարբեր վայրերում տարբեր բառային միավորներով էառկա) և իմաստային (հայերենի համար ընդհանուր (կամ հին հայերենից ավանդված) բառը տարբեր վայրերում ունենում է իմաստային տարբեր կիրառություններ)[1]: Այս տարբերակման մեջ առանձնանում են նեղ բարբառային բառերը, որոնք գործառում են մեկ-երկու բարբառում, ընդգրկում են բարբառային սահմանափակ տարածք, այդ տարածքից դուրս մասամբ կամ լրիվ անհասկանալի են և կարիք ունեն լրացուցիչ բացատրության:

Հոմանիշների՝ XVIII դ. ավանդված ձեռագիր բառարաններում հանդիպում են նեղ բարբառային բառեր և նեղ բարբառային բառիմաստներ:

Ամօթել բայն առկա է Ձեռ. 6762-ում (110բ)՝ *խայտառակել*[2]*. առակել. ծանակել. նշաւակել. ծաղր առնել. խաղ առնել. տնազել*[3] հոմանիշային շարքի վերջում[4]: Այն արձանագրված է «Միջին հայերենի բառարան»-ում «անպատվել, վիրավորել, խայտառակել» նըշանակությամբ՝ Կամենեց-Պոդոլսկ քաղաքի հայկական դատարա-

---

* Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 68-78:

1 Տե՛ս Հ.Մուրադյան, Բառային զուգաբանությունների արժեքը. Քարտեզագրման մի փորձ. – *Հայերենի բարբառագիտական ատլաս*, 2, Ե., 1985, էջ 69-70:

2 Ձեռ. 6762-ում առկա է *խայտարակել* տարբերակը:

3 Ձեռ. 6762-ում առկա է *տնազ ունել* հարադրությունը:

4 Հոմանիշային շարքերը ներկայացվում են նշված բոլոր ձեռագրերի բառերի համատեղմամբ: Փակագծերում նշվում են ձեռագրի համարը և էջը: Հոդվածում պահպանված է ձեռագիր բառարանների ուղղագրությունը:

նի XVI դ. արձանագրություններից քաղված միակ օրինակով՝ «Կու զայր հարբած և զդրացիսներն անհարկիք խօսոք ամօթեց»[5], որից, թերևս, պարզորոշ է առավելապես «անպատվել, վիրավորել» նշանակությունը: Ըստ Հ.Աճառյանի՝ *ամօթէլ*-ը պոլսահայ բարբառում նշանակում է «ամաչեցնել»[6], նույնն է արձանագրում «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ը՝ «ամոթանք տալ, պարսավել»[7], «Արդի հայերենի բացատրական բառարան»-ը առանձնանում է «ամոթանք տալ»-ի «հզվդ.» նշումով[8]: Վենետիկում 1859 թ. հրատարակված «Համառօտ բառարանի պէտս նորավարժից» բառարանում *յամօթ առնեմ* հարադրական կազմությունը բացատրված է իբրև «խախք ընել»[9]: Հարկ է թերևս հիշեցնել, որ *խախք*-ը նույն *խայտառակ*-ն է (հմմտ. *խաղք անել* «անպատվել, ծանակել, այպանել, խայտառակել». ՀԼԲԲ, հ. Բ, 2002, էջ 274), որը, ինչպես նշում է Հ. Աճառյանը, առկա է Երևանի, Նոր Բայազետի, Պոլսի, Վանի («գւռ. խաղք (Ակն, Ասլ., Պլ. խախզ») բարբառներում (ՀԱԲ, հ. 2, էջ 320)[10]:

Ե՛վ արևելահայերենում, և՛ արևմտահայերենում *ամոթ*-ը նաև «անպատվություն, խայտառակություն»-ն է (ԱՀԲԲ, ն.տ.)[11]:

Ուրեմն և կարելի է հավանական համարել հոմանիշային շարքում առկա *ամօթել*-ի «խայտառակել» իմաստը, այլև ենթադրել, որ բառն այդ նշանակությամբ գործածվել է որոշակի տարածքում:

Աճապանալ-ը[12] վկայված է *զարմանալ. հիանալ. սքանչանալ.*

---

[5] Տե՛ս Ռ.Ղազարյան, Հ.Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան* (այսուհետև՝ ՄՀԲ), հ.1, Ե., 1987, էջ 41:

[6] Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, Ե., 1941, էջ 185:

[7] *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), Ե., հ. Ա, 2001, էջ 50:

[8] Է.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԱՀԲԲ), Ե., 1976, էջ 34:

[9] *Համառօտ բառարան ի պէտս նորավարժից*, Վենետիկ, 1859, էջ 3:

[10] Տե՛ս նաև Հ.Աճառեան, *Հայերէն գաւառական բառարան* (այսուհետև՝ ՀԳԲ), Թիֆլիս, 1913, էջ 990:

[11] Տե՛ս նաև *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան* (այսուհետև՝ ԺՀԼԲԲ), հ. 1, Ե., 1976, էջ 55: Յ.Գայայեան, *Բառարան-գանձարան հայերէն լեզուի*, Գաhիրէ, 1938, էջ 14:

[12] Ձեռ. 6762-ում առկա է *աճապանել* տարբերակը:

իրաշանալ. սխրանալ. ապշել. ի հիացման լինել. հիմարանալ[13] հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 566, 143ա. 3110, 85բ. 775, 58բ. 873, 192բ. 6762, 106բ): Այն արձանագրված չէ բառարաններում:

ՄՀԲ-ն «զարմանալ, հիանալ» նշանակությամբ ունի *աճապ մընալ, յաճապ գալ* հարադրական կազմությունները (ՄՀԲ, հ. 1, էջ 36): Թեև ըստ ՀԼԲԲ-ի՝ *աճապ*-ը նաև *աջաբ* և *աճեփ* տարբերակներով գործառում է հայերենի և՛ արևմտյան, և՛ արևելյան խմբակցության մի շարք բարբառներում (ՀԼԲԲ, հ. 1, էջ 96), սակայն °*ջըբն*°*լ* բայն առկա է միայն Մոկսի բարբառում[14]: Վերջինիս բայական համակարգը քննելիս նաև Մ.Մուրադյանն է հավաստում բարբառում առկա °*ջըբն*°*լ* «զարմանալ»-ը: Ըստ ՀԼԲԲ-ի՝ *աջեբնալի* «զարմանալի» ածականը նույնպես գործառում է միայն Մոկսի բարբառում (ՀԼԲԲ, ն.տ.), սակայն բարբառի ձևաբանական իրողությունները ներկայացնելիս Մ. Մուրադյանը չի անդրադառնում ածական անվանը, հետևաբար *աջեբնալի* «զարմանալի»-ն աշխատանքում չի արձանագրվում: Բայց և բարբառում առկա °*ջըբն*°*լ* «զարմանալ» բայը հնարավորություն է ընձեռում հավանական համարելու նաև *աջեբնալի* ածականի առկայությունը բարբառում, մանավանդ հայերենում առկա են անորոշ դերբայից *-ի* ածանցով բաղադրված նմանատիպ կազմություններ,ինչպես՝ *սիրելի, համակրելի, ցանկալի, տանելի* և այլն[15]:

Թփանք-ը վկայված է միայն Ձեռ. 775-ում՝ *զէն. Սպառազինութիւն. անօթ պատերազմի. գործի*[16] *պատերազմի. (իսկ մասնաւոր անունք) սուր. սուսեր. դալապը. նրան. դաշոյ. թուր. վաղարկաւոր*[17]*.արդն*[18]*. մարտացու. աշտէ. տէգ*[19]*. նիզակ. գեղարդ. ասպար.*

---

[13] Ձեռ. Ձեռ. 566-ում, 3110-ում, 775-ում և 873-ում առկա է *հիմարեցաւ* բայաձևը:

[14]Տե՛ս Մ.Մուրադյան, Ուրվագիծ Մոկսի բարբառի. - *Հայերենի բարբառագիտական ատլաս*, 1, Ե., 1982, էջ 166:

[15] Տե՛ս Ս.Աբրահամյան, Ն.Պառնասյան, Հ.Օհանյան, *Ժամանակակից հայոց լեզու*, հ. 2, Ձևաբանություն, Ե., 1974, էջ 181:

[16] Ձեռ. 3100-ում՝ *գործիք* բառը:

[17]Ձեռ. 873-ում՝ *վաղակաւոր* տարբերակը:

[18] Ձեռ. 566-ում բառն առկա չէ:

[19]Ձեռ. 6762-ում՝ *տէք*:

վահան. մկունդ. զրահ. վերտ. վարապանակ[20]. *սաղաւարտն*[21]. *հրացան. հրազէն. թոփ*[22]. *նէտ. աղէղն. կապարճ*[23]. *լայնալիճք. փքին. պարս. պարսատիկ* հոմանիշային շարքում (հմմտ. Ձեռ. Ձեռ. 566, 244ա. 3110, 86բ. 775, 59ա. 873, 193ա. 6762, 107ա): Հայերենի բարբառներում հնչյունական տարբերակներով գործածվող *թվանք* «հրացան» բառի *թփանք* տարբերակը բառարանային տվյալներով որևէ բարբառում արձանագրված չէ: ՄՀԲ-ն նշում է *թւազ, թըւանկ, թուանկ* տարբերակները պարսկերեն tofāng-ից (ՄՀԲ, հ. 2, էջ 258, 263, 269): «Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության» աշխատությունում *թւանկ*-ը ներառված է թուրքերեն բառերի ցանկում՝ tufank[24]: Նշված տարբերությունն արձանագրվում է ոչ թե փոխատու լեզվի ճիշտ կամ ոչ ճիշտ լինելը «բացահայտելու», այլ փոխատու լեզվում -*ֆ*- հնչյունի առկայությունը փաստելու համար: Հ. Աճառյանը նշում է նաև, որ ժողովրդախոսակցական և գրական թուրքերենի -*ֆ*- հնչյունը հայերենում « = » (հավասար՝ Ն.Հ.) է -*ֆ*-ի[25]՝ միաժամանակ արձանագրելով «թրք. تفنك tüfenk»-ի թիւֆէնկ…., թըվանքյ….,թըվէնկ…., թվանգյ….» տարբերակները համապատասխանաբար Պոլսի, Վանի, Նոր Նախիջևանի, Ղարաբաղի բարբառներում[26]: Հարկ է նաև հիշատակել ըստ Հ. Մուրադյանի հավանական այն ենթադրությունը, որ «հայերենում f-ն որպես հնչյուն գիտակցվել է նախ արևմտյան տարածքի բարբառներում, ոչ ուշ, քան VIII դարը, և հետագայում միայն սկսել է տարածվել դեպի *հարակից շրջանները*, չընդ գրկելով, սակայն, ամբողջ հայե-

---

[20] Ձեռ. 566-ում՝ *վերապանակ*, Ձեռ. 775-ում՝ *վարանապակ* տարբերակները:
[21] Ձեռ. 775-ում՝ *սաղաւարդն* տարբերակը:
[22] Ձեռ. Ձեռ. 566, 6762, 3110-ում՝ *դոփ* տարբերակը:
[23] Ձեռ. Ձեռ. 775, 873-ում առկա չէ:
[24] *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության*, հ. Ա, Ե., 1972, էջ 285:
[25] Տե՛ս Հ.Աճառեան, *Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ եւ թուրքերէնէ փոխառեալ բառերը Պօլսի եւ հայ ժողովրդական լեզուին մէջ համեմատութեամբ Վանի, Ղարաբաղի եւ Նոր-Նախիջեւանի բարբառներուն*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Գ, Մոսկուա-Վաղարշապատ, 1902, էջ 31:
[26] Նույն տեղում, էջ 136:

րենը»[27], որքանով հայտնի է -ֆ- հնչյունի բացակայություն- չգոյությունը Թբիլիսիի, Մեղրիի, Հավարիկի, Խոյի (Ուրմիայի)[28], Մարաղայի և Ղարաբաղի բարբառներում[29]:

Հայերենի բարբառներում գործառող հնչյունական տարբերակներից *թփանք*-ին «հարազատ» է *թֆանք*-ը, որը ՀԼԲԲ-ն վկայում է Չհալմահալի բարբառում[30] (ՀԼԲԲ, հ. Բ, 2002, էջ 136): Թեև հավանական չի թվում, որ Չհալմահալի բարբառը կրող անձը, որին խորթ չէր *ֆ* հնչյունը, այն փոխարիներ *փ*-ով: Ուրեմն և կարելի է ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողը պատկանել է *ֆ* հնչյուն չունեցող տարածքի, և*ֆ*–ն արտագրելով *փ՝ թֆանք*-ը դարձրել է *թըփանք*: Բայց և միաժամանակ հարկ է փաստել, որ *ֆ* հնչյուն չունեցող նշված տարածքներում բառի բոլորովին այլ տարբերակներ են գործառում:

Հարկ չէր լինի անդրադառնալու *թփանկ* բառին, եթե այն արձանագրած չլիներ վաճառական և բանահավաք, ծնունդով խոտորջուրցի Եղիա Մուշեղյան Կարնեցին «հայատառ թուրքերենով» XVIII դ. 20-ական թթ. կազմած «Թուրքերեն-հայերեն բառարան»-ում[31], որը լույս է տեսել Բ. Չուգասզյանի աշխատասիրությամբ: Վերջինիս կարծիքով Կարնեցին, չունենալով «լեզվական կուռ գիտելիքներ» և լինելով «արևմտահայերենի կրող», «դժվարությամբ է կողմնորոշվել և թուրքերենի ձայնեղները հայերեն տառադարձելիս երկվություն է հանդես բերել՝ դրանք տառադարձելով մերթ հայե-

---

[27]Հ. Մուրադյան, *Հայոց լեզվի պատմական քերականություն*, հ. 1, Ե., 1982, էջ 262:

[28] Տե՛ս Գ. Ջահուկյան, *Հայ բարբառագիտության ներածություն*, Ե., 1971, էջ 47, 51-62: Այդ է փաստում նաև Ա.Ղարիբյանը. տե՛ս Ա.Ղարիբյան, *Համառոտություն հայ բարբառագիտության*, Ե., 1941, էջ 264: Մ. Ասատրյանի հավաստմամբ, սակայն, Խոյի բարբառում *ֆ* հնչյուն չկա. Մ.Ասատրյան, *Ուրմիայի (Խոյի) բարբառը*, Ե., 1962, էջ 19-20:

[29] Տե՛ս Գ.Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 47, 51-62: Տե՛ս նաև Կ.Դավթյան, *Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը*, Ե., 1966, էջ 62:

[30] Չհալմահալի բարբառն ունի -*ֆ*- հնչյուն. Հ.Աճառեան, *Հայ բարբառագիտութիւն. ուրուագիծ և դասաւորութիւն հայ բարբառների (բարբառագիտական քարտէսով)*, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա-Նոր-Նախիջևան, 1911, էջ 242:

[31] Եղիա Մուշեղյան Կարնեցի, *Թուրքերեն-հայերեն բառարան*, Ե., 1986, էջ 114:

րեն ձայնեղներով և մերթ խուլերով»[32], և բացի այդ, ըստ Բ. Չուգասզյանի, «բարբառային բառերի մի մասը.... գալիս է Կարինի՝ Մուշեղյանի մայր բարբառից, իսկ մյուս մասը՝ հայերենի արևելյան բարբառներից», քանի որ նա՝ իբրև վաճառական և Արևելյան հնդկական ընկերության պաշտոնյա, եղել է բազմաթիվ երկրներում[33]: Ընդունելով և հաշվի առնելով Բ. Չուգասզյանի դիտարկումները, այդուհանդերձ, քննվող բառի առնչությամբ հարկ է փաստել, որ Կարնո բարբառին նվիրված մենագրության մեջ *թվանք* տարբերակն է (բարբառում էլ առկա է *ֆ* հնչյուն)[34]: Հավանական կարելի է համարել, որ Կարնեցին իր շրջագայությունների ժամանակ լսել և գրի է առել *թփանկ* բառաձևը (փաստ է, որ այն արձանագրված է բառարանում), սակայն անհայտ է, թե որ տարածքից:

Խձուձ-ը հանդիպում է միայն երկու ձեռագրում՝ *ստոման. կամփսակ. խձուձ* հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 566, 271ա. 6762, 125ա): Ըստ ՀԼԲԲ-ի՝ *խծուծ*-ն իբրև «Սափորի՝ տակառի՝ շշի բերանը գոցելու խցան» գործառում է Սեբաստիայում, Տերենտեում, Մարզվա նում, իսկ «ամուր փակված՝ խցված (աման, տակառ, շիշ)» նշանա կությամբ *խձուձ*-ը՝ միայն Կեսարիայի բարբառում[35] (ՀԼԲԲ, հ. Բ, էջ 334): Թեև հարկ է փաստել, որ Ս.Անթոսյանի՝ Կեսարիայի բարբառին նվիրված աշխատությունում *խձուձ*-ը «ամուր փակված (դուռ, խուփ)»- ն է[36], ըստ Հ. Գազանճյանի էլ՝ «առանց ամենափոքր ճեղք մնալու փակված, խցուած (դուռ, տուփ եւն)» նշանակությամբ *խծուծ* տարբերակն առկա է Եվդոկիայի բարբառում[37]:

---

[32] Նույն տեղում, էջ 22:

[33] Նույն տեղում, էջ 24:

[34] Տե՛ս Հ.Մկրտչյան, *Կարնո բարբառը*, Ե., 1952, էջ 35, 142:

[35] Կեսարիայի բարբառում, ինչպես նշում է Ս. Անթոսյանը, «….բառի վերջում ծ-ն հնչվում է ձ….» (Ս.Անթոսյան, *Կեսարիայի բարբառը*, Ե., 1961, էջ 33), և, թերևս, այդ է պատճառը, որ *խձուձ* բառում առաջին *ծ*-ն, առնմանությամբ պայմանավորված, դարձել է *ձ* (այդպես է նաև պոլսահայ բարբառում՝ծեծ>ձեձ, ծիծ>ձիձ. տե՛ս Հ.Աճառյան, *Քննություն պոլսահայ բարբառի*, էջ 50):

[36] Տե՛ս Ս.Անթոսյան, նշվ. աշխ., էջ 276:

[37] Տե՛ս Յ.Գազանճեան, *Եւդոկիոյ հայոց գաւառաբարբառը*, Վիեննա, 1899, էջ 29:

Թերևս Կեսարիայի և Եվդոկիայի բարբառներում առկա *խը-ձուձ/խծուծ*-ը և հայերենի բարբառներում գործառող *խծուծ*-ը (Լ. Ղզխ. Սս. «Կալի տակի մնացորդ, փոշի դարձած հարդ», Գնձ. Սս. «Կանեփի թելի մաքրված՝ ավելորդ մասը, սանդրուք». ՀԼԲԲ, հ. Բ, էջ 334) կարելի է համանուններ համարել: Ձեռագիր բառարանի մյուս գրչագրերում՝ նշված հոմանիշային շարքում, առկա է *բդուղ* բառը՝ *ստոման. կամփսալ*[38]*. բդուղ* (հմմտ. Ձեռ. Ձեռ. 3110, 107ա. 775, 74բ. 873, 214բ): Ըստ ՀԼԲԲ-ի՝ *բդուղ*-ի գործառման տարած-քային շրջանակն առավել ընդգրկուն է՝ Ար., Խրբ.,Կր., Մղր., Մշ., Վն., Մկս. և այլն (ՀԼԲԲ, հ.Ա, էջ 201): Եվ դարձյալ կարելի է, թերևս, ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողը հավանաբար չի հասկա-ցել *խձուձ* բառը և արտագրելիս այն փոխել է իրեն հասկանալի «սափորաձև, բերանը համեմատաբար լայն կավե փոքր աման» նշանակությամբ *բդուղ*-ով (*ստոման*-ը և *կամփսալ*-ը, ըստ ՆՀԲ-ի, հունարեն համապատասխանաբար «ստամնօս» և «գամփսագիս, կամ գափսագիս» բառերն են և նշանակում են «.... սափոր, կուժ, դորակ,… աման, անօթ….» (ՆՀԲ, հ.1, էջ 1043. հ.2, էջ 747. այս բառե-րը հիշատակվում են «Գրաբարի հոմանիշների բառարան»-ում[39]): Կամ էլ ենթադրել, որ ձեռագիրն ընդօրինակողին անհասկանալի է եղել *բդուղ*-ը և *բդուղ*-ի փոխարեն լրացրել է մոտավորապես նույն նշա նակությամբ իրեն ծանոթ *խձուձ*-ը:

Արդի հայերենում *խծուծ*-ը «վուշի՝կանեփի թելերի կամ առ-հասարակ ծեծված ցողունների խռիվ»-ն է, նաև բժշկական՝«ախ-տահանված շղարշ (մառլյա), որ մտցնում են խոր վերքերի մեջ՝ թարախը արտածծելու կամ արյունահոսությունը կասեցնելու հա-մար», այլև շինարարական (դյուբել) ու ռազմական (օբտյուրատոր) եզրույթ (ԱՀԲԲ, էջ 581, 615. ԺՀԼԲԲ, հ. 1, էջ 524):

Շիւարեալ-ը[40] հանդիպում է *յիմար. մոլոս. անմիտ. անիմաստ.*

---

[38] Ձեռ. 873-ում՝ *կամբսալ*, Ձեռ. 3110-ում՝ *կամսալ* տարբերակները:

[39] Տե՛ս Ռ.Ղազարեան, *Գրաբարի հոմանիշների բառարան*, Ե., 2006, էջ 366, 617:

[40]Ձեռ. 566-ում՝ *շուարեալ*, Ձեռ. 6762-ում՝ *շըւարեալ* տարբերակները:

տզէտ. անգէտ. ռակայ. տխմար. ախմար. խելաժէտ. խելազար. խե-լացնոր. յիմարամիտ. ախմարամիտ. բթամիտ. վայրենամիտ. պաճարամիտ. գրաստախել. մանկախել հոմանիշային շարքում (Ձեռ. Ձեռ. 566, 261բ. 3110, 102ա. 775, 69ա-69բ. 873, 207ա. 6762, 118ա):

Շուա(յ)ր, շիւա(յ)ր, շ(ի)վար, շ(ը)ւար հնչյունական տարբերակ-
ները՝ «առաւել ռմկ.», «գվռ.», «բրբ.» նշումներով, հայերենի բառա-րաններն արձանագրում են «մոլորված, շփոթված, անճար, շշմած» նշանակություններով[41]: «Վարանել» նշանակությամբ *շիւարիմ կամ շուայրիմ կամ շուարիմ* տարբերակներն է հիշատակում նաև Ն. Բյուզանդացին X-XVII դդ. մատենագրության մեջ (ՆԲԲ, էջ 581): ՀԳԲ-ն, ՄՀԲԲ-ն և ՀԼԲԲ-ն առադրում են Մշո և Վանի բարբառ-ներում հանդիպող «խեղճ, ողորմելի, անգործ, պարապ, աւարայ» իմաստները՝ ՀԳԲ-ի՝ «սարսախ» իմաստի հավելումով (ՄՀԲԲ, h.3, էջ 533. ՀԳԲ, էջ 839. ՀԼԲԲ, h. Դ, էջ 241): *Սարսախ*-ը, ըստ Մալխաս-յանցի, «տաճկերեն sarsak «ապուշ, տխմար, ախմախ» բառն է (ՄՀԲԲ, h. 4, էջ 194): *Շուարիմ*-ը բացատրելիս թուրքերեն բառի է հղում նաև Գ. Փեշտըմալճեանը՝ «տարտամ և ապուշ մնալն…. (տաճ. ….շաշմազ)» (ԳՓԲ, ն.տ.). վերջինըս էլ «թրք. شاشمق šašmak»-ն[42] է, որը Արարատյան, Թբիլիսիի, Ղարաբաղի բարբառներում պահպանվել է *շաշ* ձևով որ պես «ապուշ, տխմար, ախմախ, խելա-պակաս» (ՄՀԲԲ, h. 4, էջ 194. ՀԼԲԲ, h. Դ, էջ 200)[43]:

---

[41] Տե՛ս *Նոր բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ՆՀԲ), h. Բ, Վենետիկ, 1836, էջ 490. *Առձեռն բառարան հայկազնեան լեզուի* (այսուհետև՝ԱԲ), Վենետիկ, 1865, էջ 639. Գ. Փեշտըմալճեան, *Բառգիրք հայկազեան լեզուի* (այսուհետև՝ՓԲ), h. 2, Կոստանդնուպօլիս, 1846, էջ 461. ՀԳԲ, 839. Ե.Մեղրեցի, *Բառգիրք հայոց* (այսուհետև՝ ԲՀ), Ե., 1975, էջ 251. Նորայր Բիւզանդացի, *Բառագիրք ստորին հայերենէ ի մատենագրութեանց ԺԱ-ԺԷ դարուց* (այսուհետև՝ ՆԲԲ), Ժնեւ, 2000, էջ 581. Ս.Մալխասեանց, *Հայերէն բացատ րական բառարան* (այսուհետև՝ ՄՀԲԲ), h. 3, 1946, Ե., էջ 533. ՄՀԲ, h.2, Ե., 1987, էջ 217. ԱՀԲԲ, էջ 1109. ԺՀԼԲԲ, h. 4, էջ 85. ՀԼԲԲ, h. Դ, 2004, էջ 241:

[42] Հ.Աճառեան, *Թուրքերէնի ազդեցութիւնը հայերէնի վրայ….*, էջ 258:

[43] Տե՛ս նաև Տ.Նաւասարդեանց, *Բառգիրք Արարատեան բարբառի*, Տփղիս, 1903, էջ 88:

Շիվար-ի «թուլամիտ» նշանակությունը ՀԼԲԲ-ն արձանագրում է միայն Սեբաստիայի բարբառում (ՀԼԲԲ, հ. Դ, էջ 241): Այնպես որ ձեռագիր բառարաններում հանդիպող «հիմար, տխմար, բթամիտ» նշանակությամբ *շիվարեալ*-ն առկա է Մուշ-Վան բարբառային սերտ տարածքում, այլև Սեբաստիայում: Տվյալ իրողության առիթով տեղին է հիշեցնել պատմական հետևյալ փաստը: Բագրատունիների անկումը ողբերգական հետևանքներ է ունենում Հայաստանի համար. ծայր է առնում զանգվածային արտագաղթ, հետագայում՝ թյուրք-սելջուկյան ծավալուն արշավանքների ժամանակ՝ բռնագաղթ Բյուզանդիա, Եգիպտոս, Կիլիկիա… Եվ ինչպես նշում են պատմաբանները, XI դ. Սենեքերիմ Արծրունին, հանձնելով Վասպուրականը Բյուզանդիային, գաղթում է Սեբաստիա՝ միանալով կայսրությանը, իր հետ տանելով ազնվականության, զինվորականության, բնակչության մի ստվար հատված[44]: Ուրեմն և բացատրելի է քննվող բառի առկայությունը նաև Սեբաստիայի բարբառում:

Քշտել-ն առկա է երկու հոմանիշային շարքում՝ *հատանել. կտրել. կտրատել. ջարդել. խզել. ի բաց հատանել. ի բաց խզել. ի բաց կորզիլ. ի բաց հանել*[45] և *ջարդել. քանդել. հատանել. յատանել. սրբել.մաքրել. փշրել. կոտրել*[46] (Ձեռ. Ձեռ. 566, 255բ և 269ա. 3110, 97ա և 106բ. 775, 65բ և 73բ. 873, 202ա և 213ա. 6762, 114բ և 123բ):

Գրաբարի տպագիր բառարաններում *քշտել* նշանակում է «ի բաց վարել հատնելով. կտրել. կորզել. քանդել. յապաւել. կոճոպել. ծայրաքաղ առնել. ճղերը կտրտել. կրճատել» (ՆՀԲ, հ. 2, էջ 1003. ԱԲ, էջ 836. ՂԳԲ, 639. ԳՀԲ, էջ 693)[47]:

---

[44] Մ.Չամչեանց, *Պատմութիւն հայոց*, հ. Բ, Վենետիկ, 1785, էջ 902: И.Орбели, *Избранные труды*, т. 1, М., 1968, էջ 225:

[45] Ձեռ. 775-ում՝ չկա:

[46] Ձեռ. Ձեռ. 566-ում, 6762-ում և 873-ում՝ *կոտորել* տարբերակը:

[47] Տե՛ս նաև Մ.Ջախջախեան, Բառգիրք ի բարբառ հայ և իտալական (այսուհետև՝ ՋԲ), Վենետիկ, 1837, էջ 1480, այլև ԳԲ, էջ 925:

Եվ թեև պարզորոշ է *քշտել*-ի՝ ձեռագիր բառարաններում առկա «հատանել, կտրել» իմաստը, այդուհանդերձ հարկ է անդրադառնալ և հետևել բառի իմաստային զարգացումներին:

ՆԲԲ-ն X-XVII դդ. մատենագրությունից հավելում է «զարնել» (ՆԲԲ, էջ 746), իսկ ահա ՀԱԲ-ը՝ առադրում բարբառներում հանդիպող մի շարք իմաստներ՝ *քշտել* «թևերը սոթտել» (Ալշ.), *քիշտել* «զարնել» (ՀՃ.), «հարու տալ, եղջերցել» (Սվեդ.), «նուազարան ածել» (Եւդ.), «ուտել» (Երև.) (ՀԱԲ, հ. 4, էջ 585): Նույնը «բրբ.» նշումով վըկայում է ՄՀԲԲ-ն (ՄՀԲԲ, հ. 4, էջ 582):

Ցավոք, ՀԼԲԲ-ում՝*քշտել* բառահոդվածում, չի տարբերակվում, թե ո՛ր բարբառում *քշտել*-ի ո՛ր նշանակությունն է գործառում, և բառի փնտրտուքն էլ հայերենի բարբառներին նվիրված աշխատանքներում որևէ արդյունքի չհանգեցրեց, իսկ Ալաշկերտի խոսվածքը ներկայացնող մենագրության բարբառային բառերի բառարանում, ի հակադրություն Հ.Աճառյանի արձանագրածի, *քշտել*-ն արձանագրված չէր[48]: Բայց և միաժամանակ նկատվեց, որ արևմտյան խմբակցության բարբառներում (Պոլիս, Եվդոկիա, Մալաթիա, Դերսիմ) գերակշռում է *սոթտել-ը՝ սոթթել, սոթէլ* տարբերակներով[49] (բացառություն են Սասունը և Մուշը՝ *քշտիլ, քըշտել*)[50]: Ս. Ամատունու վկայությամբ *քշտել*-ը՝ «Տ. ՍՈԹԹԵԼ» հղումով, առկա է Արարատյան բարբառում[51], Ռ.Բաղրամյանի հավաստմամբ՝ Շամախիի բարբառում՝ *կըշտէլ* տարբերակով[52]: «Բրբ.» և «ժդ.» նշումներով «թևերը՝ փեշերը նն հաւաքել, սոթտել»-ը արձանագրում են արդի հայերենի բացատրական բառա րանները (ԱՀԲԲ, էջ 1574.

---

[48]Տե՛ս Ք.Մաղաթյան, *Ալաշկերտի խոսվածքը*, Ե., 1985, էջ 245-248:

[49] Տե՛ս Ս.Ամատունի, *Հայոց բառ ու բան*, Վաղարշապատ, 1912, էջ 595, 676: Ց.Գազանճեան, նշվ. աշխ., էջ 54-55: Թ.Դանիելյան, *Մալաթիայի բարբառը*, Ե., 1967, էջ 208: Ռ.Բաղրամյան, *Դերսիմի բարբառը*, Ե., 1960, էջ 168:

[50] Տե՛ս Վ.Պետոյան, *Սասունի բարբառը*, Ե., 1954, էջ 166: Ս. Բաղդասարյան- Թափալցյան, *Մշո բարբառը,* Ե., 1958, էջ 274:

[51] Ս.Ամատունի, նշվ. աշխ., էջ 676:

[52] Տե՛ս Ռ.Բաղրամյան, *Շամախիի բարբառը*, Ե., 1964, էջ 231:

ԺՀԼԲԲ, հ. 4, էջ 744):

Կարելի էր, իհարկե, շրջանցել և չանդրադառնալ ձեռագիր բառարաններում վկայված վերոնշյալ բառերին՝ դրանք համարելով պարզապես սխալագրություններ, բայց և ակնհայտ է՝ դրանք գործառում են հայերենի բարբառներում, հետաքրքիր են միջբարբառային առնչությունների տեսանկյունից, այլև, ինչպես իրավացիորեն նկատել է Հ. Մուրադյանը, «Բարբառների լեզվական հարուստ նյութը հնարավորություն է տալիս համեմատական քննությունների միջոցով թափանցելու լեզվի պատմության խորքերը, վերականգնելու բարբառային տարբերությունները գրավոր պատմության սկզբում և նրանից առաջ, դրանով իսկ նպաստելու մեր պատկերացումների ընդլայնմանը հայերենի հնագույն շրջանի բարբառային բաժանվածութան աստիճանի մասին»[53]:

Оганесян Назик- Узкодиалектные слова и значения слов в рукописных словарях синонимов XVIII века. - В рукописных словарях синонимов XVIII в. засвидетельствованы слова, которые встречаются в одном (или двух) диалектах, охватывающих ограниченную диалектную территорию и частично или полностью непонятные вне этой территории.

Рассмотрены слова ամօթել (опозорить), աճապանալ (удивляться, изумляться), թփանք (ружьё), խձուձ (прочно закрытый сосуд), շիւա րեալ (глупый), քշտել (засучивать).

Hovhannisyan Nazik- Restricted Dialectal Words in the XVIII Century Manuscript Dictionaries of Synonyms.- The XVIII century manuscript dictionaries of synonyms testify words, which are used in one or two dialects, included limited area region and partly or fully incomprehensible.

The words ամօթել (disgrace), աճապանալ (surprised), թփանք

[53] Հ.Մուրադյան, Բառային զուգաբանությունների արժեքը…., էջ 75:

(gun), խձուձ (firm closed dish), շիւարեալ (fool), քշտել (roll up, tuck up) are considered.

ՑՑՈՑ ԵՎ ՊԱՐՈՒՑ ԵՐԳԵՐԸ ՀԻՆ ՀԱՅՈՑ ՄԵՋ*

Մխիթարյան Գայանե

Նախաքրիստոնեական երաժշտական մշակույթի առանձնահատկությունների բացահայտումը, հայկական ինքնուրույն հոգևոր երգի սկզբնավորումն ու պատմական զարգացումը, ժողովրդական երաժշտարվեստին առընչվող բազմաթիվ հարցեր ուղղակի կամ անուղղակի արծարծվում են հայոց պատմություններում: Բանահյուսական աղբյուրներն իրենց տեսակային անվանումներով՝ *երգք առասպելաց, երգք վիպասանաց, երգք թուելեաց, երգք ցցոց եւ պարուց,* ավանդվել են Մ. Խորենացու «Հայոց պատմության» միջոցով: Այդ անվանումների առաջին վկայողը Խորենացին է, իսկ նախորդ և հետագա աղբյուրներում այդ բառերը շատ չեն: Հետազոտողները բազմիցս անդրադարձել են դրանց մեկնություններին, այդուհանդերձ դժվար է եզրակացնել՝ արդյոք դրանք ոճական տարբերակներ են Խորենացու բառապաշարում, թե որոշակի հասկացություններ ու տերմինային անվանումներ:

Մեզ հետաքրքրող հարցի առումով առանձնահատուկ է *երգք ցցոց և պարուց* անվանումը, որի մեկնաբանությանը շատերն են անդրադարձել (Մ. Էմին[1], Ս.Պալասանյան[2], Խորեն Ստեփանե վարդապետ[3], Մ. Աբեղյան[4], Հ, Հովհաննիսյան[5]): Ազգերի և տեղանունների առաջացման մասին Ոլիմպիոդորոս փիլիսոփայի հաղորդած անգիր զրույցների և իր լսած ժողովրդական ավանդությունների առիթով պատմիչը գրում է. «Բայց առաւել յաճա-

---

* «Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտաժողովի զեկուցումներ: Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 120-124:

[1] Մ.Էմին, *Վէպք հնոյն Հայաստանի*, Մոսկվա, 1850:

[2] Ս.Պալասանյան, *Պատմութուն հայոց գրականության*, հ. 1, Թիֆլիզ, 1865:

[3] *Մ.Խորենացու Հայկական պատմություն*, աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խ. Ստեփանե, Ս.Պետերբուրգ, 1889:

[4] Մ. Աբեղյան, *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ*, Վաղարշապատ, 1899:

[5] Հ. Հովհաննիսյան, *Թատրոնը միջնադարյան Հայաստանում*, Ե., 1978:

խագոյն հինքն Արամազնեայց ի նուագս փանդռան եւ յերգս ցցոց ու պարուց զայսոսիկ ասեն յիշատակաւ»[6]:

Մ. Էմինը ընդհանուր եզրեր է նշում *ցցոց և պարուց երգերի և գուսան* բառի միջև՝ մերժելով Նոր հայկազյան բառգրքում *ցուց* բառի դիմաց արձանագրված «ցունծք, այսինքն ցնծութիւն. կամ ցոյցք ուրախութեան. հանդէս. երգ ուրախութեան. ձայն նուագաց կամ նուագ ձայնից. շաչիւն. շառաչիւն» իմաստները[7]: «Գուսան առ մեզ, - գրում է Էմինը, - ...զկատակերգուն յայտ առնէ՝ յոյր սակս առաւել յարմար թուի մեզ ընդ անուամբն՝ զերգիչս խաղացողս իմանալ, որք առաջի ժողովրդեան ի հրապարակս ձնացուցանէին զպարունակեալն յերգս վիպասանաց՝ որպէս և առ զանազան ազինս»[8]: Այնուհետև շարունակում է. «երգք ցցոց և պարուց ոչ այլ ինչ յայտ առնէ, բայց եթէ երգք գուսանաց և երգչաց՝ վէպս ասողաց ժողովրդեան, զնոքոք պար առելոց»[9]: Ստեփան Պալասանյանը նշում է, որ «երգք պարուց նշանակում են այն երգերը, որ երգիչները ասելիս միևնույն ժամանակ պար էին գալիս»[10]: Խորեն Ստեփանե վարդապետը *երգ պարուց*-ը մեկնում է այնպիսի երգ, որ «պարելով էր երգվում», այնուհետև հավելում է. «*Պարել* բառի բուն սկզբնական նշանակությունն է բոլորել, շուրջ առնել, պըտըտվել, որ և ցույց է տալիս հին սկըզբնական պարի խորհրդավորությունը»[11]:

Նախնական համարելով *պար* բառի «շրջան» և «շուրջ» նշանակությունները՝ Հ. Աճառյանը նշում է նաև դրանց համարժեքները հին հունարենում (περί) և սանսկրիտում (para, pari)[12]:

---

6 Մովսեսի Խորենացւոյ *Պատմութիւն Հայոց*, աշխ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, էջ 27:

7 Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, Վենետիկ, 1836, էջ 917:

8 Մ. Էմին, *նշվ.աշխ.*, 1850, էջ 96:

9 Մ. Էմին, *նշվ. աշխ.*, էջ 97Լ:

10 Ս. Պալասանյան, *նշվ. աշխ.*, էջ 175:

11 *Մ. Խորենացու Հայկական պատմություն,* աշխարհաբար թարգմանեց և լուսաբանեց Խ. Ստեփանե, Ս. Պետերբուրգ, 1889, էջ 27:

12 Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, հ. 4. էջ 54-55:

Ուշագրավ է Աճառյանի այն նկատառումը, որ բառի սկզբնական ձևը եղել է *պարք, ք*-ն սխալմամբ ընկալվել է որպես հոգնակիի վերջավորություն և ընկել: Հնարավոր է, որ Խորենացու բնագրում *պարուց*-ը անեզական իմաստ ունենար, մանավանդ, եթե բառը գործածվել է ժողովրդախոսակցական լեզվում: Աճառյանի նշած «խումբ», «հավաքույթ», «շարք» իմաստները *պարուց*-ին տալիս են հավաքական նշանակություն: Վաղմիջնադարյան հեղինակների երկերում *պար* բառին զուգահեռ գործածվում են նաև *խաղ, կայթ, կաքաւ* անվանումները: Նոր հայկազյան բառարանում *պար*-ը բացատրվում է որպես «բոլորումն» և իբրև բառիմաստի համարժեք՝ բառարանի հեղինակները նշում են հին հունարեն χορος (խորոս) բառը: Բացատրությունն էլ հետնյալն է. «Բազմութիւն բոլորեալ ի կաքաւել երգովք»[13]:

Քննելով հայ-իրանական լեզվական զուգադիպումները՝ Գ. Ջահուկյանն անդրադառնում է *զարշապար* բառի ստուգաբանությանը: Անբացատրելի համարելով *զարշ*-ը՝ նշում է, որ *պար*-ը ծագում է պարթևական pad (p'd)՝ «ոտք» բառից, որ հանգում է իրան. *pad-ին, հմմտ. ավ. pad`-, հ. պարսկ. pada՝ «ոտք»: Բառի ոտնահետք իմաստի համար հմմտ. ավ. pada՝ քայլ, հետք, ոտնահետք[14]: Այսինքն՝ *պար* արմատի ծագումը հնարավոր է բխեցնել հենց «քայլ», «հետք», «ոտնահետք» նշանակություններից: Ինչ վերաբերում է *պար(ա)-* ածանցին, ապա Գ. Ջահուկյանը հնարավոր է համարում, որ այդ ածանցի համար հիմք ծառայած հայերեն *պար* բառը հունաբան հեղինակների կողմից կապված լինի իրանական ծագում ունեցող *պարիսպ* տիպի կազմություններին և հուն. περι-՝ *շրջա-, պարա-* նախածանցին[15]:

Պար և *ցուց* անվանումները գործածվել են Ագաթանգեղոսի Պատմության մեջ *կայթիւք* բառաձևի և *զկաքաւուն* բառերի հետ.

---

[13] Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, հ. 2, Վենետիկ, 1836, էջ 625:

[14] Գ. Ջահուկյան, *Հայ-իրանական լեզվական զուգադիպումներ*, Պատմաբանասիրական հանդես, N 2, Ե., 1995, էջ 183:

[15] Գ. Ջահուկյան, *Հայոց լեզվի պատմություն: Նախագրային ժամանակաշրջան*, Ե., 1987, էջ 566:

«...իբրեւ եկն եմուտ նա (Տրդատ առ Հռիփսիմ) ...առ հասարակ մարդիկն ... երգս առեալ բարբառեցան կայթիւք վազելով, ցուց բարձեալ մարդկանն, կեսքն ի բերդամիջին, եւ կեսք զքաղաքամէջ լցրին խմճոյիւք, առ հասարակ համարէին հարսանեացն զպարսն պարել եւ կաքաւսն յորդորել»[16]: Բուզանդի Պատմության մեջ հիշատակվում է. «... պարուցն կաքաւելով, ... զմեռեալսն յուղարկեին»[17]: Հովհան Մամիկոնյանը գործածում է *պարաւորքն* անվանումը. «Եւ իբրեւ մտին ի գիւղն, ընդ առաջ եղեն նոցա պարաւորքն եւ երգս առեալ բազում ինչ իրաց՝ գովեին»[18]: Ուշագրավ է Ուխտանես եպիսկոպոսի հիշատակությունն այն մասին, որ Վահագնի առասպելը ևս «երգէին երգիչք ի պարս խաղուց»[19]:

Պար բառի նույնիսկ ուշ վկայություններն ունեն այն նույն իմաստային դրսևորումները, որոնք արձանագրված են Ագաթանգեղոսի, Բուզանդի, Խորենացու Պատմություններում: Օրինակ՝ Նարեկացու մատենագրության մեջ կարդում ենք.- «…դասիմ ի պարս հեզոց եւ ընդ այսս կաքաւեմ»[20]: Օրինակներ կան նաև Գր. Մագիստրոսի Թղթերում. «… զքաղցրունսն գործել պար մեղուացն անդուստ անաշխատաբար ի բջիջսն…», «… իբրեւ զերկին յարդարեալ լուսաւորացն պարու…»[21]: Ակնհայտ է, որ *պար* բառը միջնադարյան բնագրերում գործածվում է հիմք ունենալով Աստվածաշնչում և դավանաբանական գրականության մեջ ընդունված և կիրառվող նշանակությունը, ինչպես՝ «պար մարգարէից», «պար հրեշտակաց», «պար աստեղաց» և այլն:

Առանձնացնելով *պարուց և ցցոց երգերը*՝ Մ. Աբեղյանը նշում է, որ *պարուց երգերը* կարճ քնարական երգեր են եղել, նման մեր

---

16 Ագաթանգեղայ *Պատմութիւն հայոց*, Թիֆլիս, 1909, էջ 99:

17 Փաւստոսի Բիւզանդացւոյ *Պատմութիւն հայոց*, Թիֆլիս, 1912, էջ 193:

18 Յովհաննու Մամիկոնենի *եպիսկոպոսի պատմութիւն Տարօնոյ*, Վենետիկ, 1889, էջ 45:

19 Ուխտանես եպիսկոպոս, *Պատմութիւն հայոց*, Էջմիածին, 1871, էջ 99:

20 Գրիգորի Նարեկայ *վանից վանականի Մատենագրութիւնք*, Վենետիկ, 1840, ՀԱ, էջ 183:

21 *Գրիգոր Մագիստրոսի Թղթերը*, Ի լույս ընծայեց Կ. Կոստանյան, Աղեքսանդրապոլ, 1910, ԻԴ, էջ 72, ՀԷ, էջ 223:

երկտողերին ու քառատողերին, որոնք և բոլոր ազգերի ժողովրդական պարերգերի ամենահին տեսակն են: Իսկ ցցոց երգերը պարի մի տեսակի կամ հարսանյաց պարի իմաստ ունեն[22]: Հնարավոր է, որ լինեին *ցցոց երգ և պարուց երգ* առանձին անվանումներ, բայց պատմիչները դրանք չեն վկայել: Ընդ որում, կապակցության մեջ *երգ*-ը ոչ թե տարանջատող, այլ միավորող բաղադրիչ է:

Ցուց բառը Արմատականը մեկնում է «ուրախության խաղ», «երգ», «պար», «կայթիւն»[23]: Պատմիչների երկերում բառը գործածվել է «պար» նշանակությամբ: Գ. Լևոնյանը *ցցոց և պարուց երգերը* համարում է գուսանական երգի տեսակներից՝ նշելով, որ դրանք կատարվում էին հարսանիքներում, հասարակական տոնախմբությունների, խնջույքների ու զինարբուքների ժամանակ[24]: *Ցուցք*-ի աշխարհիկ բովանդակությունն ակնհայտ է նաև Նարեկացու Մատյանում.«Կաքաւս կայթից եւ ցուցս վազից խաղալկացն դիւաց զարշելեաց ճարտար խաբողաց ծուլութեամբս իմով շնորհեցի»[25]:

Վ. Առաքելյանը, անդրադառնալով Նարեկացու այս հատվածին, գրում է, որ վեճի առարկա *ցուց* բառը առաջին անգամ գործածել է Ագաթանգեղոսը: Այն նշանակում է «վազք», իսկ *ցուց բարձեալ*՝ «վազելով»: Որպես ապացույց բերում է գրաբարի սեռական հոլովով հավելադրության օրինակներ՝ «տեսիլ երազոյ», «դէմք երեսաց», «վախճան կատարածի» և նշում, որ Նարեկացին գործածել է նման զույգ հավելադրություն՝ *կաքավս կայթից և ցուցս վազից:* Ցցոց երգերը տարբերելով պարերգերից՝ Առաքելյանը գրում է, որ հին հայոց մեջ դրանք կատարվում էին Նավասարդյան և այլ տոնահանդեսների ժամանակ, երբ հրապարակներում վազքի մրցություններ էին կազմակերպվում[26]:

---

22 Մ. Աբեղյան, *Հայ ժողովրդական առասպելները Մ. Խորենացու Հայոց պատմության մեջ*, Վաղարշապատ, 1899, էջ 256-257:

23 Հ. Աճառեան, *Հայերէն արմատական բառարան*, Ե., 1926, հ. 4, էջ 464:

24 Գ. Լևոնյան, *Թատրոնը հին Հայաստանում*, Ե., 1941, էջ 27:

25 Գ. Նարեկացի, *նշվ. աշխ.*, ԻԱ, էջ 49:

26 Վ. Առաքելյան, Բառաքննական դիտարկումներ, *Պատմա-բանասիրական հանդես*, N 4, 1979, էջ 36:

Ցուց բառը նշանակում է նաև աշխարհիկ բանաստեղծության տեսակ, քանի որ հետագա շրջանի մատենագրությունն առանձնացնում է *ցցաստց* անվանումը: «Ոչ ունկն լսէ զլկտի և ցցաստց բանն»,- գրում է Գրիգոր Մարաշեցին (12-րդ դար) իր «Վայք ողբոց» կոչվող աղոթագրքերից մեկում[27]: Բառը կարելի է ընկալել երկու իմաստով՝ կա՛մ ցուցքի ձևով, ցուցքի մեջ ասված, կա՛մ ցուցք ասող, պատմող, հորինող: Ե. Մեղրեցու Բառգրքում *ցցաստց* բառի դիմաց գրված է «խաղասաց կամ երգիչ լկտության»[28] : Հովհ. Սարկավագը իր նշանավոր «Սարեկ»-ում առանձնացնում է «ոտանավոր ու ցուցական ըստ քերդողացն տեսակի», որտեղ դեռևս հունաբան ժամանակներում ստեղծված *ցուցական* անվանումն ընկալվում է թերևս որպես բանաստեղծության մի տեսակ կամ արձակ ստեղծագործություն[29]: Բոլոր դեպքերում Հովհ. Սարկավագի վկայությունը վերաբերում է խոսքարվեստի այնպիսի մի տեսակի, որի բանահյուսական ծագումը կամ բանավոր արվեստի հատկանիշներն ակնհայտ են եղել 10-11-րդ դարերում:

Հետաքրքիր է, որ Հ. Գաթրճյանը, անդրադառնալով Բուզանդի Պատմության բանավոր աղբյուրներին, առանձնացնում է «առակք, առասպելք, ցուցք», իսկ հայ հին բանահյուսության տեսակների մեջ նշում է «ցուցք, գեղոնք, մըրմունջք»[30]: Դրանք վաղմիջնադարյան հրապարակային զվարճությունների և նախարարական խնջույքների անբաժան մասն են: «Հնարավոր է, որ այլնայլ հրապարակական ուրախության նշաններուն մէջ ցուցք կամ ցցոց երգեր ըլլան,-գրում է նա,-և կամ ընչավետ ինչպես թագավորներ, ասանկ ալ ընչավետ նախարարներ իրենց որսին երեններէն շինված կերակուրներով զարդարված ու ծաղկալից սեղաններուն վարձակներ ու երգեցիկներ պակաս չէին ըներ»[31]:-

---

[27] Գ. Աւետիքեան, Խ. Սիւրմէլեան, Մ. Աւգերեան, *Նոր բառգիրք հայկազեան լեզուի*, h. 2, Վենետիկ, 1836, էջ 920:

[28] Ե. Մեղրեցի, *Բառգիրք հայոց*, Ե., 1975, էջ 320:

[29] Ա. Աբրահամյան, *Հովհաննես Իմաստասերի մատենագրությունը*, Ե., 1956, էջ 323:

[30] *Հ. Գաթրճեան, Պատմութիւն մատենագրութեան հայոց, Վիէննա, 1851, էջ 26:*

[31] *Նույն տեղում:*

Կարելի է նշել, որ *ցուցք*-ը ենթադրում է ոչ միայն պարային, այլև երգային արտահայտություն և ամենայն հավանականությամբ ունեցել է աշխարհիկ-կատակերգական բովանդակություն: Պատահական չէ, որ թատերագետ Հ. Հովհաննիսյանը *ցուցք* է անվանում ազգային թատերախաղը կամ միջնադարյան թատրոնի բուն հայկական տեսակը[32]:

Ըստ Աճառյանի՝ *ցուցք*-ը բարբառներում նշանակել է «հրեշային պատկեր, անկարգ տեսարան, այլանդակ դեմք», և դրանից էլ առաջացել են *ցուցանք* (հրեշ, հրեշային երևույթ, հրաշք), *ցուցարանք* (տգեղ, տձև, նաև ապիկար մարդ), *ցուցուլունք* (ցուցադրություն) բառերը [33]: Բարբառներում գործածվում են նաև *ցուսկ* (Բայազետ), *ցուցկի* (Լոռի), *ցիցկո, ցիցարկա* (Ախալցխա), *ցուցք, ցուցանք* (Արմավիր): Այսինքն՝ գրականության մեջ քիչ գործածվող *ցուցք* բառն այսօր էլ կիրառվում է տարբեր բարբառներում:

Այսպիսով, *ցցոց և պարուց երգերը* պարերգական արվեստի տեսակ են, որ ունեն աշխարհիկ բովանդակություն և ընդգծված կատակային, ծաղրական բնույթ: Դրանք ժողովրդական ավանդությունները հիշելու, պահպանելու էական ձևերից են և որոշակի պատկերացում են տալիս հնագույն հայերենի ու՝ նախագրային փուլի որոշ առանձնահատկությունների մասին:

Mkhitaryan Gayane - Songs of Tstsots and Paruts among Old Armenians. - Songs that have reached us through the history of Armenia by M. Khorenatsi have various renditions of different researchers. Nevertheless, it's difficult to conclude whether these are stylistic variants in Khorenatsi's lexicon or definite notions or terms. We can assume that Songs of tstsots and paruts are types of dance-song art and have secular content and underlined quizzical, sarcastic nature. Those songs are essential form of keeping national traditions which give a notion about a later stage of Armenian language features.

---

[32] *Հ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 134:*

[33] *Հ. Աճառեան, Հայերէն գաւառական բառարան, Թիֆլիս, 1913, էջ 1058:*

Мхитарян Гаяне - Песни ццоц и паруц среди древних армян. - Эти песни достигли нас через "Историю Армении" М. Хоренаци. В научной литературе было много примичаний об этом термине. Тем не менее трудно сделать вывод – имеет ли термин стилистическую вариантность в лексике Хоренаци, или это определенное название. В заключении - термин имеет светское содержание и выраженный юмористическо-ироничный характер и дает очевидное представление о нескольких особенностях о древнейшем армянском языке.

ԴԻՏԱՐԿՈՒՄՆԵՐ «ՍԱՍՆԱ ԾՌԵՐ» ԷՊՈՍՈՒՄ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ՍԱԶ ԲԱՌԱՆՎԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ*

Մխիթարյան Գայանե

«Սասնա ծռեր» էպոսը, դարեր շարունակ բանավոր ավանդվելով, ներառել և գեղարվեստորեն համադրել է հայ ժողովրդի տարբեր դարաշրջանների նյութական և հոգևոր կյանքի էական իրադարձությունները, դարձել պատմամշակութային կարևոր հուշարձան:

«Սասնա ծռեր»-ը ժանրային առումով խոսքային-երաժշտական վիպերգ է, որտեղ միաձուլված են վերամշակված ու փոխակերպված հնագույն առասպելները, ավանդական վիպական սյուժեները, հեթանոսական պաշտամունքային տարրերը (ջուրը, արևը), պատմական երգ-զրույցները: Ինչպես նկատում է Մ. Աբեղյանը, հայկական վաղ միջնադարում բանահյուսության դրամատիկական հոսանքները մնացել են նախնական հունի մեջ, և մենք ուշ միջնադարում ու նոր ժամանակներում բախվում ենք այդ նախաստեղծ ձևերին ու նրանց հիշողությանը[1] :

Էպոսի ամենավաղ գրառումը վերաբերում է XIX դ. 2-րդ կեսին, մինչդեռ ակունքները շատ ավելի խորն են: Վաղմիջնադարյան գուսաններին, վիպասաններին ու փանդռահարներին ուշ շրջանում հաջորդում են այլ սերունդներ: Սակայն պատումները, երգային հատվածները, նվագներով ուղեկցվող խոսքը առավել գուսանական բնույթ են կրում: Սովորաբար էպիկական ասքերում և ավանդություններում վկայություններ կան երգի, նվագի և պարի մասին: Հին Կտակարանում ևս հիշատակվում է «թմբկօք եւ պարուք» միմյանց ընդառաջ գնալը, որը Ս. Լիսիցյանը համարում է առաջավորասիական պարերգի

* Հայ բարբառագիտության հիմնախնդիրներ: Միջազգային գիտաժողովի զեկուցումների ժողովածու, Ե., «Ասողիկ» հրատ., 2014, էջ 127-133:

[1] Տե՛ս Մ. Աբեղյան, *Գուսանական երգեր.* – Երկեր, հ. Բ, Ե., 1967, էջ 192-193:

դրսևորում[2]: Էպոս պատմել կամ ասելը պահանջում է կատարողական բարձր վարպետություն. խոսքից անցում երգի, ապա՝ արտասանության, այնուհետև՝ թվերգի: «Սասունցի Դավիթ» ճյուղում Մսրա Մելիքի դեմ կռվի պատրաստվելիս Դավթի զինվելու և կռվի գնալու հատվածները կազմված են հիմնականում երգերից: Այսինքն՝ կարելի է ասել՝ գործողությունը զարգանում է երգից երգ: Էպոսում երգելով են ասվում մաղթանքները, խնդրանքները, գովքերը, ողբերը, անգամ՝ հրամաններն ու իրադրության նկարագրությունները: Այդ առումով հիշատակվում են գուսանները նվագարաններով, Միհերի ջոջ սազը, փողը, նշվում է, որ Դավիթը ևս երգող ու նվագող է:

Միհերի ջոջ սազ էտու զարնել...

Միհերի փող էտու փչել[3]:

Դավիթը գնում է կռվի, զարկում է Միհերի սազը, փչում է Միհերի փողը, և հավաքվում է ողջ Սասունը: Ահա այս սազ նվագարանի «զարնելն» էր կռվից առաջ, որ որոշ ենթադրությունների տեղիք տվեց: Արդյոք սազը, որ գուսանական լարային նվագարան է, կարո՞ղ էր ռազմական ազդանշանային հզոր ձայն ունենալ, լինել այնքան հնչեղ ու զորեղ, որի կոչով հավաքվեր մի ողջ ժողովուրդ: Նշենք նաև, որ գավաշցի ասացող Մարգարիտ Սարգսյանը հիշատակում է *կռվի սազ*-ը, որն արդեն Ռշտունյաց տարբերակն է.

Կ'ասա. -Հա՛շ կացէք, կռվու սազի ձէն կը գայ[4]:

Իբրև գուսանական-աշուղական նվագարան՝ սազը սիրված և տարածված է եղել արևելյան ժողովուրդների շրջանում: Անվանումը պարսկական ծագում ունի, նշանակում է «նվագարան ընդհանրապես»[5]: Բառարաններում անվանումն այդպես էլ

---

[2] Տե՛ս С.С.Лисициан, Старинные пляски и театральные представления армянского народа, т. I, Е., 1958, էջ 158:

[3] Մ.Աբեղյան, *Սասնայ Ծռեր,* Պատում ԺԵ, Ե., 1936, էջ 806: 8 Տե՛ս Հայոց լեզվի բարբառային բառարան (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Ե, Ե., 2008, էջ 243:

[4] Նույն տեղում, Պատում ԻԱ, էջ 930:

[5] Տե՛ս Գ.Նալբանդյան, *Պարսկերեն-հայերեն բառարան*, Ե., 1987, էջ 330:

մեկնվում է՝ «Գուսանական նվագարան»[6], «Պղնձե լարերով արևելյան երաժշտական գործիք»[7]: «Հայոց լեզվի բարբառային բառարան»-ը վկայում է, որ սազը՝ իբրև արևելյան լարային նվագարան, տարածված է Ղարաբաղի, Ուրմիայի, Վանի, Մշո բարբառներում[8]: Նշենք, որ էպոսի պատմողասացողների մեծ մասը Արևմտյան Հայաստանից էր՝ Սասունից, Մուշից, Բաղեշից, Մոկքից, Շատախից, Վանից, Խլաթից, Արճեշից, Մանազկերտից, Ալաշկերտից, Բայազետից: Պատումների լեզուն հիմնականում արևմտահայ բարբառներն են, թեպետ երբեմն նկատելի է նաև արևելահայ բարբառների ազդեցությունը, քանի որ XIX-XX դդ. նշված գավառներից գաղթած վիպասացների ու նրանց սերունդների միջոցով «Սասնա ծռերն» անցել է Արևելյան Հայաստան:

Համեմատելով «Սասնա ծռեր»-ի պատումները, մասնավորապես գավաշցի և շատախցի ասացողներից գրի առածները՝ նկատել ենք, որ էպոսում հիշատակված սազը այս պատումներում միանգամայն այլ նշանակություն ունի: Շատախի սազը, ըստ էության, ոչ թե լարային նվագարան է, այլ մեծ թմբուկ, որ հարվածում էին թակիչներով: Այդ սազի լուսանկարը տրված է Ս. Լիսիցյանի գրքի լուսանկարներում[9]: Նշվում է նաև, որ Շատախի սազը Վասպուրականի տարբեր շրջաններում անվանում էին նաղարա[10]: Անվանումն արաբերեն է՝ na'ara, որ նշանակում է «գոչիւն, աղաղակ»: Հայերենում բառի գործածությունը վերաբերում է XIII-XIV դդ.: XIV դ. հայերեն ձեռագրերի հիշատակարաններից մեկում գրված է. «զԴհաւլսն դմդմէին, զնաղարայսն հար-

---

6 Տե՛ս Ա.Կռանեան, *Բառգիրք հայերէն լեզուի*, Պէյրութ, 1998, էջ 43:

7 Տե՛ս Էդ.Աղայան, *Արդի հայերենի բացատրական բառարան*, հ. 2, Ե., 1976, էջ 1267:

8 Տե՛ս *Հայոց լեզվի բարբառային բառարան* (այսուհետև՝ ՀԼԲԲ), հ. Ե, Ե., 2008, էջ 243:

9 Տե՛ս С.С.Лисициан, նշվ. աշխ., таблица LXXXI, фото 2: Խանսազ որ կը տան տփել, Խորքուր էլաւ ուր տեղ կայնաւ, Փանջարից ուր, զըլոխ տուս էխան, Ըրըշկից, տեսաւ մէկ նորամանուկ՝ Միհերի ձին խեծներ էր, կայներ15 : Դաւիթ Միհերի ջոջ սազ էտու ծեծել Ջուռնէն էլ էտու փչել: Դաւիթ գնաց կռիւ 16 :

10 Տե՛ս նույն տեղում:

կանէին…»[11]: Հ. Աճառյանը այն համարում է «յետին ռամիկ բառ», որը մեկ անգամ գործածվում է Միխայիլ Ասորու «Ժամանակագրութեան» մեջ (XIII դ. թարգմանություն). «Զորս ալամ սեաւ եւ շղթայ մի պարանոցին եւ զաւազան ոսկի եւ նաղարայ եւ փողս»[12]: Բառը գործածված է նաև Գրիգոր Տաթևացու աշակերտ Առաքել վարդապետի՝ Դավիթ Անհաղթի Սահմանքի լուծմունքում (XV դ.). «Արդ՝ ձեռօք որպէս դուֆուլ, և նաղարայ, և դաբ, և ծնծղայք...»[13]: «Միջին հայերենի բառարանում» նաղարայի հզոր ձայնին վերաբերող մի ակնարկ կա. «Թէ ձին լսէ նաղարային ձայնն՝ ահուն հիւանդանայ»[14]:

«Սասնա Ծռեր»-ի շատախցի ասացողները հիշատակում են նաև խանսազ, ջոջ սազ, թարխան սազ անվանումները.

Խանսազ որ կը տան տփել,
Խորքուր էլաւ ուր տեղ կայնաւ,
Փանջարից ուր, զըլոխ տուս էխան,
Ըրըշկից, տեսաւ մէկ նորամանուկ՝
Մհերի ձին խեծներ էր, կայներ[15]:
Դաւիթ Մհերի ջոջ սազ էտու ծեծել
Ջուռնէն էլ էտու փչել:
Դաւիթ գնաց կռիւ[16]:

Խան-ը *ղան* ձևով Հ. Աճառյանը համարում է փոխառյալ բառ, որ նշանակում է «իշխան, մանաւանդ թաթարների թագաւորը կամ իշխանը», կիրառվում է թաթարերենում, ույգուրերենում կամ

[11] *ԺԴ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ*, կազմեց՝ Լ.Ս.Խաչիկյան, Ե., 1950, էջ 578:
[12] 12 Հ.Աճառյան, *Հայերեն արմատական բառարան* (այսուհետև՝ ՀԱԲ), հ. Գ, Ե., 1977, էջ 424:
[13] *Լուծմունք Սահմանացն Դաւթի*, Մադրաս, 1797, էջ 615:
[14] Ռ. Ղազարյան, Հ. Ավետիսյան, *Միջին հայերենի բառարան*, Ե., 2009, էջ 564: 130
[15] Մ. Աբեղյան, *Սասնայ Ծռեր*, Պատում ԻԱ, էջ 930: 18 Տե՛ս ՀԼԲԲ, հ.Ե, էջ 192:
[16] Նույն տեղում, Պատում ԺԵ, էջ 743:

ույղուրերենում, պարսկերենում[17]: *Ջոջ*-ը հայերենի բարբառներում նշանակում է «մեծ», «խոշոր»[18], այսինքն՝ ակնհայտ է, որ խոսքն առնչվում է *մեծ թմբուկին*: Ինչ վերաբերում է *թարխան*-ին, ապա այն ընդհանուր եզրեր ունի ջոջ սազի և խանսազի հետ: Ուշագրավ է, որ պատումները համեմատելիս համագյուղացի ասացողներից (երկուսն էլ Շատախի Հինենց գյուղից էին) Ավո Զադոյանը ասում է թարխան սազ, մինչդեռ Գրիգորը՝ ջոջ սազ: Ի՞նչ է թարխան-ը: Անվանումը ծագում է պարսկերենից: Թարխան էին անվանում Կենտրոնական Ասիայի տեղական իշխաններին Սասանյանների օրոք: Հ. Աճառյանը նշում է, որ «...այդպես էին կոչում, անվանում այն մարդկանց, որոնք ազատ և արտոնյալ էին արքունի պահանջներից»[19]: Այսինքն՝ թարխան-ը ազնվական տիտղոս է: Այդ դեպքում կարելի է ենթադրել, որ թարխան սազ-ը իշխանական, ազնվական նվագարան է: Հետաքրքիր է, որ երբ Սասունցի Դավիթը պետք է գրավեր հոր գահը՝ պատումներից մեկում նշվում է մի յուրօրինակ արարողակարգ, որտեղ առանձնահատուկ, կարելի է ասել, պատվավոր դեր ու տեղ է հատկացվում սազին, տվյալ դեպքում Շատախի սազին կամ մեծ թմբուկին.

Սազ տարան Տաւթի տեմաց. սազով առին պիրին,
Տրին անու խօր տեղ. Տաւիթ էլաւ ճոչ[20]:

Այսպիսով, ակնհայտ է, որ շատախցի և գավաշցի ասացողների հիշատակած *սազը* էապես տարբեր է մեզ ծանոթ լարային համանուն նվագարանից: Այն ունի ռազմական բնույթ. Գործածվում է կռվի գնալիս, զորքին դիմավորելիս, ժողովրդին թշնամու վերահաս վտանգից պաշտպանելիս:

Հնում հաճախադեպ է նվագարանների անվանումների մեկը մյուսի փոխարեն կիրառությունը, երբեմն միևնույն անվանումը

---

[17] Տե՛ս ՀԱԲ, հ. Գ, էջ 164:
[18] Տե՛ս ՀԼԲԲ, հ.Ե, էջ 192:
[19] ՀԱԲ, հ. Բ, Ե., 1973, էջ 160:
[20] Մ.Աբեղյան, *Սասնայ Ծռեր*, Պատում ԺԴ, էջ 720:

կարող է վերաբերել մի քանի նվագարանների: Հայտնի փաստ է, որ նվագարանների շատ տեսակներ միաժամանակ գործածվում են մի քանի երկրներում, և տարբեր ժողովուրդների մոտ նրանք ձեռք են բերում ուրույն առանձնահատկություններ և ինքնատիպություն: Անդրադառնալով միջինասիական ժողովուրդների աշուղական նվագարաններին՝ հետազոտողները նշում են *սազին* ազգակից այլ նվագարաններ: Այդ թվում հիշատակվում է *նայ թամբուրը*, բայց ոչ թե թմբուկ իմաստով, այլ իբրև *սազ*[21]: Դա պայմանավորված է թերևս նրանով, թե ինչ նշանակություն ունի նվագարանը տվյալ ժողովրդի կյանքում, որն է նրա սոցիալական դերը: Տվյալ դեպքում՝ ինչ նպատակով էին գործածում *սազը* Վասպուրականում, Ռշտունիքում, այն ինչ որոշակի գործառույթներ ուներ ժողովրդական կենցաղում և նրա ծիսակարգում:

Էպոսի ձևավորման ժամանակաշրջանը թեպետ ընդունված է համարել արաբական տիրապետության ժամանակահատվածը (VII-X դդ.), սակայն Սանասարի և նրա եղբոր մասին հնագույն գրավոր ավանդությունը պահպանվել է Աստվածաշնչում (Թագ. IV, ԺԹ, 37), հիշատակվել է նաև Խորենացու Պատմության մեջ (Գիրք Ա, ԻԳ): Այսինքն՝ բանավոր ավանդվելով ու սերնդեսերունդ փոխանցվելով՝ էպոսի արմատները հասնում են վաղնջական ժամանակներ: Դա հիմք է տալիս ենթադրելու, որ էպոսում հիշատակված ՎասպուրականՌշտունյաց սազը աղերսներ ունի Աստվածաշնչյան պղնձե տավիղի հետ: Աստծո տապանակը Աբդեդոմի տնից հանելու և նորընծա խորան տեղափոխելու համար Դավիթը պատվիրում է՝ Ղևտացվոց իշխանները հավաքեն ժողովրդին և նվագներով ուրախության ձայներ հնչեցնեն. «Եւ սաղմոսանուագքն՝ Եման եւ Ասափ եւ Եթան տաւղօքպղնձեօք, լսելի առնել զձայնն» (Ա Մնաց., ԺԵ, 19): Ռուսերեն Աստվածաշնչում նշվում է. «Еман, Асаф и Ефан играли громко на медных кимвалах» (1Пар, 15:19): *Պղնձե տավիղը* Վ. Հացունին համարում է *ռազմական թմբուկ*. «Եգիպտոս եւ Պարթեւք ...եւ Հայք – ունէին ասոր պատերազմական ալ, մեծ, գլանաձև կամ տակառաձև, երկու

[21] Տե՛ս Т.С.Вызго, *Музыкальные инструменты Средней Азии*, М., 1980, էջ 118- 119:

բերանները ծածկուած կաշւով, զոր կը բախէին բոնցի»[22]: Ինչ վերաբերում է տավիղ անվանմանը, ապա Սուրբ Գրքում այն գործածվում է «խառն ձեւով՝ քնարին հետ ի միասին»[23] : Այնուհետև նշում է Աստվածաշնչում դրա կիրառությունների մասին և ընդգծում. «տաւիղը ծագած է յն. տաբալա կամ տաբելա բառէն, որ կը նշանակէր Պարթեւաց ռազմական թմբուկը... Այս իմաստով տեղ մը թարգմանած է յն. կիւմբալոնը, որ է՝ թմբուկ. «տաւղօք պղնձեօք», որոյ տեսակը նիւթէն ալ յայտնի է. եւ ս. Եփրեմի թարգմանիչը կը գրէ թէ՝ զինուորը պատերազմի մէջ կը լսէ «զձայն տաւղի բախելոյ եւ զհարկանել փողոց», ուր տաւիղը բախելի գործի մ'է, ուստի դարձեալ թմբուկը. եւ լարաւորն արդէն տկար կը մնար մարտի շռինդին մէջ»[24]:

Այսպիսով, էականը ժողովուրդների և լեզուների աղերսներն են, պատմական իրադարձությունները և շփման հարատևությունը, որը հնարավորություն է ընձեռում պատմականորեն բացահայտելու հայերենի բարբառներում առկա լեզվական արժեքավոր ու ինքնատիպ դրսևորումները:

Мхитарян Гаяне – О термине саз, упоминаемом в эпосе “Сасна Црер” – Эпос ’’Сасна Црер’’ по своему жанру является словесно-музыкальной эпопеей. При сравнении повествования “Сасна Црер”, в частности, Гавашских и Шатахских сказателей, выявилось, что упомянутый в эпосе саз –не обычный струнный, а музыкальный инструмент из семейства ударных. Инструмент был задействован во время войны - под его ударами встречали и провожали войска, предупреждали о нападении врагов. Для выявления точного смысла термина существенно важны отношения языков и народов, события и непрерывность контактов, которые дают возможность исторически идентифицировать ценные и уникальные языковые отображения в армянских диалектах.

[22] Վ. Հացունի, *Հայուհին պատմութեան առջեւ*, Վենետիկ-Ս.Ղազար, 1936, էջ 266:
[23] Նույն տեղում, էջ 267:
[24] Նույն տեղում:

Mkhitaryan Gayane – The Remark on the Term Saz Mentioned in the Epos ”Sasna Tsrer”. – The epos on the genre is verbal and musical epic. Comparing narrations of Gavash and Shatakh storytellers it's noticed that saz mentioned in the epos is not a string, but a musical instrument from family of percussions. It was used during war, under its blows met and saw off troops, warned about attack of enemies. To identify the precise meaning of the term are essential relationship of languages and people, events and continuity it's contacts which give the chance historically to identify valuable and unique language discoveries in Armenian dialects.

ԼԱՏԻՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԽԻԹԱՐ ՍԵԲԱՍՏԱՑՈՒ ԹԱՐԳՄԱՆԱԾ ԱՍՏՎԱԾԱԲԱՆԱԿԱՆ ԵՐԿԵՐՈՒՄ*

Սիրունյան Տիգրան

Լատինաբան գրաբարը նախանշի որոշ դադարներով գործածվել է 14-18-րդ դդ.[1], բառային և քերականական օտար կաղապարները հաղթահարվում են Մխիթարյանների ջանքերով, իսկ արդեն Մ. Չամչյանի քերականությամբ գրաբարի լատինատիպ նկարագրությունների փուլն ավարտվում է[2]: Գրաբարյան բուն ձևերին անցումն սկսել է Մխ. Սեբաստացին, բայց լեզուն զտելու նրա փորձը զգուշավոր էր, նախորդող քերականություններում արդեն կայունացել էին արհեստական ձևեր, և դրանց անտեսումը կարող էր հակառակություն առաջացնել[3], այդ ինքնուրույնությանը դեմ կլիներ նաև կաթոլիկ եկեղեցին, որ հովանավորում էր լատինաբանությունը[4]: Գ. Ջահուկյանը նշում է այլ պատճառներ ևս. նախ որ հայտնաբերված հին ձեռագրերի քանակը բավարար չէր հավաստի ճշգրտումների համար, ապա խոչընդոտ էր քերականության ռացիոնալիստական ըմբռնումը, որին հարում էր Սեբաստացին: Հետևելով նոր հեղինակներին, հատկապես՝ Հովհաննես Հոլովին, Մխ. Սեբաստացին իր քերականության մեջ գրեթե չեզոք կրկնությամբ գործածել է լատինաբան ձևեր, զուգահեռ կատարել է մի շարք փոփոխություններ, շտկումներ: Բայց տեսական նկարագրությունը լիովին չի բացահայտում Սեբաստացու նախընտրությունները տեքստում. նա ինքը նշում է,

---

*«Ջահուկյանական ընթերցումներ» միջազգային գիտժողովի զեկուցումներ, Ե., «Աստղիկ» հրատ., 2014, էջ 192-199:

[1]Տե՛ս Վ. Համբարձումյան, *Լատինաբան հայերենի պատմություն*, Ե., «Նաիրի» հրատ., 2010, էջ 103-118:

[2]Տե՛ս Գ. Ջահուկյան, *Գրաբարի քերականության պատմություն*, Ե., Երևանի համալսարանի հրատ., 1974, էջ 210:

[3]Տե՛ս Մ. Չամչեանց, *Քերականութիւն Հայկազեան լեզուի*, Վենետիկ, 1779, առաջաբան, էջ դ, ե:

[4] Տե՛ս Գ. Ջահուկյան, ն.տ.:

որ հարացուցային ձևը կարող է շարադրանքում տարբերվել[5]: Այդ հակասությունը բնորոշ էր ժամանակի գրաբարին. Քերականություններում տեղ գտած լատինատիպ ձևերը միշտ չէ, որ հաստատվում էին գրավոր գործածությամբ, երբեմն դրանք սոսկ հարացուցային միավորներ էին, որոնք մուտք չունեին տեքստի քերականություն[6]:

Բառային, քերականական անցումները որոշելու համար ինքնուրույն աշխատությունները, որ հարաբերված չեն լատիներեն տեքստերին, բավարար տվյալներ չեն պարունակում, լատիներենի անմիջական ազդեցությունը կրում են թարգմանական երկերը, որոնց բնագրերի հղումով կարելի է պարզել անսովոր կազմությունների նախատիպերը:

Մխ. Սեբաստացու գրական գործերից երկուսը թարգմանական են[7]՝ «Բովանդակութիւն բոլոր Աստուածաբանութեան» առաջին մասի երկրորդ հատորը («Summa Theologiae», prima pars, quaestio 50-119), որը 1712-ին հանձնարարել էր թարգմանել Հ. Հովհաննեսին և իրականացել է նրա աշխատասիրությամբ. «Որչափ ինչ թարգմանէր նա, նոյն ինքն Աբբահայրն մեր բազում աշխատասիրութեամբ սրբագրէր եւ զբանսն ի մեր բարբառն ըստ պատշաճին կարգեալ ի լոյս ածէր»[8]: Գործը հրատարակված չէ, ձեռագիր օրինակը պահվում է Մատենադարանում[*]: Երկրորդը Ալբերտ Մեծի «Դրախտ հոգւոյ» երկն է

---

[5] Տե՛ս Մխ. Սեբաստացի, *Քերականութիւն գրաբառի լեզուի Հայկազեան սեռի*, Վենետիկ, 1730, էջ 352:

[6] Տե՛ս Լ. Հովհաննիսյան, Գրաբարի երկու դրսևորում XVII դարում, *Պատմա-բանասիրական հանդես*, 1980, 4, էջ 176:

[7]Տե՛ս Ն. Ակինեան, Մխիթար տօնագիրք, *Հանդէս ամսօրեա*, 1949, էջ 411:

[8] Ն. Ակինեան, ն. տ.: Նաև՝ Պ. Տեր-Պողոսեան, Մխիթար, *Հանդէս ամսօրեա*, 1976, էջ 30:

[*] *Բովանդակութիւն բոլոր Աստուածաբանութեան սրբոյն Թօմայի Ագուինացւոյ հրեշտակային վարդապետի*, առաջնոյ մասին՝ հատոր երկրորդ, Վէնէտիկ, 1713, Մաշտոցի անվ. Մատենադարան, ձեռագիր 118, թերթ 420: Համեմատությունների համար օգտվել ենք Թ. Աքվինացու աշխատությունների էլեկտրոնային կորպուսի (Corpus Thomisticum) նյութերից՝ http:// www. corpusthomisticum.org/iopera.html:

(«Paradisus animae»)*, թարգմանված նույն Հովհաննես վարդապետի գրչակցությամբ և հրատարակված 1727-ին:

1. Նորակազմ բառեր՝ լատիներենի կաղապարով: Թարգմանական տեքստերի բառապաշարում նկատելի է նախածանց դիրքի ակտիվություն՝ լատիներենի բառակազմության օրինակով, հավանաբար նաև՝ հունաբան ավանդույթին հետևելով[9]: Սա հանգեցրել է բառի կառուցվածքի փոփոխության, աճման, իսկ հասկացական պլանում՝ իմաստի կոնկրետացման, մասնակիացման՝ ձևավորվելով նոր կազմություններ*: Լատիներենի նախածանցների և հայերեն համարժեքների ուղղակի և իմաստային համապատասխանությունը տրված է հետևյալ աղյուսակում.

com- / համ-	«compesco» (PA 22) - «համազսպեմ» (ԴՀ 198), իմաստային թրգմ. com- / ներ-՝ «compello» (PA 2) - «ներմղեցեալ» (ԴՀ 7)
re-/ վեր-, բաց-	«recogito» (PA 3) - «վերամտածեմ» (ԴՀ 21), «abstraho» (PA 24) - «բացաքարշեմ» (ԴՀ 217)
in- / ներ-	«incarnatio» (STh, q. 64, a.1 ad4) - «ներմարմնութիւն» (ԲԲԱ 157).

**Գիրք Երանելոյն Ալպերտի որ կոչի Դրախտ հոգւոյ*, Վէնէտիկ, 1729, 300 էջ: Ալբերտ Մեծի աշխատությունների երկու լիակատար հրատարակություն կա՝ 1651 թ., Լիոն, և 1890-99 թթ., Փարիզ: Համեմատությունների համար օգտվել ենք առաջին հրատարակությունից. Albertus Magnus, Opera omnia, ed. P. Jammy, Paradisus animae, vol. 21, p. 1-33, Lyon, 1651:

[9] Տե՛ս Գ. Մուրադյան, *Հունաբանությունները դասական հայերենում*, Ե., «Նաիրի» հրատ., 2010, էջ 33, նաև «Լատինաբան հայերեն և նրա առնչությունը հունաբան հայերենին» գլուխը:

*Բառերը նորակազմ են համարված Հայկազյան բառարանի տվյալների համեմատությամբ, ներառյալ նրանք, որ նշված են Վ. Համբարձումյանի «Լատինաբան հայերենի պատմություն» աշխատության մեջ, բայց աղբյուրի ժամանակից դատելով՝ ավելի վաղ կազմություններ են, կամ քաղված են նույն աղբյուրից:

in- / ան-	«indeterminatus» (STh, q. 50, a.2 ad1) - «անբացորոշաբար» (ԲԲԱ 9)
ad- / առ-	«admisceo» (STh, q. 54, a.1 co.) - «առխառնեմ» (ԲԲԱ 40), իմաստային թրգմ. ad- / վեր-. «aspicio» (PA 29) - «վերահայիմ» (ԴՀ 264), ad- / համ-՝ «approbo» (PA 10) - «համահաստատեմ» (ԴՀ 87)
prae- / նախ-	«praeexigo» (STh, q.62, a. 7, ad2) - «նախապահանջեմ» (ԲԲԱ 128)
e-, ex- / արտ-, վեր-, անդր-	«existens» (STh, q. 119, a.2 ad4) - «արտագոյող» (ԲԲԱ 808), «emendatio» (PA 8) - «վերուղղութիւն» (ԴՀ 66), «excedo» (PA 27) - «անդրանցանեմ» (ԴՀ 242)
sub- / ստոր-	«subtrahere» (STh, q. 50, a.5 ad3) - «ստորաբառնալ» (ԲԲԱ 17), իմաստային թրգմ. sub- / առ-՝ «suscipio» (PA 29) - «առընկալամ» (ԴՀ 262)
de- / առ-, բաց-, ապ-	«dependens» (STh, q. 53, a.3 co.) - «առկախեալ» (ԲԲԱ 38), «derelinquo» (PA 6) - «բացաթողում» (ԴՀ 42), «demerita» (STh, q. 113, a.8 co.) - «ապարդիւնաւորութիւն» (ԲԲԱ 737), իմաստային թրգմ. de- / յետ-՝ «depono» (PA 13) - «յետադրեմ» (ԴՀ 115)
per- / ենթ-, ընդ-	«perpendo» (PA 2) - «ենթաղատիմ» (ԴՀ 9), «permuto» (PA 26) - «ընդփոփոխեմ» (ԴՀ 238)
a-, abs- / բաց-, վեր-	«abstraho» (PA 24) - «բացաքարշեմ» (ԴՀ 217), «abstracte» (STh, q. 86, a.1 ad4) - «վերավելաբար» (ԲԲԱ 440)

inter- / ներ-	«intersum» (PA 26) - «ներալինիմ» (ԴՀ 232)
dis- / տար-	«distractio» (PA 21) - «տարացնդումն» (ԴՀ 186)
trans- / անդր-	«excedo» (PA 27) - «անդրանցանեմ» (ԴՀ 242)
pro- / նախ-	«promereo» (PA 9) - «նախարդիւնաւորիմ» (ԴՀ 78)
super- / վեր-	«superabundantia» (PA 16) - «վերառատութիւն» (ԴՀ 142)

Ըստ այդմ՝ քանակային հարաբերությունը համաչափ չէ (16/28), լատիներեն նախածանցը փոխանցված է ինչպես մեկ համարժեքով, այնպես էլ տարաձև, իմաստային տարբեր հատկացումներով պայմանավորված՝ հայերեն միևնույն նախածանցը երբեմն գործածված է կրկնակի արժեքով (բաց- / de-, abs-), իմաստային թարգմանությամբ շեղումները սակավ են, ածանցի իմաստն արտահայտված է նաև արմատի միջոցով:

Նշելի են նախածանցավոր նորակազմ բառերի հետևալ հատկանիշները.

ա) Նախածանցումը երբեմն սոսկ հավելադրություն է՝ չեզոք իմաստավորմամբ, երբ հասկացությունն արտահայտելի է առանց ածանցի, օր.՝ «վերապահեմ» (փխ. պահել. «.[illegible].ե՞րբ *վերապահելի*, ե՞րբ տալի... », ԴՀ 236)- «retineo» (PA 26), «վերամնամ» (փխ. մնալ. «*վերամնայ* բաղդատութիւն տեսակի առ գոյն... », ԲԲԱ 7) - «remaneo» (STh, q. 50, a.2 ad3) և այլն:

բ) Նախադաս դիրքը ակտիվ է նաև լատիներենի կաղապարից անկախ. իմաստային թարգմանությամբ կատարվել է ինքնուրույն նախածանցում՝ բնագրի անածանց բառերի դիմաց. «համահաճեմ» (ԴՀ 20) - «placeo» (PA 2), «ստորալծեմ» (ԴՀ 94) - «flecto» (PA 11) և այլն:

գ) Ընդհանուր առմամբ, նախածանցավոր բառերը թարգմանվել են միաձև. սա ընդհանուր հատկանիշ է՝ որոշ շեղումներով: Հունաբան հայերենում մեկ բառի զուգաձև

թարգմանությունը երբեմն բնորոշվում է որպես «դուբլետ»[10], լատինաբան նշված տեքստերում ևս գործածվել են թարգմանական տարբերակներ, արտահայտված՝ |1| այլ բառերով. «առքասրեմ» (ԴՀ 212), «անմեղադրեմ» (ԴՀ 103, ՆՀԲ՝ «անմեղադիր») - «excuso» (PA 12, 24), |2| արմատների տարբերությամբ. «ներընկղմեմ» (ԴՀ 3), «ներհեղում» (ԴՀ 4) - «infundo» (PA 1), |3| հավելյալ արմատով՝ «համայաւիտենական» (ԴՀ 135), «համայաւիտենականակից» (ԴՀ 233) - «coaeternus» (PA 16, 26), |4| նախածանցավոր ու վերջածանցավոր տարբերակներով. «համախնդակցեմ» (ԴՀ 7) - congratulor» (PA 2), «ուրախակցութիւն» (ԴՀ 244, ՆՀԲ՝ «ուրախակից լինել») - «congratulatio» (PA 27) և այլն:

դ) Բաղադրիչների համարժեքությունը նույնպես պահպանված է, թեև, ինչպես նախորդը, բացարձակ հատկանիշ չէ, երբեմն գործածվել են տարարժեք ածանցներ և արմատներ. |1| *ex*- ածանցը, որ հիմնականում թարգմանված է *վեր*-, փոխանցվել է հականիշ *ներ*- ածանցով՝ «ներանկանի» (ԲԲԱ 39)՝ *ներդնել* նշանակությամբ. «հրեշտակն ի միում վայրկենի կարէ գոլ ի միում տեղւոջ, և յայլում վայրկենի յայլում տեղւոջ, ի մէջ որոց ոչիմն ժամանակ *ներանկանի*», բնագրում՝ «existere»՝ որպես *ծագել, երևան գալ* կամ *հետևել*. «angelus in uno instanti potest esse in uno, et in alio instanti in alio loco, nullo tempore intermedio *existente*» (STh, q. 53, a.3 ad3), |2| «emendatio» (PA 8) բառն ըստ բաղադրիչների նշանակում է *դուրս, վեր թերությունից* (e-mendum), այսինքն՝ *շտկում, ուղղում*, որ թարգմանվել է «վերուղղութիւն» («...վասն *վերուղղութեան* ամենից», ԴՀ 66):

ե) Նախածանցավոր բառերը հազվադեպ թարգմանված են դասական եղանակով՝ առանց նախածանցի, այսինքն՝ ձևային կախում չունենալով բնագրից և իմաստը փոխանցելով ինքնուրույնաբար. «վատահամբաւութիւն» (ԴՀ 60) - «infamia» (PA 8), «հնարակերտեմ» (ԴՀ 29) - «excogito» (PA 4), «տրամազննումն» (ԴՀ 186) - «discussio» (PA 21):

---

[10] Տե՛ս Գ. Մուրադյան, նշվ. աշխ., էջ 15-16, հմմտ. նաև էջ 213-227:

Եթե հայերենի նախածանց դիրքը կենսունակությամբ զիջում է լատիներենին, և բնագրի նախածանցավոր կաղապարը հաճախ արհեստականորեն է պահպանված, ապա վերջածանց դիրքը, կենսունակ լինելով, արտացոլել է լատիներենի համարժեք ձևերը՝ հարազատ մնալով գրաբարի օրինաչափություններին: Իմաստային թարգմանությունները գերակշռում են. «հոգունակութիւն» (ԴՀ 75) - «deligentia» (PA 9), «հոտառողութիւն» (ԴՀ 49) - «odoratus» (PA 6), «հանդիսավեհութիւն» (ԴՀ 135) - «maiestas» (PA 16), «ծանրակացութիւն» (ԴՀ 203) - «maturitas» (PA 22) և այլն: Հազվադեպ են ձևային պատճենումները. «երկարտևողութիւն» (ԴՀ 287) - «diuturnitas» (PA 32), «առանձնախօսութիւն» (ԲԲԱ 389) - «soliloquium» (STh, q. 84, a.1, arg.1): Մասնակի տարբերությամբ քառաձև թարգմանության օրինակ են. «յայտյանդիմանակացուցումն» (ԴՀ 110), «յանդիմնակացուցումն» (ԴՀ 105), «յայտյանդիմանութիւն» (ԴՀ 29, ՆՀԲ-ում նշված է), «յայտնի յանդիմանութիւն» (ԴՀ 180) - «argumentum» (PA 4, 12, 20):

Բարդ նոր բառերը սակավ են, այս դեպքում ևս բնօրինակում չկան այնպիսի կազմություններ, որոնք արտահայտելի չլինեն գրաբարի բառակազմությամբ, հետևաբար արտասովոր կազմությամբ բառեր չեն հանդիպում: Պատճենումները հիմնականում լիակազմ են. «մասնակալեմ» (ԲԲԱ 734) - «participio» (STh, q. 113, a.6 co.), «երկսիրտ» (ԴՀ 208) - «dissolutum» (PA 23), նաև՝ բաղադրիչների հակառակ դասավորությամբ՝ «յայտառնեմ» (ԲԲԱ 82) - «manifesto» (STh, q. 58, a.4 ad3) և այլն:

2. Քերականական հատկանիշներ: Մխիթարի թարգմանական երկերում առատորեն գործածվել են ձևաբանական այն հատկանիշները, որոնցով բնորոշվում է լատինաբան գրաբարը. գոյականի թվի արհեստական տարբերակում՝ «միտ» (ԴՀ 6)- «mens» (PA 2), *ք* հոգնակերտի բացարձակացում. «մարդիկք» (ԴՀ 215) - «homines» (PA 24), *ի* լծորդության և ցոյական հիմքի հատկացում կրավորական սեռին. «իրագործի» (ԴՀ 93)- «agitur» (PA 11), «նախագուշակեցեալ լինի» (ԴՀ 79)- «preadicitur» (10), *գունեղ* մասնիկով գերադրական աստիճանի կազմում՝ «չարագունեղ» (ԴՀ

73)- «pessimus» (9), նաև պարզեցված մասնիկավորմամբ՝ «մեծեղապէս» (ԴՀ 21)- «maxime» (PA 2), հոլովման տիպի խախտում՝ «ի մարմնոջ» (ԴՀ 76)- «in corpore» (PA 9), մակբայակերտ կրկնակի ածանցում՝ «յաւիտենականաբար» (ԴՀ 62)- «aeternaliter» (PA 8), հունաբան «երկաքանչիւր» (ԴՀ 103) դերանվան գործածում լատիներենի օրինակով՝ «uterque» (PA 12) և այլն: Սրանք ընդհանուր հատկանիշներ են, որ նկարագրված են լատինատիպ քերականություններում և գրաբարի այդ փուլի ուսումնասիրություններում[11]: Որոշ արհեստական ձևեր, որ նշված են Մխ. Սեբաստացու քերականության մեջ, թարգմանություններում չեն գործածվում կամ հետզհետե հաղթահարվում են:

Հարակատար և գերակատար վերլուծական ժամանակները Սեբաստացու քերականության մեջ տրված են կից գրությամբ՝ օժանդակ բայի դիմային վերջավորության արժեքով, և համադրական կազմությամբ նմանեցված են լատիներենի perfectum և plusquamperfectum ժամանակաձևերին[12]: Եզակի ձևերը՝ *ամրացուցեալեմ, ...էի, երանի թէ, եթէ ամրացուցեալիցեմ, ...իցեհ*, ոչ լրիվ հարացույցով և հետևողականորեն, գործածվել են նաև թարգմանություններում. «զի տէրն զնա *ընտրեալէր* յաշխարհէ» (ԴՀ 292) - «quod ipsum Dominus de mundo *elegerat*» (PA 32) և այլն: Հոգնակի ձևերը՝ *ամրացուցեալքեմք, ամրացուցեալքէաք* և այլն, լատինաբան հատկանիշների շարքում առանձին չեն հիշատակվում, թեև կազմությամբ ուշագրավ են. կից գրության հետևանքով պարտադիր համաձայնության կանոնը թափանցել է բառի ներքին կազմ՝ ձևավորելով կրկնակի թվանիշներ: Այս ձևերը թարգմանության օրինակներով չեն հաստատվում. նշված ժամանակների հոգնակին գործածված է ցոյական հիմքով, որպես կրավորականի սեռանիշ, և կազմությամբ անջատ է, բնագրին համապատասխան. «...գոյացութիւնք *անջատեցեալք իցէին* (ԲԲԱ 13)»- «...substantiae *separatae essent* (STh, q. 50, a.3 ad3)» և այլն: Կից կազմությունը եզակի օրինակով է, որ, ընդհանուր

---

[11] Տե՛ս Վ. Համբարձումյան, նշվ. աշխ., էջ 149-160:

[12] Տե՛ս Մխ. Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 61-62:

օրինաչափությունից շեղվելով, հնարավոր է՝ տպագրական վրիպակ լինի. «*հատեցեալքեն* ի մարմնոյ եկեղեցւոյն» (ԴՀ 249)- «de corpore Ecclesiae *praecisi sunt*» (PA 28):

Ն, ըն նախդիրները, ինչպես հայտնի է, հունաբան նախադեպով ձևեր են, որոնք ներմուծելու երկրորդ փորձը կատարվում է լատինաբան շրջանում: Թարգմանական առաջին երկում («Բովանդակութիւն բոլոր Աստուածաբանութեան») *ն, ըն*-ն գործածվում են. «Արդ՝ այնմիկ, որ է *ըն վերջնում* եզեր՝ ոչ յարմարի շարժիլ» (ԲԲԱ 132)- « Ei autem quod est *in ultimo* termino, non convenit moveri» (STh,q.116,a.1 ad1): Հաջորդ երկում՝ «Դրախտ հոգւոյ»-ի մեջ, Սեբաստացին հրաժարվում է արհեստական այդ մանիկներից և գործածում միայն *ի* նախդիրը: Սակայն այս սրբագրումն էլ վերջնական չէ. իր քերականության մեջ վերստին նշում է այդ նախդիրները, թեև սահմանափակելով կիրառությունը՝ ներկայացնում որպես *ի* նախդրին օժանդակ միջոց՝ ոճական հոմանիշ. «և այսու լինի զանազանութիւն. որգոն Յամեցայ ըն տունս նոցին. գնացի ի տունս նոցին[13]»:

Լատիներենի շարահյուսական ազդեցության ամենաակնհայտ նշանը շարադասության ընդօրինակումն է, որ հաճախ արտահայտվել է բառերի անսովոր կամ ոճական դասավորությամբ: Օր.՝ ա) բաղադրյալ ստորոգյալի անվանական մասի և բայական հանգույցի հեռացում՝ լրացման միջադաս գործածությամբ, որը բնագրում կրկնվող կաղապար է. «Յայտյանդիմանութիւն ճշմարտի համբերութեան է…» (ԴՀ 35) - «Argumentum verae patientiae est…» (PA 5) և այլն, բ) ենթակայի, ստորոգյալի, ուղիղ խնդրի հեռացում՝ վերջինիս միջադաս դիրքով. «….*որ* երբեմն շրջաբերի ի սրտի, որպէս հուրն ի հնոցի, և *զմարդն* նախապէս ցուրտ և դեղնագոյն՝ ի յաղօթս *առնէ* ջերմ և կարմագոյն» (ԴՀ 173)- «*Qui* quandoque cremat in corde, sicut ignis in fornace, et *hominem* ante frigidum et pallidum, in oratione *facit* calidum et rufum. », գ) խնդրառու բառ- խնդիր կապակցության շրջում. «առ

[13] Տե՛ս Մխ. Սեբաստացի, նշվ. աշխ., էջ 248:

զանազանս իրողութիւնս *տարացնդումն*» (փխ.՝տարացնդումն առ...) (ԴՀ 186)- «ad diuersia negotia *distractio*» (PA 21) և այլն:

Բնագրի շարադասության պահպանումը և բառացի թարգմանությունը, որ ենթադրում է կապակցություն կազմող գլխավոր միջոցի՝ բառաձևի ընդօրինակում, շարահյուսական տարբեր պատճենումների հիմքում են և պայմանավորում են դրանք: Լատիներենի նմանությամբ հաճախակի են հատկապես անորոշ դերբայով կառույցները՝ խնդրառության պատճենումով, օր.՝ ա) *կայանալ* (consistere) բայ + ներգոյական հոլովով խնդիր (այս կառույցը ժամանակակից հայերեն է փոխանցվել ռուսերենի միջնորդությամբ և համարվում է ռուսաբանություն, հմմտ.՝ *состоит в том- կայանում է նրանում* և *consistit in hoc- կայանայ յասմիկ*). «Ճշմարիտ ողորմածութիւն *կայանայ ի յերիս*. այսինքն՝ *ի տալն, ի ներելն, և ի յառատաբաշխելն*» (ԴՀ 100) - «Misericordia vera, *consistit in tribus*: *in dando, in condonando, et in supererogando*» (PA 12) և այլն, բ) անորոշ դերբայով դարձված՝ հայցական հոլովի հետ (accusativus cum infinitivo). «կամի *զմարդն զոլ* ազատ (ԴՀ 184)», «vult *hominem esse* liberum (PA 21)» և այլն, գ) լատիներենում միադիմի բայի խնդիրներից մեկը դրվում է acc.-ով, մյուսը՝ նաև infinitivus-ով[14], այդ կառույցը թարգմանված է անփոփոխ, թեև գրաբարում միադիմի բայերի հետ սովորական է տրականի գործածությունը. «Ad veram laetitiam *inducere nos debet* (PA 18)». - «Առ ճշմարիտ խնդութիւն *պարտի ներածել զմեզ* » (ԴՀ 155) և այլն:

Շարահյուսական տեղաշարժեր կատարվել են նաև լատինատիպ բառակազմության հետևանքով: Գրաբարում բայի գործողության ուղղությունը հիմնականում պարզվում է խնդիրների, պարագաների միջոցով, օր.՝ (վեր=) «Բաց է դուռն արքայութեան նորա. եթէ որ կամի դիմել, *դիմեսցի*́», (ուղիղ=) «Առ քեզ *դիմեն* յուսով» (ՆՀԲ՝ *դիմեմ* բառահոդված) և այլն: Լատինաբան գրաբարում բայի գործողությունը որոշակիանում է նաև կազմությամբ՝ նախածանցի միջոցով, ինչպես լատիներենում,

---

[14] Տե́ս С. Соболевский, *Грамматика латинского языка*, Санкт-Петербург, 1998, стр. 132-33.

որի նախածանցները ծագմամբ մակբայ են[15]: Նախածանցների միջոցով գործողության ներունակ՝ բայի կազմությամբ, արտահայտումը փոխել է շարահյուսական հարաբերությունը, օր.՝ «Քանզի ամենայն, որ... *առեկեալ սեռի* (փխ.՝ եկեալ առ սեռն)՝ կացուցանէ զտեսակ» (ԲԲԱ 6), «Omne enim..., quae, *adveniens generi*, constituit speciem» (STh,q.50,a.2,arg.1) և այլն:

Թարգմանական տեքստում տարբեր կապակցություններ հաճախ գործածվել են կից գրությամբ՝ բնագրի միաբառ ձևերին համապատասխան, օր.՝ ա) հարադիր բառերով կառույցների կցում. «իւրաքանչիւրոք» (ԴՀ 9)- «unusquisque» (PA 4), «այլոք» (ԴՀ 213)- «alius» (PA 24), «իւրինքդ» (ԴՀ 101)- «seipsum» (PA 12), «որինչ» (ԴՀ 113)- «quod» (PA 16), «ի *վերքան* զօրութիւն» (ԴՀ 105)- «*supra* vires» (PA 12) և այլն, բ) ժխտական բառերով և նախդրով կառույցների կցում. «ոչոք» (ԴՀ 76) - «nemo» (PA 9), «ոչիմն» (ԴՀ 86) - «nullo» (PA 10), «ընդիս» (ԴՀ 101) - «mecum» (PA 12), «իվաղնջուց» (ԴՀ 233) - «olim» (PA 26) և այլն: Կցական այդ ձևերը կազմությամբ նաև ինքնատիպ են, գործածվել են բնագրի անջատ կառույցների դիմաց. «առիս» (ԴՀ 206)- «ad me» (PA 23), «*առայնս* համայնս» (ԴՀ 108)- «quo ad omnia» (PA 13), «...էր *առամենեսեան* համբաւաւորագունեղ» (ԴՀ 110)- «...erat *in omnibus* famosissima» (PA 13), «առնոյն» (ԴՀ 109)- «ad idem» (PA 13), «ոչերբէք» (ԴՀ 18)- «non nunquam» (PA 3), «այսուկերպիւ» (ԲԲԱ 76)- «hoc modo» (STh,q.98,a.1 co.) և այլն: Այս եղանակը լրացուցիչ միջոց է դարձել ակտիվացնելու նախադաս դիրքը. «առաստուած» (ԴՀ 91) - «ad Deum» (PA 14), «առգովութիւն» (ԴՀ 80) - «ad laudem» (PA 10), «առընկալումն» (ԴՀ 213) - «ad recipiendam» (PA 24), «առհաստատութիւն» (ԴՀ 115) - «ad constantiam» (PA 13) և այլն:

Այսպիսով, լատիներենի օրինակը թափանցել է թարգմանությունների լեզվի բոլոր մակարդակներ, փոխել է բառերի կազմը, ձևավորումը, հարաբերությունները: Բառային և քերականական հիմնական հատկանիշներն են. նախածանցավոր

[15] Տե՛ս М. Лапина, *Морфологические словообразования в латинском языке,* Харьков, 1970, стр. 1.

կաղապարի ընդօրինակում, ածանցների հավելադրում, որոնք, ձևային լրացումներ լինելով, իմաստով չեզոք են, բարդ և վերջածանցավոր բառերի օրինաչափ կազմություն, լատինատիպ քերականական ձևերի կիրառում, լատիներենի շարադասության ու բառաձևերի օրինակով շարահյուսական պատճենումներ, անորոշ դերբայով դարձվածների առատացում՝ խնդրառական փոփոխություններով, շարահյուսական տեղաշարժեր լատինատիպ բառակազմության հետևանքով, համադրականության ձգտում կապակցությունները կցելու միջոցով: Սեբաստացու թարգմանությունների լատինաբան ձևերը կրկնվում են նրա քերականության հարացույցներում, համընկնումը գրեթե բացարձակ է, նկատված տարբերությունները՝ և, ըն-ից հրաժարվելը, հոգնակի համադրական բայաձևեր չգործածելը, մասնակի են, այդուհանդերձ, վկայում են, որ թեև ոչ հիմնավոր, բայց կատարվել են ուղղումներ:

Sirunyan Tigran- The Latinisms in the Theological Treaties Translated by Mkhitar of Sebastia. -The article researches language of the theological treaties translated by Mkhitar of Sebastia (Thomas of Aquin, «Content of sum Theologia», Chapter I, t. II. Albert the Great, «Paradise of the soul»). The transmission peculiarities of verbal and grammatical forms from Latin to Classical Armenian are demonstrated in comparison with the original text, the essential attributes of the verbal formation applying Latin examples are highlighted, and the expression of the Latin morphological and syntactical several forms in the translated texts are clarified.

Сирунян Тигран- Латинизмы в богословских трудах, переведенных Мхитаром Себастаци. - В статье рассматривается язык переводческих трудов Мхитара Себастаци (Сумма Теологии Фомы Аквинского, Ч. 1, т. 2. Рай Души Алберта Великого). В сравнении с оригиналом показаны лексические и грамматические особенности переводов с латинского на грабар, отмечены основные особенности словообразования на примере латинского, показано выражение некоторых латинских морфологических и синтаксических образований.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ………………………………………………………. 5

Գրիգորյան Ս. Մ., Գրիգոր Տաթևացու *«Գիրք հարցմանց»-ի* նորահայտ բառերի բառակազմական կաղապարները …….7

Գրիգորյան Ս. Մ., Ծիսակարգային հիմնական հասկացությունները Գրիգոր Տաթևացու *«Գիրք հարցմանց»*-ում…….14

Թադևոսյան Հ. Մ., Աշխարհաբարի հոլովական առանձնահատկությունների դրսևորումը ուշ միջնադարի բժշկարաններում……………………………………………26

Թադևոսյան Հ. Մ., Անկատար դերբայի բարբառային կիրառությունները XVII դարի բժշկարաններում…..40

Խաչատրյան Վ. Մ., Նորահայտ բառեր 13-րդ դարի ձեռագրերի հիշատակարաններում…………………49

Խաչատրյան Վ. Մ., 12-րդ դարի ձեռագրերի հիշատակարանների բառապաշարը ……………………………………….61

Խաչատրյան Օ. Մ., Վարդան Պատմիչի անձի և նրա «Պատմութիւն թաթարաց»-ի մասին…………………70

Հովհաննիսյան Լ.Շ., Գրաբարի «խաղող» և «գինի» բառերի շուրջ…………………………………………………..79

Հովհաննիսյան Լ.Շ, Ճենաց աշխարհի և Մամիկոնյան նախարարական տոհմի ծագման հարցի շուրջ……85

Հովհաննիսյան Լ.Շ Դիտարկումներ Աստվածաշնչի որոշ հատվածների վերաբերյալ ……………………….94

Հովհաննիսյան Լ.Շ Ղարաբաղի բարբառում միջին իրանական լեզուներից կատարված մի քանի փոխառությունների շուրջ…………………………………………...103

Հովհաննիսյան Ն. Գ., Բառային դիտարկումներ (ձեռագիր բառարանների նյութի հիման վրա)……………………..110

Հովհաննիսյան Ն. Գ., Վերլուծական կազմություններ հոմանիշների՝ XVIII դարի ձեռագիր բառարաններում…...121

Հովհաննիսյան Ն. Գ., Նեղ բարբառային բառեր և բառիմաստներ

հոմանիշների՝ XVIII դարի ձեռագիր բառարաննե-
րում…………………………………………………130
Մխիթարյան Գ. Մ., Ցցոց և պարուց երգերը հին հայոց մեջ….142
Մխիթարյան Գ. Մ., Դիտարկումներ «Սասնա ծռեր» էպոսում
հիշատակված *սազ* բառանվան վերաբերյալ…….. 150
Միրունյան Տ. Ղ., Լատինաբանությունները Մխիթար
Սեբաստացու թարգմանած աստվածաբանական
երկերում…………………………………………..158

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐ

ՊՐԱԿ Բ

Ձևավորումը և էջադրումը՝
Հ. Թադևոսյանի